




Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները։ Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները։

# Հ ԵՒԱԶ



# Արք





THE  
LAW  
OF  
MATERIALS



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Ա Ն Ի

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2011

ՀՏԴ 891.981-1 Նիրազ

ԳՄԴ 84Հ-5

Ե 641

Հրատարակված է սլուտական պատվերով

Խմբագիր՝ Սամվել Մուրադյան  
Կազմեց՝ Աստղիկ Կարապետյան (Նիրազ)

Նիրազ Հովհաննես

Ե 641 Անի; Պոեմ / Հ. Նիրազ, Կազմ.՝ Ա. Կարապետյան.- Եր.:  
ԵՊՀ Հրատ., 2011.- 308 + 4 էջ ներդիր:

«Անին» մեծ բանաստեղծի անտիպ պոեմն է, որը հզոր արվեստով պատկերում է 11-րդ դ. առաջին կեսի իրադարձությունները, երբ Բագրատունյաց Հայոց մայրաքաղաքը Հայտնվել էր թշնամական պաշարման մեջ, և գործում էին ներքին պառակտիչ ուժերը:

Պոեմը Հայրենասիրական լիցքերով ձևն է՝ նվիրված Հայ ոգուն ու ճարտարվեստին, ունի արդիական հնչողություն:

ՀՏԴ 891.981-1 Նիրազ

ԳՄԴ 84Հ-5

ISBN 978-5-8084-1514-0

© ԵՊՀ Հրատ., 2011

© Կազմողի Համար, 2011

**ՀԱՎԱԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑՆԵՐԻՑ ՄԵԿԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԴՅՈՎ**

1.

Հայն մտահորիդոն ու ընդգրկուն տնօսադաշտ, կյանքի խոր ճանապարհություն և ժողովրդի հանդեպ պարտփի բարձրագույն գիտակցություն ունեցող բանաստեղծը միայն ներկայով չի ապրում: Իր շուրջ կեսարացա ատեղդագործական կյանքի ընթացքում Հ. Շիրազը Հաճախ է դիմել Հայոց պատմական անցյալին, գեղարվեստականացրել նրա ողբերգական ու հերոսական դրվագները: Բանատեղը պատմագնտ չէ, բայց նա ամբողջ խորությամբ է զգում և ճանաչում ոչ միայն պատմական իրադարձությունների պատճառականքային առնչությունները, այլև այդ պատմությունը կերտողների մարդկային ընակորությունն ու հոգեբանությունը: Հայ գրողները, անդրադառնալով 4, 5, 10, 14, 18, 19, 20-րդ դարերի մեր պատմության դրամատիկ անցքերին, այնտեղից պեղել են ինչպես իրենց հերոսներին, այնպես էլ անցյալի խորքերում ու ծալքերում բացահայտել են ներկայի ու գալիքի Համար անհրաժեշտ խոր հուրդները: Այս խմաստով էլ Հ. Շիրազը Հայ դասականների աղնիվ ժառանգորդն էր և մեր պատմագեղարվեստական գրականության լավագույն ավանդների կենսագործողը խորհրդային հետչարենցյան ժամանակակիներում:

Բայց նա հեռացավ պատմական թևմատիկայով իր գլխավոր գործերից մի քանիսի՝ «Հայոց դանթեականը», «Անի», «Թուղթակեցիներ» ծավալուն պուստների տպագրությունը չտեսած։ Առաջինը լույս տեսավ նրա մահից վեց տարի հետո՝ խորհրդային պետության մայրամուտին՝ 1990 թ., երկրորդը հիմա է տպագրվում, իսկ վերջին երկուսի տպագրության խոդիրը դեռևս մնում է շրջապատ։

Արցախ կատարած մեր ուղևորություններից մեկի ժամանակ, երբ խոսք բացմեց Հ. Ելիազար բանաստեղծի, նրա «Ղարաբաղի ողբի» և

այլ ստեղծագործությունների մասին, Երևանի պետական Համալսարանի ուսկուոր Արամ Մինոնյանը հետաքրքրվեց նրա ձեռագրերով ու անտիպ երկերով և անկեղծորեն զարմացավ, որ մեր վերջին Հպորդասականներից մեկի այդքան արժեքավոր ստեղծագործություններ դեռևս մնում են անտիպ: Դրանց կարենորության, մեր ժողովրդի Համար անհրաժեշտության զիտակցումով էլ նա նախաձեռնեց երկու երկերի՝ «Անի» և «Թոնդրակիցիներ» պուեմների՝ Երևանի պետական Համալսարանի Հրատարակչությամբ լույսին ճամփայելու Հայրենանվեր գործը: Հովհանները գավակները, առանց նյութական ակնկալության, մեզ բարեհոգաբար տրամադրեցին «Անի» պուեմի մեքենագիր այն տարրերակը, որը բանաստեղծը տասնամյակներ առաջ հետ էր վերցրել Հրատարակչությունից՝ Համաձայնելով այն աշակոր կրծատումներին, որ նրան պարտադրում էին գլավիտն ու խմբագիրները:

Հովհանները բանաստեղծ ծնվել էր և իր կոչումը Համարում էր ժողովրդին անմնացորդ ծառայելը: Նրա Համար գրելը, ստեղծագործելը եղել է գերազույն բավականություն, բայց իր ստեղծագործությունները գլավլիտային գաղափարական մանրադիտակից ու խմբագրական մկրատից փրկելով անխաթար տպագրելը՝ ծանրագույն տառապանք: Երբեմն Համաձայնում էր փոխազիտումների և ամբողջ Հրատարակել կարողանալու Համար գուհարերում էր իր բանաստեղծական խկական գյուտերի ու Հայտնությունների մի մասը, բայց Համախմայի էլ չէր փրկում, և Հիշյալ պուեմներն այդ պատճառով են մնացել անտիպ:

«Անի» պուեմը գրվել է ստալինյան ժամանակներում՝ 1950-51 թվականներին, և սկզբից էլ Հանդիպել լուրջ դիմադրության: Բայց եթե բեղավոր մեծ ոճրագործի կենդանության օրերին բանաստեղծի որոշ գրչակիցներ ու քննադատներ, գրական նախանձի կամ իրենց ներքին վախի թելադրանքով, բաղաբական ծանր մեղադրանքներ առաջադրեցին նրան՝ պնդելով, թե «Երիրազն իրավունք չուներ գրելու «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ», ապա խրուչչովյան «Ճնշապահ» և խորհրդային Հետազա տարիներին ու մանավանդ Հայաստանի անկախության ժամանակներում Հ. Երիրազի այս և մյուս գործերը չտպագրելն ու անտարբերության մատնելը որևէ արդարացում չունեն:

1954 թ. «Հաստընտիր», 1958, 1964, 1974 թթ. «Քնար Հայաստանի» գրքերում Հ. Երիրազն այդ պուեմից որոշ Հատվածներ տպագրել է, ուրիշ Հատվածներ ձևուղիր լրջել են ժողովրդի մեջ, արտասանվել բևեմբից, տարածվել Սփյուռքում, բայց պուեմի ամբողջական

Հրատարակություն իրականանում է առաջին անգամ: Խորհրդային տարիներին պումբն ընդգրկվում էր Հրատարակական պլաններում ու տեղափոխվում տարուց տարի: Բանաստեղծը Հուսով սպասում էր, նույնիսկ ոգևորվում Հրատարակիչների խոստումներով: Այդ ոգևորությունը երրեմն այնքան մեծ էր, որ բանաստեղծը պետհրատի 1-ին տպարանի ատացած թղթի գլանափաթեթների վրա մատիտով գրում էր «ԱԱՆԻՒԹԻՒ» Համար է», ու ստորագրում էր: Բայց ավելի մեծ էին Հուսախարությունն ու դառնությունը, որովհետև նրան Հրատարակչությունից ուղարկում էին Հրատպետկոմ, այնտեղից՝ Կենտկոմ, և այս կարուսելի մեջ մոլորդած բանաստեղծը չփառեր ինչ աներ:

Հրատարակականն ընագավառի որոշ պաշտոնյաններ էլ որդեգրել էին յուրօրինակ վարքագիծ: Վերինները իրենց զույգն ազատելու Համար բանաստեղծի գրավոր դիմումները մակագրում էին ներքեխներին, ներքեխներն էլ, գուցե Հատուկ Հանձնարարությամբ, այնքան էին տանում-թերում, որ բանաստեղծը Հրատպափում էր բոլորից: Կամ նրան մատնում էին անստարերերության, կամ էլ, լավագույն դևապում, կոպտորեն ոտնահարելով Հնդինակային ու մարդկային իրավունքները՝ առաջարկում էին այսինչ պումի կամ այնինչ զրբի կարևոր Հատվածների այնպիսի անհնիք կրճատումներ, որոնց ընականաբար ու վճռաբար գեմ պիտի լիներ բանաստեղծը: Դառնացած, վիրավորված հովհ. Շիրազը, մտածելով՝ ավելի լավ է շտապի, քան այդ վիճակով ու տեսքով տպվի, Հրատարակչությունից հետ էր վերցնում ձեռագիրը: Քանից Հնչել է նրա բարձրածայն աղաղակող և բոլորին լսելի պատկերավոր դժգությունը.

Գիտե՞ք, ինչի կնմանին էսոնց կրճատումները, ասենք թե՝ մեր խորհրդային մեծ պետությունը որոշել է Հնդկաստան կամ Հեռավոր աֆրիկան սովահար մի երկիր, որպես մարդասիրական շտապ օգնություն, Հարյուր վագոնանոց շարժակագմով ցորեն ուղարկել: Բայց կատարող դողրմելիներն ու ահճանապահները կըսեն, թե թեոք շատ ծանր է, գնացքը տեղ չի Հասնի: Հատկապես ծանրացնում են Ձեռացիոնայիստական խրորեկով բարձրված մի քանի վտանգավոր վագոններ, դրանք պարտադիր պիտի Հանենք, ինչպես կարելի է...

Ես էլ ստում եմ՝ Համաձայն եմ, թերեք դրանք Հանենք. չէ՞ որ միլիոնավոր սովահարներ մեր օգնությանը՝ այդ ցորենին կսպասեն: Բայց իմ Համաձայնելուց հետո՝ երբ խմբագրելու, կրճատելու ժամանակը կուգա, էսոնք Հնց առջնից չոգեքարը կհանեն: Էլ էղ գնացքը ինչպես շարժմի, ցորենը ո՞նց տեղ Հասնի: Համար սովորական սպասեն: Էղապես էլ սպասողական վիճակի է մատնված մեր ողջ ժողովուրդը»:

Հովհ. Շիրազի շուրջն ստեղծված մթնոլորտի ու բարդ իրավիճակի մասին կատարյալ պատկերացում կարող է տալ Հետևյալ վավերագիրը՝ կապված «Անի» պուեմի տպագրության հետ: Բանաստեղծը դիմել էր բոլորին՝ վերսից ներքեւ և ներքեւց վերև: 1968-ին նա մի գրավոր դիմում է գրել՝ փոխելով Հասցեատերերի անուն-ազգանունները. մեկի անունը՝ մյուսի ազգանունով կամ Հակառակը. դրանով կամեցել է ասել, թե բոլոր պաշտոնյաներդ նոյն մարդիկ եք: Մամուլի պետական կոմիտեի նախագահը Հայկարամ Ռիթմազյանն էր. «Նախրի» հրատարակչության տնօրենը՝ Խիկար Բարսեղյանը, նրա զիսավոր խմբագիրը՝ Մկրտիչ Սարգսյանը, գեղարվեստական գրականության բաժնի վարիչը և գրքի խմբագիրը՝ Լևոն Միրիֆանյանը: Ահա Հ. Շիրազի դիմումը նրանց՝ խառնած անուն-ազգանուններով.

### «Սիրելի»

Խիկար Ռիթմազյան-ին,

Հայկարամ Բարսեղյան-ին,

Մկրտիչ Միրիֆանյան-ին,

Ելի վերևների... ոմանց

### Հ. Շիրազից

Դուք չե՞ք ամաչում, որ ինձ թողնում եք կարոտության ու կարիքի մեջ, մինչդեռ իմ ձեռագիրերը ծովանում են... և սակայն չեք թողնում, որ իմ իրավունքի տերը լինեմ, արդար իրավունքի՝ ստանամ ինձ հասանելիք Հոնորարը՝ «Անի»-ից...

Դուք խիշտն, խիշուն, խիշուն, խիշունք, թե՞ ոչ: Խհարկե, ո՞չ, ո՞չ, ո՞չ, ո՞չ<sup>1</sup>:

Տասնամյակներ շարունակ այս իրավիճակը բանաստեղծի համար ստեղծել էր մղձավանջային դրամա, որի թնորոշ արտահայտություններից է Հետևյալ բանաստեղծությունը.

Ոչ մի քաջի կապարն

Այնքան նետ չի տեսել,

<sup>1</sup>Տե՛ս Ա. Մանուկյան, Հովհաննես Շիրազ. Կորահայտ ստեղծագործություններ. էջ 278-279, նույն ամրող «Շիրազի արխիվային նամակները» բաժինը:

Խնչքան իմ սիրուը քաջ,-

Ախ, կտրին եմ ե՞ս էլ:

Ախ, կտրին եմ, կտրին,

Որ նետերով այսքան

Խոցվում, ժապում եմ ջինջ՝

Ինձ խոցողին անգամ...

Նույն այդ Հրատարակիչներն էլ Հորինել էին ինքնարդարացնող կեղծ մի առասպել, թե իրենք շամուշաւ են ուզում Շիրազի ստեղծագործությունները տպագրել, սակայն բանաստեղծն ինքն է իր թշնամին, ովնքն է խանգարում իր գրքերի տպագրությանը, ձևուագրերը Հետ է վերցնում ու չի բերում, որ տպենք»:

Եվ այս «արդարացումն» էլ ջանացել են Հիմնավորել իրենց Հորինած գրավոր փաստերով: Կարդացելք նրանցից մեկի Հուշագիրքը և կտեսնեք. թե քանի՞ անգամ է նա Շիրազին գրավոր «իսնդրել», որ Հետ բերի «Անի» պունիմի ձևուագիրը, իսկ Շիրազն էլ, իբր, այդպիսի ազնիվ Հորդորին չի արձագանքել... Բայց Հենց նրա տնօրենն նշած ժամանակ էր՝ 1969-ի գարնանը, որ Հրատարակչությունում, ուր տողերիս գրողը նախադիմումային արտադրական պրակտիկա էր անցնում որպես ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի ամարտական կուրսի ուսանող, պատահեց Հետեւյալ Հետաքրքիր միջազնապր:

Հովհ. Շիրազը Հաճախ էր Հրատարակչություն գալիս ու երբ նա Հայտնվում էր այդ աշխատավայրի երկար միջանցքում, գրեթե բոլոր ավագ ու կրտսեր խմբագիրները, սրբագրիչները գուրս էին թափվում իրենց աշխատասենյակներից՝ նրա սրամիտ կատակները լսելու: Մի օր էլ նրանցով շրջապատված Շիրազին մոտեցավ մի սիյուռքահայ, որը երևի գրող էր և ինչ-որ գործով ևեկել էր Հրատարակչություն<sup>1</sup>: Ակնածանքով ու վախճառած՝ նա մոտեցավ Հրատարակչության աշխատակիցներով ու վախճառածված, զվարթ կատակող բանաստեղծին ու Հարցրեց.

— Դուք իրակա՞ն Հովհաննես Շիրազն եք...

<sup>1</sup> Այս գեղագրը Հետաքրքում պատմում էր նաև ներկաներից մեկը՝ Համադարասեի Հայագիտական կենտրոնի տեղամունքների բառարանի խմբի աշխատակից, բանաստեղծ Բագրատ Տավուշը - Ա. Մ.:

— Ինչ է, նման չե՞մ... Ես եմ Հովհաննես Շիրազը, ուրիշ Շիրազ չկա, - եղավ անմիջական պատասխանը, - ինձնից ի՞նչ կուզես:

Մարդը անակնկալ ծունկ չոքեց, բռնեց Շիրազի բաճկոնի փնշը և սկսեց երկյուղածորեն Համբուրել, ինչպես երազյալ սրբի քղանցքները կհամբուրեին:

— Վե՛ր ել, ա՛յ մարդ, ի՞նչ կուզես ինձնից:

—Պաշտոնի՛ բանաստեղծին կարեռ Հարցում մը ունիմ միայն, - կանգնելով ասաց մարդը: — Սփյուռքի մեջ՝ Բեյրութի թե Հայեապ՝ շատ եմ լասմած Ձեր «Անի» պունմի մասին, որից միայն ձեռքեձեռք խլվող սրանչնի պատափներ են Հոն Հայոտնի. Ե՞րբ պիտի պունմը ամրող-ջությամբ տպվի, Սփյուռքի Հայությունը անհամբեր աղոր կսպասե:

Հ. Շիրազն այդ սփյուռքահային Հավաքվածների ներկայությամբ բարձր ասաց.

— Խաթերս Համար, եղրայր ջան, արի Հարցդ էստե՛ղ տուր:

Նրա թեսից բռնած՝ Հովհ. Շիրազը բոլորիս ուղեկցությամբ տարավ Հրատարակչության տնօրենի ընդունարան, քարտուղարուհուց ճշտելով, որ տնօրենն իրոք տեղում է, գուոր բացեց և այնպես ասաց, որ Հատկապես նա՛ լսի.

— Դե՛ Հիմա Հարցդ էստեղ բա՛րձր կրկնի՛ր, որ զիրեկտորը լսե. շնայած «Հուշարձան մայրիկիս» գրքիս տպագրությանն օգնել է, բայց «Անի» դեպքում նրա սրտի մի ականջը խուլ է, Հոգու մի աչքն էլ՝ կույր...

Մարդը Հարցը կրկնեց, և բոլորը լսեցին Հ. Շիրազի իսկապես անօրինակ պատասխանը.

— Իմ «Անի» պունմս երկար ժամանակ վերևների սառցասիրտ արջների, առյուծների, բորենիների, գայլերի, շնագայլերի, աղվեսների ժանիքների, զիշանգղների կտուցների ու ճիրանների մեջ էր: Քրիստոսի շարչարանքով ինձ մի կերպ Հաջողվել է պունմս նրանցից պոկել: Բայց Հիմա էլ նրա, ինչպես և «Հայոց դանթեականը» պունմիս ճակատագիրը վստահվել է այստեղի՝ այս հրատարակչության բոռերին ու գոռեխաներին, մոծակներին ու մրակներին, մրջյուններին ու ճիճուններին, ճանձներին ու շնաճանճներին, որոնց ամենօրյա մահացու խայթոցներից պունմներս փրկելու ոչ մի Հույս չունիմ... Եթե Աստված Հաջողի, «Անի» պունմս Հավանաբար պիտի տպագրվի Բագրատունյաց ազատագրված ու վերաշինված Անի մայրաքաղաքի տպարանում...

— Հիմի տեսա՞ր՝ ով որ պետք էր՝ լսեց, բայց փիյխտիայորեն լսեց ու չպատասխանեց, իսկ դու և Սփյուռքը գոնե Հասկացա՞ք ինձ... Գոնե դուք Հասկացա՞ք, - զիմեց նաև Հրատարակչության աշխատողներին:

Սփյուռքահայի Հարցմանը Հովհ. Շիրազի տված պատասխանը, տեսքնի հասկանալի լուրջունն ու բանաստեղծի ճարտասանական Հարցն այնքան սպասիչ էին ու տպագորիչ, որ բոլորն էլ, իշարկե, Հուզվեցին, անզոր ու անխորհուրդ լուցին ու ցրվեցին:

Իսկ շիրազյան թութագրական և ընդհանրացնող պատկերագործություններին չեր վերաբերում, այլ առհասարակ գրական այն մինուղորտին ու Հանգամանքներին, որոնցում արդեն տասնամյակներ առաջ վճռվել էր Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի»-ի և Հենց այդ պահին Էլ վճռվում էին Պ. Ալեկի «Եղիցի լույս»-ի ու իր՝ Շիրազի, պուսմների ճակատագրերը: Եվ Պ. Ալեկի տպագրված «Եղիցի լույս» գիրքը կալանավորողն ու նրան Հոնորարից գրկողը, Հովհ. Շիրազի «Հայոց դանմթեականը», «Անի», «Թոնդրակեցիները» պուսմները չտպագրողը Հորջորջվում էր «անձ Հրատարակիչ»...

Ժամանակի կոմունիստ դեկավարներից շատերը դժվարությամբ էին Հաղթահարում ազգային մտածողություն ունեցող Հայ մարդու և խորհրդային պաշտոնայի Հակասությունները: Որպես Հայ մարդ նրանք ներքուստ Համամիտ էին, Համակրում, սիրում էին բանաստեղծին, Հանուն ազգային շահերի որոշակի սահմաններում ընդառնություն էին նրան, անում էին Հնարավոր կարևորին, բայց և պարտավոր էին պահպանել միակուսակցական գաղղափարախոսության զյսավոր գիծը: Կար և գրական նախանձի և մարդկային գործոնի խնդիրը: Գրական միջավայրի որոշ ջարամիտների Հաջողվում էր ապակողմորոշել զեկավարությանը: Այս իրադրություններում էլ երթեսն կայացվում էին աննպաստ վճիռներ, որոնց չեր Համակերպվում արդարության ծարավի բուռն զգացմունքային բանաստեղծը: Այսպես է եղել, որ ոմանք պարզապես խանգարել են Հովհ. Շիրազի պուսմների ու բանաստեղծական գրքերի տպագրությանը, բայց Հենց նրանք էլ բանաստեղծի մահից Հետո արագորեն տպագրեցին իրենց Հուչերի գրքերը՝ ջանալով ցույց տալ իրենց մտերմությունն ու «ասեփականաշնորհներ» բանաստեղծին: Նոյնիսկ մամուլում փառարանվեցին որոշ գրքեր, ոմանք նույնիսկ մրցանակներ ստացան: «Ալվանգարդ» թերթը նրանցից մեկի մասին մի գրախոսություն էր տպել, որի մեջ բնդգծվում էր, թե «ճակատագրի բերումով իրար էին Հանդիպել մեծ բանաստեղծն ու մեծ Հրատարակիչը» այն դեպքում, երբ մինչև Հիմա չտեսանք այդ «անձ Հրատարակիչներին»: Նրանց պատճառով են մինչև այսօր ճգնաժիշտ Հովհ. Շիրազի երկերի Հրատարակությունները, շատ գործեր լույս են տեսել ցավալի կրծատում-

ներով ու աղճատումներով, նրանց պատճառով են դեռևս անտիպ մնացել բանաստեղծի մի շարք պոեմները, 1978 թ. Հենց իր՝ Հ. Շիրազի մեռքով կազմած և Ս. Աղաբարյանի խմբագրած, տպագրության պատրաստ բացառիկ «Հատրնտիրը», չուրջ 4000 նամակները... Դեռևս ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտը չի էլ նախաձեռնել բանաստեղծի ամբողջական երկերի գիտական-ակադեմիական հրատարակությունը, բայց այսքանից հետո էլ ասում ենք՝ «մեծ հրատարակիչ»:

Իսկ ոմանք էլ աղնիվ միամնությամբ կարծել են, թե իրենց տներում այդքան «կավ ընդունած», Հարգալից վերաբերմունքի արժանացրած երթեամի մանկության ու դժվար օրերի ընկերները՝ արդեն խորհրդային բարձրաստիճան պաշտոնյաներ Խ. Բարսեղյանն ու Հ. Բաղդասարյանը, այն ժամանակներում պիտի Հարգեին իրենց միջնորդությունը և տպագրեին Հովհ. Շիրազի բոլոր գործերը, եթե բանաստեղծն ինքը նրանց շխանգարեր իր կամայականություններով ու քմահաճույքներով<sup>1</sup>...

Երանե՞ Հավատացելոց...

Իսկ եթե նայենք «Անի» պոեմի՝ խորհրդային հրատարակչությանը Հանձնված և արդեն խմբագրված մեքենագիր տարրերակին, կրացվի բոլորովին այլ պատկեր: Խմկապես կատարվել են այնպիսի կրմատումներ, որոնց կապակցությամբ Հնարավոր է լսել Հեղինակի գայրույթի ճիշճ նրա գրավոր դժգոհություններից: Խմբագիրն ունեցել է անսահման իրավունքներ Հ. Շիրազի Հանձնարեզ տողերն ու պատկերները էջերով կրմատելու համար, չի բավարարվել սովորական Հանձնան նշանով և նրա կողքին գրել է նաև «Հանե՞լ»: Հովհ. Շիրազն էլ կողքին ավելացրել է՝ «Աչքը»: Բազմաթիվ էջերում պահպանվել են «Մնա: Հ. Շիր.», «Վերականգնել», «Ինչո՞ւ ես Հանել, իշո՞ւ ձագ», «Ով է ֆնիել՝ ինքը ֆնջվի...», «Ինչո՞ւ Հանել, Հանվելի՛», «Մրիկա Լևոն...», «Ախր ինչո՞ւ, ինչո՞ւ», «Վայ' ես քո...», «Մատոնիչ սրիկա, Հանող» և այլ մակագրություններ: Ստորև ընթերցողին ենք ներկայացնում բազմաթիվ այդպիսի Հանձնամեջ էջերից միայն մի քանիսի լուսանկարը, որոնց վրա շիրազյան մակագրություններն են:

Ի՞նչ կարող է մտածել այս լուսանկարում կողք կողքի դրված այդ

<sup>1</sup> Նույն Խ. Բարսեղյանն էլ կադմակերպել է Ն. Մշեցու «Մի փետուր արժվի կյանքից» գրքի տպագրությունը, անգամ ինքն է գրքի խմբագիրը. որովհետեւ ընկերուն այդպես օգնելով՝ նրա մեռքով ովավերաթուղթն է ստեղծել իր շիրազամիակության և Շիրազի գրքերի տպագրության խանգարողը շիներու մասին – Ս. Մ.:



էջերին Հ. Շիրազի մակագրություններն ընթերցողը: Դիտի մտածի, որ բանաստեղծն ատիպված է ևստ վերցրել իր ձեռագիրը: Մա արդյոք նշանակում է, թե Հովհ. Շիրազն ի՞նքն էր խանգարում «Անի» պոեմի տպագրությանը... «Անի» պոեմի, շատ չէ, ընդամենը մի քանի էջերի վրա շիրազյան այս մակագրությունները հասկանալի են դարձնում, թե ինչու էր բանաստեղծն իր պոեմը ևստ վերցրել և ինչպես է իրականում խափանվել պոեմի տպագրությունը:

2.

Անիի պատմության վերաբերյալ կա Հարուստ դիտական ու գեղարվեստական գրականություն: Հայոց պատմության այս ցավալի դրվագի՝ Անի մայրաքաղաքի կործանման պատմության գեղարվեստականացման փորձեր եղել են դեռևս Ներսէս Շնորհալու ժամանակներից: Հայկական, բյուզանդական, վրացական աղբյուրներում առկա տեղեկությունների, վիմագրական արձանագրություն-

ների, Հաստկապես Ն. Մատի, Հ. Օրբելու կողմից կատարված՝ Անիի ավերակների հնագիտական պեղումների նյութերի, կիսավեր ու կանգուն տաճարների հորինվածքների շափագրությունների, միջնադարյան քաղաքաշինության, Անիի ճարտարապետական բացառիկ արվեստի ուսումնասիրությամբ Հայ և օտար գիտնականներն ստեղծել են պատմագիտական, հնագիտական ու արվեստագիտական բազմաթիվ աշխատություններ:

Քիչ չեն նաև Անիին նվիրված տարրեր ժանրերի գեղարվեստական դորձերը<sup>1</sup>: Իր հերոսական ու ողբերգական պատմությամբ, ճարտարարվեստի իր գլուխգործոցներով Անին Հովհ. Շիրազից առաջ էլ Հաճախ է դարձել աշուղների, բանաստեղծների, արձակագիրների ու թատերագիրների ոգեշնչման աղբյուր: Խ. Արույխանն իր բայաթիներից մենակում ողբում էր Անիի քանդված լինելու Համար՝ կրկնելով վիմագիր արձանագրություններից մենի «Քանդողի տունը բանդվի» արտահայտությունը, իսկ «Վերք Հայաստանի», «Ռւղեկորություն զեպի Անիի ավերակները» երկերում հիացմունքով է խոսել Բագրատունյաց երրեմնի չեն ու ծաղկուն մայրաքաղաքի մասին՝ երազելով այն դարձնել քրիստոնյա Ռուսաստանի հովանու ներքո վերականգնվելիք Հայոց նորոգ պիտության մայրաքաղաք: Անիից ստացած ներշնչումի արտահայտությունն են Ա. Արարատյանի «Անի քաղաք նատեր կուլա», Ռ. Պատկանյանի «Անիի առումը», Զիվանու Հանրահայտ «Անի», Դ. Վարուժանի «Անիի ավերակներուն մեջ», Ավ. Խաչակրացանի «Իմ քարավանը» պուսն ու «Անի», «Ալյս ինչքան, ինչքան կուզեի լինել» բանաստեղծությունները, Բ. Այվազյանի «Անիի կործանումը» վեպը, Գ. Դուրյանի «Ասպատակությունք...», Լ. Շանթի «Շղթայվածը», Գ. Գևմիրճյանի «Երկիր Հայրենի», Հրանտ Խազգայշանի «Անին ծախմած է, տղաս» դրամաները և բազմաթիվ այլ գործեր: Անշուշտ, Հովհ. Շիրազը դրանցից շատերին էր ծանոթ, մանավանդ Արովյանի, Զիվանու, Վարուժանի, Գևմիրճյանի. Խսահակացանի երկերին և նրանցից էլ ստացել էր «Անի» պատմափիլիսոփայական պուսնը գրելու գրական աղղակները, բայց նա մեղվածան գիտնականի պես ուսումնասիրներ էր նաև պատկերվող դարաշրջանի վերաբերյալ Հոկայական գիտական գրականությունն, նույն շրջանի ժողովրդական քնարերգությունն ու մանավանդ խաղիկներն ու Հայրենները:

<sup>1</sup> Հանգամաներին ան'ա մեր օԱնին Հայ բանաստեղծության մեջ» ուսումնասիրությունը, Գրական Հանգրվածներ, գիրք Ա. Եր., 2003:

«Անի» պունմն, անշուշտ, ասպագայում կունենա իր մեկնաբաններն ու արժնորողները: Դա պահանջելու է տևական ու հանգամանալից ուսումնասիրություն՝ Հատկապես պատմական փաստերի շիրազյան գեղարվեստական ընկալման ու բանաստեղծականացման արվեստի ընութագրման առումով: Հեղինակն իր երկին տվել է Հարմարագույն ժանրային ընութագիր՝ պատմափիլիսոփայական պոեմ: Որքան էլ գեղարվեստական երկ ու ստեղծագործական Հգոր երևակայության արդյունք՝ այն Հենված է պատմական իրողությունների պատկերման և պատմական անձնավորությունների կերպավորման վրա: Ուշադիր ընթերցողն այս երկում կտեսնի 11-րդ դ. առաջին կեսի Հայ իրականության ամենից բարդ ու լարված դրվագներից մեկի գեղարվեստական լայնակտուավ պատկերը:

Բագրատունիների՝ չուրջ 100.000 բնակիչ ունեցող շքեղ ու վաճառաշահ մայրաքաղաքն ապրում էր բուռն կյանքով: Առևտրական ճանապարհների Հանգուցակետում գտնվելով՝ այդ քաղաքը քարավանային լայն կապեր ուներ Արևելքի ու Արևմուտքի, Հյուսիսի ու Հարավի՝ այն ժամանակներում Հայտնի գրեթե բոլոր երկրների հետ, ուներ բարձրագույն ճարտարապետություն, զարգացած արհեստագործություն, գիտակրթական ու մշակութային կարևորագույն կենտրոն էր, թե՛ ներմուծում էր, թե՛ արտահանում: Արևելքի այդ մարգարիտն իր Հարսությամբ ու ճոխությամբ, աննկարագրելի գեղեցկությամբ դարձել էր Հարեւան գիշատիչ տերությունների՝ Պարսկաստանի ու Բյուզանդիայի, ինչպես նաև արարների ու սեղծուկ թուրքերի նախանձի առարկան, որոնք էլ Անին տիրելու Համար Հաճախակի Հարձակվում էին՝ ներկայացնելով անկարելի պահանջներ:

Գագիկ Ա թագավորի մահից Հետո թուրացավ Բագրատունիների պետությունը, սաստկացան ներքին երկպառակությունները Հատկապես նրա որդիների՝ Հովհաննես-Սմբատի և Աշոտ Դ-ի միջև: Հովհաննես - Սմբատ արքան այնքան թուլակամ գտնվեց, որ Համաձայնց գաղտնի կտակով Անին Հանձնել բյուզանդացիներին: Սակայն դրան ընդդիմացան Անիի աղնվականությունն ու բնակչությունը և սպարապետ Վահրամ Պահապետուու զիսավորությամբ ուժեղ դիմադրություն ցույց տվին Հայոց մայրաքաղաքը պաշարած բյուզանդական գորքերին:

ԱՀա այս դրամատիկ անցքերն է պոեմում պատկերել Հովհագը՝ պատմական միջավայրում ստեղծելով Հիշյալ անձնավորությունների բարդ կերպարները և որպես մարդկային կենդանի բնավորություններ ներկայացրել Հարուստ ու խաղացկուն գործողություն-

ների Համապատկերում: Իր ստեղծումից շուրջ վեց տասնամյակ անց սպազրվող «Ալլսի» պունման այդ ժանրի դասական նմուշներից է: Թե՛ իր ընդգրկումով ու ծավալով, թե՛ բովանդակությամբ ու անցյալի գեղարվեստականացման բարձր արվեստով մի սքանչելի կոմոդ է այն, որի էջերում բաղիս բուն իմաստով ներկայացել է Հայոց պատմության մի կարևոր դրվագը: Բազրատունիների պետության վարած ներքին և արտաքին քաղաքականության, թագավորական ու իշխանական տների ներքին հակասությունների, սոցիալական, քաղաքական ու Հոգևոր կյանքի, աղանդավորական խմորումների, դասային ու առևտրական Հարաբերությունների, բանաստեղծության, ճարտարապետության, մյուս արվեստների ու արհեստագործության հրաշայի իմացությամբ է Հովհ. Շիրազը կերտել միջնադարի Հայ իրականության կենդանի գեղարվեստական պատկերը: Պունմով բանաստեղծը վարպետորեն է իրականացրել պատմությունը ներկային և գալիքին ծառայեցնելու մեծ արվեստագետի իր առաքելությունը:

Պունմի Հաջողվածության գաղտնիքներից մեկն էլ դարաշրջանին ընորոշ մարդկային բնավորությունների ու կերպարների ստեղծման բարձր արվեստն է: Հեղինակի իդեալը մարմնավորված է Վահրամ Պահապետու կերպարում. նա Հայոց պետականության և Հայրենի սրբությունների պահապան հրեշտակն է, որ չի խնայում ոչ մի դավաճանի, թեևկուզ նա լինի Հովհաննես-Սմբատ արքան: Խոկ վերջինս կերպավորված է Հզոր արվեստով: Նա ուղղագիծ դավաճանն չէ: Մարդկայնորեն Հասկանալի են, սակայն չեն արդարացվում նրա անձնական թուլությունները, պարսկուհի Հարճի Հետ Հարաբերությունները, բյուզանդացիների Հարկադրմամբ Անին Հանձնելու գաղտնի կտակի՝ Հետկարի ստորագրումը, իր արարքից ամաչելն ու զղման զրանորումները, Հոռոմոսի վանքի կառուցումը, բյուզանդական կողմի շքեղ նվերների շրնդունելը, նախնիների ուրվականների Հետ առերեսավելն ու, ի վերջո, ինքնասպան լինելը:

Պատմականորեն ու գեղարվեստորեն Հավաստի, լիարյուն կերպարներ են նաև Պետրոս Գևոտագարձը, Տրդատ ճարտարապետը, Այծյամը կամ Այծեմիկը, ծերունի որսորդն ու նրա որդի Վարագիկը և ուրիշներ:

Անշուշտ, Անիի կյանքի լայնակտավ պատկերումը, նրա կործանման պատճառների բացահայտումը ինքնանպատակ չէին: Այն Հզոր արվեստագետն էր Հովհ. Շիրազը, որը խորապես գիտակցում էր պատմության և նորագոյն ժամանակների կապը, Հաղարամյանցյալը վերակերտում էր ներկայի և գալիքի տեսանկյունից:

Հեղինակն ինքն էլ մի յուրօրինակ գործող հերոս է, որ ներկայանում է ոչ միայն Հայոց պետականության, Հայության ճակատագրի մասին քնարական, խոհափիլիսոփայական խորհրդաժություններով ու աղնիվ տագնաապներով, այլև տարրապուծված է իր նախընտրելի հերոսների գրական կերպարներում: Ներքին ու արտաքին թշնամիների պառակտիչ գործողությունները, մեր ազգային անվտանգությանն սպառնացող չարիքները չեղորացնելու, Հայոց լեզուն ու մշակույթը, Հայ ընտանիքը, ազգային մյուս արժեքները միաբանված պահպանելով ու զարգացնելով Հայաստանը կայունացնելու և թշնամուն դիմագրավելու կարգախոսները, ինչ խոսք, Հեղինակային մտահղացման՝ արդիական Հնչողություն և բանաձևի արժեք ունեցող գեղարվեստական Հզոր դրանորումներ են:

Պոեմի Հաջողվածությունը պայմանավորում են ոչ միայն կերպարների, մատնավանդ դավաճանների Հոգերանության, նրանց ներքին Հակասությունների, Հերոսների սիրո Հոգերանության խորաթափանց բացահայտումները, այլև Անիի ճարտարապետական հրաշակերտների, դրանց՝ «կույսի Հոնքերի նման» կամարների ու զարդարանդակների, քաղաքային աշխույժ կյանքի, շուկայի և առևտորի բաղմամարդ տեսադրանները: Եիրազյան պատկերավոր մտածողությունն այսուղեղ էլ է Հրաշքներ գործել: Հաճախ նրա պատկերները մրցում են «Հայ արվեստի փշրզված Մասիս» Անիի զարդարանդակների հետ՝ վերատին ցուցադրելով նրա բանաստեղծական Հզորությունը, մեր ուկեղենիկ մայրենիկ ճոխությունն ու գեղեցկությունը:

Հովհաննես Շիրազը իր «Անի» պոեմի Հրատարակումն էլ չտևապէ: Տպագրելով այս պոեմը՝ Երևանի պետական Համալսարանը ոչ միայն նրա Հեղինակի՝ իր Հանճարեղ սանի շիրականացած փափագն է կատարում, այլև լավագույն նվեր է մատուցում Հայ ընթերցողին Անին Հայոց մայրաքաղաք Հոչակելու 1050 և Հայ գրատպության 500-ամյա Հորեցանների առթիվ:

ԱԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ  
Երևան



## ՆԱԽԵՐԳԱՆՔ

Տխուր թիկնել էի մամուած Ախուրյանի այս ափին,  
Ինձ էր նայում, մորս պես լուռ, Անին՝ վերքս ճակատին:  
Այդ ի՞նչ վերք է, որ անխնա ինձ այրում է մինչ այսօր,  
Ո՞վ է տեսել Հական մնա Հազար տարի վիրավոր...  
Կախված է զեռ վերքի վրա լուսնի մաշիկն՝ ինչպես թուր,  
Կաթում է զեռ արյունը մեր սև բերանից թրի կույր:  
Հայոց վշտի բերանի պես Հազար դարեր վերքը բաց՝  
«Ինձ կապի՛ր» է ասում մոր պես «Ձե որդին ես իմ ծնած»:  
— Այս, կապիր են կանչում բոլոր Հերոսները իմ երգի:  
Որսկան Վարրագն ու Հավլունին, անգամ արքան իմ վերքի:  
Այծնմիկը սիրածի Հետ՝ առջև, կապիր» են շշնջում,  
Ախուրյանը, իմ լացի Հետ, այս, կապիր է մոնչում:  
Ու ողջն՝ ի մի՝ Ելնում Հողից, ելնում շիրմից զեռ կորած,  
Իջնում անգամ լուսնի շողից՝ Հառաջում են՝ վերքն է բաց...  
Այս, ո՞նց կապես մորս վերքը, երբ չեն թողնում կապելու,  
Ու չգիտեմ, թե իմ երգը ի՞նչ արցունք է թափելու:  
Բալասանը այս ափին է, մորս վերքը՝ այն ափին,  
Բայց մաշիկը, սև թրի պես, մերկացել է իմ ճամփին...

### 2.

Եվ ահա իջավ երեկոն օրվա՝  
Կարմ նախսերգանքը երկար գիշերվա.  
Ու ափին թիկնել՝ միտք էի անում,  
Երանի տալիս Հավիք ու Հովերին,  
Որ Անի էին ինքնիշխան մտնում.  
Ինձ վշտիս թողնում, ինձ թողնում ափին,  
Այս, ինչո՞ւ ես էլ թեեր չունեի,  
Ինչո՞ւ Հով չէի՝  
Որ ներս թոշեի...  
Ու նայում էի ափից մրմունջով,  
Մայրադուն Հոնքի՝ կամարի միջով  
Երկնքի մի բուռ կապույտն ետեռում՝  
Չքնաղ Անիիս աշքն էր ինձ թվում, —

Բայց այս էլ խղիք իմ աչքից ահա,  
Երբ թրքունու պես, Հագած սև չաղրա,  
Գիշերը բազմեց Շիրակիս վրա.  
Մութ շշուկներով նենդ ու կանացի  
Գլուխը զրեց գիրկն Արագածի  
Ու ծածկեց Անին իր սև մարմաշով,  
Մի սև թրքունու խանդի սև բաշով.  
Մածկեց մշուշով, բայց Արագածը  
Գիտեր՝ որտեղ է իր երազածը: -  
Հազար տարի է իր զլիսով անցել,  
Զի մարել իր սերն աշխարհաշուկ,  
Դեռ աչքի մեջ է Անին մնացել,  
Անին՝ Շիրակիս դշխոն վեհաշուք,  
Որի Հոնքերի մի կամարն անգամ  
Ճոխ մատանի էր մի արքայական:  
Ամրոցներ էին աչքերը բարի՝  
Պարխապների մեջ իր թարթիչների:  
Ամեն գմբեթը մի ծիածան էր՝  
Աստված էլ տակից խոնարհված կանցներ...  
Բայց փղեց ամենն ահեղ մի ալլահ  
Մեր Աստծո զլիսին ամենն, ու ահա  
Այն սև ալլահի սև սովերի պես  
Սև բուն է բազմել սուրբ ավերակում,  
Ու միայն ճերմակ ամպն է, որ, կարծես,  
Գթալով՝ դեռ բաց վերքերն է կապում,  
Դեռ խոր վերքերը չքնաղ Անիիս...  
Որ խորն են, ինչպես ծովակը Վանիս...  
Եվ Արագածը, նայելով դաշտից,  
Այն տեսել սիրով, - այս էլ տեսնելով՝  
Սպիտակում է գլուխը վշտից: -  
Այնինչ Ախուրյանն, Անի Հասնելով,  
Աչքերը յոթնած, կարոտից մթնած,  
Անիի մեջքը զրկում է կարծես  
Մեռած թագունու մեջքին մնացած  
Իր հազարամյա գոհար գոտու պես,  
Կրծքին է սեղմում  
Քնած թագունուն,  
Կանչում է՝ մայր իմ, Հերիք է քնես,  
Զարթնի՛ր, կամ ասա՝ ե՛րբ պիտի զարթնես...

Անի՛, ինձ ու քեզ ոչ թե այս ձորը,  
ինձ ու քեզ մեր շար բայխտն է բաժանում,  
Բայց ահա երգիս հուր ձիավորը  
Բախտիս այս մատղ կամուրջն էլ անցնում  
Ու քեզ է բերում սիրտս կրակված,  
Անի՛, սրբավայր իմ ավերակված...  
Դու ուխտատեղի, ես մի ուխտավոր,  
Բայց ես պիտի քեզ դարձնեմ բախտավոր:

Ու ձորն իջնելով՝ խորհում եմ տխուր.  
— Հայոց մեծ վշտի դագա՞ղն ես, Անի՛,  
Թե՞՞ Հայոց վիշտն ես, որ աշեղալուն  
Հազար տարի է՝ դեռ շիրիմ չունի:  
Թե՞՞ յաթաղանի տարտարոսն ես դու,  
Որ ներս մտնողը էլ դուրս չի գալու...  
— Չէ՛, — շնջում են հուշերն իմ վայոց, —  
Անին փշրված Հանճարն է Հայոց...  
Ամեն փշրանքը մի Զվարթնոց է՝  
Անմահ մեռնելու ճակատագրված,  
Ու թեև այժմ բնակիչն օձ է՝  
Այնտեղ, ուր դարեր, մորս պես Հաստված,  
Իմ Հայոց լեղվով կաղոթեր Աստված,  
Եվ ավերակում իր մայր տաճարի՝  
Թեև իմ Հայոց պատարագի տեղ՝  
Նամադ են անում բուերը վայրի՝  
Իրենց ալլահի ոռնոցով նսեմ,  
Բայց ես սիրտ անում՝ մտնում եմ Անի,  
Մունկի եմ իջնում, որ Հետք խոսեմ,-  
(Բնչպես մի Համլետ

Հոր ստվերի հետ...), -  
Եվ Համբուրելով մեր Հողն Հայրենի՝  
Փնտրում եմ նշույն Հրաշքի վաևմ:  
- Ռ՞ու ես, Շիրակի մայրաշուք դժխո,  
Անի՛, դարձել ես ավեր ու մասունք,-  
Քո պատասխանը, դարեր մտախուՀ,  
Քար լոռությունն է քո ահեղասուգ:  
Ու թե խոտում ես՝ ողբ է կարեվեր:  
- «Աշխարհ չեն է, Անիս եմ ավեր...»:  
Եվ արցունքիս պես շուրջդ Հոսելով՝  
Քո գոտի զետն էլ՝ Հազար տարիներ՝  
Ա՛յս, ո՞ւր ես, Անի՛, ա՛յս, ուր ասելով՝  
Այնքան ա՛յս, ո՞ւր ես, ա՛յս, ո՞ւր ես ողբաց,  
Որ անունն ահա Ախուրյան մնաց...

## 3

Ա՛յս, ո՞ւր են, իրավ, քո Հին փառքի հետ,  
Քո Հազար ու մեկն՝ ապաշավանքի.  
Ամեն մի վանքդ մի Հրաշակերտ,  
Որ քավողն էին իրը քո մեղքի...  
Բայց ահա մամուած Հուշերն եմ կարդում  
Այս ու այն ավեր վանքի ճակատին.  
Մեկն՝ աղերսելով մեղաց թողություն՝  
Պարիսապ է քաշել այս վանքի չորս դիմ: -  
«Կառուցա բուրջս, պարիսապս վիմա՝  
Վասն փրկութեան ի Հոգվո իմո...»,  
Մյուսն՝ Հոր մեղքը քավելու Համար՝  
Այն հին մատուռն է նորել Հոյաշեն,  
Մեկը ջաղացն է նվիրում խոնարհ,  
Որ ների Աստված՝ թե իր մեղքն Հիշեն:  
Եվ ապավինած Հանդերձալ կյանքին՝  
Այս ամենի պես գաղտնամեղ սալից՝  
Մեկն իր եղերքն է նվիրում վանքին,  
Եվ աղոթում է դեռ աղերսալից  
Մթին մրմունցով իր քարագրյալ,  
Որ երկրում թողած՝ իր մեղաց տիղմից՝  
Մեղսամոայլից իր ողեծպտյալ  
Դուրս քաշեն եղներն արորն իր Հոյսի...

Եվ Համբուրելով ուրին էլ Հիսուսի՝  
Գանձ է ընծայում մի ուրիշ իշխան,  
Իր ճոխ կարգածքն է մեկը կտակում...  
Եվ այսպէս, Հազար ու մի արմադան  
Ոգու փրկության հրաշքն են խոկում  
Վանքը լոռությամբ մամուած աղերսի:  
Եվ աշա ինքը արքան էլ՝ այս վեհ,  
Հրաշատնսիլ մայր Հոռոմոսի  
Վանքն է կառուցել, որ մեղքը քավե,  
Որ թողություն տա Աստված մեղքերին,  
Բայց ի՞նչն է մեղքը՝ չի Հայտնել քարին,  
Սա էլ է թաքցրել անգամ իր Աստծոց,  
Իր գաղտնատեղյակ վանքի պես լոել՝  
Աղոթքի մեջ էլ նա մեղսաթաքույց  
Միայն չիրմում է գուցե բարբառել.  
«Աստված իմ, սրբիր այս մեղքն իմ Հոգուց՝  
Մեղք է շնչարն անունն էլ մեղքիս»:  
Բայց ի՞նչն է, իրավ, իր մեղքն, ո՞վ Մասիս,  
Որ դեռ այնպես ես՝ ինչպես քեզ թողեց.  
Այն մեղքով, որով Անին ողողեց,  
Մեղք, որ թաքցրեց անգամ իր Աստծոց,  
Բայց ի՞նչ կարող ես թաքցնել մարդուց...  
Եվ Հուշերն աշա լեզու են Հանում՝  
Մաղրում արքային՝ ծաղրի մեջ լալիս՝  
Թե զինով թասն էր մեռից ցած ընկնում,  
Երր չարագուշակ մի լուր էր գալիս:

## 4

Բայց ո՞վ կարող էր ներս մտնել Անի,  
Ամեն մի դուռը մի լեռ էր Հակա,  
Մեկի տեղ երկու լեռ պարիսապ ունի,  
Մի պարիսապն անցնես՝ մյուսը կգա,  
Ուր մեռ առյուծն է թոշում քեզ վրա՝  
Ժայռե առյուծը, որ թե չար տեսնի՝  
Արյամբ կլցվի սիրտը մարմարյա,  
Վիշապ էլ լինես՝ վրա կՀասնի,  
Կրախի սիրտը քանդակաբարյա,  
Քեզ կծվատե ժայռե ժանիքով».

Թե մտնել ուզես գաղտնաշար մտքով...  
Մտնես՝ ձեն կտա անգամ մեր անշունչ  
Քանդակված առյուծն աշեղամռունչ,  
Որ ժայռացել է խոյանքի ճամփին.  
Երկրորդ պարսպի մայր դռան ճակտին,  
Հայոց առյուծը՝ ընդդեմ օտարաց,  
Զինանշանը հայ Քագրատունյաց,  
Խաչքարի վրա, բարձր պարսպին,  
Քանդակված՝ որպես Հայոց բյուրասպին,  
Որ առյուծներ  
Ականջը ձենի,  
Երախն ասում է ծպտյալ ոսոխին,  
— Վա՛յ ներս մտնողին,  
Երնե՞կ ելնողին...

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1

Որպես թագաղիր ասպետ մի շքեղ,  
Արագածն աշա արևը հանում,  
Քնած արքայի ուկյա թագի տեղ  
Զարթնող Անիի գլխին է դնում.  
Ու եղնում Անին,  
Հագնում ծիրանին՝  
Խրճիթ ու ամրոց հոգսից հանելով,  
Լցնում էր օրփա արցունքն ու զինին՝  
Ըմպելով գինին, վիշտը վանելով:  
Իր գոռ պարխապներն առյուծների պես՝  
Գլուխ-բուրգերը թաթերի վրա,  
Լուռ հսկում էին Հանգիատը, կարծես  
Զորք էին՝ Հագած ժայռնեղն զրահ:  
Ու որպես որդիր՝ մոր երկու կողքին,  
Իրենց մեջ առած Ավագ դուռն, աշա,  
Աշտարակները, տեգերը ձեռքին,  
Աչք չէին դոցում, միշտ ոտքի վրա,  
Խոլ հսկում էին, թե թուրանացին  
Կամ բյուղանդացին, կամ թոնդրակեցին  
Անի չի՞ մտնում գաղտնի քամու պես,  
Որ փշե-մարե Անի տաճարի  
Մոմերը՝ Աստծո աշիկները Հեղ,  
Կամ փլս զմբեթն Հայոց Հանճարի...  
Լուռ հսկում էին Անին կաղնեղուն,  
Հսկաների պես իր աշեղալուն,-  
Աղեղնալարում աչքերը չորսղին՝  
Մուայլվում էին կամ ժապտում անհույզ:  
Ու գալիս էին ճամփերով մեր հին  
Աշխարհաթափառ ու աշխարհախույզ  
Քարավանները գալիս ծանրահնե

Մունք էին իջնում մայր դուան առջև,-  
Պարխապների տակ աշխարհասասան՝  
Մունք էին իջնում պահ մի՛ սրբազն  
«Մտից» զյսահարկն ու վաշխը տալու.  
Ով մտներ թեկուզ շալակ մի բեռով՝  
«Մտից» պիտի տար երկու դոչ բռով,-  
Երկու բուռ գարի, մի դոչ բուռ ցորեն:  
Թե մեկը մտներ հարկը չտված,  
— «Խարճը...» կզոռար վերից արծվորեն  
Աղեղը ձեռքին, Հանկարծ Հայտնված,  
Քամանդար պահակն այն աշտարակից.  
— Ետ դառ, Հարկը բեր,  
Խարջը բեր, անտեր,-  
Զես կարող փախչել իմ... նետահարկից»:  
Եվ այսպես, իրենց՝ անեցոց անգամ՝  
Ներս չէին թողնում առանց այս վաշխի,-  
— Բայց ներս տարածս ի՞նչ է, որ ի՞նչ տամ,  
Քառառն Հավկիթ է, էս անգամ բաշխի:  
«Հարկը...»՝ զոռում էր աշտարակն անգամ,  
Առանց Հարկ լու էլ ներս չէին թողնում,-  
Թե չէ էլ ինչո՞վ Հարճերն ու արքան  
Միշտ քեփ քաշեին փետրե անկողնում:  
Կամ թե որտեղի՞ց խեղճ իշխանուհիք  
Հագնեին ոտքի մարգարտամուճակ,  
Ինչո՞վ չամփունին կաքավն ու եղնիկ,  
Յոթն օր-յոթ գիշեր տալով խրախնանք:  
Կամ ուկեշուրջառ որտեղի՞ց Հագներ  
Վեղարապլուխն արեղաների,-  
Որ վանքում ոսկե սյունի պես կանգներ՝  
Ռւսերին պահեր խավարն իր դարի...  
Կամ թե՝ ինքն Անին՝ ուսկի՞ց էր կապել  
Գոռ պարխապների իր կրկնագուտին,-  
Ինչո՞վ ևն այս ծով Անին պարսպել՝  
Պարխապ, որ զորք է՝ աշքերը չորսղին:  
Կրկընապարսպով մեր յոթնաղարպաս,  
Յոթ մարդահասակ աշտարակներով,-  
Որպես Անիի՝ Հայոց փղերով.-  
Ուր ամեն դարպաս

Խորհուրդ էր մի պարզ՝  
թե՝ ով ներս մտնի Հացիս դևմ թրով՝ կը նկնի  
Հագիսոյան

Կղառնա խակույն իր թրի պատյանն իրնն զերեղման,  
Ով Հաց բերի՝ Հաց կտանի.  
Ով լաց բերի՝ լաց կտանի...  
Ով ներս մտնի աղ ու Հացով՝  
Վարդ ու գանձով դուրս կգա,-  
Ով ներս մտնի գաղտնի օճով՝  
Աղի լացով դուրս կգա»:

## 2

Ու Անին բոլոր դռներով իր կուռ,  
Թշնամու ընդդեմ առյուծի երախ,  
Բարեկամներին՝ սիրո կանչ ու դուռ,  
Իր գիրկն է բացում օրվա Հետ խաղաղ:  
Ու գալիս էին աշխարհի բոլոր ճանապարհներով  
Դեպի մայր Անի՝ դեպի ոստանը մեր վաճառաշահ,  
Ամեն օր ուղտի Հաղար ծանրաբեռ քարավաններով,  
Հաղար բաղրզյան, արծաթ ու ոսկու Հաղար  
շահնշահ,

Որպես մշտաքայլ, բյուր կամուրջներով՝  
Աղդ-աշխարհները ողջ Արևելքի թագուհուն կապող՝  
քարավաններով,  
Հաղարաբարբառ քարավաններով դառնում աշխարհներն իրարու  
կապող՝  
Իրարու կապող քայլող կամուրջներ՝ իրարու կապող, իրարու  
խարող,

Քարավաններով ծով ու ցամաքի պերճանքի անճառ,  
Քարավաններով այն գերեվաճառ,  
Քարավաններով այն մարգարտաշաբ,  
Քառասուն գիշեր, քառասուն ցերեկ կես աշխարհով մեկ կտրելով  
ճամփան՝  
Կանցնեին Հայոց գերված դաշտերով՝ բերելով նրանց բուրմունքը  
միայն,  
Բայց Հայրենասեր բույրն այնքան սուրբ էր, որ թվում էր ողջ  
դաշտերը քաղել  
Վանում, Տարոնում, Վասպուրականում, Ղարսում, Սասոնում բան  
չէին թողել.

Ու բերում էին յոթն աշխարհներից՝ փոխելու Հայոց որդան կարմրի  
Հետ,

Ու ցորյանի Հետ, գինու, արծաթի ու Հայ պղնձի, ու Հայ ոսկու Հետ  
Զիերն Արարիո, ու դրախտարույր Համեմն, ու խունկերն  
Հնդատանների.

Միաժանածալ խասն ու դանավուզն Հազար նորագարդ  
Հեռատանների,

Մովից մարդարիտ, ցամաքից՝ Հակինթ, գինդ ու շափյուղա ու գինու  
կթղա,

Անմահության ջուր, Հայ արյան չափ Հին Հայոց Հին գինին՝  
Հանգած մեր անմեռ

Տիգրանակերտի ամերակներից, որ պեղվում էին ու պեղվում են  
դեռ...

Ու բազամարուկ չիրն Օրորուրազի, գանգեր բյուզանդի, սկիփ ու  
անկույր,

Եվ Բուխարայի անլեզու գառներ՝ փափախաներ գանգուր:

Ակն ու ակունքներ, Հնդկուհու Համբույր խունկեր մեղրարույր,

Խունկ ու զենքի Հետ յոթն Հազար յոթը վարդ-խնկածաղկի քամուկ  
յոթնաթույր,

Լուսնի խոտերից զիշերով քամզած դեղ-սպեղանի, բանգ ու  
բարասան՝

Հայ վերքից բացի՝ ամեն վերքի ճար լոխմանաբամուկ ու Հազար  
բարդամ:

Օրորվում էին ուղտերը բոլոր, շորորվում էին ու բերվում Անի  
Արևելքի ճոխ պերճանքն Հաղարան՝ ծով խայտաճամուկ,

Ճոխ՝ ինչպես տեսնչանքն արքայահարճի, որ քիչ է՝ թեկուզ պաշեր  
նվաճի...

Եվ Հյուսիսների փաղաքուշ մորթիք, քուրք, մուճակ ու մոյկ՝  
Կրակի պես տաք, ձյունի պես փափուկ.

Հոռմի բուրգառ, տաճարաջահեր ու մեղրազինի ու փետրաղալամ.

Մոմ, նեկտար ու թույն, շամամ ու կանթեղ, Հալվի ու մահամ,  
Մոմ, որի լույսը պատանքը դարձակ ճրազի դարի.

Մոմ, որ ծիծաղեց ձեթի ճրազի դազազի վրա՝ լույսով իր բարի.  
Ու բերում էին Հայոց խունկի Հետ

Օտար դաշտերի բույրը ծաղկավետ,

Մեղրավետ բույրը Զինա-տարչինա,

Զքնազ չինուհու ատամների քույր բրինձը Զինա,

Եվ Հաղարամյա ձիթենյաց պտուղն Հեռու Գանգեսի.

Նեղոսի բանանն քինաքինան, արմավն Հեծաղի,  
Եվ Զինմաշինի Հախճապակիններ կաթնագույն թրծված,  
Եվ Հաղար ու մի զիշերներ գործված  
Մատաղ պարսկու Հռո զրկի պես փափուկ գորգեր Իրանի,  
Եվ աղավնաձև պատշանում թաքնված անդրակտուց թրեր  
թուրանի:

Իրանի դելլան, լալ Բաղեշխանի, Մուղանի մնդր, Զիրուտի ջուպաս,  
Եվ Հինգուքուշի ծառերի արցունք՝ դեղին քահրուրար:  
Ող, ապարանջան ու փղոսկրյա թամբեր ու նարդի.  
Ու մնջրանարաթ Շիրաղի շարրաթն արքայավարդի.  
Ու Խորասանի խալի ու խույրեր ու խարախրխա.  
Գամասկոսի տեսք, Վասպուրականի գետնագործ չուխա.  
Գողթանի գիստոր, Տարոնի տորոն, Գնունյաց զինի,  
Ու Մարա մըրադ, զլուխն օձահոյ Հարանամատանի...  
Ու զալիս էին ուղտերը բոլոր՝ Հպարտ, նազելի օրոր-շորորվում՝  
Գոռող նազանքով, ասես զիտեին՝ ինչ էին բերում, ինչ էին տանում.  
Անի քաղաքում Հարված ու ձուլված երկաթն փողկանք, բաղնիքի  
զյուղյում,

Գյումրվա գութան, սապոն Տարսոնի, Գորիսի քրքում,  
Մետաքս ու մաշուղ, Շիրվանի շաբար, Շամախու շողակ.  
Հայ կիմիկիացոց ձորած Հայելի, Մեծամոր կողակ.  
Մուղակ ու լեղակ, կերոն, բուրդ ու բուստ,  
Ու Հայատարագ ոստանի Հագուստ,-  
Տարդեղ ու տորոն, խոյ ու խալիչա,  
Ու ցուլ, կովեր, զրտնակ, խոնչա;  
Ու բաղաք մտնող քարափաններին այս տարաշխարհիկ  
Լուս նայում էին բյուր Հարսն ու աղջիկ.-  
Դուրս էին նայում լուսամուտներից.  
Ներս փախչում շիկնած, զուրս նայում նորից.  
Չուսպ ազահությամբ իրենց մանկական  
Աղջիկը տենչում քողն իր Հարսնեկան,  
Մատներին մատնիք, թներին նազուկ  
Թները զրկող, թներն Համբուրող ոսկե բիլազուկ,  
Մատներին՝ Հինա, մաղերին՝ մինա, ոտներին՝ շինա,  
Կույսը՝ մինթանա, Հարսը՝ թագակապ Ղարսի թանթանա,  
Կամ Քաշմիրի շալ, կամ իր սիրածին  
Կույսն երազում էր փափախ բոխարա, կամ արար այն ձին;  
Ու նայում էին՝ որն՝ անհույսի պես, որը՝ ժպտալով,-

Նոր զարթնած մի կին սպիտակ ուսերն ասես ցույց տալով՝  
Ուսերը ծածկող ամոթխած մազերն հրելով հեռու։  
Այնպես էր նայում, որ կարծես այս է՝ գուրս է թոշելու...  
Աղասի նայելով՝ յայն-դայն ժամանում էր նոր լուսամուտից,  
Եվ Հայում էին նուշ աչքերն ասես նուշի կարոտից,-  
... Թե՞ սիրտը այրվեց նշանաձափի աչքերի նշով.  
Որ կրքի գառը, նուշից անուշով.  
Այուծ է զարմանում մի եղնիկի մեջ...  
Բայց նրան թողած կարուտին իր խեղճ՝  
Ահա մի ջահել պարսիկ բաղրգան՝ թեքվելով ուղտից՝  
Տեսավ ողջ Անին իր գերած այն վիթ աղջկան՝  
Չքնաղ Այծյամին, որ գուրս էր նայում յայն լուսամուտից,  
Բայց ով կիմանար՝ նոր էլ կուզեր սիրտը, թե՞ քողն Հարանեկան,  
Թե՞ Հոնքերի պես իր ոսկեկամար  
Մի փղոսկրյա աղեղ կ'երազեր  
Որսկանի որդի սիրածի Համար,  
Կամ Հին աղեղին նոր կապարճ կուզեր,  
Որ մինչեւ Մասիս միշտ որսի գնար,  
Մասայաց եղնիկներն Անի Հասցներ...  
Կամ քաջին վայել մի խաս արխալուղ  
Կամ, գուցե, խելի չէր հիշում նրան,-  
Հասպա ինչո՞ւ էր դուրս նայում կանուխ,  
Ի՞նչ է, չէ՞ր տեսել ուղտ ու քարավան -  
Թե՞ Անին կերտող ճարտարապետը, իր Հայրը բարի,  
Կարոտ կիտողներ նուշից նուշերը դստեր աչերի...:  
Ու մատադ պարսիկն ուղտող մոտ քչեց՝ ճոճվելով ուղտից,  
Ուղտից, թե՞ մատադ Հայուհու աչերն իր խելքը տարան:-  
- Մորից ևս ծնվել, թե մեր դրախտից,  
Էլ ի՞նչ ևն անում աչքերդ իմ սուրման,-  
Աչքերիդ նուշը, պառչիդ խուրման  
Թող այս իմ նուշ ու խուրմային խառնմամ,  
Մախեմ ու փողով քեզ Համար աստծո դրախտն էլ առնեմ»:  
Վրա է տալիս ու քիչ էր մնում վար ընկներ ուղտից,  
Ուղտը քաշում էր, բայց տիրոջ անտեր  
Աչքը չէր պոկվում դրախտի դռնակ այն լուսամուտից...  
- Մի՞թե Հայուհիր այսքան չքնաղ են՝ պարսկուհուց էլ վեր...  
Մեկ Հատ էլ նայիր, աչքերիդ դուրբան,  
Աչքերդ՝ արևի աչքերի սուրման,

Քո ցավը տանեմ, դուրս թոփ՝ փախցնեմ,  
Քեզ տանեմ դրախտն հորս Բաղդադի»:  
Բայց կույսը փախտվ, ինչպես ձկնիկն է իր ծովը սուզվում,  
Այծեմիկն էր նա, Հրաշտակների գուստորը Տրդատի:-  
Ու ողջ քաղաքն էր կույսի սրահ պես գաղտնատենչ Հուզվում:  
Մանուկներն, Հանկարծ, քար էին զցում ճռճկան ուղտերին,  
Եվ Հանկարծ մի ուղտ՝ փրփուր էր թքում կամ չոքում ճամփին՝  
Էլ վեր չէր կենում թեկուղ ինքն աստված յիներ իր թամրին,  
Չորում խոռվայ՝ էլ վեր չէր կենում,  
Խող Համառում էր, ժայոյի պես մնում,  
Թեկուղ դեմքը Հրեին նրան՝

Թեկուղ օձ գառնար՝ մահաթույն թքեր մտրակը վրան,  
Խոռվայ նստում, էլ վեր չէր կենում յոթն օր, յոթ գիշեր,  
Անհաշտ չարացած՝ Հայացքով անգամ փրփուր կթքեր...  
Մինչդեռ անտարբեր քարավանները անցնում իր մոտով՝  
Ռողողում էին ողջ Անին վարդի, խունկի ու բանգի, Հալիվի Հոտով,  
Ինչպես թոնրատունն իր թաղա Հացի անուշ բուրածով,-

յինկարույր Հացով.

Ուրցով, դարչինով ու ոևհանով, ու Հազրեվարդով՝ դառնում էր  
մի ծով,  
Խունկով, ստաշխով, թեթրոնով, Հոնով, և իմ Շիրակի թարխունով  
բուրյան

Ու բույրը բարձր պարսպից ելնում, ու ձորն էր իջնում մինչև  
Ախուրյան,  
Շուկայի բույրը Շիրակի բույրով ու Համեմաներով ողջ  
Հինդուստանի,-  
— Իրավ, Հնում էլ կային լավ բաներ, գրողը տանի...

### 3

«— Բայց այս ծովն, ալլահ, էլ ի՞նչ զորքով է՝ ո՞չ է պաշտպանում,  
Որ Համառում է, որ կույ չի գնում այս մի բուռ Անին,  
Երբ ողջ Հայատանն անտեր ու գերված՝ մեզ է կույ գնում,  
Սա Հույս է մնում յոթն աղօղով խլված այն Հայատանին...»:  
Այսպես էր խորհում պարսիկ բազրողանն իր չար նախանձով,  
Կամ բյուղանդացի բաղրգանը չար գաղտնաշար մաղձով,  
Բայց չարի խոռքը՝ փրփուրի նման՝ թերանին մնաց,  
Չարախտու թերանն աշխից բաց մնաց, երբ ինչպես մի ծով՝  
Ողջ Հայոց շուկան, ինչպես ծովն ափին՝ ծափ տվեց Հանկարծ,

Երբ խոր հեռվից մայր քաղաքի  
Սպարապետն Հայտնինց,  
Գլուխն անցած Հայոց զորքի,-  
— Ծն անդր, դաշտ,- ձայն տվեց:-  
Ծառս Հանեց ձին, ու ողջ մի զորք,  
Որպես մի նոր սուրբ Գևորգ  
Սպարապետ Պահապունին  
Կանչեց՝ «Բերդ է իմ Անին...»:  
Ժողովուրդը ծով-ծափ դառավ,  
Աղավնիներ բաց թողին,  
Մի պառավ կին իր թոռնիկին  
Մոտիկ բերեց Հաղթողին,-  
Սպարապետ Հայր Հսկայի  
Ասպանդակը Համբուրեց,  
— Դու ես, ասավ, Հիսուսն Հայի՝  
Դու մեծ պահիր ազգը մեծ...  
Եվ Հսկայի քղանցքն առավ,  
Քսեց թոռան աչերին:  
— Աստված Հասնի,- Հսկան ասավ  
Ու ձայն տվեց զորքերին,  
Թուրք քաշեց սուրաց նա զուրու՝  
Զորքը տարավ վարժանքի,-  
Զարախոսի բերանն անհույս՝  
Լցվեց ախով ապշանքի...

Ու գալիս էին քարավանները գիշեր ու ցերեկ  
Հաղարարարիք, Հաղարակարիք  
Տարերկրներից այն Հաղար ու մեկ.-  
... Ու կյանքն Հորդում էր մայրաքաղաքի.  
Դառնում էր մի ծով Հաղարապտող բերք ու բարիքի.  
Հետոմ էր Անին միջիոնամեզու փեթակի Հևով,  
Մայր տաճարի մոտ դառնում էր մի ծով,  
Ու կանչում էին վաճառականներն Հաղարլեզվանի,-  
— Հասե՞ք, քիչ մնաց, կույսեր գեղանի,  
Հայ պատանիներ, Հարսներ թխորակ,  
Խիչ մնաց շարբաթն արքայախորակ,  
Հայոց խանումներ, մատաղ ձեր ծամին,  
Հասե՞ք, քիչ մնաց շաքար լոխումին,

Չեր ոտքը պագող մարդարսամոճակ,  
Անուշիրվանի բաղամ ու քիչմիջ,  
Վշտացյալներին՝ խաշխաշ ու Հաշիշ...  
Իրանի աղևու ու թուրանի թուր...»:  
Ու խոնվում էր, Հորդում էր շուկան, թնդում առաթուր.  
Մովանում այսպես, իրավ դառնում էր Անիում Անի,-  
Լցվում էր, ինչպես արքայի պարտեղ ձորն Ախուրյանի,  
Աշխարհներն ասին՝ զատարկվում ենք, վայ, Անին է լցվում,  
Անալլահ աստված, երկինքը կո՞յցը է, աչքը շի բացվում...  
Եզ աղոթում էր Հազարաչքանի նախանձն աղևկեղ,-  
— Հանի՛ր մի աչքս, միայն թե Հայոց երկու աչքն Հանես...

«- Անին շեն, Մսրն ավեր,  
Սև Հազեր, Մսրա Համեր,  
Սուր սրվե, Մսրա մզրաղ,  
Անին շեն, աշխարհն ավեր:-  
Անին քեֆ, Իրանը սուզ,  
Բյուզանդը, Թուրանը սուզ,  
Ցաթաղան, շատ տի՛ թողնես  
Իմ Հույսի բերանը սուզ ։  
Այսպես քթի տակ մաղձուտ քրթմնջում  
Աշով կունում Հայ մի ականջի՝  
Մատյալ չչունջով Հարցնում էր՝ «րաջի,  
Ի՞նչ է, մեր զորքը չա՞տ աղևու ունի,  
Թե՞ նոր եք դարրնում,  
Որ նետ ու աղևու, տեսնում եմ աՀա,  
Հաղարից մնելով Հաղիս եք գնում...  
Նա՞տ է Հայ զորքը» - Հարցնում էր մի պահ  
Պարաից զմնամիտ, ծափյալ մի սիպահ,  
Որ Անի մտավ իրը բազրկան...  
Մի բյուզանդացի կամ թուրանացի,  
Իրը անմեղուկ մի վաճառական՝  
Ապարանջանը ձևոքին առնացի՝  
Իրքն խայժ բռնած մատանին սուտակ,  
Բայց չզտնելով Հայոց մի Հուդա  
Խոլ ամբոխի մեջ այն խառնակուտակ՝  
Ռամիկ շուկայում մեր խոռվահույզ  
— Առեք... պետք կըս մեր նետը՝ մեր դեմ...  
Եշնջում ահով՝ ծաղրում էր անհոյս.

Պարսիկն իր շուրթը կրծում էր հերսից՝  
ու նույն իշխանը անում, ձեզ իմ նետն անուշ.  
Վաղը... ձեզ անուշ նիդակն իմ պարսից.-  
Անուշ կլինի ձեզ իմ նետն ու նույն...  
Որ Հայաստանը մեզ անուշ լինի.  
Անու տակից էլ Անի կհանենք...  
Մասիսն էլ կուտենք, ու, որպես գինի,  
Զեր Վանա ծովն էլ վրան կխմենք...»:

## 4

Ու կանչում էին, ասեա, դեռ գինով,  
Բաղսիշներ սառած,  
Դալայներ դառած  
Հայոց Համալներն աղան-բուլանով.  
Գոեւեզուե՛ մինչև իրիկուն ճայն էին տալիս,-  
- Հասեք, անեցի՛ք, դուրս թռեք, տեսեք՝ ինչե՞ր են գալիս,-  
էլ բութա մախմուր, Ընդու զառ-մանդիլ,  
էլ Քարուլի բուրգ, Զամբուլի զամրիլ  
էլ պարսից սուրմա, Բաղդադի խուրմա,  
էլ Գյուրջի լիմոն, Մազդաքի ծամոն, էլ ոսպ Խալաչան,  
էլ Սասնո դաշույն, Դվին ապրեշում, էլ Տոսպա վահան,  
Աստծո պես ջնջող ցավերը գոթի՝  
Փութը կես փարա դարարոնոթի  
Միրուն աշքերին թե պետք չէ սուրմա,-  
Միրոր Հո կուզե՞ բաղամ ու խուրմա,  
Վանա մանանա, Սասունի գազպե,  
Վանա ուկերչաց քահրուրար թազրե՛,  
Արքայախորակ իշխան Սևանա,  
Վանա ընկույզը, տառեխը Վանա,  
Վանա սև պանիր, Վանա կարմիր աղ,  
Եվ Արտամետի խնձորը շարմաղ,  
Նուռն Արդաշանի, Հալեսի Հալվան,  
Հասեք, ջահելներ, աղջիկներ ալվան,  
Հարսին՝ ոսկերող, փեսին՝ բուխարա,  
Փեսինը՝ ոսկով, Հարսինն՝ անփարա,  
Հասեք, քիչ մնաց կողակն Արագի,  
Փութը կես փարա յուղն Ալազյազի,  
Ով չուտե թուզը, ընկույզը Վանա»

Վանա կարուտից կուդ պիտի մնա...  
Առեք, չեք տեսնի Էլ նուշը Մուշի.  
Մեկ շատնողն Հաղար սիրտ պիտի մաշի...  
Հայ Նախճանի մեղրն ով չուտե՛  
Դառը կմնա՞ իր սիրտը կուտե,  
Հապա բժիռումի՞ք Հայոց մայր Հողի՝  
Հաղարապտուղն Հայ Ղարաբաղի,  
Առեք... կփակվեն ճամփեքը շուտով,  
Կմնաք Վանա մեղրի կարուտով.

Էլ Անի յի գա բույրը թինզյոլի Հայ ուղտի ոտով...  
Ջեջիմ կղառնա Հայոց այս բախտի գորգը ծաղկածով...  
Առեք բռնոթին, որ մնաք արթուն,  
Քթկալը կնկան, բաշլուղը՝ մարդուն,  
Պուսի սև դայֆա, Թավրիզի թութուն,  
Հասեք, քիչ մնաց, Հարսներ արմաղան,  
Նախրի դաղղղան, դահճի յաթաղան,  
Արևառինջի նարինջ ու թուրինջ...»:

Եվ մագաղաթներ՝ զեռ նոր Հղկված, զեռ Հույսի պես ջինջ,  
Դեռ չկարմրած Հայոց պատմությամբ և Հայոց արյամբ:-  
Ու ծովանում էր այս ծով գանձնրով Անին զեռ անամայ,  
Մի ձեռով տալիս, կարծես առնում էր Հաղար մի ձեռով:  
Ու գալիս էին այսպես ծանրագին արևելանոխ ու բուրյան  
բեռով  
Այս բերող-տանող քարավանները օրերով այսպես, այսպես  
դարերով  
Գդալի նման լիբը մտնում ներս, ուկի գդալով դատարկ  
դորս գալիս,-  
Գդալ առ գդալ ամեն օր գալիս, գալիս ամեն օր, ծով էին  
տալիս,  
Որ ավելի գարշ գոռողացնեն Հարուստ ու գոռող մի բռու  
վայերին

Ավելին խոնարհ դարձնեն ավելի  
Խետքերն ի վերա Հայոց վանքերի,  
Քանդակված Հայոց վանքերի վրա

Դեռ Հառաջում են զրով խաչքարյա,-  
ա- Վայն Հասագ, Հայեր, փողով ապրողին՝  
Քառասուն Հավկիթն եղավ մի փարա<sup>1</sup>, -  
Վայ մեզնից Հետո աշխարհ եկողին,

Սև ձուն դրեց փողն աշխարհիս վրա,  
Քառասուն Հավկիթն եղավ մի փարա...  
Ավաղ, Հացը կշեռք տեսավ,

Մարդ-արրություն, քո վերջն Հասագ»:  
Անիում Անի իր մայր տաճարով՝

Ինչպես Հայաստանն է՝ իր Մասիս սարով,  
իր պալատներով, իր զոռ բուրգերով, Անին  
մշտամրոց.

Իր առյուծարաշ աշտարակներով<sup>1</sup> ապագենն  
Հայոց -

Իր Հազար ու մի վանքերով շքեղ.

Իր պարիսպների ժայռե բյուրասպով՝  
Այստեղ՝ Շիրակիս դաշտում թափագեղ,  
Ուր դինվեց Անին իր ժայռազրահ

կրկնապարապով.

Արագած լեռը, որպես կուռ վահան, իր բաղկին  
առագ,

Իր Հազարամյա՝ իր ջահել բազկին,-  
Ախուրյանն, ասես, իր արծաթակոթ նիզակը  
դառագ,

Ճախրամթև տվեց յուր ազատ, անկախ  
արծվաճիչ խոսքին,  
Առյուծագատկեր<sup>2</sup> կտրեց իր ուկին,

Խրոխտաց դարեր, բայց քանի տարի.

Ծ, քանի՞ դարեր իր Տրդատների

Նուրը, աշխարհաշեն Հանճարն հեղեղվեց.

Մինչև որ Անին հրաշքի փոխվեց՝

Յոթն անգամ յոթը իր արքաների

<sup>1</sup> Մի փարա՝ այժմ մեկ ու կես կուգեկ: Արձանագրությունը տե՛ս Շիրակի վաւերք վրա, վանքը կառուցել է Հայոց սպարապետ, այս վեպի Հերոս Վահրամ Պահապետին Վանքը ու առյօն պունդը նորա և իմ Հռեշտականն են...

<sup>2</sup> Հայոց ոսկեղբամն իմ Հայրենի Շիրակի Անիի Բագրատունյաց թագավորները առ յուծապատկեր էին կարում:

Թագն առավ զլիսին, մայրաքաղաքվեց,  
Քաշեց օրերի արցունքով Հյուսվող  
թագբեհն դարերի,

Հագավ ծիրանին և առյուծարաշ իր բարբառունյա  
նոր գահին բազմեց՝  
Օրեր խաղաղած՝ Հավերժի Համար դարեր ուսպմեց  
Մերթ իրանի դեմ, մերթ թուրանի դեմ դարեր  
կրակված,

Մերթ նետի նման խրոխտասլաց,  
Մերթ աղեղի պես վար կորաթեքված՝  
Հույն խաչի տակ էլ Հայ Հիսուսի պես դարերով  
ճկված՝

Բյուզանդից խարված, Անին՝ քարացյալ մեղեղին  
Հայոց,  
Անին՝ բազմաբուրգ, Անին՝ կյանքի ծով, Անին՝  
ալեկոծ,  
Անին՝ խելաչեղ, Անին՝ իմաստուն, Հայոց վշտերի  
յոթ ճամփամիջին  
Վեր Ավարայրվեց՝ սուրն Հենած խաչին...  
Անին՝ քարացած Հառաչանքն Հայոց,  
Որ, այս, չհասավ Հավերժ խլացած աստծո  
ականջին...

---

Անին՝ Արագած, թիկնած Արագած իր  
լեռնալանջին:

2

Բայց ավաղ, ընկավ վայրկյանի ձեռքով  
Դարերի հսկան՝ Անին բովանդակ.-  
Այժմ էլ ինչպե՞ս, թեկուզ իմ երդով,  
Ողջ վերաշինեմ Անին ավերակ...  
Ի՞նչ զրանիսոյա խոսքի գոհարով...

... Ու գալիս էին ճանապարհներով՝ մեր արքայական  
Այն տարաշխարհիկ քարավանները, որ դարեր եկան,-  
Գալիս՝ ժանրաբեռ՝ ծունք էին իշխում Հաղթ ու անառիկ Անիի  
առաջ,

Ու շնչանում էր, Հնանում Անին թև ծիծաղի մեջ, թև  
յայնահառաչ

Գողորիկ Շիրակիս թագն ու թագուհին՝ Անին կարմրաքար,-  
(Այսպես ավեր չէր, ինչպես կայծակի զարկած արծվարույն...)  
Նեն ու շքեղ էր, շքեղ ու ճոխ էր Անին՝ քանի՞ դար,  
Սրբատաշ Անին՝ կանգնած սրբատաշ խաչքարի Հանգույն:  
Կամարներն Հայոց կուսանց Հոնքերի նման կամարված,  
Իր Հաղար ու մի խաչ-գմբեթներն էլ՝ Երկնքին գերված,-  
Զինված, մխորված թագ Հայաստանին՝  
Անին իմ խոնարհ, գոռողըն Անին,

Չքնար Զվարիմոց տաճարի նման՝ բաղմած իր գահին,  
Հայ քաղաքների մայրը, քարակերտ Հայ աստվածուհին,-  
Իշխում էր Հայոց թագուհին զառած՝ արդեն քանի՞ դար,  
Այսպես քանի՞ դար, բայց քանի՞ Հաղար՝

Օ, քանի՞ Հաղար ճարտար որմնադիր, քարտաշ ու վարպետ,  
Ուրիշ Հանեցին նախչաքար Անին, Անին բարձրաբերդ, -  
Քանի՞սը կորան՝ մինչև լուսնի պես Անին լիրն առավ,  
Իր Հաղար ու մի վանք ու տաճարներն առած՝ վեր տարավ՝  
Որպես քարացած աղոթքներն Հայոց, Հայոց մեղեղիք,-  
Անին՝ քարացած երաժշտություն՝ Հասած մինչ Երկինք,-  
Որ Հասած անզամ Հավերժ խլացած աստծուն իր մունջ,  
Որ Հաղար ու մի իր տաճարների զանգ ու դողանջով,  
Իր նարեկացու երկնածնրադիր ողը ու Հառաչով  
Հայ խոնարհ ոպու ըմբուստ փոթորիկն Հասցրեց աստծուն,  
Մերթ բռունցք զառած, մերթ խնկարուրվառ արցունքով օծուն՝  
Ողբում էր Անին, Ախուրյանի պես ծառս լինում ցածում,

Սեղմված երկու ժեռ ափերի մեջ՝ Պարս ու Բյուզանդի...  
Հրաշակառույց Անին բարձրագահ, որ կանգնեց ոտի  
Քար խոսեցնող Հայոց Հանճարով՝ քարգործ Տրդատի.

Մարգարտաշարևմ որմները փլված,

Մնց երկվորյակեմ խոսքեղեն քարով

Փլված Հրաշքը՝ Անին իմ խլված...

Ինչպե՞ս վերայունեմ պալատները վես,

Ինչպե՞ս խոյակեմ այռւները բոլոր,

Ինչպե՞ս կամարեմ իր Տրդատի պես՝

Հոնքերի նման իր աստվածամոր:-

Ինչպե՞ս խոյակեմ խոր այռւները վես,

Ինչպե՞ս խոյակեմ, որ խոյաՀարի

Անիի անմահ պարիսպների պես՝

Փշրե Նղյուրը շարաչք օտարի:

Ինչպե՞ս կառուցեմ մեծ Տրդատի պես

Ես ահ ու զողով իր աշակերտի,-

Այս, ինչպե՞ս կերտեմ նույնքան պարզ ու վես

Գործը քառասուն Հազար վարպետի:

Ինչպե՞ս կառուցեմ լոկ երգիս ձեռով

Իր բուրգն ու պարիսպ, իր տաճարն ու բերդ,

Որ Անի մտնեք զեթ երգիս զոնով՝

Շշնջաք՝ կեցցե՞ս, Հանճարեղ վարպետ:

Իմ ձիրք ու զանձերն ինչպե՞ս Հեղեղեմ

Քար խոսեցնող Հայոց Հանճարով,

Որ ավերակներն հրաշքի փոխեմ,-

Ես բերեմ Անին երգիս տաճարով.

Ես բերեմ բոլոր իր պալատներով.

Աշտարակներով, բուրգերով իր վես,

Որ Անի մտնեք, որ նա թվա ձեզ,-

Նոյն չնաշխարհը՝ նոր ելած զահին,

Իր աղ ու Հացով.

Իր խինդ ու լացով

Ողջ Արևելքի մայրն ու թագուհին,

Անին՝ կործանված մեր աստվածուհին,

Որի Հոնքերի Հայաստվածաշեն կամարի տակով

Ալլահն էլ կանցներ իր զրադաշտյան արևի թագով:

Սակայն, ով Հուշեր, ձեր մեջ է Անին,  
 Ինչպես այն գիշեր, երբ կյանք էր ու չեն,  
 Երբ նոր էր լցնում իր լացն ու զինին  
 Հոգսերի բաժակն իր աշխարհաշեն -  
 Ինչպես այն գիշեր, երբ տարեգիրը, իմ Հայր Անեցին  
 Իր վերջին օրերն այրելով մեկ-մեկ ճրագի բոցին,  
 Աչքով նժարած աշեղատեսիլ օրերն ամրուսած՝  
 Մագաղաթին է ավանդում իր դարն՝ Հավերժի փոխած,-  
 Երբ Անին մնաց ողջ Հայաստանից՝ պարագով իր կոռ,  
 Ինչպես վանդակված արծվից՝ փրկված մի թրափինուր,  
 Երբ մի ծառ թողին Հայոց անտարից ազգերն Հեղհեղուկ...  
 - Եղուկ և դկելուս, որրացավ Հայոց իմ ազգը, Եղուկ...
 Մեռավ անմնոյալ արքան իր Գագիկ, թագավոր Հական,  
 Անշուք ազգն Հայոց՝ մեծաշուք թաղեց.  
 Բայց գերեզմանում չուռ եկավ արքան՝  
 Զգաց, թե Հայոց իր զան ում թողեց.-  
 Ավագության վերին կամքով  
 Հոր զորքն ու ձին սանձ ու թամբով,  
 Հոր Հողն ու ջուր,  
 Հոր բերդն ու թուր,  
 Հոր թագն ու զաւն արքայական՝  
 Ավագ որդուն է միշտ Հասնում,  
 Այս է օրենքն Հավերժական,-  
 Ահա ուսկից է միշտ բանում  
     Այս զահատննչ  
     Կոխին անվերջ՝  
 Մեկից ծնված երկուսի մեջ:-

Երկու որդի թողեց արքան,  
 Գագիկ արքան առնացի,  
 Մեծն առյուծի տեսքով, սակայն  
 Փոքրը սրտով առյուծի:-  
 Առյուծն, իրավ, առյուծ է միշտ, բայց առյուծ կա՝ օձ ունի,  
 Քեզ թույն կտա զինու թասով, թույն՝ նշխարով մյուսոնի...

Ու կովեցին գահի Համար՝ զորքով եղան իրար դեմ,  
Ժառանգները Հայոց գահի Հայոց բախտով մեր զժիսնմ.  
Խարվեց ազգը, ճեղքվեց ազգը. այս է վայր Հայ ազգի.  
Հայ բաղուկներ փշրվեցան Հայ նիդակով Հայ բաղկի:  
Հայոց արյուն խմից Հայոց անհագ թրի թերանով,  
Հայոց ճերմակ ծաղիկները Հայոց կարմիր արյունով  
Կարմրեցին՝ ամոթահար գլուխները կախեցին,

Երբ գահատենչ եղրայրները զորքով իրար բախվեցին,-  
Վաթսուն Հազար ուներ մեծը, բայց աշոտ էր իր խորքով.  
Փոքրն Հաղթեց մեծ եղրորը քսան Հազար իր զորքով.  
Վասպորական երկրի զորքով՝ Արծրունիով զորավիր  
Հաղթեց, սակայն չհովացավ ոչ մի Հուտ ծարավիկ.-

Մեծ եղրորը Անիի գոռ պարհսպները փրկեցին.

Երբ ներս փախսավ փլված զորքով, զրառմ թողած թուրն ու ձին:-  
Թափից արյունն Հայ քաջերի, Հայ քաջերի թրերով,-  
(Զի ողբա, թե չիներ այսպևս թափված զարերով...):  
Հայոց արնով Հայոց կապույտ Ախուրյանը կարմրեց,  
Անի քաղաքն աստվածամոր պատկերն ազգով դուրս թերեց.

Լսեց Հեռում Բյուզանդիոնը ու ծափ տվեց գողունի.

Ասաց՝ «Իմն է Հայաստանը, երբ իր տանը գող ունի...»  
Բայց վեր ելակ Պահապունին՝ սպարապետն, ինչպես թուր.  
Յմահ պատշան դնել տվեց եղրայրների թուրը կույր.-

Բայց մռնչում էր փոքրը վագրավոր,

- Նա վանահայր է, ոչ թե թագավոր.

ՕՀան Սմբատը՝ իմ չեղրայրը խեղճ,

Քամուն է տալու Հորս գահը պերճ,

Թույլ թագավոր է, Հզոր արևոտ.

Նա զրբի քաջ է, և ոչ թե զննքի.

Գինու բաժակ է սիրուր բյուրեղյա,

Թող վանահայրը դառնա մի վանքի...

Բայց վեր կացավ Պահապունին,

Պատերազմեց փոքրի դեմ,

Էլի Հաղթեց թուր-Հավունին,

Անին պահեց Մասիս-վեմ:

Հաշտարարեց՝ ի սեր ազգի՝ եղրայրներին գահատենչ.

- Քո մեծ եղրոր մահից Հետո թող քեզ մնա Անին պերճ...

Հասակ վրաց թագավորը հրեշտակով դաշինքի.-

Խոլ բռունցքվեց ավագանին, դառավ կը եռքն իր կամքի.  
Կը եռք զրեց եղբայրներին, կիսել տվեց իրար մեջ  
Հայաստանը, մի հացի պես, ու ողջ Հայոց գահը պերճ: -

Մնաց վանանդ իր կես թագով

Փոքրին՝ քաջին՝ Աշոտին,

Անիս մնաց՝ իմ Շիրակով՝

Մնձին՝ Օհան-Սմբատին...

## 6

Բայց թե՝ փոքրը փոքր էլ մնաց փոքր հոգով,

Զէր հագենում անհագ սիրտը կես թագով.

Առյուծն ինքն է, գահին ինքն է արժանի,-

Այսպես խորհում, ելք էր փնտրում անդադար,

Որ Եղբորը կես թագից էլ բաժանի...

Ու գեմքն ասես մագաղաթվեց վշտահար

Ու մի զիշեր, աղերսագիր կարուով.

Կանչել տվեց մայր Անիի արքային.

- Թե ճար լիներ՝ ևս կգայի իմ ոսով,

Ոտնարորիկ... զլուխ տալու քո գահին.

Բայց հասնում է մահս ոտքով մեղքերիս,

Վերջին անգամ եկ աչքերդ Համբուրեմ,

Հասի՛ր, որ դու փակես կոպերն աչքերիս...

Աղ ու հացս քեզ մահովս կրերեմ...

Իմ կես թագն էլ թող քո զլուխն Համբուրի,-

Թող երկարե կյանքդ՝ նման աղբյուրի...

Ներիր մեղքս, մեծ եղբայր,

Իմ կես հայրն ևս, դու իմ գահն ևս սրբազան,

Հասի՛ր, որ ինձ Հուղարկես,

Հանգիստ իջնեմ գերեզման,

Կիջնեմ, թե որ ինձ ներես,

Թե ինձ ներես հոր նման,

Դառը ժապտաց մեծ եղբայրը կես գահին,

- Հոր փորողը, Հորը կը նկնի, շշնջաց,

Քանի մահ կա՝ գահ չի մնա ագահին,

Բայց ի՞նչ աննմ, երթա՞մ, թե՞ոչ ոչ, ով աստված:

- Զերթաս,- ասաց Պահապունին՝

Սպարապետն իմաստուն:

- Գնա,- ասաց իշխան Սյունին,

Թաղեն իրեն քո որդուն: – Զերթաս, – ասաց Գևոտաղարձը՝ Կամողիկոս ծերունին: – Գնա, – կրկնեց իր ասածը Վեստ Սարգիսը՝ նևնգ Մյունին: – Զերթաս, – ասին իշխանները, – Թող լավ մնոնի՝ նոր գնա, – Այսուղի թող լան քո աչքերը, Գնա, երբ որ մահանա»: Աղերսեցին Պահապունին Եվ թագուհին իր խոնարհ, Բայց չողոմեց իշխան Մյունին. – Զես Հապատում, ինձ էլ տար... Բայց չգիտեր՝ ո՞ր ափն ընկներ Թագավորի սիրուր կախ, Գնա՞ր, թե ոչ. – ո՞ր մենին աներ՝ Միտք էր անում տիրուրախ: Ու յոթ զիշեր կը զռում էր Կասկածների կշեռքով, – Երբ գույժ եկավ, այս զիշեր Հասիր խունկ ու պատաներով... Հասիր, մեռավ... էլ ի՞նչ եղայր, Որ Նղրորը չթագի, – Ու թաղելու գնաց խոնարհ, Որպես դին իր ոստիխ: Սպախմրով, ձիով եկամ Թալին Հասավ, մտավ ներս, Ի՞նչ աղ ու Հաց՝ վանդակն ընկապ. Սև Հորն ընկնող Դավթի պիս... – Այս ի՞նչ արիր, ով ազգուրաց, Քո աղ ու Հացն ա՞յս էր, չո՞ւն: – Մահն է քոնք, ի՞նչ աղ ու Հաց, էլ քո ի՞նչն է իմաստուն, Որ քո ոտքով իմ ձեռքն ընկար էլ քո ի՞նչն է թագավոր... – Բաց թող գնամ, ով ապիկար, Նոր փորողը կրնկնի Հոր...

Ինձ ազատե՞ իմ թագն էլ քեզ,  
Իմ կես գահն էլ գահիդ պես...  
Հրամայիր՝ ինձ խնային,-  
Ով Կայենից դու Կայեն...»:  
Թայց կես արքան առանց խղճի.  
Հրամայեց, որ Հանեն  
Աչքերն Հանեն, ապա՝ դահճի  
Չեռքով գաղտնի սպանեն...

## 6

Թայց այդ պահին Պահավունին  
Ասաց՝ «Նևնգ է իշխան Սյունին,  
Թագավորաց Հորը փորել՝  
Ինքը կուզե թագավորել,  
Գահատենչի կույր ծարավով  
Վայ թե փորձանք դառնա դավով՝  
Առաջ մեծին, Հետո փոքրին  
Հոր կզցե, կիշխե զորքին...  
Հիմա խղճին ո՞վ է նայում:  
Եղբայր Եղբոր չի խնայում»:  
Այսպես խորհեց Պահավունին,  
Թռավ, կապեց թուր-Հավլունին,  
Հրամայեց, որ ձին թերեն:  
Չին թերեցին, ու վեհորեն  
Մունկի իջավ ձին Հավլունի,  
Մունկի իջավ ձին ձեռնասուն՝  
Մունկի կիջներ, որ տերն Հեծնի  
Չեռնասուն ձին, ինչպես ասուն:  
Ու տերն Հեծավ խկույնելթ,  
Թիկնախմբով - մթնաշաղից.  
Թռավ ինչպես Հույսի մի նետ  
Մայր դարպասի Հոնք-աղեղից  
Կյանք ու մաշու ժամին Հասավ,  
- Ով տիրասպան, այս ո՞ւմ ... ասավ,  
Զարկեց, դահճի ծունկը ծալեց,  
Թագավորին դահճից խլեց  
Թարգին առավ  
Արծիվ դառավ.

Արծիս դառավ,  
Անի թուավ,  
Անի թուավ կես գիշերով  
Կես գիշերով,  
Լիքը սիրով  
Բերեց, գահին բազմեցրեց  
Թագավորին իր Հաղթ ու մեծ:  
Այսպես նորից փրկվեց արքան,  
Խաչակնքեց անբույժ ցավից.  
— Ով տեր, փրկյա ևդրոր դավից,  
Ես թշնամուց կփրկվեմ...  
Լավ է օտար թրով դարկվեմ...  
Ով տեր, կյանք տուր Պահավունուս՝  
Հայոց փրկիչ թուր Հավլունուս»...

## 7

Ահա թե ինչ է գահաքաղցն Հայի ...  
Եվ այս նենգ օրից Անի աշխարհում  
Արքայի մուտքը կամ ելքն արքայի  
Էլ չեին չուքով չեփորահարում,-  
Ու թուխսի նստեց սև անգղն ահի ...  
Ու հրամայեց տիրամին արքան,  
Սրելով բեղերն իր դաշտյնասն,  
— Ահա հրամանն իմ արքայական,  
Որ այսուհետեւ իմ չեղրոր առջեն  
Բոլոր դռներով գոց է իմ Անին,-  
Ինչպես իմ սրտի դուռն այսուհետեւ...  
Իմ կյանքը փրկեց իմ ավագանին  
Իմ Պահավունու «Հավլունու թրով»  
Անիի անմահ ճակատազրով:  
Եվ սաստ հրաման իմ աչք պահակաց,  
Վայ կույր պահակաց, թե ծագոյալ մտնի,  
Կմտնի՝ թե մի աչք գտնի քնած,-  
Մտնի՝ աչքի հետ մահը կգտնի...  
Մահ այն եղբորը, որ զեռ ահ կտա,  
Իմաստությունս ես այժմ գտա...»;  
Ու ոսոխվեցան,- ով Հայոց աստված,  
Այս մարդ արարածն ինչո՞վ է հաստված

Որ նույն արգանդից թե ոչխար ծնվում,  
թե տիսմար խոյ է լույս աշխարհ Համեմում,-  
Երբ մանուկ էի՝ չշնջում էին շուրջս վշտաւար,  
թե նորից պիտի աշխարհ գա շուտով Քրիստոսն  
արդար,

Մեռած-կենդանի մեղավորները ողջ պիտի դատվեն,-  
Ո՞ւր է, չի գալիք, որ թացն ու չորը իրարից զատվեն,  
թե պիտի լինի աշեղ դատաստան ամենքի Համար՝  
Ինչո՞ւ է ելնում եղբայրն Եղբոր դեմ՝ այսքան

խելազար.

Իսկ բյուր ննջեցյալ մեղավորները դեռ քանի զնում  
Ավելի Հանգիստ ու խորն են քնում...

Գլուխը քարը ննջեցյալների.

Մեղքերը գրկած թող անդարձ՝ քնեն,-

Միայն թե մեղսոտ կենդանիների

Աշեղաստատիկ դատաստանն անեն,

Այնպես, որ մնոյալ մեղավորներն էլ չիրամում  
Հառաջեն,

Շուռ գան զարգանդած ու կայծակնաշար

Նախիրի նման մոխրաբերանով մեղա Հառաջեն...:

## ԳԼՈՒԽ ԶՈՐԾՈՐԴ

### 1

Եցվեց երկնքի դաշլիճն ակնասիշ՝ ու հոծ աստղերով,  
 Ինչպես պալատը՝ աշից զարմացած Հայ իշխաններով.  
 Ու կսպասեին Լուսնի ծագելուն,  
 Ինչպես իշխաններն արքայի գալուն;  
 Եվ աշա ծագեց Լուսինը մոլոր՝ երկնի թագուհին,  
 Լեռն ի վեր ելավ իր թագով ոսկե,-  
 Եվ աշա ելավ երկրի թագավորն ու բազմեց դաշին՝  
 Թաքցրած վշտով Ծան Սմբատը ոսկեթագ ու վեհ:  
 Ժպտաց Հոծամբոխ իր իշխաններին,  
 Ինչպես Լուսինը իր ծով աստղերին:  
 Ու ոտքի ելան իշխանները պերճ.  
 – Ողջույն արքային, – դաշլիճը թնդաց,  
 – Ողջույն իշխանաց ու երկրին իմ խեղճ...  
 Ու խոլ խնջույքով ալկամա խնդաց  
 Մաշապուրծ արքան և ինքը լցրեց  
 Իր գինին իր թասն, ասաց. «Այսուհետ  
 Դու ես իմ Հայրը, տեր սպարապետ,  
 Աչքերս զավաթ, արևս՝ գինի,  
 Ինչքան լույս ըմպեմ՝ կենացդ լինի»...  
 – Կենացն Հայրենյաց, իմաստուն արքա,  
 – Էլ ի՞նչ իմաստուն, կորցրել էի,  
 Որ ես իմ ոտքով իր սև ձեռքն ընկա»:  
 Երազիս՝ զետերն Արազը թափվում՝  
 Մովանում էին ջրերն Արազի,  
 Բայց գետերն Հանկարծ թրերի փոխվում՝  
 Սիրտն էին խրվում մեր մայր Արաքսի  
 Ու էլ չէր Արազն ափերին բախվում...  
 – Այդ երազն, արքա, այս էր՝ կատարվեց –  
 Թուրքետերն Հայոց իշխաններն են չար,  
 Մայր Արաքսն՝ Անին, որ այսպես խոցվեց...  
 – Իրավ... մնացի մենիկ ու անձար...

Կտրեցին ջրերն իմ ջրաղացի.

Գարի է դառնում ցորենն իմ հացի:

Ով իշխաններ, էլ մերը չէ

Վասպորական - Արծրունին,

Էլ Հայ վշտով չի Հառայե,

Ինչպես Հեռու քաշված Սյունին:

Նա զորք տվեց իմ չեղբորը,

Նա զորք Հանեց Անիի դևմ,

Նա էր փորել այն աև Հորը

Թոնդրակեցոց բահով դժխնմ:

Նախարարներն Հեռու մնում,

Եղրայր Եղրոր զեմ են Հանում,

Որ ինքն Հաղթեր, արքայանար...

Բայց ետ այսու՝ ոչ մի Եղրայր,-

Գոց է Անին նորա առջե,

Ինչպես առջե թոնդրակեցոց...

- Գոց է մեր սիրտն այսու Հետե

Արքա, քեզ ինքն աստված կեցոյց...

- Արևն Հայոց դու մայր գահի...

Ու խմում էին կենացն արքայի,-

- Կասպես... Թշնամուդ աստված կսաստե,

Անին կա, թող նոր Վասակը վայրի.

Էլ ոչ մի փորձանք մեզ չի նվաստե,

Եղրայրուրացին՝ մահը թող տանի՝

Ի սեր մայր գահին մայր Հայաստանի:

- Ապրի Հայոց - մերոց արքան,

Ապրած կենա մայր գահին,

Հայոց գահի փառաց վկան,

Հաղթեց անգամ իր մահին,

Ու մինչեւ լուս խմում էին, բայց գոց էր սիրտն արքայի,

Երգում էին գուսանները գովքը փրկված իր գահի:

- Առաջ քեզ է աստված ծնել,

Որ դու բազմես Հորդ գահին,

Եղրայր Եղրոր զեմ են Հանել,

Որ ժանդ թերեն Հայ զրահին...

Դու այլոց զեմ թուր՝ պատյանում,

Որ պատյանից կյանքն է Հանում

— Զէ, իմ գովքը էլ միք անի,  
Իմ զաւն ինչ է՝ մի բերդ Անի,-  
Պահապոնիս թև շիներ՝  
Եղբայրս աչքս պիտի հաներ...  
Միրուց խոսեք, գինուց ասեք,  
Գինին գովեք մեր Գողթանի.  
Վիշտս գին ու թասով կիսեք.  
Կենացն ասեք Հայաստանի:

Ի՞նչ է սերը, ի՞նչ է բախտը իր դավադիր դանակով,  
Ճակատագիրն ի՞նչ է գրում ճամփիս արյան թանաքով,-  
Գինի բերեք, ով գուսաններ, խմաստոթյան աղբյուրից,  
Ավաղ, աստված ինքն էլ խարվեց սատանայի Համբույրից».

Ու գուսանները բամբիտներն առած,  
Թե սոյսակ էին՝ արծիվներ դառան:

— Եշան Սմբատն ապրած կենա, բազուկ դառնա Հայ աղգին  
Սերն ու բախտը ճորտ են միայն առյուծարաշ նիղակին...

Մւկին սիրե, մեկից ավելն Հարամ է իր վայելքով,-  
Բախտավորը նա է միայն, ով զոհ է զեթ մի ծաղկով:

Մարդու կյանքը երկարում է Հաճույքներով Հոգեկան,  
Կարճանում է՝ երկարատև Հաճույքներով մարմնական:

Մեզ վաղահաս մահ են բերում վայելքները խելաշեղ՝  
Գինին, թույնը, ծխաթույնը, մեկ էլ կինը մարմնազեղ...

Բայց կինն ինչ տա, կրկինը տուր, որ քեզ Համար ախ քաշի,  
Կրկինը տուր, որ կրկին տա, չընկնի գրկերն ուրիշի...

Կին կա՝ մարդուն թագի տանում, մինչև զրախտ է Հանում,  
Կա էլ՝ զլիսի թագն է Հանում, մինչև դժոխք է տանում:

Ամուսնությունն այգի է ճոխ՝ ընտելին էլ անրոտնել,  
Ովքեր այգուց գուրս են՝ կուզեն՝ ինչ էլ լինի՝ ներս մտնել:

Ովքեր ներսն են՝ կուզեն գուրս գալ, դուրս փախչել են երազում,  
Ովքեր ելեկ՝ գուրս են փախսել՝ փոշմանում են, ներս վազում...

Ու խմեցին գուսանները Հաղիվ մի թաս մի ծովից,  
Իմաստոթյան բաժակն ընկած՝ ընկան բախտի Հետեից:

— Ով բախտի է անվերջ ձգտում՝ նա է անվերջ բախտավոր,  
Ով չի ձգտում՝ բախտի մեջ էլ նա զժրախտ է ամեն օր:

Չար մի լինի... զերեզման է վերջը Հաղար չարության,  
Չարության ծովն էլ կու կերթա մի կաթիլին բարության:  
Կեղծ ընկերը՝ չփող թոշուն՝ տված Հացդ մոռանում՝  
Հավ օրիդ է գալիս մոտղ, վատ օրիդ է Հեռանում:

Թագավոր կա՝ խելքը թագ է, լեզուն թուրն է օրենքի,  
Կա էլ՝ խելքը թագի տակ է, խելքն է թագը իր թագի...  
— Իրավն ասիր, ով աղևոր, արքան տիտուր ծիծաղեց,  
— Իրավն այն է, որ Հայ բախտը Հույսս դարեր դագաղեց...  
Ազահ մարդը՝ բախտի մեջ էլ՝ նման է միշտ դժբախտի:  
Բախտը մարդուս զլիսի մեջ է, ոչ թե մեջն է իր ... բախտի:  
Բախտի դուռը փոքր ու կարճ է, կարճ ու նեղ է, իմացիր,  
Ներս մտնողը պիտի ծռե մեջք ու գլուխ, — զիմացիր:  
Չարությունը Հեշտ է, ով մարդ, բարությունն է միշտ դժվար,  
Դրախտի ուղին սարն ի վեր է, զժոյաբինը՝ սարն ի վար...  
— Ավաղ, Հառաչեց աշով մանկական  
Օհան Սմբատը՝ արքայից արքան,-  
Տեսնես էլ ի՞նչ է իմ զյախն գալու,  
Իմ մահից Հետո ո՞ւր եմ գնալու:

## 2

Բայց վիշտն արքայի կոկորդն էր բռնում,  
Մայր գահը թողնում մննակ-մնկուսի,  
Եվ աշա իր դեմ դավերն են խռնում՝  
Բաշերն են պոկվում իր առյուծ Հույսի:  
Հազիվ մի կանթեղ Անի են թողնում՝  
Խայթում արքային փետրե անկողնում՝  
Անտես ձեռքով էլ իր եղբայրական...  
Քանոյի կորյուն չէր ժառանգն առյուծի,-  
Եվ Հայ իշխաններն ու Հայոց արքան  
Մոռանում էին Համն աղ ու Հացի,  
Ու յոթը կողմից դավերը Հասան,  
Երբ առյուծորդուն կորյուն չտեսան,  
Երբ արտույտ տեսան արծվի գահին,  
Եվ ապավինած դավ ու զրահին՝  
Փոխել կուզեին արքայի ... մաշով  
Իշխանագահը արքայագահով  
Ամեն նախարար, ամեն մի իշխան  
Կուզեր ինքնիշխան իշխել, արքայել՝  
Մի ձեռքին Հայ թուր, մեկին՝ յաթաղան՝  
Հայաստան կուզեր վասակավայել՝  
Հայ սիրու խրելով մի ձեռով Հայ թուր,  
Մյուսով գաղտնի մի բյուզանդասուր,

ինչպես մի վասակ՝ մի պարսկանիդակ՝  
Եղբայրն էլ՝ Եղբոր գառնում էր վասակ՝  
Ընդդեմ Անիի թագավորության,  
Անին թուր, դավերն ինչպես մեռ պատշան՝  
Ու նեղում, ինչպես թուրը պայտանում  
ՇՀան-Մմրատը զլուխ չէր Հանում,  
Նախարարները զորք չէին տալիս,  
Գյուսարկի տեղակ սուր էին Հանում...  
Ու վիշտը վշտի վրա էր գալիս,-  
Զորք չէին տալիս Վանանդն ու Սյունին,  
Գյինն ու Հարքը և Արծրունին,  
Վանն ու Բգնունին, Ղարան ու Ղարաբաղ  
Հույս չէին մնում Անիին, ավաղ...

## 3

Ու տագնապելով զիշերվա կեսին  
Կանչեց թագավորն իր Հոգու ... լույսին՝  
Խոստովանահորն իր արքայաբարձ,  
Կաթողիկոսին Պետրոս Գևորգարձ:  
— Հայր կաթողիկոս, իմ Հուսու վահան,  
Գտիր ինձ Համար մի երազահան,  
Քանզի իմ Հույսն էլ երազ է դառնում,  
Հարազատ ձեռքն է կոկորդս բռնում,  
Այն օրից, երբ ինձ Եղբայրս էլ դավեց՝  
Իր գահով իմ կես գահին ժարավեց.  
Էլ չի Հեռանում աչքիցս մթար  
Եղբորս դավի տեսիլն անպատիր,  
Զար երազներ եմ տեսնում անդադար,  
Զար ցնորքներից միտքս փարատիր,  
Բայասան զտիր իմ աշի վերքին,  
Չլինի՞ զլիսիս նոր փորձանք մի գա,  
Երազը կո՞ւյս է, թե՞ դժոխք մի կին:  
— Երազը կյանքի գաղտնիքն է, արքա:  
Ցերեկն օձ-կարիճ կասկածներն Հառնում՝  
Գիշերը վիշապ-երազ են դառնում,  
Կոկորդդ բռնում, բայց ի՞նչ ևս տեսել,  
Որ ամպը մինչև աչքերդ է Հասել:  
— Տեր կաթողիկոս, երազիս, մեջ ևս

Չորի մեջ էի, Արագն էի ևս,  
Մայր Արարսն էի, ձորի մեջ, սակայն  
Երկու ափերս՝ երկու խողական,  
Երկու խողական ցովերի նման  
Վրա կուղային՝ ինձ էլ խեղդելով,  
Այս երազն ի՞նչ է, - Հարցըց արքան,  
- Բարի չէ, տե՛ր իմ, չարից Հաղթվելով,  
Գևոն Հայոց ազգն է, բայց ահավասիկ,  
Երկու ափերն են բյուզանդ ու պարսիկ,  
Որ միշտ խողական ցովերի նման  
Հարրած փղերով խուժում Հայաստան,  
Մեր Հողի վրա իրար են բախվում,  
Մեջտեղ մեր ազգն է ընկնում ոտնատակ,  
Ու դարեր նույնն է, լավի չի փոխվում...  
- Իրավ, երազն էլ կյանք է դժնդակ...  
Զար շշուկներ են Հեռվից գումկանվում,  
Բայց սուրհանդակս շատ է ուշանում,-  
Քառասուն օր է, որ Համբավ չկա:  
- Կգա, - ասացի, - երազդ վկա,  
Ճամփեն դժոխք է, ինքը ձիավոր,  
Զին էլ մարիդ պես Հո չի՞ թեավոր,  
Ճամփերը դժոխք, բյուր լեռնակապան,  
Ու լիքն է չարով Հայ բարու ճամփան,  
Ամեն մի ճամփան բյուր լեռնարավիոլ,  
Յոթն անդունդ ունի ամեն մի չափիդ  
Այնտեղ՝ Տարոնում, Վանում, Սասունում,  
Ուր անդամ ձմռան բուքն է սասանում,  
Կգա... բայց չարը գեռ մի գուշակիր,  
Իմ բարի արքա, բույր մանուշակի...»:  
- Իսկ ի՞նչ է՝ գահից ընկնելն երազում:  
- Գահ բարձրանալ է, իրավ ևմ ասում:  
- Իսկ ի՞նչ է իրեն տեսնել խելազար:  
- Իմաստովթուն է խելազարվելը...  
- Ի՞նչ է մեռնելը, բարի՞ է, թե՞ չար.  
- Արքայի բան չէ մահով տարովելը:  
- Իրավ ևս, ով իմ խոստովանահայր,  
Մի երազահան գտիր ինձ Համար,  
Զար երազներ ևմ տեսնում անդադար,

Չար ցնորքներից միտքս փարատիր:

— Գտնեմ, բայց թե՝ ով տեր արքա,

Հաղար ու մի չար երազ կա, —

Չարը շատ է, բարին քիչ է, ապավեն,

Թող քո բարի երազները կատարվեն...»:

— Ամեն, Հայր խմ, բայց դուրսն ո՞վ էր՝ Հառաջեց».

-----  
— Ապրած կենաս, սուրհանդակի ձին սատկեց...

#### 4

Ու ողջ Անին ապշած մնաց,

Միջնարերդի շուրջն ամրոխվեց,

Երր որ հեռվից Հայ Բգնունյաց

Հասավ սև գույժն, աշխ փոխվեց,

Աշխ փոխվեց ու ամրոխվեց, —

Երր սուրհանդակն Հասավ Անի,

Ընկավ ձիուց, մարդն ի՞նչ անի,

Երր ձին ընկավ, ձին տրաքվեց,

Զին տրաքվեց վազքի թափից,

Հեծյալ իշխանն Հաղիով փրկվեց,

Հաղիով կախվեց կյանքի թամրից:

Ու պայտտ մտավ սուրհանդակը մեծ:

Բգնունյաց տերը, և այսանս գումեց:-

— Ով թագավոր, ապրած կենաս՝

Թե սելջուկաց գալն իմանաս, —

Յոթը գիշեր Տիգրիսն անցավ, —

Ոտ զրած հողն անայացավ, —

Եվ Հաղթվեց, ելավ լացով

Արծրունին հողը թողեց,

Վասապորական ու Վանա ծով՝

Մի բուռ օտար հողով փոխվեց:

Քանդի կտրեց Հույսն Հավիտյան,

Որ չՀասար դու օգնության, —

Ասաց՝ «Հասավ խմ սև օրը,

Զի գա Սմբատ թագավորը,

Քանդի ես էլ նրան դավել,

Իր Եղբորը զորք եմ տվել...

Փոշմանում եմ, ապաշավում,

Որ մայր գահի ընդդեմ ելա,  
Բայց զղջումը մեղք չի քավում,  
Թևկուզ մի նոր Վանա ծով լա:  
Այսպիս ողբաց մեզ տանջելով  
Արծրունին նաւշանջելով՝  
Յոթանասուն զիշեր ու գօր  
Յոթանասուն կոխ տվեց.  
Վերջն Հուսարեկ ու գլխիկոր  
Գաղթի յոթը ճամփով չվեց:  
Ինչպես գայն է ճագերն հիշում՝  
Փախչում առյուծ Հարևանից՝  
Այսպիս ելավ ու մշուշում  
Գաղտնի գաղթեց Մուշ ու Վանից:  
Փոխեց Հողերն իր ժաղկավետ  
Հայ խելքի գող Բյուզանդի Հետք:  
Լսեց, մոայլեց Ծան-Սմբատը.  
— Այստեղ էլ խառն է իմ եղրոր մատը...  
Կասկածեց մոյքում ու ահով ասավ.  
— Կատարվեց իմ չար երազը, Հասավ  
Օրհասն Հայերիս, սեղթուկ, թուրք, պարսիկ.  
Բյուզանդն էլ վրան, բայց ահավասիկ  
Արծրունին թուրքից վախում՝  
Բայց ում Հողն է ում Հետ փոխում,  
Ո՞ւմ ազգն, ո՞ւմ Հողն ում է տալիս...—  
Գոռաց Ծան-Սմբատ արքան;  
— Տեր իմ, ազգն էլ այդ էր լալիս՝  
Թողնելով Հողն Հայրենական,  
Արծրունյաց ազգն իմ Հայոց՝  
Մուշից մինչև Հողը Տայոց,  
Մինչև Տարոնն ու Բգնունին  
Բոլոր ցեղերն Արծրունի  
Գոռում էին՝ «Ձենք զաղթի, չէ?»  
Թևկուզ ինքը աստված կանչեա։  
Ու թերվում սեղթուկ թրից,  
Սեղթուկ թրից, թուրք-թաթարից՝  
Մայր տաճարում Ախթամարա  
Կիսովում էին իրար վրա,  
Գուոր գոցում ու խմբովին։

Դուրս նայելով Վանա ծովին,  
Կաղոթեին խունկի ծխում,  
— Ո՞վ տեր, կապէ մեզ մեր Հողին,  
Հող դարձրու մեզ մեր Հողում,  
Որ չպոկեն մեզ մեր Հողից.  
Մեր դրախտն են Հողով փոխում»:  
Ու վանքեվանք ամրոխելով՝  
Կաղոթեին աշեղվելով.  
Վառվելով Հետն անուշ խունկի,  
Կաղոթեին լալահառաչ,  
Որ Հայ լեզուն չգար ծունկի,  
Էն մեծ ազգի բազկի առաջ...  
Ու մինչև լույս, ընդդեմ չարի՝  
Մեջ գիշերվա մեգ-մշուշում  
Ախմամարա մայր տաճարի  
Զանգերն էին անվերջ քաշում,  
Որ Հայ աստծուն զարթեցննն  
Հայրենահան ազգի լացով,  
Որ թե խեղճ կար՝ քնից Հանեն,  
Որ մեզ ետ տան մեր Հողն ու ծով:  
— Մենք ահ չունենք ոչ մի բանից,  
Ոչ մի իրան Հարևանից...  
Մեր արծաթը, կթանը ձեզ,  
Մեր ոսկու պես գութանը ձեզ,  
Չեզ մեր կովը, մեր կթանը,  
Թաք մեզ մնա մեր վաթանը,  
Մեր սարերը, Սասունը մեր.  
Մեր Մասիսը՝ մայր սյունը մեր:  
Մեզ մի պոկեք մեր վաթանից,  
Մեր կթանից, մեր գութանից,  
Մեր Գողթանից,  
Մեր Հող-տանից,  
Մեզ միք Հանե Հայաստանից.  
Ճորտ միք անե օտար դռան,-  
Գնացողներն անտուն մնուան,  
Մեզ միք պոկե մեր արմատից  
Մեր մայրարմատ Արարատից»:  
Ճում էին, լալիս, կոծում,

Թարշում էին, փախչել փորձում,  
Թաթար-սեղուկ - Տուղրի խանից,  
Սեղուկ-թաթար յաթաղանից,  
Բայց թև գտնում-մորթում էին,  
Մորթում էին, քերթում էին,  
Կախում էին ծառից՝ վառում,  
Այսպես, տեր իմ, մի անտառում  
Յոթը Հազար Հայ կախեցին  
Թուրքերն, ինչպես անգղ ու ցին»:  
- Ի՞նչ է, իմ ազգն Հռու էր գառան...  
- Չէ՛, շատ Հայեր ըմբոստ մեռան,  
Ինքը, Տուղրի սեղուկ խանը,  
Երբ որ քաշեց յաթաղանը,  
Որ զլսատեր քահանային՝  
Քիչ մնաց զոհ գնար Հային՝  
Մի վրորչիկ ոչտունցու,  
Որ պատկերն էր  
Ազգանվեր՝  
Մթնում զինված Հայ աստծու,  
Ու ողջ ազգն էր ըմբոստանում  
Թե գեղաց մեջ, թև ոստանում,  
Իր Հողից էր կառչում Համառ  
Հայ ժողովուրդն ինչպես անտառ;  
Իր Տարոնից, Մուշից, Վանից՝  
Իր յոթնածով Հայաստանից:  
Ու շատ խանի գաղտնի խաչեց  
Հայ թրի շողք իմ թզնունին...  
- Մատաղ ազգիս, խուլ Հառաչեց  
Սպարապետ Պահապունին:  
- Բայց թե զորը իր զոռն արագ,  
Վերջացրեց սուրհանդակը,-  
Օրը վաթսուն Հազար տարագ,  
Մարեց Հայոց արեգակը,-  
Օրը վաթսուն Հազար Հայեր,  
Վաթսուն Հազար մանուկ ու ծեր,  
Քչեց, ինչպես նախիրն անբան,  
Յոթ ճամփերով լեռնակապան...  
Էլ ո՞րն Հիշեմ, տեր իմ, վայ էր,

Որը վաթսուն Հազար Հայեր՝  
Թե ուամիկ և թե դանդին,  
Զարկեց, տարավ մեր կես աղքին,  
Վաթսուն անգամ վաթսուն Հազար,  
Տարավ մինչև ԲյուղանդՀիսար.  
— Որ ի՞նչ անի...  
— Որ Հայ մնան,  
Որ թաթարաց կուլ չգնան,  
Որ Հայ մնան ոչ թե վայոց,  
Ինքն էլ մնա... արքան Հայոց»:  
— Հայ... թե դրսում Հայ ցեղ մնա,  
Ամեն ծաղիկ իր Հողն ունի,  
Կձուլվի Հայն ուր էլ գնա,  
Բացի Հողից իր Հայրենին:-  
Հայ չի ծաղկի Բյուղանդի մեջ,  
Հայակեր ևն բյուղանդացիք...  
Հայ չի պահի սփյուռքը խեղճ,  
Իր Հողն ունի ամեն ծաղիկ»:  
— Ճշմարիտ ևս, սպարապետ,  
Բայց սելջուկը ծով էր, ոչ գետ,-  
Յոթը գիշեր Տիգրիսն անցավ,  
Տիգրիսի պես չվերջացավ.-  
Ողջ Հայաստանն ամայացել՝  
Իր Հույսն Անին է մնացել՝  
Մայրաքաղաքն իր Հայր զորքով.  
Քեզ է կանչում իր բաց վերքով...  
Չղիմացավ Արծրունին,  
Գաղտնի գաղթեց, ինչպես Սյունին:  
Ազգը փոքր է, գիտե արքան,  
Վերջին ճարն էր, որ գաղթեցին...»:  
Եվ արցունքներն աչքից ընկան,  
Ու մի վայրկյան լուռ մնացին  
Հայոց Հույսով արյունաբամ...  
— Նարեկացուդ ուկերքն անգամ  
Հանեց տարավ Արծրունին  
Իր խաչեղբայր ժանտ Բյուղանդին...  
— Ի՞նչ խաչեղբայր, զոռաց արքան,-  
Թուր է Հայոց աղքի սրտին,

Ինչպես թաթարն այս դիվական...  
— Զէ՛, տե՛ր արքա, նա... խաչ ունի,  
Երախը չէ ժանտ Իրանի...  
Սելջուկը չէ, որ մեզ խաչե,  
— Զէ՛, բայց զայլ է նա էլ, ո՞վ այսարք,  
— Զէ՛ զայլ, տե՛ր իմ, կրակ է բարեկ,  
— Հայրս կասեր՝ ռզգույշ, որդյակ.  
Չանցնես մեծաց նիգալի տակ,  
Խաչնղոր էլ տենչն է միաւկ՝  
Հայաստանը առանց Հայի,-  
Զգույշ, երբ որ Հասնես զահի»:  
— Իրավ, զգույշ, ո՞վ իմ արքա,  
Մի խաչի տակ Հազար թուր կա...  
Ասաց Վահրամ թուր-Հավունին,  
Մեծ զորավար Պահապունին:  
— Սև անգղն իջավ իմ սրտի վրա,  
Հայոց արծվի մի թևս պոկվեց,  
Մի աչքս Հանվեց, այն աչքս աշա,  
Որ վանա ծովն է, այն աչքս Հանվեց:  
Այն թևս պոկվեց, այն թևս Հայրենի,  
Որ ժողովուրդն է իմ քաջ Տարոնի:  
Թև արծիվ էի՛ մի թևս պոկվեց,  
Տոթնարծիվ թևս Անիից ջոկվեց,  
Անին մի թև է, ո՞վ տեր թագավոր,  
Մի թևով ինչպե՞ս մնամ թևավոր:  
Օձ Հանեց ծովից Հույսի ուռկանս՝  
Խլվեցին Վանս, Վասպորականս,  
Տարոնս, Հայոց Հերոսականս,  
Ում օրոցքից էլ առյուծ կթռչեր...  
Հենց որ Հայրենյաց վիշտը մեզ կանչեր...  
Այս, Տարոնի առյուծ քաջեր,  
Հասպա ձեր Հող՝ մայր Հողը մեր,  
Ինչ Հող՝ դրախտ աստվածային,  
Էլ ո՞վ ետ տա դրախտն Հային:  
Սպի դառած իմ վերքերը  
Աշա նորեն բացվեցին,  
Այս, կիսվեցին իմ ձեռքերը,  
Կիսվեց Հայոց այրուձին:

Հայաստանը ձեռից գնաց,  
Հազիվ մնաց մի ոստան,  
Չորքիւ Հույսը Անին մնաց,  
Մի դրախտից մի բոստան»:  
— Էլ ի՞նչ Հույս... ասաց՝ զորս նայեց արքան,  
— Տես ծիածանը բարի բնոթյան  
Յոթը գույնով էլ ծիծաղում է միշտ,  
Սև չունի յուր մեջ, վշտի սևն՝ ավաղ.  
Հայ ժողովրդի սրտի մեջ թողեց,  
Մնակ մնացինք, մեր ուկեցափաղ  
Հույսերի ամպն էլ սև արյուն ցողեց»:  
— Բայց, տեր արքա,  
Էլ ճար չկա,  
Վերջին ճարն է քո բանակը,-  
Խուլ աղերսեց սուրհանդակը  
Եվ արքայի ոտքերն ընկաւ,  
— Զորք տուր փրկող, զորք տուր,- ասակ,-  
Զորք տուր, զորք ինձ, զորքով գնամ,  
Գուցե ազգով վերադառնամ,-  
Ետ խլեմ Վանն իմ ավերված,  
Ետ խլեմ ծովն իմ թզնունին,  
Վասպուրականն ու քո Այունին,  
Ետ կիսեմ ողջ Հայաստան՝  
Ետ կիսեմ, թե զորքը տաս...  
— Որտեղից տամ, Հապա Անին...  
Ո՞վ Հույս մնա՝ թեկուդ գերված՝  
Սև խաչն Հանված Հայաստանին,  
Ի՞նչ զորք ունի Անին մի բուռ,  
Իր պարիսպներն ինչպես քեզ տամ,-  
Պարիսպներն են իմ զորքը կուռ,  
Եվ զորավարն իմ Հաղթական  
Ճարտարապետ Տրդատն է մեծ,  
Քանի անգամ նա ինձ փրկեց...  
Թե տամ տանես՝ զոհես Անին,  
Ո՞վ Հույս մնա Հայաստանին...»:  
Այսպես ասաց Ծան արքան,  
Սուրհանդակի Հույսերն Հանգան.  
— Չէ, անառակ մի որդու պես

Ինձ փրկեցի, մայր իմ, բայց քե՞զ...  
Ել ինչի՞ս է լյանքս, ասաց,  
Ու սիրուն ասես չդիմացավ.  
Աչքով տևսած սրտով կիսած  
Հայոց վշտին, որ ծովացավ.  
Չղիմացավ, չհամրերեց.  
— Որ գորք չես տա, Էլ ի՞նչ, ասավ,  
Դաշտոյն Հանեց, սիրոր խրեց,-  
Սիրոր, Հայոց վշտի պես մեծ...  
— Զէ, մենք այսպես չենք անի.  
Մենք մեր աչքը չենք Հանի...  
— Իրավ, տեր արքա, բայց Հեզն ի՞նչ աներ,  
Հառաջեց Հայոց սպարապետը,-  
Թե Հայոց ներՀամկ ոզին շիներ՝  
Այսրան չէր փլվի Հայ բախտի թերդը.  
Չէին ծագելու ոչ Վասարկ Սյունի,  
Ոչ թուրք յաթաղան, ոչ Արծրունին,  
Ոչ Արծրունյաց Վասարկ, Մերուժան,  
Ազգը չէր ծնի ոչ մի զրուժան...  
Խլված չէր լինի Վասարուրականը,  
Խլված չէր լինի Վան-Բյուրականը,  
Խլված չէր լինի Հողը Թզնունյաց,  
Խլված չէր լինի Հողն Արծրունյաց,  
Խլված չէր լինի Հողը Տարոնի,-  
Մազապուրծ փախած թրից քարոնի՝  
Չէր գաղթի Հայոց մեր երգը Գողթան,  
Որ գեռ լալիտ է թե՝ «իմը թող տան...»:  
Չէր լինի փլված Տիգրանակերտը,  
Չէր լինի խլված Մասունա թերդը,  
Չէր լինի մոլլված կեսն Հայոց ազգի.  
— Ի՞նչ կես, առավելն, առավելն, ավաշ,  
Այս քանի՞ս գար է, որ Հայոց ազգի  
Անտառում Հունձ է արյունաշաղախ...  
— Իրավ, տե՛ր արքա, Հնձն վերջ չկամ  
Հայ ազգն անտառ է, բախտն անտառուՀաստ,  
Կորե՝ կվառե գարեր անընդՀաստ;  
— Զէ, անտառաՀաստն ազգերն են այս կույր,  
Գար են ողջ ազգերն այս թաթարաթուր.

Անխաղաղ ժխոր ողջ աշխարհն է չար,  
Լոկ Հայն է բարի, Հայն անօգնական,  
Հայն ընդդեմ չարի».- Հառաջեց արքան,  
Ռւ միտք էր անում, մի՞թև Հովս չկա,  
Հայ վշտի ծովից ի՞նչ նավով դուրս գա,  
Կնոջո՞վ, զինո՞վ, թե Հարմով իր նոր.-

---

- Թե՞ այս երեքն էլ մի զիրք են անզոր...

## ԳԼՈՒԽ ՀԻՆ ԳԵՐՈՐԴ

1

Ու ցամաքեցին Վանն Անի թերող քարավանները,  
Որ գալիս էին՝ ծով շուկան թերք ու բարիքով բռնում.  
Ու նրանց առջև բացում դռները՝  
Անին էլ նրանց հիացքն էր զառնում:-  
Առաջին անգամ Անին տեսնողը  
Պարիսպներով էր զարգանդում, ապշում,  
Ետ քաշվում աշխց, իսկ ներս մտնողը,  
Հիացքի սանձը հազիվ էր քաշում՝  
Քաշելով սանձը ձիանց կամ ուղտի,  
Ու էլ չէր խորշում անհավատն, ասես,  
Հրաշք վանքերից հայոց Տրդատի,-  
Բերանը բացած, մի մանուկի պես,  
Մզկիթի որդին տարգում էր լոփեկ  
Թե՛ մայր տաճարով այս ջնաշխարհին,  
Թե՛ նրբաքանդակ հայ խաչքարերով,  
Թե՛ Հազար ու մի հայոց վանքերով  
Ու շնչում էր մզկիթի որդին Անիով գերված.-  
— Հայոց Հանճարը քարից է սերված,  
Թե Հայաստանը չի իներ այսպան բազմաքարաշատ,  
Չէր ծնի ոչ մի Անի կառուցող Հանճարեղ Տրդատ,  
Չէր լինի ոչ մի չքնաղ Ախմթամար, Հրաշք Զվարթնոց,  
Ինչ նրբաշեն է կոպիտ ձեռքն Հայոց...  
— Աշխարհաշեն է, վալլա, ո՞վ ալլաՀ,  
— Աշխարհում զմբեթն առաջին Հայերն են երկնել,  
Ապա՝ աշխարհն է Հայերին կրկնել...  
— Բայց որտեղ Հայ՝ այնտեղ էլ վայ...  
— Չէ, թայ չունի Հանճարը Հայ...  
Մեկ Հայ Մասիսն է այսչափ գեղեցիկ,  
Էլ չկա... Մեկ էլ այս Անին է լոկ.-  
Այս մի խոյակն էլ արժե, որ մարդիկ

Աղոթեն իրար առջև ծնկաչոք...

- Ինչ ձեռք է, արդյոք, ինչ ճարտարություն,
- Մի՞թե այս Անին ճարտարող ձեռն էլ հայից է ծնվել,-
- Ինչ նուրբ գմբեթներ, ինչ սյուներ վսեմ, ինչ խաղաղություն,
- Ասես ալլահի զլիսից նն հանգել...

Ու ոչ թե հայոց մի խեղճ աստծու,

- Ինչ Հաստահեղույս սյուներ, որ մարդու

Աչքը լցնում են կյանքի Հավատով.

Կարծեն Հայ ազգն է կանգնած աղոթում՝

Հավերժականի Հոյսով անվրդով.-

- Ամեն մի քարից Հանճար է կաթում...
- Այս ճարտարությունն Հավատն է ծնել.
- Վայ նոցա՝ ում մեջ Հավատն է քնել:
- Նայի՛ր, մեկ նայիր այս նուրբ կամարաց՝

Աստծո ձեռով է, ասես, կամարած:

Իսկ Հայ գուսաննը, կույր գուսանն անգամ

Ականջի աշքով տեսածն էլ երգում՝

Անիի գովքն էր անում անթառամ՝

Անգամ շուկայի մխորի գրկում:

- Մայր տաճարի նման տաճար

Միայն Անի քաղաքն ոնի,

Չունի ուրիշ ոչ մի աշխարհ,

Չկա ուրիշ ոչ մի Անի,

- Աստվածամոր Հոնքերն անգամ

Այնքան նրբին կամար չունեն՝

Որբան գմբեթն այս Հայկական,

Որբան Անին աստվածաշն...»:

Եվ մի անհավատ՝ որմնաղիր պարսիկ.

Ամենաճարտար վարպետն Իրանի,

Լսեց Համբավը և աՀավասիկ՝

Առաջին անգամ երբ մտավ Անի՝

Տեսնելով տաճարն այսքան Հոյակերտ՝

Քիչ մնաց ապշած ինքն էլ խաչ Հանի...

- Չերն էլ է աստված՝ իմ ալլահի Հետ,

Մատաղ Հայ ձեռքին, շնչաց՝ գերված

Քար խոսեցընող Հայոց Հանճարով.

Հայ ձեռքի Հրաշք այս մեծ տաճարով.

Անկեղու՝ խոսող այս կամարներով.

Աստծո և Հայոց Հոյսի օթեան այս զմբեթներով,  
Աստծո և Հայոց Հոյսի Համբուրած այս խաչքարերով.  
Այս հաստահեղույս պուներով ու դռչ  
Այս խոյակներով, Անիով այս ողջ,  
Անիի բանակ այս պարփակներով,  
Որոնց դռները, աչքի պես ճանաչ,  
Բաց էին բարի աչքերի առաջ,-  
— Վարդով դուրս կգա ով մարդ մտնի ներս...

## 2

Բայց զոցվում էին մեռնող աչքի պես  
Հայ սրտի երակ ճանապարհները քարավանների,  
Քամվող արյան պես Հայ գերիների,  
Քարփան չեր գալիս Հայոց Բյուրակնից,  
Վանից, Տարոնից, Վասպուրականից,  
Մովից, յոթնածով ցամաքից գերված,  
Քարփան չեր գալիս  
Ու կարոտում էր Անին մեծանուն  
Վանա տառեխին, Գողթանի գինուն,  
Առյուծի, արծիվի կաթին Սասունա,  
Վիթ ու Եղնիկին Սիմ ու Սիփանա,  
Մեղրին Տարոնա ու Մշո նուշին,  
Մոկսի մանանա նուշից անուշին,  
Էլ չեին Հագնում Վանա շափյուղա,  
Վասպուրականի գետնագործ չուխա,  
Իսկ Հայ ու օտար վայ-րոշաները՝ զնչուներ մի բուռ՝  
Մաղ էին ծախում՝ Հացի Հետ փոխում՝ ընկած դռնեղուռ,  
Հազարաշքանի գաղտնիքով անդուռ՝  
Գողերի նման կամ թև ծպտագող կանչելով խաղաղ՝  
— Մազ առեք, սալա, մազ առեք, լավ մազ,  
Ալրմաղ, քարմաղ, շարմաղ ու ձարմաղ,  
Ռուա-սալա, սալա, դուռը բաց Հալա,  
Բաց՝ բախտող ասեմ՝ սե՞ է, թե՞ ալա...  
Հայոց շատ մաղեր,  
Մաղ առեք, սալա...

Բայց օձն իր սորտով,

Արծիվն իր սրտով

Չեն կարող մտնել արքայի ազգին,-

Ուր իրը ճգնում, բայց քեզ ևն անում

Դեռ ծաղիկ արքան իր ծաղկանց զրկին:

Իր փառքից անգամ սիրուր հագննում,

Բայց չի կշտանում աշքը մի բանից,-

Շուշան զրկելին՝ վարդ է ցանկանում,

Վարդի պես կարուտ մնում շոշանից,-

(Վարդի էլ՝ բացված վարդը զրկելին՝

Միրտը կոկոնի կարուտն է, բալիս...):

Նարգիզ զրկելին տուղու է երազում,

Տուղտի զրկի մեջ՝ Հասմիկ է ուզում,

Հասմիկի զրկում՝ տենչում նունուֆար,

Ու կուզեր այզին այս ծաղկավարար

Հրաշքով մի ճոխ Հարեմի փոխսվեր՝

Կույսեր դառնային ծաղիկներն հագար:

Ու ամրող Հարեմն իր վզով կախսվեր...

— Այս մնաց վայելքն Օհան Սմբատիս,

Քանզի խրվեցավ Հողն Արարատիս,

Մեղրանեկտարս՝ ողջ Հովս Վանա,

Ու բախտ է վերուատ թե այս ինձ մնա,

Այսպես մտորեց ու ելավ այսպես,

Թովեց, թե տովեց թագուհուն իր Հեղ,-

— Թող քեզ չգտնի սելջուկը թե գա...

Կղառնա Հայոց լեռանց թագուհին,

Իմ սերը քեզ թագ, Արագածս՝ գահ,

Կրազմես բարձր, ծաղկահյուս գահին,

ԿՀրամայես՝ արևը ելնի,

ԿՀրամայես՝ արևը մտնի,

ԿՀրամայես՝ ելնի լուսնկան,

ԿՀրամայես՝ ծաղկունքդ բուրնն,

Ամոթխածելով զլուխ զլխ գան,-

ԿՀրամայես՝ իրար Համբուրնն,

Կայծակների Հետ կկնքես դաշինք,

Որ կյանք վայելեն Հովհանն ու խաչինք.

ԿՀՐԱՄԱՅԵՆ՝ աղբյուրներն հեղին՝  
Ու դեպի Անի կաթնածով բխեն,-  
Համբույրդ բերեն քո թագավորիս՝  
Թագի տակ ճկվող քո վիրավորիս,  
Մինչև խորն աշունք, տեսնենք ո՞վ կգա,  
Սելջուկը, թե Հայ բախտը, որ չկա  
Ոչ Հայոց թրիս, ոչ Հայ խաչիս մեջ...»:  
Ասաց թագուհուն թագավորը պերճ,  
Եվ արքայական հոտ ու նախրի հետ  
Բյուրական ճամփեց ճամփով ծաղկավետ,-  
Արծաթ թագուհուն ունեմ ձի-թամբով  
Ճամփեցի, ասաց, զիրկն Արագածի,-  
Եվ ինքն Անիի իր գաղտնի ճամփով  
Իջավ Անիի ձորը Մաղկոցի,-  
Որ դրախտել էր գետը - Ախուրյան՝  
Մի պարսիկ շահի վարդանոցի պես:  
Իջավ մտնելու արքայախորան՝  
Պարսիկ կույսի հետ՝ Հարճի հետ իր հեզ,  
Այն եղնիկի հետ, որին փախցրել  
Հայ կտրիմները վարդ Շահաստանից  
Արմաղան էին արքային բերել,-  
Ու եղնիկի հետ ելավ ուստանից  
Իր գաղտնյաց այգին մտավ, հոտ քաշեց  
Կույսի կրծքի պես բացված վարդենուց,  
Մի պատանու պես սիրուց մշուշվեց...  
Կախեց փղոսկրյա աղեղը կաղնուց,  
Թիկնեց զիխարաց և իր խնկալի  
Շարրաթից քաղցր, զինուց ցանկալի  
Կույսի հետ գաղտնի ժամն էր վայելում,  
Ամենաօր հնյալ իր ժամն առնացի,-  
- Էլ ոչ մի ամպիկ ինձ չի մոայլում,  
Այն քեզ Համար էր, որ սուտ ամպեցի՝  
Քո ստրկուհուն յայլա ճամփեցի,-  
- Ստրուկ, թե՝ մանուկ արքայիս արքան...  
Միծաղեց Հարճը խանդով մանկական,  
Եվ ընկապ հույսով,  
Արքայի վզով,-  
Ու մի մեղեղի դարձան երկուսով,

Կինը վանդակ է,  
Մարզը թոշնակ է,  
Մեռնեմ վանդակից ինձ դուրս բերողին,  
Թե կինը բախտ է,  
Հարճը դրախտ է,  
Երնեկ վանդակից դրախտ թոշողին:

Սերը սիրո Համար լալիս,  
Սիրտը գիրկ է միշտ փնտրում,  
Սիրո Համար աշխարհ գալիս,  
Սիրո Համար ենք ասպրում:  
Կոկոնների աշխաները  
Սիրո Համար են բացվում,  
Թագավորի աղջիկները  
Ճորտ են սիրո ամրոցում:  
Կնոջ ստրուկն են գանձ ու գահ,  
Արքան ճորտն է իր կույսի,-  
Այս աշխարհում դրախտ թե կա՝  
Գրկի մեջ է երկուսի...»:

Ու Համբուրեց արքան կախարդ իր կույսին,  
Դրախտն Հեռվից աչքով արագ երկուսին:-  
— Լոկ սեր կուզե յարը յարից՝  
Ստրուկ լինի, թե արքա,-  
Թող ու փախիր այն աշխարհից,  
Որտեղ կին կա, սեր չկա:

Սիրո Համար աշխարհ կուզանք,  
Սիրո Համար կմեռնենք,-  
Սիրո Համար սրով կերթանք,  
Նորից սիրուց կյանք կառնենք»:

Ու գինին լցրեց Հարճը նազելի,  
Ինքը շահանդուխտ,  
Անունը Զմրուխտ,  
Դեռ մատաղ, գեռ կույս, գեռ երազելի՝  
Կոկոնում զարթնած գեռ կոկոն մի տուղտ,  
Դեռ լոկ Համբույրի Հարճը կուսական:

— Զէ՛, թող ես լցնեմ,- ծիծաղեց արքան,  
Ով բարակ մեջբիդ թասն է զրկելու,  
Նա է քեզ, աշա, մատովակելու,-  
Հայոց արքան է քո սիրո ծառան,  
Ես պիտի լցնեմ, զու միայն խմեն,  
Գառաջ. ու լցրեց գինին իր գառան,  
— Թե իմն ես՝ մինչև մրուրը քամեն,  
Մինչև մրուրը՝ առանց մի խոսքի.  
Հարճը վերցրեց բաժակը ուղի,  
Հանկարծ վախեցավ, ևղնիկի նման,  
Չորս կողմը նայեց, Հառաջեց թաքուն:-  
Միծաղեց Ծհան-Սմբատը, արքան,  
— Սատանի շուրքն էլ չկա իմ այգում,  
Ինչո՞ւ աչերդ զոներին ընկան...  
Տե՛ս ինչ արքա է քեզ մատովակում,-  
Գինուս չի Հանի ձեռքն էլ իմ եղրոր,  
Կույր է թագուհուս աչքն էլ Հեռավոր,  
Ըմպե, մենակ ենք այգում Հոտևան:  
Ինչպես դրախտում Աղամն ու Եվան:  
Մի թեթև խմենք, որ լավ լողանանք,  
Դրախտն էլ չունի ավագանն այգուս:-  
— Իրանի շահն էլ չունի, իմ Հոգյակ,  
Եշնջաց Զմրուխտ-շահանդուխտը կույս:  
— Այս՝ իմ թագուհու արտասուրն է պարզ,  
Այստեղ լայիս է, այստեղ է լցվում...  
— Թե՞ իմն է... նազեց Հարճը նենդանազ:-  
— Զէ՛, կոկոն բախտդ զեռ նոր է բացվում...  
Եվ արքան լցրեց բաժակն իր Հարճի,-  
— Ուշ է, գառնուկս, էլ մի ամաշի,  
Եվ ինքը լցրեց  
Գավաթին էլ իր մեծ՝  
Հարճի պես մինչև մրուրը քամեց:-  
Որ Հայոց վիշտը իր մտքից Հանի՝  
Խմում էր Համբույր, շարրաթ ու գինի,  
Խմում էր, երգում բազմած կաղնու տակ  
Խմաստուն արքան ինչպես խեղկատակ:-  
— Իմ դրախտ, ինձ Հույս բերիր,  
Վանդակից ինձ զուրս բերիր.

Եիրազից փախսած վարդն ես,  
Իմ թագի գաղտնի զարդն ես:  
Աչքերիդ պարսից սուրմա,  
Շուրթերիդ՝ Հնդու խուրմա:  
Համբույրիդ՝ Հայոց գինի...»:  
— Միայն քեզ անուշ լինի.  
Եւնջաց հարճը ու մի համբույրով  
Թովեց արքային զրախտի բույրով.  
Ու ջահել արքան Հալվեց համբույրից,  
Ու խորովածը քաշեց շամփուրից՝  
Արքայախտրակն հարճին մեկնելով.-  
— Լուսինն էլ, ասաց, աշով է անցնում  
Իմ գաղտնյաց այգու մութ պարիսպներով:  
Եվ ինքն իր ձեռով իր գինին լցնում  
Հարբում, չէր զգում, որ հարճի առաջ  
Վառվող խորովածն՝ իր գառնարառաչ  
Թագուհու սիրտն էր՝ քաշված շամփուրի,-  
Խմենք, ծիծաղենք աշխարհի վրա,  
Շարբաթ է ջուրն էլ գաղտնի համբույրի...  
Առաջ դու խմե կենացը նրա,-  
Հարճի ականջին ծիծաղեց կամաց,  
Առաջ դու խմե, քրթմնջաց կրկին,  
Եվ ինքը լցրեց գինին իր քամած՝  
Ինքն իրա ձեռով տակառած գինին,  
(Իր թասից հարճի թասըն էր լցնում՝  
Առաջ հարճին էր գինին խմեցնում,-  
Հարճին թվում էր՝ սիրուց է միայն...):  
Այնինչ իր արքան, լցնելով անձայն,  
Մտքում կրկնում էր՝ թե արքաներին  
Կնոջ զրկում էլ գինով են մեռցնում,  
Հնաց կին ու գինով, վայ անհոգներին:  
Աղքատի գինուն միշտ ջուր են խառնում,  
Միշտ թույն են խառնում գինուն արքայի,  
Արնազինոտ է պատմությունն Հայոց,  
Ինձ աստված փրկե գինուց ալլահի,  
Որ քիչ Հայոց չէ գարձըրել վայոց,-  
Արնազինոտ է պատմությանց սինին»:  
Խորհում էր՝ զգույշ լցնում իր գինին

Ամցնում ... խմում ու մերթ Հառաջում՝  
Կաքավին գրկած՝ Հավիկ էր կանչում:

— Հավիկ մի տեսի,  
Կաքավիկ ասի,  
Թևիկդ ինձ տուր,  
Իմ բովիկ Հասի:

Մարավիկ աչեր  
Մովիկ Հառաջեր,  
Հեփիկդ ինձ տուր,  
Թևիկդ ինձ տուր,  
Ինձ Հանե բոցեն:  
Հովիկդ ինձ տուր,  
Մարավիկ աչեր,  
Մովիկ Հառաջեր:

Հովիկդ եմ կարուտ,  
Քովիկդ եմ կարուտ,  
Մարավիկ եմ քեզ,  
Մովիկ եմ կարուտ:

Մարավիկ աչեր,  
Մովիկ Հառաջեր:  
Հավիկ մի տեսի,  
Լավիկ մի տեսի,

Մովիկ շտվեց՝  
Ցավիկ մի տեսի,  
Մարավիկ աչեր,  
Ցավիկ Հառաջեր»:

Ու խմեց արքան Հարճի բաժակից...  
— Կաքավիկ գրկել՝ Հավիկդ ես կանչում՝  
Միծաղեց Հարճը, բայց տիսրեց մեկից, —  
Լավը չե՞մ, որ դեռ լավիկ ես տենչում:  
— Վայելիր ... միայն այս կմնա մեզ ...  
— Բայց ի՞նչ Հավիկ է, որ այրում է քեզ.  
— Այս, Հուր կինը չէ կրակն արքայիս,  
Ազգիս վիճակն է կրակը գահիս, —  
Մովից ծով էր, ծովից ծով էր ծիծաղում  
Հայաստանը Տիգրանի,

Հիմա ի՞նչ կա, էլ ի՞նչ մնաց Հայ Հողում՝

Մի Ախուրյան, մի Անի:

Մովից ծով են չար ծիծաղում

Հիմա ազգերն ինձ վրա,

Վիշտու զինու մեջ ևմ թաղում՝

Տես՝ գերին ևմ ևս նրա:

Ավանդ, էլ ի՞նչ ծովից ի ծով.

Թող իմ ազգը ծովանա,

Որ Հայ բախտի վերաղարձով

Իմ կրակն էլ Հովանա...

Դու Հացս զիտես, լացս չզիտես...

— Չէ՛, թող Համբույրս վշտերդ կիսի,

Միայն թե Հոնքդ վրաս չկիտես,

— Հոնքերս ամպն են գերված Մասիսի...

Բայց վեր կաց, վիթս, լավ է գողանանք

Կյանքի վայելքը, քան ողբը մնա,

Իմ ուսկե ձկնիկ, ժամն է՝ լողանանք,

Որ Հայոց վշտիս կրակն Հովանա

Այս ավագանում ու քո զրկի մեջ,

Քո զրկում իցիվ ցավս քնանա,

Վայելենք, քանի մենք մերն ենք, իմ խեղճ,

Ու թեքվեց Հարճի կիսարաց ուսին,-

(Ուսն ինչպես ամպից դուրս նայող լուսին)

Եվ ականջի մեջ ինչ-որ շնչաց

Մատաղ պարսկու հուն, պահ մի վարանեց,

Բայց ավագանին նայելով ժակտաց,

Զկներ տեսնելով՝ իր վախը վանեց,

Բայց վարանելով իր շորերն Հանեց,

Մի ձեռքով քաջին հեռու վանելով,

Շապիկն էլ Հանեց՝ Հոգին Հանելով՝

Նետվեց ավագանն ինչպես մի ձկնիկ,

Ի՞նչ ձկնիկ ... իրավ, այնքան գեղեցիկ,-

Որ մեջքը զրկող ջուրն ինքն էլ դողաց,

Անիծն իրեն, որ տղամարդ չէր ...

Ավագանն ասես լույս խմեց, շողաց,

Էլ կիրքն արքային ինչպե՞ս չտանջեր,

Երբ ձկներն անգամ սիրուց դողացին,

Պաղարյուն ձկներն անգամ շողացին,

Ու կրակվեցին, Երբ մարմնին դիպան,-  
Գիտեր կինն ինչ է Հակն Էլ անբան ...  
Ու խևնթ ջրերը ջահել սրտի պես  
Սիրուց ծառս եղան, ծափ տվին ասես,  
Որ հրեշտակ է իրենց գիրկն ընկել,-  
Եվ աղամանդներ շաղ տվին վրան,  
Եվ ուզում էին Հավիտյան գրկել.  
Բայց թագավորը մոտեցավ նրան,-  
— Ամեն մի մասդ գիրկ է մի կույսի.  
Դու լույս կարապն ես աստծու Հավուղի,  
Քո կրծքի գահին ոչ թե երկու նուռ,  
Իմ երկու թագն է աղամանդակուռ,  
Զգիտեմ, ե՞ս եմ, թե՞ դու ես արքան:  
— Ես եմ, կատակեց Հարճը կուսական:  
Ես քո թագուհին՝ քո կրծքի գահին...  
Ու մեղմ լողում էր դշխու պարսկուհին,  
Գժվեց արևն Էլ Հայոց սրբագան,-  
Ու խուժում էին շողերն ավագան,  
Համբույրներ էին մարմնից գողանում,  
Բայց չէր հովանում սիրտն Էլ արևի,  
Հայոց աստղիկներ, ասես, լողանում,  
Վահագնավայել սիրո ծարավի,-  
Հայուհու նման լոկ ինքն հովանում,  
Արծաթամարմին հրեշտակի պես,  
Նազում նազելի ամոթխած ու Հեղ,  
Մերթ կուրծքն էր ծածկում իր ծով մազերով,  
Ու մերթ էլ պառկում ինքն իրեն վայել՝  
Իր մարմնի Հազար ու մի նազերով  
Խլում էր խելքը արքայի ջահել ...  
— Շնչող տաճար է մարմինդ մարմար,  
Իմ աստղծուն էլ խելքից կհանի:  
— Մարմար մզկիթ է ալլահիս Համար,-  
Էլի կատակեց կույսը գեղանի,  
— Տաճար է, կրկնեց արքան մարմնահար,  
Տաճար կդարձնեմ մզկիթն Իրանի ...  
Եվ այն է՝ արքան պիտի մերկանար,  
Որ ընկներ չքնաղ գիրկն ... ավագանի,  
Բայց շաշեց սև լուրն, ինչպես մի սև նետ,-

— Հունաց գահից նոր գիր, արքա,-  
 Զայնեց Համհարդն այգու դրսից,-  
 — Ներս քից, Համդո, տեսնեմ ի՞նչ կա,  
 Հրամայեց արքան ներսից:  
 Թուղթը ճերմակ աղավնու պես  
 Ելավ պարխապ ու ներս թռավ,  
 Բայց Հայ բախտին էլ ի՞նչ ասես,  
 Երբ աղավնին անգղ դառավ ...

Բացեց արքան,  
 Բայց մի վայրկան  
 ԶՀավատաց իր աչքերին՝  
 Կարծես աչքի թագերն ընկան,  
 Ու սիրտն ընկավ աշի զերին,-  
 Հավի փոխվեց արծիվն ու խեղճ  
 Գաղտնի կարդաց իր մտքի մեջ:  
 Ողջույն ու վայ Հայոց լորին՝  
 ՕՀան-Սմբատ թագավորին,-

Ողջույն ու վայ  
 Իր կուռ բազկին,  
 Իր բազկի թայ  
 Մի բուռ ազգին:  
 Բավ չէ՞ գանձով լցնես Անին,  
 Ու զեռ կարծես ինձ անզեն,  
 Իմ զորքերը քո սահմանին՝  
 Պատասխանիդ կսպասեն:  
 Վաթուուն տարվա Հարլեռ կուզեմ,  
 Հորդ պայմանն ինձ վկա,  
 Այս զիշեր էլ զեռ կսպասեմ,  
 Էզուց զորքս քեզ կուզա:  
 Ամեն զլիսից՝ զլիսից առաջ՝  
 Մի ուլ, մի ցուլ, մի ուկե խաչ,  
 Ամեն զլիսից, ով անօրեն,  
 Հարյուր լիտր ուկի ցորեն,  
 Ամեն զլիսից մի պայտ, մի ձի,  
 Մի ասպանողակ, բայց աղնձի,

Ամեն զլյաից մի կով, մի ևզ,  
Մի կույս բեր ինձ՝ թե կով չունես,  
Կովեղյուրով քեզ կլապէնմ,  
Խաչեղրայրդ թուրքն է, ևս չեմ»:  
Ու դողաց թղթիկն արքայի ձեռին,  
Իր սիրտն էլ գեղնեց թղթի պես, դողաց,  
Ահից մոռացավ աղեղն էլ ծառին,  
Եվ ավագանում կույսին էլ թողած:  
Ի սեր Հայրենյաց՝ ապշած ու լոին  
Հեծավ ու այգով  
Անիի տակով  
Իր գաղտնի ճամփով,  
Ոլորվեց նորված,  
Գետնի տակ փորված,  
Այն մոտիկ ճամփով,  
Որ ձորից Հանում  
Անիի տակով  
Անի է տանում,-  
Եղավ ու գաղտնի  
Ներս մտավ Անի,  
Ու ձիուց արագ իջավ սրդողած,  
Ամրոց շտապեց, կույսին ... կույս թողած,  
Ու գահին բազմեց՝ ապշանքն աշքերին,  
Եվ իսկույն կանչեց սուրհանդակներին,-  
— Հեծե՛ք, Հասե՛ք՝  
Ո՞վ է, տեսեք,-  
Մո՞վ, թե՞ գետ է զորքը դժնի,  
Թե ծով լինի - մեն միք Հանի ...  
Քանզի զորքս Անիում չէ ...  
Ով տեր աստված, ինձ մի խաչե,-  
Թե՞ ընչափաղցն աշ է տայիս  
Մի բուռ զորքով վագրաբերան,  
Քախտի զարը ինձ չի գալիս,  
Թե աշ լինի՝ մահս նրան,-  
Թե մահ-ծով է՝ զարձեք իսկույն,  
Հասեք, ժամն է անազորույն,  
Քանզի առանց զորք է Անին,  
Այս, ինչ ասեմ Վրաստանին ...

Նուտ լուր բերեք, որ իմանամ  
թե ում պիտի իմ ... Հարկը տամ ...  
Հասեք, մինչև Պահապունխա  
Վրաստանից ես զա զորբով,  
Սահման Հանի թուր-Հավլունխա՝  
Մեկին Հաղար Հարկ տա դարկով  
Նուն խաչեղրորն Հայաստանի ...  
Հասեք ու տեսեք, թե Հույն ամպի մեջ  
Կայծակ է զորքը, թե՝ կարկուտ մի խեղճ՝  
Իմ Հայոց Հույսի կանաչ արտերին,-  
Տեսնենք, թե ո՞վ է դառնում ում գերին ...  
Արծիվն Երկնքից Երկրի սև արտում  
Սև ակոսում սև գառն է նկատում,-  
Չեզ տեսնեմ, Հայոց արծիվներ, թուք.  
Թե զառ է՝ Հանգիստ՝ զինով ես զառեք,  
Թե սև գայլերն են՝ թե առեք Հողմից՝  
Լուր բերեք Երկրիս ամեն մի կողմից ...  
Եցիվ բերեք լուր մի բարի,  
Որ բերի քունն իմ աչքերի»:  
Ու ճամփու դրեց սուրհանդակներին,  
Ինչպես մայր ակունքն իր վտակներին.  
Ու ծափ տվեց, կանչեց Հայկին,  
Թիկնապահին իր թիկնապես,  
— Կանչիր իսկույն թուր-կայծակին,  
Քեզ կընծայեմ իմ ձին աշխատ, —  
Դե շուտ, Հասավ ժամը նրա ...

---

— Հրամանքող, գլխիս վրա:

## Գ Լ Ո Ւ Խ Ա Ե Ց Ե Ր Ո Ր Դ

1

Հավաքական՝ ինչպես ծովը, որ ծնվում է գետերից,  
թե ծովանաս՝ էլ չես խոցվի, ինչպես ծովը նետերից ...

2

... Պաղ ավագանում կույսն այժմ դողաց,  
Բայց չՀավատաց իր ծով աչքերին,-  
- Ինձ ավագանում, ինձ դեռ ... կույս թողած՝  
Ո՞ւր թուավ, ալլահ, իմ տերն ու գերին ...  
Շշնջաց առջած կույսն ավագանում  
Մենակ մնացած կարապի նման,-  
- Ինչո՞ւ կուչանա, այս ի՞նչ է անում...  
Ու երգի գոյսվեց վիշտն սպասման:  
- Մենակ թողեց ո՞ւր գնաց,  
Ո՞ւմ սև սրտին թուր գնաց,  
Թե՞ Այծյամին գրկելու  
Գաղտնի վարդի բույր գնաց:  
Այս, չէ, թուր չէ, ևս կզա,  
Ուր է, ուր չէ, ևս կզա,-  
Կույսին ... ծարավ չի թողնի.  
Իմ աղբյուրը ևս կզա:  
Կուզա, կասի, ևս ևմ, ևս,  
Թազի տակ էլ հեղ ևմ ևս,  
Շահի դոյստն է թագուհիս,  
Որձ առյուծի պես ևմ ևս ...»:

Բայց կույսի համար պահը դար դառավ.  
Արևն էլ սարի ևտև թաքնվեց.  
Կույսն ավագանից ահով դուրս թուավ,  
Հագնվեց արագ, արագ Հագնվեց:-  
- Ի՞նչ էր, որ այսպես անխոս թուավ դուրս,

Որ չմտավ էլ ավաղանն իմ կույս...  
Անմուրա՞զ պիտի մնան ... աչքերս.  
Հիմի ևմ զգում, որ սեր է սերս:  
Թէ՞ թագուհին է ետ դառել խելույն.  
Որ դեմքը դառավ տուղտից էլ դժգույն.  
Թէ՞ արքայական մի գործ է գաղտնի?  
Վախում է պարսիկ իր Հարճին Հայտնի...  
Թէ՞ գանձաթաքույց մի բան է անում  
Անիի տակի գաղտնի Անխում.-  
Բայց ինչո՞ւ ձիով, ձիով սլացավ», -  
Ու կասկածների մի կծիկ դարձավ  
Գեղանի կույսը՝ կես ճամփին լրված.  
- Մի՞թե այս էին ճակատիս գրել,  
Այս, մի՞թե այս էր իմ բախտը չբված,  
Զէ՛, մի նոր Հարճ են իր գիրկը բերել.  
Այս, չՀավատաս, ով էլ որ լինես,  
Արքայի տված սիրո խոսքերին,-  
Ով էլ որ լինես - չդառնաս գերին»:  
Ու սրտի աշքին իր խանդալուկ  
Արքան դառնում էր անդուռ Հանելուկ.  
- Բայց ով էլ լինի իր գիրկը բերված,  
Ես գիտեմ ու թույնն ու նրանց գինին, -  
Լոկ ևս եմ ... լոկ իմ մարմինն է գերված,  
Արքայիս Հզոր մատի մատանին...  
Զէ՛, սիրո բան կա, որ պայջ Հեռացավ.  
Որ աղեղն անգամ մոտս մոռացավ.-  
Նոր կույս կլինի. թե մի գույժ լիներ,  
Նա թեկուզ աշխց խակույն կղինվեր,  
Զգույշ է սիրտը, զգույշ անսահման.  
Վախկոտ եղնիկի աչքերի նման:  
Կամ թե սելջո՞ւկն է թաթարազրահ  
Գայխ իմ բախտի՝ Անիի վրա...  
Թէ՞ խելագարվեց, որ խոռվահույզ  
Մոռացավ անգամ ավաղանն իմ կույս,  
Աչքին դառնում էր այսքան Հանելուկ ...  
Ու մթնաբավիղ կասկածի բանտից  
Քիչ մնաց կույսը մոնշար խանդից,  
Մաղերը պոկեր, որ իր բախտ արքան

Վարդը զիրկն առավ, Հոտոտնց, սակայն  
Չպոկնց վարդը թփից կուսական,-  
Չդառավ կույսը թագուհի ... թագին,  
Այս է, որ, գուցե, մատաղ եղնիկին  
Մեկից վիրավոր առյուծ դարձեց,-  
Ու խննթացրեց խանդն իմաստունին,  
- Զէ՛, կովի բան չէ այս գաղտնիքը մեծ,  
Այս, Բյուզանդիոնի  
Մի բող կլինի,-  
Թէ չէ՛ իմ բազեն չէր գնա անզեն,  
Ինձ էլ կտաներ իմ սիրո բազեն»:  
Ու ելավ լոխն,  
Աղեղը ձեռին,  
Ու կասկածներով իր ամենախույզ  
Վեր ելավ այգուց Զմրուխտը զնո կույս,  
Իր խանդի պես մոթ,  
Իր սիրո պես խոր,  
Իր խանդի պես մոթ  
Ու օձաղոր  
Այն ստորգետնյա ճամփով, կարեվեր,  
Աղեղը ձեռքին՝ ոլորվում էր վեր:

## 6

Այնինչ արքան գաղտնի ամպել,  
Ասես ընկել վանդակն աշի,  
Սուրհանդակ էր սահման ճամփել,  
Նոր սուրհանդակ մի ամեհի:-  
- Թոփ'ը Հեռվ,  
Արծվի թևով,-  
Տես՝ իրա՞վ են զորքով եկել.  
Ծա՞տ են, թե՞ քիչ. ջո՞ւր են, թե՞ ծով,-  
Կարծում են, թե նե՞ղն եմ ընկել.  
Արծունյաց գաղթ ու լացով...»:  
Ու կանչեց արքան արքայադպրին՝  
Ողջ նախարարաց Հրովարտակեց,-  
Թէ Հարկապահանջ ամպ իջավ երկրին,-  
«Դուք թողիք, որ շանթն Հոգիս մտրակեց...  
Պատյաննեք իմ դեմ ձեր քինաթուրը,-

ինչպես տամ, կտրեց Հույսիս աղբյուրը.  
Աղբյուրս ծով էր գառնում դարերով  
Այն տուրեասիկ քարավաններով,  
Որ գալիս էին Վանից, Բյուրակնից,  
Ղարսից, Տարոնից, Վասպորականից:  
Իմ նախարարներ, իմ Հայոց իշխանք,  
Մովացյալ Հարկը մեկտեղ ենք տալու,  
Մեկտեղ ենք տալու ծով Հարկը՝ թե տանք,  
Թև չտանք - ծովը կովի է զալու:  
Պատյաններ, ի սեր մեր աղջի Հայլցան»  
Ու դրեց կնիքն իր արքայական,  
Օհան Սմբատը, արքայից-արքան,-  
Ու թուավ, ինչպես պատյանից մի թուր,  
Հրովարտակը այն տագնապասույր:

## 7

Ու դուրս էր նայում նեղ լուսամուտից  
Չորափին բազմած բարձր պալատի.  
Միրտը կոծում էր կույսի կարոտից,-  
Միտքը սանձում էր կարուն իր սրտի...  
Ու սահման ճամփած սուրհանդակների  
Լուռ ճամփեքն էին պահում ահառած  
Թոլոր մոռերը իր կասկածների.  
Թոլոր մոռերը՝ երկու աչք գառած:  
Խոկ ճամփեն, մթնում, աչքին ահախար  
Մի օձ էր թվում, մի դորավիշապ.  
Խոկ Ախուրյանը, խավարի ծովում,  
Աչի ականջին զորավիշապի մոռոնչն էր թվում,  
Մոտեցող զորաց մոռոնչը միթար,  
Ու դուրս էր նայում զեռ տագնապահար  
Ահահար արքան և Հիշում խորը  
Իր եղբոր փորած՝ իր ընկած հորը ...  
Լուսինն էլ լրված իր թագուհու պես  
Դուրս է մնացել ու լացով այնքան,  
Որ շուրջը թափված աստղերը կարծես  
Արցունքներն էին իր Հավերժական:  
Կես թագը զլիսին, բայց առանց գահի,  
Երկինքն էր միակ իր պալատը վես,-

Աստղերն իր աղքը, ինքը թագուհի,  
Ու թափառում էր թախծալի ու Հեղ.  
Ասես փնտրում էր նա էլ վախվորած՝  
Մասիսի վրա Հայ գաւը կորած...  
— Երանի Հայերն աստղեր դառնային.  
Հայ աղքը մի ծով աստղաբույզ դառնար,  
Որ ոչ մի չար ձեռ Հասաներ Հային...  
Աղջի կորչելու վախն էլ չբանար:  
Ուսկի Հողի տեղ Հայաստան լիներ լուսինն արծաթյա,  
Լուսնյակի վրա լիներ Հայաստանն իր աղդ ու ցեղով՝  
Այս չար աղքերին Հավիտյան անհաս այն լուսնի վրա,  
Որ էլ չլցվեր Հայ սիրու ձուլման ահ ու երկուղով.  
Որ ճակատագիր սարսափն է նրա,  
Որ Հային մնար Հայ Հողն Հնօրյա,-  
Քանզի ո՞ր Հողում մի Հայ չի կորել.  
Ո՞վ չի Հայ աղքին գերեզման փորել  
Կոտորածներով դարեր ընդերկար,-  
Ո՞վ չի Հայ թաղել առանց շիրմաքար  
Հայոց քարաշատ քար-քարաստանում  
Վշտից քարացած մայր Հայաստանում...  
— Ո՞վ չի երկրում զարկել Հային,  
Ո՞վ չի կյանքում զրկել Հային,  
Կյանքն ի՞նչ ... ո՞վ չի Հողից զրկել՝  
Սև տարտարոս զրկել Հային ...

## 7

Եվ սպասում էր արքան ահաՀար.  
— Տեր աստված, մի՞թև Հայոց խաչեղբայր  
Հունացը Հոնաց դարձավ վայրենի,  
Որ Հարկ է ուղում այսքան վազրազայր.  
Մի՞թև աղամին դարձավ բորենի ...  
Մի՞թև դեն իր ողջ բանակով կզա...  
Թե՞ Հարկ չէ ... մտքում ուրիշ միտք ունի,-  
Տեսնենք՝ սուրհանդակն ի՞նչ կասի, ի՞նչ կա,  
Ի՞նչ է երազը բող Բյուզանդիոնի ...  
Եղբորս մատն էլ խառը կլինի ...»:  
Եվ էլի Հիշեց Ներ թագավորը  
Նենդ եղբոր փորած՝ իր ընկած Հորը ...

— Խառն է ... կրկնում էր սասանյալ արքան,  
Հարկ-դամի մեջ էլ խառը կլինի.  
Մով Հարկի մեջ էլ այս բյուզանդական  
Ինչպես գաղթի մեջ Վասպուրականի...»:  
Ու մութ կասկածներն աղեղներ լարում՝  
Նետ ձգել էին, կարծես, սովորում՝  
Իր կասկածները՝ սիրուն արած թիրախ՝  
Ու զարկում էին, զարկում աջ ու ձախ՝  
Մակծկում էին սրտիկն աշարերդ.  
Ամեն անստույգ կասկածն անվրեալ՝  
Ամեն անստույգն՝ ստույգ մի ուն նետ ...  
— Բայց թե զորքով է խոսելու ինձ Հետ՝  
Թե ողջ զորքով է՝ վայ իմ աղեղին, —  
Եվ աշեղ աշից իր աղեղն հիշեց.  
— Կին է՝ ով կորցնի զենքը, կինն ու ձին  
Հոր խրատն հիշեց, խոր մի ախ քաշեց.  
Եվ Հորը նայեց ինչպես առյուծին,  
Ու թվաց, թե Հոր պատկերն էլ աշա  
Կոաշեց որդու տագնապը գաղտնի՝  
Կիսեց Հոնքերը իր որդու վրա, —  
— Ինչպես կիսում էր սաստով արքենի,  
Երր մանուկ էի, երր մութի ծովում  
Ինձ թռչող նետ էր շղթիկը թվում ...  
Երր անցնում էի զիշերն այս ձորից,  
Թեկուզ Հորս Հետ, ձորն Ախուրյանի, —  
Վախսնում էի ընկնող աստղերից, —  
— Հայրիկ, Հոր վիշապն իմ զյսին կընկնի...  
Խրավ - Երկնքի Հակա աղեղից  
Ընկնող աստղերը նետ էին թվում՝  
Ուր էլ փախչեի մանուկ երկյուղից՝  
Զղջիկի նման սիրոս էին խրվում...  
... Ոչ թե քաջությամբ Հասա իմ գաշին -  
Այլ գաշն ինձ Հասավ Հորս գանձի պես»:  
Այսպես մտորեց ու թիկնապաշին  
Կանչեց թագավորն ու զոռող ու Հեղ  
Հայտնվեց շուտով  
Արծիի քթով  
Թիկնապաշ Հսկան

Անունը Ռոկան,  
Արծվի քթով՝  
Ինչպես իր արքան:  
— Հայկն ուշացավ՝ թոփր Գուգարք.  
Տես որտե՞ղ է կոխվը բարկ,-  
Ինձ բեր իմ Հոր թուր Հավունուն՝  
Սպարապետ Պահապունուն,  
Կռվում լինի՝  
Կովից Հանի,  
Բեր առյուծին իմ ծերունի,-  
Քեզ է, ասա, մնում քո խնդն  
Հայրենիքը՝ վտանգի մեջ...»:

## 9

Ու նայում է Հորն ու մննախոսում,-  
— Ի՞նչ պատասխան տամ, Հայր իմ կարենիր,  
Ծովացած Հարկերդ ինձնից են ուզում,  
Ժամանակ, ով պատկեր, կամ նշավակիր,  
Որ որդին Հորը չի հավատալու,  
Իրա՞վ դու գաղտնի պայման ես դրել,  
Թե Բյուզանդիոնին դու Հարկ ես տալու՝  
Իրա՞վ ես, Հայր իմ, գաղտնի Հետկարել,  
Եվ ինձ ես վիշտը ճակատազրել ...  
Թե տամ՝ ծով Անխո ողջ կամայանա,  
Մայր տաճարում էլ մի մոմ չի մնա,  
Որ լա՝ այրվելով պատկերիդ առջն,  
Քանզի ծով կուզե գետից դնը սև:  
Հայր իմ, թող քո էլ աստվածն ինձ պահի,  
Աղվեսի՞ն Հարկ տար առյուծն ամեւի,-  
Իմ Հայր առյուծը Հարկ տար աղվեսին,  
Կամ գաղտնազրեր խոստումով մի սին,  
Այդ չեմ հավատում, բայց ինչպես չտամ,  
Սիրտս քոնը չէ, ով առյուծակամ,-  
Կարծես մորս Հետ սրտանց չես ... քնել,  
Որ, Հայր իմ, դու ինձ այսպես ես ծնել ...  
Ինձ եղնիկի սիրտ, եղրորս՝ վագրի ...  
Եվ դեռ Հիշում եմ խոսքդ արքենի.  
— Ամեն մի արքա իր արքան ունի,

Նրա խոսքով է նատում, զեր կենում,  
Կա, որ իր արքան կինն է գեղանի.  
Կա, որ գողունի իր Հարձն է լինում,  
Կա, որ իր զորքն է, կա էլ, որ նրան  
Արքա է մոտիկ մի մեղրաբերան,-  
Կա, որ սին փառաց տենչն է մեղսարեր,  
Կա, որ իր ևսն է, կույր կամքն անվեհեր,  
Ես էլ իմն ունեմ, Հայր իմ անստվեր,-  
Ես էլ ևս ահա թագավոր, սակայն  
Վախն է, կնոջ պես, ահա իմ արքան,  
Արքայիս արքան  
Վախն է խորական,  
Խւնթ ու խաստուն  
Մատոյալն իմ արթուն,  
Որ Հաճախ, ինչպես խելքահան մի կին՝  
Բուռն է Հայաքում իմ կամքն ու ողին,  
Իմ խիղճն ու մխոքը, իմ պատիվն անգամ,-  
Աշա քո ծնածն, ով լուսահողի,  
Եվ Հիմա Հա՞րկը, թե՞ իմ զարկը տամ,-  
Ռ՞ը տամ, որ գեթ Անիս չչոքի,  
Ինչպե՞ս Հայաստանն՝ ալյաշի առաջ,  
Ինչպե՞ս զարկը տամ, երբ իմ թուրն է խաչ ...  
Ու թե արնոտ է նետն իմ աղեղի՝  
Որսի արյունն է, ոչ թե ոսոխի ...»:

## 10

Բայց ունայնաորս իր աղեղի տեղ  
Իր Հույսի միակ աղեղն Հայտնվեց.  
Իսկ Պահապունի իշխանը չքեղ,  
Ներս մտավ խոնարհ ու զլուխ տվեց.  
Ու վշտագուժեց,-  
— Տե՛ր իմ թագավոր,  
Գոռ բյուզանդ Հոնը Վրաստանն առավ.  
Իր վաթսուն Հազար զորքով վազրավոր,  
Վրաստանն առավ, մեզ վրա դառավ...  
Իմ վեց Հազարով՝ յոթ կոփզ տվի,  
Բայց ... ինչպես բազեն ընդդեմ արծըվի:  
Նատ է կատաղել, որ Վրաստանին

Չորավիդ ելավ՝ զորք տվեց Անին ...  
Հիմա ուզում է Անի արշավել...  
— Զէ, Հարկ է ուզում, վաղուց չենք տվել.  
Ի՞նչ Հարկ, տես ինչ է ուզածը մթին.  
Ու թուղթը տվեց սպարապետին,  
— Ամեն գլխից՝ քո գլխի Հետ'  
Հարկ պիտի տաս ինձ այսու Հետ:  
Ամեն գլխից՝ գլխից առաջ,  
Ամեն գլխից մի ոսկե խաչ,  
Ամեն գլխից մի պայտ, մի ճի,  
Մի ասպանդակ, մի մորթ այծի,  
Ամեն գլխից, ով անօրնն,  
Հարյուր լիտր ոսկի ցորեն,  
Ամեն գլխից մի ուլ, մի ցուլ,  
Ամեն գլխից մի բարձ բմբուլ,  
Ամեն գլխից մի բուռ բրինձ,  
Չունես՝ մի կոտ գարի տուր ինձ,  
Ամեն գլխից մի խուրձ բամբակ,  
Չունես՝ բուրդ բեր, ով քուրդ Համբակ,  
Ամեն գլխից մի կոտ կորեկ,  
Չունեք՝ Անին թողած՝ կորեք,  
Ամեն գլխից մի նոր պարան,  
Ամեն գլխից մի նոր վրան,  
Ամեն գլխից մի տեղ, մի թուր,  
Թաթարին թող և ինձ Հարկ տուր.  
Ամեն գլխից մի կով, մի եղ,  
Մի կույս բեր ինձ, թե կով չունես ...  
Առանց մի խոսքի՝  
Վաթսուն բեռ ոսկի ...  
— Ավազ, Հառաջեց սպարապետը,  
Ել ի՞նչ խաչեղբայր, երբ Հարկ է ուզում,  
Գիտե, որ նեղն եք իմ աղեղ-նետը,  
Լայն աղեղով է խաչիդ Հետ խոսում ...  
— Գետից ծով կուզե, մոնչաց արքան,  
Ու խաչեղբայրս ցուլ դառավ գարկան,  
Իմ Հորս մահով գարթնել վագրագայր  
Քառասուն տարվա խարճն է խրիսնջում  
Մեր խաչեղբայրը. Էլ ի՞նչ խաչեղբայր,

Երբ աշաւ եկել Հարկ է պահանջում  
Մի պարսիկ, մի թուրք անհավատի պես.  
Այն էլ քառասուն, քառասուն տարվա,  
Թև տամ՝ տով կընկնի, կուտնն ինձ ու քեզ,  
Քառասուն Հավկիթն եղավ մի փարա ...  
Սա էլ կատաղեց,  
Իմ Հույսը թաղեց,-

Բայց սուրհանդակս ինչո՞ւ Հապաղեց,-  
Տեսնենք՝ կույր բախտից ի՞նչ լուր է բերում,  
Տեսնենք զորքո՞վ են, թե՞ աշ են տալիս,  
Խոյ թափառելով իմ սահմաններում ...  
Տեսնենք իմ մա՞շն է, թե՞ աշ է գալիս:  
Իրավ կատաղեց, թե ինչո՞ւ Անին  
Զորավիր եղավ քույր Վրաստանին,  
Գաղտնի զորք Հանեց Բյուզանդի ընդդեմ,-  
- Տիկիր, ատում է, Հարկ էլ տուր, խնդրեմ ...»:  
Իմ Պահլավունի, իմ Հոր Հավունի  
Իմ Հույսի աղեղ, տիսուր ևմ կարի,  
Սա Հարկ է ուզում, եղբայրս՝ մաշս,  
Վայ թե իմ և քո կյանքը չերկարի:  
- Կերկարի, տե՛ր իմ, դեռ կա զրահս,  
Քո զալար կյանքը քո առջև է զեռ,  
Ավադդ, իմն է անց, քո փառքն է անմեռ:  
- Չեն թողնում որդին իր Հորը քաշե՝  
- Կքաշե, տե՛ր իմ, սիրուդ մի մաշե,  
Չենք տվել, չենք տա,  
Չենք տա: Հավատա,  
Չենք տա: այս վկա՝  
(Սուրբ զուրս քաշեց Հավունին Հսկա...)  
- Բայց զորքով թե զա՞.  
- Զորքով էլ կընկնի, աղեղդ վկա.  
(Աղեղ որ լսեց, կարմրեց արքան,  
Դեռ ջահել արքան թիչ մնաց ընկնի,  
Կարծեց՝ իմացել ծերունի Հսկան՝  
Ահով ծաղրում է աշն իր մանկունի,  
Որ ձորն է թողել աղեղն Հայրենյաց,  
Փառակոր աղեղն իր Բագրատունյաց,  
Իր զենքը՝ պատին իր արքայական),

Ու մեղմ խոժոռավեց կասկածից արքան,  
Բայց ցըևց կասկածն հսկա ծերունի՝  
— Հարված աղեղ է զորքդ արքենի...  
Արքան շունչ քաշեց ու գրկեց քաջին:—  
— Բայց օդ արա քո ականջին,  
Ժամ է՝ դու քեզ լավ զրահես,  
Իմ բերդ Անին այնպես պահես,  
Որ թշնամին ճնողք չգտնի,  
Իր ծուխն անգամ ներս չմտնի...  
— Տե՛ր իմ, մահն էլ չի մտնի ներս,  
Դրսում պիտի մահը գտնի՝  
Ով էլ բերե իր մահը մեղ,  
Անին բերդ է քո սրտի պես:  
— Իմ սրտի նմա՞ն ...

Միծաղեց արքան,-  
Ու էլի նայեց նեղ լուսամուտին՝  
Նեղ ու միայնա՝ իր հոյսի նման,  
Եվ Հրամայեց սպարապետին,  
— Ինձ փրկեցիր իմ ... ախսպորից,  
Իմ վահանը դու ես նորից.  
Տես՝ իմ զորաց ի՞նչն է պակաս,  
Ժամ է՝ ամեն իր հոգն հոգաս,-  
Դու ինձ պահ տուր քունն աշքերիդ՝  
Անքուն զորքս դարձրու գերիդ:—  
Որ աշքը որ անվախտ քնե՞  
Էն քնի հետ աշքն էլ Հանե»:  
— Կա, տեր արքա,  
Քանի այս կա՝  
Հսկան ձեռքը դրեց կրծքին,  
Էլ քուն չկա Հայոց աղքին  
Քանի անքուն աղքերն այս օձ  
Անքուն ծծեն արյունն Հայոց ...  
Իմ աշքերն էլ՝ վկա Հոգիս,  
Միշտ պահակ են մեկս մեկիս,  
Ու կՀանեմ ես իմ աշքն էլ՝  
Թե մի թարթիչն ուղի քնել:  
Զորքի աշքը թե որ քնի՝  
Տանուլ կտա Հողն Հայրենի,

Նա կհանի աչքն Հայրենյաց,  
— Ապրես, դու աչքն իմ աչքերաց.  
Հանապազօր վարժանքի մեջ  
Թրծիր գործս տաժանքի մեջ.  
Չորքս պահե միշտ սրբած թուր,  
Թե չէ՝ բախտը պոռնիկ է կույր ...»:  
Ու լուր մոտեցավ արքան ծանրաբայլ  
Էլի անհամբեր դուրս նայեց մռայլ,-  
Դուրս նայեց ինքն էլ, ծերունի Հսկան.  
Բայց խոսքն էլի կցեց արքան.  
— Կարող է զան մեղ պաշարեն,  
Հրամայիր՝ Անի թերող  
Գաղտնաճամփի դուռը քարեն,-  
Մածկեն գանձերն՝ աշխարհ գերող:  
— Պաշարեն էլ՝ պաշարն է ճոխ,  
Սույն էլ թեկուղ մեղ պաշարն ...  
— Ամրացըրու ամենն ու թող  
Ճակատազիրն ինձ Համբուրե,  
Իսկ թշնամուս վերջը թերե:-  
— Կրերի, տեր, սուրս վկա:  
— Սուրդ Հույսիս թերդն է, որ կա:  
Տես՝ արքայիս թույլն ու թերին  
Ժանդ չդառնա քո էլ թրին,  
— Արքա ...  
— Դու թերդ իմ թերդերին,  
Քեզ ևմ Հանձնում իմ կյանքն ու քեզ,  
Ոչ մի ճամփի աչք չփակես,  
Չորավարը ինչ որ լինի՝  
Չորքն էլ, զիտես, այն կդառնա:  
Չորավարը թե որ քնի՝  
Չորքն Հավիտյան վեր չի կենա:  
Մի թարթիչն էլ քուն չի մտնում,  
Դառը քունն էլ իմ բանակի  
Բեր ինձ պահ տուր, ես էլ կտամ  
Զարթնող վշտին իմ Հեզ ազգի:  
Հայոց վշտով ես էլ դառն եմ,  
Ես ինձ շամփուր, ես իր գառն եմ ...  
Ես իմ քունն էլ կտամ քամուն,

Քիչ ենք՝ շատ տի մնանք արթուն ...  
Դարեր արթուն պիտի մնանք ...  
— Քիչ ենք, բայց Հայ՝ վայ թշնամուն,  
Մի վայ տվեց, Հարյուր կտանք, —  
Ասաց Վահրամ Պահապունին,  
Կարծես շախեց թուր Հավլունին-  
— Տե՛ր իմ, վաթսուն վերք կա վրաս,  
Վաթսունի էլ տեղ կա, թե տաս ...»:  
Ու դուրս գնաց Հսկան Հայոց,  
Արքան էլի մնաց վայոց:

## Գ Լ Ո Ւ Խ Յ Ա Ռ Թ Ե Ր Ո Ր Դ

1

Իջազ սևաշյա քնքուշ Նրեկոն լուսնի կուժն ուսին  
Ախտորյան իջնող Այծյամի նման կամ այն Հարճի պես,  
Որ ելափ, ինչպես խանդի սև ամպով փաթաթված լուսին,  
Անիի տակով, գեպի թագավորն իր գոռող ու Հեզ.

Ու մայր տաճարի զանգերը զարկին,-

Արքային թվաց, թե եկան կրկին

Այն քայլող կամորջ քարավանները աշխարհաթափառ,  
Այն Հազարագանձ քարավանները Հայոց ոսկենառ,

Թվաց՝ նորա են, ճամփերը բացին,

Ու դեպի Անի վեր կամրջվեցին

Վանից, Տարոնից, Հայոց չգերված,

Խլաթից, Մուշից, Վասպուրականից

Հասան Հույսերով իր ոսկեջրված

Մունր իջան... ու դեռ զանգերի ձայնից.

Որ կարծես երկնի խորքերից կուգար,

Աստծո բերանից՝ կախարդվեց արքան,

Դուրս նայեց արքան, դրսում իր Հարճի

Ոսկե օդի պես ցոլաց լուսնկան,-

Բայց ամպը, կարծես, Հարկապահանջի

Թուղթն էր, որ գալիս, ծածկում էր նրան:

Ու ամպի տակից մի ձայն էր գալիս,

Կարծես ամպի մեջ լուսինն էր լալիս,

Զէ, լուսնի քրոջ մրմունջն է՝ Հույսին,

Այն ամպի անուշ ցողի պես ծորում,-

Եվ Հիշեց արքան կույս թողած կույսին,-

- Կոկոն թողածս ինձ է որոնում ...

Այս, կույսի զիրկն էլ վիշտս չթաղեց.

Բայց ինչպես ասեմ՝ ինչու Հապաղեց

Իմ վերադարձը ամոթ չէ՝ ասեմ,

Բայց է՞ր թաքցնեմ իմ ահը վսեմ,-

ԱՀ կա, որ մահեր կսանձի, կասեմ,-  
Զէ՛, ահի մասին դեռ ոչ մի շշուկ»:  
Ու երգն էր լսում արքան վեհաշուք:-

- Սրտիս մեջ թուր մոռացար,

Անմեղ եմ՝ զուր մոռացար,-

Ինձ թաղել կուզես՝ թաղիր,

Աղեղդ ո՞ւր մոռացար:

Ո՞վ կանչեց, ո՞ւր գնացիր,

Ո՞ւմ դաշտին ջուր գնացիր,

Հավուզն ինձ ծարավ թողեց,

Սրտիս մեջ թուր մնացիր:

Քո ոսկի վախտը խլում,

Ո՞վ է իմ բախտը խլում,

Քո գրկում ո՞վ է հիմա

Դրախտիս թախտը խլում:

Թուր էի, քո ձեռն էի,

Փարվանա թիթեռն էի

Աչքերիդ ատրուշանում,

Այս, ուր էր, թե մեռնեի...»:

Եվ Հասավ խանդի արտասվող ամպով  
Իր խանդի պես խոր այն գաղտնի ճամփով,  
Որ ձորի այգուց Անի է Հանում,  
Ուղիղ արքայի ամրոցն է տանում՝  
Միջնարերդն Հայոց մայրաքաղաքի,  
Ներս մտավ դեմքով խարված լուսնյակի.  
Բայց երբ արքային մեն-մենակ գտավ,  
Թվաց, թե բախտի դրախտը մտավ,-  
Մեկից ցնդեցին կասկածները կույր,  
Սև ջաղու խանդը դառավ սիրո քույր,  
Ու բացվեց աչքը կուրացած Հույսի,  
Մենակ էր արքան՝ Համբ ու մեկուսի,  
Մենակ էր, բայց այն Համբի պես տխուր,  
Որ աչքն ասում է՝ օգնիր ինձ, իմ քույր:  
Նստել է գահին այն արծըվի պես,  
Որ թեն է կոտրել նստն Հանկարծահաս:  
- Ինչո՞ւ ես տխուր, ի՞նչ արի ես քեզ,-

Քրթմնջաց կույսը ասպձանքով մի պարզ,-

Մա՞րդ էլ սիրածից այնպես Հեռանա...  
Արքա՞ն էլ սերն ու գենքը մոռանա,

Ով մեկ, ու Հազար թշնամի ունես,

Քեզ քո արյունն էլ դափում է Հեռվից ...

Ինձնից ջոկ ուրիշ Հրեշտակ չունես,

Քո թագն են տենչում մարդիկ չորս կողմից.

Ինձնի՞ց պաղեցար, թե քո աղեղից,

Որ կույր նետի պես թուար այնտեղից»:

Արքան խայթվեց ...

Բայց թե Հաղթվեց

Ու չղիմացավ գեղեցկի թովքին,

Որ կույսի շնչով, կրթի մոռնչով

Հրաբուխ դառավ սիրո խռովքին:

- Իմ աղեղները սրանք են, որ կան

(Եվ կույսի Հռնքերն Համբուրեց արքան):

Այս թարթիչներն են իմ նետերը սուր,-

(Եվ այդ նետերը Համբուրեց տիսուր):

Այս կթղաներիս

Մեջ է հուր գինիս,-

(Եվ արքան կույսի աշքերն Համբուրեց):

Այս բարակիկն է կոթը դաշույնիս՝

(Եվ կույսի մեջքի դաշույնը գրկեց...):

- Բայց այն ի՞նչ գիր էր, որ ինձ մոռացար,

Որ ինձ մերկ թողած խակույն Հեռացար,

Չլինի՞մ մի չար գույժ էր չարաղետ»:

- Քեզ էլ է ուզում կայսրըն Հարկի Հետ,

Գառնուկ է ուզում աղվեսը պառավ.

- Չուզի էլ ... կտաս.

- Բեկյալ եմ, դե լավ ...

Քառասուն տարվա Հարկը չենք տվել.

Ու ևկել ծով են գետից պահանջում,-

Այս թուրն է ահա իմ սիրուր խրվել ...

- Քաջս, ինչո՞ւ չես Հենց թրով ֆնջում

Այդ Հարկապահանջ, անհավատ դեխն,-

Ո՞ր մեկին ֆնջեմ,- նման են ծովին,

Գառան ժանիք է թուրը փոքր աղգաց,

Այս է ցավերիս ցավը տակապին.

Դու էլ խլում ես կորովն իմ բազկաց,-  
Բայց քեզ Հետ վիշտս կիավում է կարծես,-  
Ամրողջը տուր ինձ, ամրողջ կյանքս քեզ...  
Իմ կոյս մարմինը դեյլան է Շահի,  
Սերդ կրակ է իմ գեյլանի մեջ.  
Քաշե, որ սիրուս կրակդ պահի՝  
Հետդ Հովանաս սրտիկն էլ իմ խեղճ:-  
Մարմնիս Հետ խաղա, ոչ թե Հոգուս Հետ,  
Ցմահ ինձ սիրե, ինձ տիրե Հավետ,-  
Ասի՞ ինձ էլ է յայլա դրկելու ...  
— Չէ՛, մինչև մահս քեզ եմ գրկելու,  
Միայն թե լինես ... կոյսն իմ Հույսերի,  
Ասում են՝ շահերն իրենց դռւատրերի  
Առաջին գիշերն իրենք են խլում ...  
— Ահա՛ թե ինչու ինձ չես վայելում ...  
Այնինչ մարմինս՝ քո սիրո գերին՝  
Մաքուր է, նման մանկան աշքերին,  
Դեռ կույս է, ինչպես անկատար մի Հույս,  
Ոչ ոք չի մտել ավագանն իմ կույս,  
Աչքի Հետք անգամ չկա իմ ... կրծքին  
Բացի քո աչքից, մեռնես քո աչքին,  
Հովն էլ իմ կուրծքը չի մտել, վալլա,  
Մաքուր եմ, ինչպես մզկիթն արքայի»:  
— Ի՞նչ մզկիթ, վիթս, կամ էլ ի՞նչ այլահ,  
Թող իմ Հայ աստվածն ինձ ու քեզ պահի,  
Բայց տես, չի պահում ինձ իր զրահում,  
Բյուզանդն ուզում է իմ ծունկն էլ ծալել,  
Հա՛րկ չէ ուզածը, զու չես կուահում,  
Ուզում է ազգս իր ազգին ձուլել ...  
Այս վիշտն է ահա, որ քո գրկի մեջ  
Կուզեմ մոռանալ, այս ցավն իմ ազգի,  
Դու էլ գերված ես լոկ թագով իմ պերմ»:  
— Չէ՛, ես նիզակն եմ քո սիրո բազկի ...  
Ու էլի ընկափ արքայի վզով  
Գեղանի կույսը բարուրած Հույսով,  
— Կուզես Անիիդ այրերը գնանք,  
Մի բարայրի մեջ ապրենք երկուսով,  
Գնանք սովատանջ՝ լեռները մնանք,

Ապրենք մի հովվի ու հովվուհու պես,  
Որ չկասկածես իմ սիրո մասին...  
— Հա ... թագուհի ես ուզում, կլինես ...  
Թև ինձ արժանի լինես, իմ լուսին:  
Չեմ խմի խմած բաժակով երբեք,  
Ուրիշի քաղած ծաղիկն հոտ չունի.  
— Դեռ քո համբույրն է ինձ դիմել, ինձ եկ ...  
Վարդս դեռ մեջն է կանաչ կոկոնի»:

Հարճը վեր կացավ.

Նազեց, մերկացավ,-

Ասես թե դառավ հրաշքով անխափ  
Մե կարապն խսկույն սպիտակ կարսապ,  
Ու քաշեց Հարճին

Արքան իր մահճին,-

Ի՞նչ Հարճ, ի՞նչ կարապ, ի՞նչ կույս կամ ի՞նչ կին,  
Հայ թիւզյոն զգաց արքան իր զրկին,  
Մաղկածով թիւզյոն իր զրկից խլված,  
Հայ զրկից խլված դրախտն իմ Հայոց,  
Թվաց, թե Հայոց թերզերը փլված  
Խոլ վերաշինեց արքան ալեկոծ,  
Ամուր զրկելով մի բուռ պարակու հուն,  
Որ Հաղթել կուզեր Հայոց թագուհուն ...  
Մեկ են ծաղկունքը բոլոր ազերի,  
Բոլոր ծաղկունքը մեղք ունեն, ահա,

Բոլոր ծաղկունքը սիրո են զերի,  
Երբ մեկը մեղու, վարդ է մեկն ահա:  
Ու մինչ՝ անտեղյակ՝ զիշերն էր կիսվում,  
Դրախտմառցի շշուկն էր լսվում,-

— Չքնաղ իրանդ այսպես զրկելիս՝  
Քո ողջ իրանն եմ զրկում, նազելիս,  
Համայն իրանն է իմ Հարճը դառնում,  
Երբ բաղուկներին մեջ եմ քեզ առնում,  
Խարվում եմ մարմնիու ամեն մի ... խոսքով,  
Արծաթ մարմինը կծածկեամ ոսկով,-  
Վայելքն է գահը սիրո ազահիս,  
Դու ես թագուհիս, դու թագն ես գահիս:  
Իրանիդ մատադ, վայ քո իրանին,  
Համբույրս մատադ քո վարդ թերանին,

Որ, տես, զրախտի դռնակն է, իմ կույս:  
— Նե՞րս եկ ... — շշնջաց Համբույրը կույսի,  
Եկ' ... Խրվիր մինչև խորանը Հոգուս,  
Մինչև սիրուս եկ, որ էլ դուրս չգաս».  
Ու մի բուռ սրտում մի ծով փոթորկեց.  
— Նե՞րս եկ ... ինձ բավ է թողնես անմուրազ ...  
Ու խեղճ արքային Հարճն այնպես զրկեց,  
Այնպես, որ սիրուց վախեցավ արքան,  
Ծով թվաց մի բուռ Հարճը խորական,-  
Հայոց առյուծին Եղնիկն Իրանի  
Քնքույլ թևերով այնպես վանդակեց.  
Որ արյունոտեց վարդը բերանի ...  
Եղնիկի առաջ առյուծը չոքեց,-  
(ԱՀա թե ինչո՞ւ ամենաթովիչ  
Մի կինն էլ շատ է, Հազարը՝ շատ քիչ՝  
Մարմնի բնության օրենքով կրքյա,  
Ուր առնամարդն էլ ճորտ է, կինն՝ արքա).  
Ու Հարճ էր զառնում արքան իր Հարճին,  
Իր ... աստվածուհուն՝ թագուհու դահճին,-  
Ու շշնջում էր Հարճը մարմնարույր,-  
— Տո՞ւր ... որ չմարեն սերս, խարջը տո՞ւր,  
Այս, տուր, որ այսպես  
Իմ կյանքը տամ քեզ,-  
Մի զրկում մի ողջ Հարեն վայելես»:

## 9

Ու դուրս մնացած, Հեզ թագուհու պես,  
Լուսինը նայում, շողում էր խանդից,  
Ամպի մեջ քաշվում ամոթխած ու Հեզ,-  
Մեկ ամպի տակ էր թաքչում ամոթից,  
Մեկ չէր դիմանում, ամպից դուրս գալիս՝  
Բուռ-բուռ արցունք էր աչքից շաղ տալիս,-  
Լալիս էր լուսինն Հեզ թագուհու պես,  
Այն չքնաղ Հարճին խանդում էր սրտում,-  
Ու երր մոտեցավ, մեկ էլ նայեց ներս՝  
Խանդից պոկոտեց զարդերն իր կրծքից,  
Պոկոտեց բոլոր մարգարիտները,  
Ու երկիր նետեց երկնի բարձունքից,-

Արցունքներ դառած բոլոր գարղերը,  
իսկ մնացածները իր շուրջը սառան՝  
Արցունքների պես շուրջը շաղ գալով՝  
Աստղերի կողքին նոր աստղեր դառան,  
Չզիտես թե ում սերը ողբալով՝  
Նրա, որ չքնաղ Հարճի էլ գրկում  
ԱՀով կապասեր իր տուրհանդակին,-  
Գիրկն Հարսանիք էր, բայց սիրտն էր սգում.  
— Սրտիս կեղևն է միայն քոնն, ով կին ...  
Ու միջնարերդից իր գոռող ու հեզ  
Դուրս նայեց արքան, լուսինը ելնում  
Ամպառագաստով, ուկե նավի պես,  
Արքայի միաբը Երկիր էր տանում:-  
— Այ իմ լուսին, Միփան կերթաս,  
Ճամփենդ ամազ է, կապան կերթաս,  
Իմ էլ ճամփեն ամազ է կապում,  
Դու էլ ձոր ու ծապան կերթաս:  
Զին տակիս է, գերի թամրին,  
Զին ինձ գերի, ես իմ ճամփին,  
Ճամփես քար ու կապան կապած,  
Զիս դեմ առազ ժեռ ու շամրին,  
Միփանն ասավ դու Միս գնա,  
Միաը բարձր է քան զիս, գնա,  
Ինչպես գնամ, մութն է ճամփես,  
Լուսին, ինձ առ, Մասիս գնա:

## Գ Լ Ո Ւ Խ Ռ Ո Ւ Թ Ե Բ Ո Ր Դ

1

Ով Ախուրյան, զիր վիրավոր քո գլուխն էլ այս ափին,  
Բալասանը այս ափին է, մորս վերքը այն ափին ...

2

Ղողանջում էին դանգերը բոլոր,  
Ղողանջում էին անուշ ու անսվերջ,  
Պատարագում էր Անին կես-մոլոր  
իր Հազար ու մի տաճարների մեջ:  
Աղօթում էին Հազարահառաչ,  
Որ քնած աստվածն Հայ ազգին հիշեր,  
Պատյան դնել տար թուրն Հարկապահանջ,  
Որ խաչեղբայրը զորքը ևս քաշեր...  
Մոմ էին վառում, խունկ էին ծխում  
Անիում Հազար եկեղեցիներ,  
Սպարապետը զորքն էր ջրդեղում,  
Որ Հույն գայլի գեմ առյուծ դարձներ,  
Թագավորն ինքն էր զրահներն Հազին՝  
Ընկած թոնդրակի ահն էլ աչքի մեջ,  
Ահով կսպասեր իր սուրհանդակին  
Այս էլ յոթ զիշեր գաղտնավախ ու խեղճ:

3

Բայց իր առաքած սուրհանդակի տեղ  
Բղեշիս է Հասնում ահի պես ահեղ,  
Հեռվից Անիի թագավորության  
Յոթնաձի բղեշիս Հասավ խնդահեղ,  
Հասավ ահավոր օրհասի նման,  
Ոչ չքախմբով,  
Այլ սգախմբով  
Անի ներս մտավ Հոնքերի ամպով.

Որպես անշեփոր  
Մի տիարաթափոր,  
Հասավ ու զումեց,  
Թե ոսոխն Հասավ  
Մի նախիր քչեց՝  
— Այս դեռ մեկ, ասավ:  
Բանակ դնելով բյուր-ձիախրիսինջ  
Քո զուլն էլ իմ այս աչքերով տեսավ,  
Քո սուրհանդակն էլ տեսավ ամեն ինչ,  
Բայց շատ էր կտրիմ, այլևս չկա...  
Մինչ Հունաց ամեն մի ձիու խրիսինջ,  
Բողի քրքիջով, ներիր, սուրբ արքա,  
Անի կռնչում,  
Անի է տենչում,  
Անին, որ առնի՝  
Ողջ Հայաստանիդ թիգ կրոնի,-  
Ինչ որ գարավոր տեսչն է դե կայսեր:  
Էլ ի՞նչ է խորհում իմ Հայոց Հոկան,  
Ի՞նչ Հրամայում, գաշի՞նք, թե՝ սուսեր ...»:  
— Իսկ դաշինքն ի՞նչ է, ոսկի՞ է, ինչքա՞ն:  
— Դաշինքը, տեր իմ, գաշինքն այս անգամ...  
Կարկասեց բղեշխն աշեղ մի վայրկյան,  
— Ի՞նչ է, լեզո՞ւդ են քաշել շամփուրի՝  
Նախիրների հետ քո բղեշխական,-  
Թե՝ կուզես արքադ Համբավդ Համբուրի ...  
Մոնչաց Օհան Սմբատն ահարկու,-  
— Դաշինքը, տե՛ր իմ, մեզ վերջ կրերի:  
Դաշինքը զինն է իմ ու քո ոգու:  
Մեր Հողն է ուզում, բայց Հողն՝ ամայի՝  
Հայաստան կուզե, բայց առանց Հայի,-  
Դաշինքը զինն է մեր սուր ու զորաց,  
Բյուզանդն ուզում է Հայ զորքը ցրել.  
Համբուրել խաչը Հայոց Համբուրած,  
Նույն խաչով Հայոց աշխարհը տիրել.  
Դաշինքը մահն է մեր սուր ու զորաց...  
Մեր զովքն անելով՝ մեր զորքը ցրել.  
Հովանի լինել մեղ Հունաց զորքով՝  
Իբր խաչապաշտ մի խաչապաշտի.

Հայոցը ցրել իբր հայ կամքով,-  
Այսպես է թերում վերջը մեր վշտի ...  
Այսպես է ուզում Հայոց հետ դաշնել,  
Այս իսկ թիրախին վաղուց է նշնել,  
Կոկորդիլոսի արցունքով միայն  
Կցողեն երաշտն համայն Հայության՝  
Հայաստան կուզեն, բայց առանց Հայի ...  
Հարկ չէ, ողջ ազգն է ուզածն ամեւի,  
Ազգն է քեզանից ուզածը կայսեր,-  
Ել ի՞նչ է խորհում իմ Հայոց հսկան,  
Ի՞նչ հրամայում՝ դաշի՞նք, թե՞ սուսեր,  
Հույնը միշտ Հուր չէ...»:

Եվ լոեց, սակայն

Իր հսկան անցույց աշխից մոլեզնեց,  
Իրեն մի վայրկյան կորցրեց, թե ի՞նչ՝  
Թռավ բղեշխի մի թեղը... պոկեց,-  
— Առ, քո սուտը քեզ, ուե ձիախրխինչ,  
Իմ խաչեղբա՞յրն է այդ ամենն ուզում,  
Իմ մա՞շն է ուզում, ջնջո՞ւմն իմ ազգի,  
Չուլո՞ւմն իր ազգին, ուու սուտ ևս խոսում,  
Այդ լեզուն սուրն է անհավատ բազկի...»:  
Ու նետեց թեղը բղեշխի առջեւ,  
Նետեց ինչպես սև արծըվի մի թե,-  
Բղեշխի թերանն արյունով լցվեց»  
Ու դողաց արցունքն աչքերում ապշած,  
Անպատճի ցափից մանկան պես ճկվեց,-  
Հաղիվ «րայց, տեր իմ» Հաղիվ չշնջաց:  
Արքան սթափիվեց,  
Բղեշխին գգվեց,  
Փոշմանեց, խղճաց՝  
— Ներիր ... մրմնջաց,  
Արյունը տեսավ՝  
Ներիր ինձ, ասավ,

Որ Հուր զայրույթն կուրության հասավ»:  
Ու կրծքին սեղմեց բղեշխին հսկա,  
Մատը դնելով մի ճոխ մատանի,  
Եվ իսկույն ձոնեց իր սուրը ոսկյա,  
Եվ ուզեց վերքին բալասան դնի,-

(Երբեմն էլ մարդ է ամեն մի արքա), -  
Դրեց բալասանն ու վերքը կապեց...  
- Կայսրն իր պաշտած աստծուն էլ խարեց ...  
Գնա՛, տեր ընդ քեզ, մինչև զորքն Հայոց  
Ծովանա, Հասնի սահմանն իմ Տայոց,  
Այս թրով իցիվ վանես, ետ պահես,  
Ետ պահես, վանես իմ սահմաններից,  
Կամ թակարդելով՝ ժամանակ շահես,  
Կամ սիրով շահես, ոխն Հանես սրտից:  
Կամ լեզու գտնես զեռ ոչ թե թրով,  
Այլ, մի Հովքի պես, ասենք, մի զրով,  
Արցունք մի թափես, երբ ծով է զինին,-  
Ինչպես կատաղած մի Հարևանին  
Մյուսն է իր խել պատյանը դնում՝  
Մի շամփուր գառով, մի րուռ տակառով,  
Դեռ կա քո արքան, ի՞նչ ես վախենում,-  
Հարկավ չես կարող մի շամփուր գառով  
Եամփուրի փոխել իր սուրբ դժնի.  
Բայց մի զիշեր էլ թե պատյան դնի...  
Էլ ի՞նչ մի զիշեր՝ այս Հարկը վկա՝  
Աս որ չչքի՝ սելջուկն էլ կգա...  
Ուր էր թե մի խաղ խաղայիր զլիսին,  
Որ թողներ չքվեր իր զորք ու զռով»:  
Ու ճամփու դրեց բեկված բղեշխին,  
Լուռ սրբեց ճակատն իր Հոգեխոռով,  
Եվ Հրամայեց Համզո Համհարդին,-  
- Ուր որ է՝ գտիր կաթողիկոսին,-  
Հապշտապով կանչիր նրան,  
Ինձ բեր իմ Հայր Գետաղարձին,-  
Ասա՛, ինչպես վագրի բերան՝  
Օր կրացվի լուսարացին՝  
Թե այս զիշեր  
Զգաս, ո՞վ տեր»:  
Զորաժողով՝ Հույժ անշշուկ:  
Զորախորհրդի  
Ասեի պիտի»:  
Ու էլի մթնեց արքան վեհաշուք,  
Էլի դեղնեց աշն երևսին,

Կանչեց մյուս իր Համհարդին.  
— Կանչիր, ասաց, իմ Հավլունուն,  
Կանչել տվից Պահապունուն:  
— Բարի՞՝, արքա,  
— Բարին դեռ կա ...

Ժպտաց արքան, ասաց, բայց դու  
Աշխարհագիրն ինձ Հասցրու,  
Կուզեմ զորքիս թիվն իմանալ՝  
Թե կարո՞ղ եմ գահիս մնալ,-  
Քանզի զոռ ու զորքով եկել՝  
Դեն իրավ է թկիս չոքել ...  
Միայն Հարկ ու խարջի բան չէ՝  
Անհավատի պես կհաջե,-  
Չուզել կուզենա մեզ, բայց դու  
Իմ զորքի թիվն ինձ Հասցրու:  
Քանի՞ ըյուր է ոտավորը՝  
Հասցրու թեկուզ մոտավորը,-  
Քանի՞ ըյուր է ձիավորը,  
Զրահավոր-թիավորը,  
Քանի՞ ըյուր է սակրավորը՝  
Նիզակավոր-վագրավորը,-  
Քանի՞ ըյուր է թրավորը,  
Վահանավոր-բրավորը,-  
Քանի՞ ըյուր է բերդավորը՝  
Աղեղնավոր-վետավորը,-  
Քանի՞ ըյուր է տեգավորը՝  
Պարսպապահ նետավորը,  
Քանի՞ ըյուր է բղեշխավոր  
Սահմանապահն իմ ահավոր:  
Քանի՞ ըյուր է ազատանին,  
Քանի՞ ըյուր է ձորի Անին:  
    Քանի՞ ահել,  
    Քանի՞ ջահել,-  
Իմ նեղ օրվան ի՞նչ ես պահել,  
Ինձ Հասցրու թիվն իմ զորաց՝  
Իմ Հույսն, իցիվ, դեռ չի կորած»:  
Ասաց արքան ու Հավլունի  
Մատը որեց մի մատանի,-

Քարն օձահուլ ու սովեման,  
Ողջը գազրի գլխի նման,-  
— Այս էլ, ասաց, ով իմ զրաւՀ,  
Աչքս լինի՝ միշտ քեզ վրա...»:  
Կանխապ պարզեն քեզ մատանիս՝  
Ի հույս մի բուռ Հայաստանիս,  
Որին ուտել կուզեն, ավաղ.  
Բոլոր աղքերն այս անխաղաղ,  
Քիչ է մնում  
Հայոց արյունն  
Հայոց աստվածն ինքն էլ խմի,  
Վերջին Հային երկրից քամի»:  
Ու դուրս ելավ Հոկան Հայոց,  
Արքան էլի մնաց վայոց:

## 11

Եվ սպասում էր նորից վշտաշուք  
Ու կուչ էր գալիս սիրտն աշաշչուկ,  
Զգիտեր՝ այժմ ինչպես մոռանար,  
Ինչպես իր աղքի վշտից Հեռանար,  
Ու ծափով կանչեց թաքնված Հարճին,  
Ինչպես լուսնյակին կանչեր մի սև ամպ,  
Կանչեց ու սեղմեց Հարճին իր լանջին,-  
Եվ Հարճը վիշտը ցըսց քնիշությամբ,-  
— Մի տիսրի, տերս,  
Ալլահս, սերս,  
Քոնն են աչքերս,  
Քոնն են հոնքերս,  
Քոնն են շուրթերս,  
Քոնն են վարդերս,  
Դրախտի բույրս՝  
Քոնն է Համբույրս,  
Քոնն է ծով Անին,  
Դու՝ իմ Հովանին,  
Քոնն է քո գաշը,  
Իմն է քո մահը:

Ուժ տովին Հարճին շշուկները հեղ  
Ու թիկնապահներ թվացին միթնում  
Պալատի յոթը իր սյուները վես,-  
Ու երգեց Ծան-Մմբատը տրտում  
Անտառով մենակ անցնող մանկան պես,  
Բայց ոչ թե աշխաց, այլ խենթ ու խնդուն  
Մի պահ մոռացագ իր վիշտը, կարծես:  
— Ինձ հո մենակ չե՞ն թողնի,  
Իմ Հույսները, մայր Անի,-  
Ոսովի դեմ յոթնացեղ՝  
Կզա Վանանդն իմ աշեղ,  
Կզա Շիրակն՝ իմ բազեն,  
Կզա իմ Ղարսն ասպարեն,  
Էս անքանակն իմ Դվինո,  
Կզա բանակն իմ Դվինո,  
Կզա Տարոնն աշեղված,  
Նեղ օրն ընկած իմ պահին,  
Խեթ չեն նայի իմ գահին,  
Կենի, ինչպես Վանա ծով՝  
Վանս կզա Հուր-բոցով,  
Վասպորականն ամրոխված,  
Կզա Գուգարքն իմ փոխված,  
Կզան ու ծով մեր զորքով  
Ետ կվանենք մի զարկով...»:

Այսպես երջանիկ ցնորարանեց  
Ազգերի վանդակն ընկած Հայ արքան,  
Բայց Հանկարծ Հայ պիշտն իր զլուխն Հանեց  
Ուկե մշուշից այս վայրկենական՝  
Հայ Մասհաներով Հայտնվեց ներկան,  
Երբ արքան հիշեց,  
Որ շղթայված է կեսն Հայաստանի,  
— էլ ի՞նչ Վան, ի՞նչ Մուշ, ի՞նչ Վասպորական:  
Ավաղ, ի՞նչ անես, իմ Պահլավունի.  
Այս, քարանայիր երջանիկ վայրկյան,  
Ով անեսական վշտին մոռացում,  
Մի պահ թվաց, թե Տիգրան Մեծն ևնք դեռ...  
Այնինչ՝ իմ Հայոց Դվինն էլ իմ դեմ իր զուռն է  
զոցում,

Արարի ձեռքով, ամէս, շղթայված են Հայոց ոտն  
ու լեռ,

Մասիսն էլ Հայոց իմ ազգն է իմ դեմ, իմ  
ազգն է գերված,  
կամ արծաթամորթ Արշակ արքան է մորթաղերծ  
արված,

Մորթաղերծ արված, իմ առջև դրված.

Որ կարուտից էլ Հայր գարզանդի...  
Երեկ Շապուհի, այսօր սև ձեռքով թաթար-  
բյուզանդի:

Բայց թե զորքով զա, ինչպես դուրս վանեմ,  
Նոր ջրահեղեղ է զորքը բյուզանդի. Երբ զա,  
ի՞նչ անեմ,

Որտեղից գտնեմ Նոյան տապանը, որ ելնեմ  
Մասիս,

— Կվանես չարը, կելնես, իմ ազիզ.

Բոլոր սարերիդ շղթան կկտրես,-

Ենջաց Հարճը վարդի բույրի պես,  
Ճրագը փուշ է,-  
Եկ, մութն անուշ է...»:

Ու վզովն ընկավ ու մթնչաղի

Եշուկով մարեց կյանքը կանթեղի.

Ու մահիճ քաշեց, բայց Հարճի գրկում

Արքայի սիրտն էր զաղտնի հեկեկում:  
— Էն անքանակն իմ Դվնո՝

Զի զա բանակն իմ Դվնո,

Զի զա Սասունն իմ խլված,

Զի զա Ղարսս խարիսլված,

Զի զա Տարոնն իմ գերված,

Մենակ մնաց իմ Անին,

Արցունք կուլա իմ գինին,

Զի զա ոչ մի Վանա ծով.

Ինձ կիսեղդե իմ լացով:

Թուրքը մեր վշտով մեզ կնվաճե,

Որ թեկուզ գերված մի Արարատով

Նման է աշեղ մի պարսկա դաշճի,

Ողջ ազգն էլ թե տամ կուտե անկրոպվ.-

Հայոց մեծերը Հայոց մեծ վշտով  
Խելագարվում են կամ իմաստնանում...

Ու մահանում են կամ անմահանում»:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՒԴԻ

1

Ասես գլուխին սելջուկ Հեղեղից Հայոց աշխարհում  
Վանն Անի բերող այն քայլող՝կամուրջ քարավանները,-

Ոչ Մշո դաշտի բույրն էին բերում,

Ոչ տանում Հայոց կարոտն ու սերը...

2

Գիշերն Անիի Մաղկոցաձորում  
Մի մեղեղի էր մեղրի պես ծորում,  
Հեղիկ մրմունջն էլ մայր Ախուրյանի

Օրոր էր ասում՝ քնիր, իմ Անի,

- Տեսնենք ինչ լույս կրացվի

Հայոց երկրին այս մի բուռ,

Վերջին Հռույսն էլ կզոցվի,

Թե՛ կրացվի մի նոր դուռ...

Աշխարհը քնած, արքան էր արթուն,

Ու երազելով մի ելք իմաստուն՝

Դեռ սպասում էր, որպես մի Հույսի՝

Լույսին՝ իր կանթեղ կաթողիկոսի,-

Մի աչքով արթուն, մեկով քնելով,

Երգին ակամա ականջ գնելով՝

Թագավորն զգաց, թե ով է երգում

Չորում, Ախուրյան գետի եղերքում,

Չորի այրերում՝

Մութ քարայրներում

Բույն էին դրել աղքատ վանեցիք,

Այն Հռվն էր ձորից երգը վեր բերում,

Բայց ո՞վ էր երգողն այսպես մեղմ ու ձիզ:

- Ես որսկան, ջահել որսկան,

Արքայի վայել որսկան,

Մի նետով մի սար որսալ՝

Կարող եմ Հազար որսալ,

Մի նետով Հազար որսալ՝

Կարող եմ աշխարհ որսալ,  
Բայց սիրույս սուրբ աղեղով  
Չեմ կարող մի յար որսալ...

Այնպես մեղմիկ էր մղկտացընում,  
Որ կարծես այծամն ականջ էր դնում,  
Կարծես սիրածն էր ու ոչ թե արքան,  
Ու աղերսում էր սիրած աղջկան,-  
Կարծես իր սրտից՝ երգով կարեվեր՝  
Սոլսակ էր ելնում, թոյզում ձորն ի վեր,  
Ուր սիրտը բանար  
Իր վարդի առջև,  
Որ վարդն իմանար՝  
Ինչ է դարդը սև:  
Բայց, Հանկարծ, ձորի մթնում ահայի  
Զայնը ջահելի  
Դարձավ ահելի,-  
Այդ ինքն արքայի որսկանն էր ահել՝  
Միակ որդու Հետ, որդու Հետ ջահել,  
Իրիկնաշացի իր ձուկն էր բռնում,-  
Բայց երբ դատարկ էր թոռը դուրս գալիս,  
Իր երգը լալիս ու ողբ էր դառնում,  
Ախուրյանից խոր իր ցավն էր լալիս:  
— Էրն ինձի բույն եմ արել,  
Իմ Հույսը սյուն եմ արել,  
Դուրս քշել գայլին բնից՝  
Բունն ինձի տուն եմ արել:  
Բայիկս, մեկումար ես,  
Քարայրում անզին քար ես,  
Նոր ծլած բեղիդ մատաղ,  
Ինձ Համար մի աշխարհ ես:  
Մով աչքով՝ պուտըմ ջուր է,  
Սիրածդ անշեջ Հուր է,  
Բախտը մեզ ջուր էլ չի տա,  
Գառնուկս, լացդ զուր է:  
Ես ձորերն ինձ տար արքան,  
Հին չորերն ինձ տար արքան,

Այս, գոնե որսածներիս

Ուկորներն ինձ տար արքան:

Ու զետը ձգեց ուռկանը ձեռի,-

Պատանին մտքում ինչ-որ բան դրեց,

Ու զառապ ափին թեքված մի ուռի՝

Հույսի Հայացքով ջրերն Համբուրեց,-

Բայց Հայրը որդու մխաքը կուահում՝

Թռող ջրի մեջ երկար է պահում,

Որ, իցիվ, մի մեծ Հսկա ձուկ Հանի,

Որ զեթ այս գիշեր պատանին քնի,

Բայց երր այս Հույսով ջրից դուրս քաշեց,

Դաստարկ դուրս եկավ.

Հոր Հույսն էլ Հանգավ,

Որդու Հայացքը մեկից մշուշվեց,

Հիմա որ իրավ ուռենի զառապ,-

Բայց Հայրը մեկ էլ ուռկանը ձգեց

Փնտրելով որդու բախտի ձուկը մեծ,

Այս անգամ ուռկանն այնպես ծանրացավ

Որ Հայրն էլ մտքում մի մեծ բան դրեց՝

–Դու Հասնես Հային, տեր աստված, ասավ.

Սպասեց մի պահ,

Դուրս քաշեց ապա,

Բայց ... մի օձ Հանեց,

Հույսը կործանեց՝

Թե որդու Հույսը, թե իր Հույսը մեծ,

Խաչված Քրիստոս Հայոց Հույսն անեղծ:

–Մի՛ վախիր, որդիս, պատահմունք է չար.

Քրթմնջաց Հայրը, մի քար վերցրեց

Զախջախսեց օձի զլուխը միթար,

Զախջախսեց զլուխն ու զետը ձգեց,

Հուրն օձին տարապ սև պարանի պես,

Սև կախաղանի պարանի նման,

Որից պատանին աղատվեց կարծես,

Շունչ քաշեց Հսկա զրկում Հայրական:

Մերունին որդու աշքերն Համբուրեց,-

Աղի էր արցունքն անմեղ աշքերի,-

–Մի՛ լա, այս մեկը թե օձ դուրս բերեց,

Մյուսը ոսկե ձկնիկ կրերի:-

Ախուրյանն ի՞նչ է, քո ցավը տանեմ,  
Վանա ծովից էլ ձուկ պիտի հանեմ,  
Դու Վանա ծովիս իմ ոսկե ձկնիկ,  
Քո Հարսանիքը Տարոնում կանեմ,  
Ողջ աշխարհով մեկ՝ Հողի Հարսանիք...»:  
Ու ձգեց որ թե լիքը դուրս հանի՝  
Գերի չի մնա Հողն իր Տարոնի,  
Տարոնա Հողը, իր Հողն Հայրենի,  
Գերի չի մնա ծովակը Վանա՝  
Վանա ծովակը – աչքն իր մայրենի,  
Կազատվի Հողն էլ Բինզոյոլ-Բյուրակնի,  
Իր Մասիս լեռանց շղթան էլ կընկնի,  
Ինչպես սև թուրք թաթար թշնամյաց,  
Եվ իր որդու Հետ ինքն էլ անվեհեր  
Միշտ որսի կերթա լեռներն ազատված,  
Միշտ որսի կելնի Մասիսներն ի վեր»:  
Եվ այս սուրբ Հույսով ուռկանը ձգեց՝  
Այս էլ յոթն անգամ ձգեց Ախուրյան,  
Եվ սպասում էր մայր Հույսով իր մեծ,  
Հիշելով Հայոց գաշտերը բուրյան,  
    Դաշտերը խլված,  
    Բերդերը փլված՝  
Հայ-աշխարհաշեն մեռին կարոտած,  
    Բերդերը փլված,  
    Դաշտերը խլված,  
Իսկ որդին, ինչպես կոտրված ուռի,  
Ափին Հառաչեց երգով մրմուռի.  
    – Ախուրյան, ախ, ո՞ւր, ասա,  
Իմ երգը տիսուր ասա:  
    Իմ յարը պուտըմ ջուր է՝  
Սրտիս մեջ խրված թուր է:  
    Վառված եմ, Հով կուզեի,  
Իմ ծովն էլ բոց գուրս հանեց,  
    Ես Վանա ծով կուզեի,  
    Հույսիս թոռն օձ դուրս հանեց»:  
    – Մի՛ վախիր, որդիս, մի վախիր, ասի,  
Քեզ Համար ուրիշ մի Հարս կըներեմ:

էլի վան կերթանք, քիչ էլ սպասի,  
Առյուծի կաթ էլ ուղես՝ կճարեմ...  
— Զէ՛, իմ ուղածը Այծյամն է, որ կա,  
Կամ նա է, կամ մահ.  
Նա էլ է, Հայրիկ, այս կրակի մեջ.  
Այս, նա էլ է խեղճ...  
— Բա ո՞ւր է Հապա, թե խոսք է տալիս,  
Բնշո՞ւ չի գալիս:  
— Կգա, բայց վայ թե օձ կա մեր ճամփին,  
Այն օձն աչքիցս էլ չի Հեռանում:  
Զէ՛, օձ չի գրված մեր բախտի ճակտին,  
Բախտը մեկ՝ ուռու նման կռահում,-  
Մեկ էլ բարդու պես մեզ վրա կհանի,  
Մի՛ վախիկ, օձը քո չարը տանի ...»:  
Հույս տվեց ծերուկն ու խաչակնքեց,  
Ռուկանը նորից նա ջուրը գցեց:  
— Անին շնն, քարայրն ավեր,  
Քո յարը տրեխս չունի,  
Անի ջան, մենք վար, դու վեր,  
Քարայրս կանթեղ չունի,  
Գայլի բուն այրն է տունս,  
Ծով Անին ինձ տեղ չունի,  
Կտրել է անուշ քունս,  
Էս աշխարհն անմեղ չունի:  
Ու մղկտում էր Հայրն էլ որդու պես,  
Հայրն Հողի Համար, որդին՝ սիրածի.  
Որսի պահին էլ որս էին կարծես,  
Մեկն ի սեր սիրո, մեկն ի սեր Հացի,  
— Թոռը գցում եմ,  
Բան դուրս չի գալիս,  
Իմ բախտի բերնից  
Ջան դուրս չի գալիս,  
Անկեզու որսն էլ  
Ինձ չոռ է ասում,  
Սիրտս խորունկ է՝  
Զայն դուրս չի գալիս»:

Ու թոռը քաշեց, ոսկի չէ, բայց տես՝  
Գուրս թռան մանրիկ ձկներն արծաթյա.  
— Տե՛ս, որ ասացի Հովսոդ մի կորցրու,  
Իմ Հայոց Հովսոն էլ կորած չէ, ահա...  
Եվ Հայրը սրբեց արցունքը որդու,-  
Բայց կոտրած սիրտը ինչպե՞ս կպցներ,  
Որդու աչքերից օձը չէր չքվում,-  
Թևկուզ պատանուն վանել Հասցներ՝  
Երբ կույսը չկար՝ կյանքն օձ էր թվում...  
Բայց որդու վիշտը Հովսերին տալիս՝  
Այսպես էր Հայրը իր վիշտը լալիս:-

— Արծաթ է ձուկն Ախուրյանի,  
Ես իմ Վանա Հովը կուղեմ,  
Ախ, ոսկի էր ձուկը Վանի՝  
Ես իմ Վանա ծովը կուղեմ:

Տեսնես արքան ականջ ունի՞,  
Հազար նետ ու աղեղ կուղեմ,  
Ախ, աստված էլ ականջ չունի,  
Գերեզմանս այնտեղ կուղեմ»:

### 3

— Հա, իմ որսկանն է ձուկ բռնում ձորում,  
Այն, որ եղնիկ է Հաճախ ինձ թերում,  
Ողբում է որդու ու Վանի մասին,-  
Ասաց ինքն իրեն արքան վերեկց.  
Ինչպես ամպաթաղ մի տխուր լուսին,  
Սա էլ քուն չունի ինձ լլկող ցավից ...  
Եվ ինչպե՞ս քնի գայլի բույն այրում,  
Գայլի բույն այրում - միթին քարայրում,  
Աչքը չի կպչում Վանի կարոտից,  
Վասպուրականի, Տարոնի վշտից,  
Եվ ուսմիկների գիշերն էլ ահա  
Լալիս է անտուն լուսնյակի լույսով:  
Ազն է Հառաջում թերանով նրա՝  
Ինչպես գերված Հողի աննահանջ Հովսով:

Քարայրներում բույն դրել՝  
Ինչպես աղքատ անեցիք,

Իրենց վանն են երազում  
Վանից գաղթած վանեցիք:

Հայրը իր Հոդն է, ուզում,  
Որդին՝ Հոդն ու սիրածին:  
Այս, նույն կարուտն է կիզում  
Ճակատին սև գրածին...

Բայց Այծյամիկին չեն տա իր որդուն  
Աստված էլ Հայր չէ գաղթական մարզուն,  
Ազգն է գաղթական, ի՞նչ անի արքան,  
Անին ինչ անի՝ բախտն է գաղթական,  
Չեն տա, իզուր է ողբն էլ երկուսի.  
Եվ արքան հիշեց մարմինն էն կույսի.  
«Երբ լողանում էր Ախուրյանի մեջ՝  
Կարծնմ իմ Հարճի մանկատին էր պերճ,  
Կարծնս ձյունավարդ փրփուրն էր զետի,  
Տեսա պատահյալ՝ Հաղվեցի ապշյալ,  
Քիչ մնաց ձիուց ընկնելի պիտի...  
Լողացող լույս էր նա արծաթափայլ,  
Այսպես էր լողում, որ սիրտս էր զողում,  
Ասես ջրի տակ լուսնյակ էր շողում,  
Մի մերկ հրեշտակ՝ կույս ու ոսկեծամ:  
Մանուկ հրեշտակ, իմը չե՞ս լինի,  
Իմն ես, արքայիս բաժինն ես, Այծյամ,-  
Որսը չես ոչ մի քաջ էլ որսկանի...»:  
Ու մինչև այծյամներ կերազեր արքան,  
Մի աչքով քնած, մյուսով արթուն,  
Չորում ողրում էր ծերունին որսկան,  
Հույս-նեցուկ դառած իրեն ու որդուն:

— Ի՞նչ անեն խեղճ վանեցիք,  
Փախսկ են թրից թաթար,  
Տեղ չեն տա մեղ անեցիք,  
Էլ ո՞ւր է աստված արդար:

Խլել են իմ Հայրենին,  
Իմ վանն ու տունն են խլել,  
Կարուտ եմ իմ Միոհանին՝  
Աչքերուս քունն են խլել:

Վանա ծովին աշխիս մեջ է,  
Վանա Հող-գանձս խլված,  
Առանց Վան Անին խեղճ է,  
Իմ Հույսը բերդ է փլված:  
  
Անին չեն, իմ այրն ավեր,  
Ե՞րբ պիտի վերնաս, քարայր,  
Անին՝ Հույս, աշխարհն ավեր,  
Ե՞րբ պիտի չեննաս, աշխարհ:

Անհույս մրմունջն էլ մայր Ախուրյանի  
Օրոր էր ասում՝ քնիր, իմ Անի.

—Տեսնենք ինչ լուս կրացվի  
Հայոց երկրին այս մի բուռ,  
Վերջին Հռույսն էլ կզոցվի  
Թև՝ կրացվի մի նոր դուռ ...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՏԱԲՈՐԴԻ

1

Միծեռնակները գնացին, եկան  
Այս է քառասուն գարուն բերեցին,  
Բայց Հայաշխարհիկ քարավանները չկան ու չկան,  
Միծեռնակները Հույսի կտուցով արուն բերեցին,  
... Այն տուրքատիկ քարավանները, որ Հայաստանի  
Բույրն էին բերում անառիկ Անի:

2

Հայոց Զոջանց տան խլված Հող-տնից,  
Հեռաստաններից Հայոց Հրկիզված  
Գուսաններ էին փախել Գողթանից,  
Թափառում էին ու երգում Հուզված:  
Աղքատների պես, Անի քաղաքում՝  
Իմ Մայր տաճարի մայր դռան առջև,  
Ի սեր ողջ ազգի՝ ողբաձայն երգում՝  
Նզովում էին Հայոց գաղթը սև:-  
Պատմերգում էին գաղթը Տարոնա,  
Ողբազին գաղթը Վասպուրականի,  
Վանա ծովի պես արցունքը Վանա -  
Ողբը Հայ որդոց՝ Հասած մայր Անի:  
- Թողեր ու եկեր եմ մլքերս ու այգիս,  
Կռո՛ւնկ, մեր աշխարհն խարրիկ մը չունի՞ս,  
Շամփրել են իմ սիրտը՝ բռնել կրակին՝  
Կռո՛ւնկ, մեր աշխարհն խարրիկ մը չունի՞ս,  
Ամեն մեկ Հիշելուս կքաղվի Հոգիս  
Կռո՛ւնկ, մեր աշխարհն խարրիկ մը չունի՞ս...

Հայեր, որը յոթը բերան  
Վայ տվեր, վայ Արծրունուն<sup>1</sup>.

Հայոց խարված գաղթի մերան,  
Հայ ազգի վայ Արծրունուն.

Անիծեցեք Հազար բերան  
Թուրանի թայ Արծրունուն.

Էն մեզ Հանեց կեսպիշերով  
Էն մեզ կտրեց մեր գութանից,  
Էն մեզ վանեց մեր վաթանից,  
Մեր վաթանից.

Հայաստանից ...:

Վասպորականն էլ Հայ չունի,  
Տարոնն անհայ - ամայացավ,  
Տոթ բերանը յաթաղանի  
Ինչքան Հայ կար՝ սրբեց-տարավ՝  
Վիշապի պես յոթպիսանի՝  
Օրը վաթսուն Հազար կերավ...

Հայեր, լացեք սև գաղթն Հայոց,  
Դժոխք գառավ դրախտն Հայոց»:

Ու մինչ ողջ Անին ողբում էր մոայլ  
Չարաշուք գույժով գաղթի չարաղետ,  
Արքան ուզում էր վիշտը մոռանալ,  
Խեղկատակելով խեղկատակի հետ:  
- Ի՞նչ բան է կինը, մա՞րդ, թե՞ արարած,  
- Մարդ-արարած է զրողի տարած ...  
- Ի՞նչ է կինն իրավ, ինչո՞ւ է դավում,  
Ինչո՞ւ չի երբեք իր մեղքը քավում,-  
Նոր մեղք է բերում հին մեղաց վրա,  
Ի՞նչն է անհագուրդ գաղտնիքը նրա:  
- Կինը ինքը գաղտնիք չունի,  
Կինը գաղտնիքն է անհունի ...  
Կինը սև է, թե զու սև ես, իմացիր,

<sup>1</sup> Նկատի ունի Սենեկերիմ Արծրունուն, որը փոխանակ դիմագրավելու մեջ փուկներին, Վասպորականը Հանենեց բյուզանդական Վասպի կայսեր խնամակալությանը. 400.000 վասպորականցիներին գաղթեցրեց Ակնի շրջակայրը:

Կինը դե է, թե դու դե ես, դիմացիր:  
Կինը քեզ ծով է, թե նավ ես վրան,  
Կինը կդավե, թե դավես նրան,  
Կինը դաշ է թագաւորին,  
Գաշին աչ է, վայ քո օրին...  
Վարդ էլ ունի, փուշ էլ՝ կինը,  
ԱՀա ինչ է մեր ... անգինը:  
Հրեշտակ է քեզ - թե Հրեշտակ ես,  
Բայց քեզ կթակի - թե դու չթակես:  
Հրեշ կդառնա - թե Հրեշանաս,  
Անուշ է կինը, թե դու մեղբանաս:  
Թե կարիճ եղար - կինը օձ է քեզ:  
Կինը քեզ վարդ է - թե սոխակ լինես:  
Յերեկը քիչ տուր, գիշերները՝ շատ,  
Որ կինն Հրեշտակ մնա անմեղիկ,  
Գիշերն է կնոջ աչքը դուրսն, ով մարդ,  
Յոթ մեղու կուզե ամեն մի ծաղիկ:  
- Ճշմարիտ ես, իմ խեղկատակ,  
Բայց ճշմարիտն ուսկի՞ց զիտես,  
- Ճշմարիտը, - վերմակի տակ,  
- Ճիշտ, խաստուն խեղկատակ ես:  
- Բայց դու էլ խենթ ես քո խմաստությամբ,  
Քո խենթությունն էլ վիշտս չի կխում,  
Քրթմանցաց արքան, մինեց, ինչպես ամպ,  
Դուրս նայեց՝ կիշներ արեք դրսում,  
Բայց դեռ գոնեղուու թափառում էին  
Այն Գողթան գուսան-գղրարները հին,  
Որ երբ կանցնեին պալատի տակով,  
Անի քաղաքի գովքն արին Հանգով:  
- Անին մայրն է Հայաստանի,  
Անին գանձ է երկրի վրա,  
Հայաստանը ճոխ մատանի՝  
Անին անգին քարն է նրա,  
Անին Հայրն է Հայաստանի,  
Հայոց Հույսն է երկրիս վրա ...  
Մնիքեմ, Անի, քո մայր գրկում,  
Մեռնեմ Անի մայր քաղաքում»:  
Ու ողբում էին մրմունջով Գողթան,

— Ո՞ւր է մատանին՝ իր ակին թող տան,  
Ո՞ւր ես, Հայաստան, այս, ո՞ւր ես, ախ ո՞ւր,  
Մի ակն ես դարձել, յոթնակունք աղբյուր:  
Մատանին խլվել՝ քարն է մնացել,-  
Մատանու հույսը իր քարն է դարձել,-  
Իր անգին քարը, մեր անգին Անին,  
Անին մեր աղբատ, մեր անգին Անին»:  
Իր պալատում Պահավունին  
Լսեց, տիսրեց Գողթան երգով,  
Պալատ կանչեց գուսաններին.  
— Երգե՛ք, — ասաց, — Հայոց վերքով,  
Ապրած կենա Հայոց մուսան:  
Գուսանները — յոթը գուսան,  
Տոթը զլխով խոնարհվեցին,  
Ու սրտերը երգով բացին.  
— Ապրած կենա Հայոց թուրը,  
Բանա Հայոց գոցված գուոր ...

Հայոց արցունք Վանա ծովից ենք դալիս,  
Ով զորավար, յոթ ծովից ենք քեզ զալիս:  
Էլ չի Հայոց ծոխ ելնում  
Տեղահանված Տարոնում,  
Վասպուրականն Հայ չունի՝  
Բոյն է գաղթած թոչունի:  
Մշո Հողն էլ, այս, ասում՝  
Էլ Հայ լեզվով չի խոսում  
Նիդակի տակ Թրանի՝  
Ղուն է դառել զուրանի ...  
Հայոց կույս ու կանանցով  
Էլ չի իջնում Վանա ծով  
Հայոց Աստղիկն Հարեմում՝  
Իր ծով արցունքն է քամում:  
Էլ մերը չէ Բզնունին,  
Էլ մերը չէ մեր Սյունին,  
Զորերի Հետ մեր Վայոց  
Էլ մերը չէ կեսն Հայոց,  
Դավթի Մհերն էլ անվերջ  
Վշտից մտավ ժայռի մեջ,-  
Վանա ժայռից էն Հսկա

Էլ ՄՀԵՐԸ դուրս չի գա՞  
Քանի գերի մնան դեռ  
Իր Հայրենի ձորն ու լեռ,  
Այս, իմ Գողթան երգերի  
Մասիսն էլ է դեռ գերի,  
Սպարապետ, Ե՞րբ տի գան  
Իրար Մասիսն ու արքան ...»:

Հանկարծ տիսրաշուք Հայոնվեց արքան,  
Վեր կացան յոթը գուսաններն իսկույն,  
Գլուխ տվեցին, գորգերին ընկան,-  
Խոնարհվեց ինքն էլ Հական իմաստուն:-  
Իր գահը տվեց իր թագավորին,-  
Թագավորն ասաց՝ ավաղ իմ օրին,  
Որ Հայոց Գողթան երգն էլ է գաղթում,  
Այնինչ՝ թաթարն է Հայոց զրախտում  
Վարդ Հայաստանը Հարեմ դարձրել ...  
Բյուզանդն էլ ահա իմ Հույսն է ցրել՝  
Թուր է դարձրել խաչը խաչիս դեմ,  
Մով խարջ է ուզում, ինչ անեմ, չզիտեմ»:  
Տիսրեցին արքան, սպարապետը,  
Կաթողիկոսը - սյուները երկրի,-  
Խորունկ է խրվում Հայ վշտի նետը  
Միայն Հայ սիրտը՝ թե չար, թե բարի,-  
Խորունկ է խոցում, բայց երբ էլ խոցի՝  
Հույսը նման է Անի ամրոցի:-  
Ու գուսանախումբն էլի գեղգեղաց  
Սոխակի ճայնով, Հույսով արծրվի,-  
Թվաց, թե զարնան անձրելը տեղաց  
Հասկի մեջ կծղած ծարավի:

— Բայց քանի կա Անին դեռ,  
Անին, ինչպես Մասիս լեռ,  
Սիփանը չի գարգանդի  
Նիղակի տակ Բյուզանդի:  
Թրի տակ էլ Թուրանա  
Տարոնն Հույս չէ դուրանա:  
Հող չի մնա միշտ վայոց՝  
Զի թուրքանա Հողն Հայոց:  
Նիղակի տակ Մասանի

Սաստոնը չի սասանի;  
Մշերի թոռն՝ իմ քեռին՝  
Դավթի Մշերն իր ժայռում  
Թուր-Կայծակին իր ձևոին՝  
Հույսի կանթեղն է զառում.  
Էն ժայռի մեջ մութն ու նեղ՝  
Թուր-Կայծակին է կանթեղ ...  
Բայց մենք ծովից ենք գալիս՝  
Արյան ծով ենք քեզ լալիս»:  
Սպարապետը աչքերը սրբեց,  
Աչքերի թագի գուշաբներն ընկան,  
Թագավորն ինքն էլ այս վշտով հարրեց,  
Ու ոչ թե զինով, որ ըմպեց այնքան,  
— Այս, Տարոն, ասաց, այս, Վասպուրական,  
Այս, զու նզովյալ, ժանտ Արծրունի,-  
Ելի զարթեցավ Վասակը Սյունի,  
Ելի դավաճան ...

— մոնչաց արթան,  
Ու զինի լցրեց գավից մարգարտյա,  
Բայց արցունքները իր բաժակն ընկան,-  
Հայոց վշտի Հետ զինի՞ կուլ կերթա...  
Ու գանգատվեցին արքային տիսուր  
Գողթանին կարոտ գուսանները յոթ,-  
— Մի ակն ես դարձել, յոթակունք աղբյուր,  
Ուր ես, Հայաստան, Հողիդ ենք կարոտ:  
  
Ինչպես ասեմ քեզ Հայաստան,  
Անի, երբ մի բուռ ես, Անի,  
Երբ գերի են Վան ու Ռատան,  
Անի, բայց դու լուռ ես, Անի:  
  
Ինչպես ասեմ, երբ Հանեցին  
Քո մի աչքը - ծովդ Վանա,  
Հանած աչքով դուրս վանեցին  
Մեզ դրախտից մեր Սիփանա ...  
  
Ինչպես ասեմ քեզ Հայաստան,  
Երբ Սիփանա Հովք չունես,  
Երբ ծարապ ես, իմ մայր Գողթան,  
Երբ քո Վանա ծովը չունես:  
  
Ինչպես ասեմ, երբ անուշդ

Վասպորական, Ղարսդ տարան,  
Երբ Տարոնդ, Վանդ, Մուշդ  
Ֆոթը օտար լեզվով կերան:

Ինչպե՞ս ասեմ, երբ Հայ ուխտին  
Հայ մատաղի գառը չունես,  
Երբ ոտք ենող մանկանց շուրթին  
Քո Հայերն բառը չունես:

- Իրա՞վ, միայն Անին մնաց Հայախոս,
- Հայաստանի կեսն Հայերնն չի խոսում,
- Ի՞նչ կես, արքա, գերի ևն ողջ Մուշ ու Մոկս,  
Վան ու Ռատան, Գողթան բռատան ու Սասուն,  
Մասիս սարն էլ թվում է թե՝ դեռ գերի՝  
Տիգրան Մեծի մեծ վրանն է սպիտակ,-
- Կամ Արշակն է, գերի արքան մեր բարի՝  
Անհուշ բերդի պարսից բանտում դժնղակ.
- Իսկ Մասիսի աչքի առաջ Սիան՝ իր մեծ  
Մամիկոնյան զորավարն է մորթազերծ,  
Որ Շապուշն է մորթազերծել, տեր արքա».
- Ասաց Վահրամ Պահապունին արքային,  
- Մեզ էլ կուզեն մորթազերծել, իմ Հսկա ...
- Լսեց արքան ու թիկնելով իր զահին  
Յոթ գուսաններին՝ - երգեցե՛ք,- ասաց,  
Հայոց լեռների արքան է գերի,  
Զի եղել ոչ մեկն իմ օրին Հասած՝  
Ոչ մեկն իմ նախորդ Հայ արքաների»:  
Եվ Հայ գուսանը կարուսով Մասիսց.  
Հայրենյաց Հողի գովքն ու ողբն ասաց:-

- Ինչպե՞ս ասեմ քեզ մայր ոստան,  
Անի, ո՞ւր է քո սարն աղիզ,  
Առանց Մասիս ի՞նչ Հայաստան,-  
Այս, էլ ի՞նչ Հայ առանց Մասիս:

Ինչպե՞ս ասեմ քեզ Հայաստան,  
Երբ Բինզյոլից էլ չես խմում,  
Երբ քոնը չէ Հողը քո տան՝  
Երբ քարից ես Հացդ քամում...

Ինչպե՞ս ասեմ քեզ Հայաստան,  
Երբ Տիգրանի գարը չունես,

Երբ գերի են Վան ու Ռատան,  
Երբ քո Մասիս սարը չունեմ...»:

— Այս, իրավ մեծ է Հայոց վիշտն, իրավ,  
Բայց ամենամեծն այս գաղթն է զարհուր,  
Սելջուկն է դժոխի, որ կեսս կերավ,-  
Իրավ է ասում գուսանն այս տիսուր,  
Յոթնակունք էիր, իմ ազգի աղբյուր,  
Մի ակ մնացիր,- Հառաչեց արքան,  
Դարերից խոսեք, երգ չէ իմ ներկան,-  
Ու գինի լցրեց յոթ գուսաններին,  
Որոնք գարերը երգով ևոտ թերին:-  
— Մի տեր արքա, դարերն ասիր,  
Դարերից էլ ասենք, լսիր:  
— Մեր խոնջ բազկով շատ կանչեցինք,  
Այս, մի ախավեր ունենայինք,  
Մեր ողջ ազգով Հառաչեցինք՝  
Այս, մի ախավեր ունենայինք:  
Շատ ազգեազգ փնտրեցինք,  
Որ մի ախավեր ունենայինք,  
Շատ փնտրելով շատ ընտրեցինք,  
Որ միշտ ախավեր ունենայինք:  
Բայց այս, մնենք շատ փոշմանեցինք,  
Այս, անընդհատ փոշմանեցինք,  
Փոշմանած էլ Հառաչեցինք՝  
Այս, մի ախավեր ունենայինք,  
Մեր Սիս մեջքին Մասիս կանդնած՝  
Մի մեծ ախավեր ունենայինք,  
Անխար ախավեր, որ նեղն ընկած  
Օրն՝ Հասնող մեռ ունենայինք,-  
Ազգի ախավեր, որ միշտ փրկված  
Միշտ Մասիս լեռ ունենայինք...»

— Զէ՛, մեղնո՞վ պիտի մեր վիշտը ցընք...  
Սիափին Մասիաներն ախավեր չեն մնա,  
Ազգի թիվ Սիաը Մասիս դարձրեք,  
Որ ինքը՝ մահն էլ մեզ չմոտենա,  
— Ինչպե՞ս դարձնես, գլուխ չեմ Հանում,  
Հայ օրոցք չկա մայր Հայաստանում,  
Տե՛ր սպարապետ, ինչպե՞ս դարձնես:

— Այդ պիտի Հայոց աստծուց հարցնես,  
Կամ սատանայից, Հառաջեց արքան,  
— Սատանան, տե՛ր իմ, թուրն է պարսկական,  
Խաչն է Բյուղանդի, սև թուրն է թուրքի,  
Կեռ յաթաղանն է այս նեռ սելջուկի,  
Որոնք մեր զուոր սև քարով շարել,  
Ռւզում են դեռ Հույս Անին պաշարել...  
Քանդել են վանքն Ախմամարա,  
Մովի են լցրել քարերը սուրբ,  
Որ Հայ անվան Հետք չմնա,  
Հայոց աստղն էլ դառնա ասուայ:  
— Լավ, Ախմամարն ասենք քանդե՝,  
Մովը ինչպե՞ս պիտի քանդե,  
Հայոց Վանա ծովը Հայոց  
Որ Հայ անունն էլ վերանա՞  
Ո՞ւր պիտ թափես ծովը Վանա:  
Հայ Հանճարն է աչքդ Հանում,  
Որ նախանձիդ չես դիմանում,  
Չես իմանում  
Ինչ ես անում,-  
Ասենք թաղես Ախմամարը,  
Որ չերևա Հանճարն Հայոց,  
Ինչպե՞ս թաղես Մասիս սարը,  
Կամ Վանա ծովն՝ ինչպե՞ս, այ օձ:  
Պատմությունը թրով թաղել՝  
Մեկ է, ինչ որ աստղեր քաղել ...  
Չէ, չի ցամաքի իմ ազգի գետը»,  
Այսպես մոնչաց սպարապետը  
Ու գուսանների Հետ երգեց գինով,  
Լիքն իմաստությամբ ու լիքը քննով:  
— Մեծ ես Հոգով, երգով, մտքով,  
Բայց թվով էլ դարձիր մեծ,  
Որ քեզ փրկես դու քո ձեռքով  
Գալիքներում գահընկեց:  
Վիշապ էիր յոթզլիսանի,  
Այժմ վեցդ շղթայված,-  
Մնացել ես մի քեզդ Անի,  
Աղդ իմ, ծնիր, Հույս աստիված:

Աղե իմ, ծնի՛ր, ծնի՛ր անվերջ,  
Որ մեծանաս, ևտ խլես  
Քո Տարոնը, քո Վանը խեղճ,  
Որ միշտ մնա Անին քեզ:

Մնի՛ր, ծնի՛ր դու անդադար,  
Աղե իմ, երկնի՛ր դու քեզ միշտ,  
Որ ևտ խլես Հողերդ արդար  
Անարդարից ամրարիչտ:

Մեծ ևս երգով, Հոգով, մտքով,  
Բայց թվով էլ դարձիր մեծ,-  
Որ քեզ փրկես դու քո ձեռքով  
Գալիքներում Հողմածեծ»:

— Իրավ է երգում իմ Պահապունին՝  
Միտ ազգի թիվն է իր թուր-Հավլունին՝  
Ասաց թագավորն ամենքին, բայց դու,  
Իմ Պահապունի,  
Իմ թուր-Հավլունի,

Զգաստ բրոնզիր բազուկն Հայ մարդու,-  
Աջը զինվորի, ձախը զինվորի,  
Որ Անին՝ Հայոց Հույսը, չկորցնի...»:  
Եվ ապա արքան դարձավ գուսանին,-  
— Դու էլ իմ Վան ու Անիից խոսա՞  
Մի գավաթով տուր արցունքն ու գինին,  
Անսահման ցավն էլ ծիծաղով ասա՞  
Հայ ազգ-անտառը ինչքան էլ կորեն՝  
Արմատաթաքույց՝ կծաղկե կրկին,  
Չեն գտնի արմատն՝ ինչքան էլ փնտրեն,  
Հայոց ողին է արմատը, ողին»:

— Իրավ, ցավից ով ծիծաղում՝  
Նա է վերջը ցավը թաղում,-  
Հայ ազգն այսակես շատ ծիծաղել՝  
Շատ է վշտի ծովեր թաղել -  
Մասիս լիներ - չէր զիմանաս,  
Շատ մեծ ազգեր կային - չկան,  
Միս է, բայց տես՝ դեռ կմնա՞  
Կորածներից շատի վկան;  
Ազգ է, ոչ թե դեռ ժողովուրդ,

Աղք է, Հայ աղքն ու ոչ թե քուրդ,  
Ոչ թե սելջուկ, ոչ թե թաթար,  
Վկա Անին իր այս ճարտար,  
Մազաղաթներն իր ողեղույս,  
Փորդ է, բայց թե ոսկի է կույս:  
Մենք Սիս, Մասիսն է մեր ողին,  
Որ դիմացավ Արևելքին,  
Հյուսիս, Հարավ, Արևմուտքին  
Ահա քանի դժար դարեր  
Կա, կմնա ինչպես սարեր...  
Չէ՛, ոգու մեջ փոքր չկա՞  
Հայոց կովի ողին վկա,-  
Ցուլ զեմ ելնի Հայոց տվեր-տվերին՝  
Ուլ կդառնա՝ զլուխ կտա մեր ոտքին»:  
Սպարապետը մի ոսկի տվեց  
Այս խոսքի Համար ծերուն գուսանին,  
Գուսանախումբը նրան խոնարհվեց.  
Ու նրան տվեց արքան իր գինին,-  
Եվ նա արտասվեց, ծիծաղեց, սակայն,  
- Իմ կայլա Հույսը երգով թրծրվեց ...  
Եվ իմաստությամբ գուսանն արծրվեց: -  
- Գաղիկիս որդո՞ւն ասեմ,  
Ի՞նչ անի Սմբատ արքան,  
Գանգատս մարդուն ասեմ,  
Անգութ է զեռ մարդ արքան:  
Վեր ձայնեմ - աստծո՞ւն ասեմ,  
Որ զարթնի քնած արքան,  
Իմ զլիսին սև ձյուն ասեմ,  
Անգարուն մնաց արքան,  
Անեծքս էլ ո՞ւմ խոսեմ,  
Չի զարթնում աստված արքան:  
Հայոց աղքը աղավնի է, բայց սիրու ունի արծվի,  
Կառյուծանա՝ թե մեզ խմրով խմաստությամբ թրծվի,-  
Թե ետ բերե բախտից Հաղթված Հայերին,  
Պանդիստությամբ չարամաղթված Հայերին,  
Երեկ գաղթած, այսօր գաղթած Հայերին,  
Վասպորական-Վանից զաղթած Հայերին,  
Ողջ Հայաստան տանից զաղթած Հայերին.

Մինչև Հինգու ու Հարաց ցրված Հայերին,  
Հինգու ու Հարաց ու Ջին գրված Հայերին,  
Երկրեւ-Երկրը կամուրջ կապած Հայերին,  
Հազար ծովեր արյուն թափած Հայերին,  
Աշխարհը յոթ կողմեր գաղթած Հայերին,  
Հայոց լացող վերքը բացող վայերին,  
Ողջ ազգերին կուլ գնացող Հայերին...  
Էլ ո՞ւմ ասեմ, որ ետ բերե Հայերին,  
Անմահություն ճակատազրե Հայերին:  
– Ինչպե՞ս ետ բերեմ, մի բուռ է Անին,-  
Պատասխան տվեց արքան գուսանին:  
– Անին մի բուռ է, Հույս չէ յոթնադռւ,  
Ախուրյանն Հույս չէ ծով Հայաստանին,  
Ահա ինչու է Անիս այսրան լուռ...  
Ինչպե՞ս ետ բերեմ, ով իմաստուններ,  
Իմ ոչ մի նախորդ այս ցավը չուներ,-  
Այսօր Հույս է, այսօրը՝ վիշտ,  
Բախտն էղուց է, էղուց է միշտ»:  
– Իրա՞վ զարձի մեջ է բախտը Հայ աղքի:  
– Ազգի բախտը թվի մեջ է իր բազկի...  
– Վայ իմ բախտին,- ասաց արքան ու խմեց,  
Հայունին էլ վշտից մի նոր թաս քամեց:  
Ու յոթը սազ, յոթը գուսան իմաստության սանդուղքով  
Հայոց վշտի վշտին Հասան, էլի մտան Վանա ծով:-  
– Ինչպե՞ս ասեմ քեզ Հայաստան,  
Երբ քո ուկե գարը չունես,  
Դժբախտ Անի, Պարս, Արդաշան,  
Երբ քո Մասիս սարը չունես,  
Երբ ոսք ելնող մանկանց չուրթին  
Քո Հայերնեն բառը չունես,  
Այլոց թուր ու խաշի ուխտին  
Միշտ մատաղի գառը դուն ես;  
Ինչպե՞ս ասեմ քեզ Հայաստան,  
Երբ Հայաստան չմնաց,  
Երբ խլվեցին Վան ու Ռստան,  
Ինձ մի Գողթան չմնաց:  
– Ողջը խլել են ազգերն անկլտում,  
Հայոց ողջ հողերն էլ Հայոցը չեն,

թե պառկեմ Անի քաղաքի դաշտում  
Ռոտերս բանդված Ղարսին կղիպչեն,  
Դառնամ՝ կղիպչեն բանդված Մասիսին,  
Դառնամ՝ Դվինին կղիպչեն, ավաղ.  
Դառնամ՝ կղիպչեն Բզնունյաց Ղարսին,  
Նեղ է մեր Հույսն էլ ինչպես մի դագաղ»:  
Եվ արքան վշտից միթնում էր, միթնում.  
Սուզգում ցավի ծովն ու ելք չէր գտնում,  
Մինչ Պահապունին, ի սեր Հայ գահի՝  
Կենացն էր խմում Հայոց արքայի,  
Ու կենացն ահա Գողթան գուսանյաց,-  
— Վանդակից կելնեն Հողն Հայաստանյաց,  
Կելնե,- մոնչաց,- կելնե՝ թե մեռնենք,  
Կմեռնենք, բայց մեր Հողը ես կառնենք:

Քիչ ենք, բայց Հայ ենք,  
Թշնամուն վայ ենք,-  
Քիչ ենք, բայց Հայ՝  
էլ ոչ մի վայ,  
Վայ չի դառնա  
էլ ոչ մի Հայ...»:

Այսպես չերկրայեց սպարապետը,  
Արքային նայեց, որպես իր բերդը,  
Ու գուսանները Հույսով դուրս եկան,  
Եվ նոցա այսպես սպատիիրեց արքան.  
— Գնացեք, երգեք գովքն Հայաստանի,  
Որ գերված Հողն էլ մտքից չհանեն,  
Թե չէ՝ ո՞նց ապրեն մի ազգ, մի Անի,  
Նախանձից իրար ոտնատակ կանեն ...  
Յոթ փեթակ մեղուն մի փեթակի մեջ...  
— Ի՞նչ յոթ, տե՛ր արքա, յոթ-յոթանասուն,  
Իրար կխեղզեն մեղուները խեղճ,  
Հայերը վայ չեն, իրավ եմ ասում,  
Վայ դարձընում են, մորուց չէ վայը,  
Գաղանաց մեջ էլ միշտ մարդ է Հայը...  
— Շատ ես ազգային, տե՛ր սպարապետ,  
— Թե շատ լինեինք՝ շատ չէի լինի ...  
Ի՞նչ լեզվով խոսեմ ես այն ազգի Հայ,

Որ աղքիս իր մայր Հողից կհանի՝  
Դժոխք կվանի իր յաթաղանով.  
Հեղեղով Հայ Հողն Հայոց արյունով...  
Ղարսից, Բյուրակնից, Վասպուրականից,  
Ու զեռ գաղթական ամրոխը Վանի  
Գալիս է Շիրակ, գալիս է Անի,  
Հորդում, գալիս է ծովը գաղթական,  
Ի՞նչ անի Անին, որ նեղ է այսքան,  
Որ այսքան նեղ է՝ ի՞նչ անի արքան  
Ո՞վ իմ իշխաններ, խիղճս ինչ անի,  
Ես մի Ախուրյան, ես մի բռու Անի...  
Ո՞վ է մեղավոր, ինչ անի Անիս  
Մեղավորն Հանգիստ զեյլան է ծխում -  
Իր խլած Հողում մայր Հայաստանի՝  
Աղքերն են Հայ Հողն իրար մեջ ծախում,-  
Ինչ անի Հայոց իմ աղքիկը խեղճ,-  
Ինչ անի արքան, ու իր ձեռքի մեջ  
Արքան իր գինու բաժակը փշրեց  
Ու չղգաց մի պահ, որ խառնվեցին  
Իր ճերմակ արյունն ու կարմիր գինին...  
Չղգաց, բայց անդուռ վշտից մշուշվեց,  
Եվ Արծրունի իշխանին հիշեց,  
Որ լքեց Հողը ու մտքում ասաց՝  
- Չղավաճաններ, ի՞նչ աներ, ասա,  
Էլ Հայոց Հույսը ո՞ւմ խղճին Հուսա ...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Աշա Արագած սարի ևտեից  
Ուխտի է գնում թագուհին, կարծես,  
Ու նրան ծածկող սարի այս կողմից  
Արևն երևաց զլիսի թագի պես:  
Մեղմ ծփաց ամբողջ դաշտը Շիրակի՝  
Թագուհու հագած չղարշի նման,  
Եվ օրն է, ահա, Կանաչ կիրակի,  
Բարի է դառնում աշխարհն անսահման,  
Անուշ մայունով մատադ գառների,  
Զարթնում է ճամփին ուխտավորների,  
Անի քաղաքի դռները բացվում՝  
Առավոտով է աշխարհը լցվում ...  
Ուխտավորները դուրս էին գալիս,  
Քարավանները ներս էին մտնում,  
Եվ Ախուրյանը ձորում ծափ տալիս՝  
Իր յոթ կամուրջով ճամփու էր դնում  
Ներս ու դուրս անող ամեն-ամենքին,  
Հույսով սկսում Կանաչ կիրակին:  
Ու Դվնո դռնով դուրս ելան խոնարհ  
Աչքերն երկու ծով, պուտըմ ջուր աղջիկ  
Ու մի պատանի՝ ապշած կենարար  
Քարավաններով այն տարաշխարհիկ:  
— Կուգեի, Այծյա՛մ, ի՛մը լինեին  
Այս քարավաններն իրենց ողջ բեռով՝  
Բոլորը նվեր մեր Հարսանիքին ...  
— Զէ մի ... — Հնջաց աղջիկն անխոռով.  
Բայց սիրտը խայթվեց անուշ փշերով  
Ու շիկնեց մեկից՝ մի բան հիշելով,  
Շիկնեց, բայց ասաց.՝ Գիտե՞՞ս, Վարազիկ.  
Մի բան որ ասեմ, Հո չե՞ս նեղանա,  
Ինձ աչքով արավ երեկ մի պարսիկ,  
Աչքերդ, ասավ,՝ դրախտն են Վանա, -

Մեր լուսամուտից դուրս էի նայում՝  
Անսամբլն ասավ՝ աչքերդ ուտեմ ...»:  
— Ես էլ կուտեի, բայց դու խնայում,  
Դուրս էլ չես գալիս, որ չկարուեմ ...  
Իմ Վանա ծովն են աչքերդ, իրավ.  
Որ ինձնից խլեց պարսիկն անիրավ,  
Հիմա էլ քե՞զ է խլել երազում,-  
Վանն առավ, այժմ Անի՞ն է ուզում ...  
Եշնջաց տղան, բայց շիկնեց մեկից,  
Որ իր սիրածին աչքով են արել.  
— Ինչո՞ւ կարմրար դու մի սև ... աչքից,  
Կատակեց կույսը, խո ինձ չե՞ն տարել:  
Բայց դու, Վարազիկ, Հայրիկիդ ասա,  
Մի եղնիկի ձագ բերե ինձ նվեր,  
Բայց կուզենայի՝ կենդանի որսա:  
— Կենդանի՞ կուզես, կրերեմ, իմ սեր,  
Էլ ի՞նչ արրայի որսկանի որդի,-  
(Պարծեցավ տղան անունով իր Հոր ...) -  
Որ չկատարեն իղձը քո սրտի,-  
Այս քարվանները խո չե՞ն ուզում, որ -  
Վիզս ծուռ մնամ իմ աղեղի պես,  
Բայց չէ, ուզես էլ, ուրիշ ի՞նչ կուզես:  
— Կենդանի մի ձագ, այս, թե չըներես,  
Այս, թե չըներես, ոչ մի Հարսանիք:  
— Հենց ե՞ս կրոնեմ, կրերեմ, հենց ե՞ս,  
Միայն թե, իմ սեր, էլ ոչ մի Գագիկ ...  
— Էլ ոչ մի ... - կրկնեց և աղջիկը Հեզ:  
Բայց դու, Վարազիկ, թե ինձ կսիրես,  
Հայրս կթողնի, Հայրիկիդ կասես,  
Որսի գնալիս, թող ինձ էլ տանի,  
Ես շատ եմ սիրում կյանքը որականի,  
Նետ-աղեղ ձգել  
Կուզեմ սովորել ...  
— Նետ-աղեղի մեջ քո ի՞նչն է կորել,  
Բայց ինչո՞ւ Հայրս, ես չե՞մ կարող որ ...

Եվ կույսի սրտի Հավքից՝ իր սիրով  
Օրը մի ոսկե փետուր որսալով՝

Որսկան էր դարձնում իր որս Այծյամին՝  
Մեղմ շնչարով որսկանի որդին.

— Նշան բռնելիս չնայես չորս դին,

Միայն նշանիդ, այս այդպես ու թող.

Չեղավ... մի՛ դողա, դու իմ սրտի դող:

Շունչդ քեզ պահե, այնպես, որ Հուզվող  
Սրտիդ թիթեռը չանցնի քո ձևովն,

Շունչդ քեզ պահե ու նշնե լոխն,

Ու դանդաղ քաշե լարն ու նետը քեզ

Եվ Հանկարծ բաց թող, որ չվրիպես,

Վերջ բերես թեկուղ թեւավոր օձին,

Իմ վշտի օձին, իմ սրտի խոցին:

— Բա ի՞նչ վիշտ ունես;

— Իմ վիշտը դուն ես:

Մեկ էլ Հայրենի երկրիս եմ կարուտ,

Ինչպես մազերին քո ոսկենարուտ,

Որոնք թե իմն են և թե իմը չեն,

Ինձ վշտի երկու նետեր կդավինք:

Ու խեղճ պատանին զլուխ չէր Հանում,

Երր կշըռում էր՝ ապշած էր մնում, —

Երեկվա օձին Հավատար արդյոք,

Որ զեռ խայթում էր իր սիրուն անամոք,

Թե՞ աշա անուշ բախտին այսօրվա, —

Մի՞թե ցնորք էր օձը երեկվա ...

— Այս զիշեր Հայրս ուռկան էր ձգում,

Ես քեզ հետ էի անվերջ իմ մտքում,

Բայց քեզ հետ ե՞րբ չեն իմ սիրուն ու Հոգին,

Դու ես ... էլ չկա աշխարհն իմ աչքին,

Էլ ոչ քուն զիտեն աչքերս, ոչ՝ որս,

Սիրուս ցավում է մի Հավք զարկելիս,

Նշան բռնելիս դողում եմ անխոս,

Դու ես ազեղիս առաջը գալիս ...

Ասում ես՝ մեղք է՝ մի զարկ, ասում ես,

Շունչ-կենդանի են նրանք էլ մեզ պես,

Եվ գուցե մեզ պես սիրում են իրար ...

Բայց տե՛ս, մոռացա միտքս վշտահար,  
 Այս զիշեր, Հայրս, ձորն՝ Ախուրյանում,  
 Երբ թոռ էր ձգում, ամեն ձգելիս  
 Ես իմ բախտոն էի մտքիս մեջ դնում,  
 Բայց միշտ գատարկ էր իմը դուրս գալիս:  
 Ու թեև Հույս էր ինձ Հայրս տալիս,  
 Բայց նորից գատարկ դուրս եկավ, Երբ խեղճ  
 Իմ ու քո բախտոր դրի մտքիս մեջ ...  
 Բայց Հենց որ միայն քո բախտը դրի՝  
 Մի մեծ ձուկ Հանեց ուռկանը բարի,  
 Այնինչ՝ իմ բախտից մի մեծ օձ Հանեց ...»:  
 Այս որ իմացավ, կույսը դժգունեց,  
 Եվ ապչեց կույսը, կույսը մթագնեց,  
 Իր ձեռից իսկույն աղեղն ընկավ ցած,  
 Քարացավ կույսը և անհույս ասաց.  
     – Էլ ի՞նչ վիշտ ունես:  
     – Իմ վիշտը դուն ես,  
 Գագիկի բախտոն է քո բախտին սաղում,  
 Նա արքայադն է ու քեզ է ուզում,-  
 Իսկ ես ... ես ի՞նչ եմ, իմ երկրից զրկված՝  
 Իմ տունը գայլի այրն է ... Անիում,-  
 Երկու նետով է մի սիրտս գարկված,  
 Աշա թե ինչն է աչքերս Հանում ...  
 Աչքերիդ մատադ,- շշնջաց կույսը,  
 Աչքերիդ լույսն է իմ սիրո Հույսը,-  
 Մի աչքդ կարժե երկու թագավոր:  
     – Բայց դու խո չե՞ս գա իմ քարայրը որ ...  
 Չես դառնա, զիտեմ, իմ ճրազը դու,  
 Դու գաս էլ՝ Հերդ-մերդ չեն թողնի,  
 Քեզ չեն տա մի որր գաղթական մարդու,  
 Այս է, Այծեմիկ, իմ վիշտը գաղտնի:  
     Մեր տունը էրում<sup>1</sup>,  
     Զեր տունը վերում,

<sup>1</sup> Էր - այր - քարայր.

Վահից, Տարոնից, Մուշից, Վասպուրականից ու Կարսից փախեփախով Անի գաղթած Հայերը Հաղիվ էին ապաստան գտել Անի քաղաքը գոտնորող Ախուրյանի ձորի այրերում, ինչպես և աղքատիկ անեցիք...

Վախում եմ խարևս՝

Այս է ինձ էրում ...

— Զէ՛, ձերը ձորի էրում,

Մեր տունը՝ Անին՝ վերում,

Էրում չէ, չոլում լինես՝

Աչերդ են սիրուս էրում ...

Ես վերից վար կփախչեմ,

Թե չտան՝ սար կփախչեմ,

Որսկանից որս կդառնամ՝

Դրախտից այր կփախչեմ:

Հայրս ասում է՝ քո ցավը տանեմ,

Ախթամար վանքն էլ կվերաշինեմ,

Մեր թագավորն է ասել իմ հորը,

Վարազիկ, կառնենք ձեր սար ու ձորը,

Ու ես էլ կգամ քեզ Հետ զինվորյալ ...

Հույսդ մի կտրե, դու ես իմ լավը,

Բայց տե՛ս, Վարազիկ, թուավ կաքավը,

— Աղեղը տուր ինձ, - և աղեղն առավ,

Առաջ պատանին և առաջ թուավ,

Թուավ, բայց էլի դատարկ ետ դառավ:

Աղջիկը տիսրեց:

Ինչո՞ւ տիսրեցիր:

— Որ խոսքով ընկար՝ որսը թողեցիր ...

Համ էլ մտքումս բան էի գրել, -

Ասի՛ թե որսա՝ ինձ շատ է սիրել, -

Համ էլ ... բայց վախից աղջիկը լոեց,

«Մուրազին պիտի հասնինքը» շասավ,

Բայց տղան նրա վիշտը կռահեց

Օձն, ասես, էլի ետենից հասավ, -

«Քոնը չէ, - ասավ, - դու քեզ մի տանջե,

Թակուզ զրկես էլ՝ կույսը քոնը չէ, -

Քոնը չէ քոնը, տե՛ս, թե ինչ դառավ՝

Կաքավն աղեղիդ բերանից թուավ ...

Կաքավը սերն էր սիրածդ կույսի,

Զեռքիցդ թուավ կաքավդ հույսի,

Օձն էլ այն է, որ էլ դուք ոչ մի օր

Զեր տեսնի խլված ձեր հողն հեռավոր, -

Չեք տեսնի հայոց Վասպուրականը,  
Հորդ որսասար Միփանը, Վանը,  
Թևկուզ մուրաղի Հասնեք այս կյանքում՝  
Չեք պսակվելու Նարեկա վանքում ...  
— Բայց չէ, Վարաղիկ, մի տիսրիր, էլ մի ...  
Վարդի բույր թվաց շշուկն Այծյամի:  
— Զէ՛, Հորս հույսի որսը չես, Այծյամ,  
Վայ թե ուրիշի որս դառնաս, Այծյամ,  
Ինձ գերեզմանի փոս դառնաս, Այծյամ:

Կյանքն ասավ՝ թե բախտ ունիս՝  
Իմացիր՝ դրախտ ունիս,-  
Իմ բախտը կաքավ դառավ՝  
Իմ սիրտը ձեռից թռավ...  
Հով ուղեցի՝ բոց դուրս եկավ,  
Թռո զցեցի՝ օձ դուրս եկավ,  
Երկու նետով խոցված սրտիս  
Երկու հազար խոց դուրս եկավ:  
Աչքերդ՝ տունս-տեղս,  
Հոնքերդ՝ նետ-աղեղս,  
Քեզ ինչպե՞ս որսամ քեզնով,  
Որ դառնաս լույս կանթեղս:

Այսպես հառաջեց անհույս պատանին,  
Բայց կույսի մատը դրեց մատանին:  
— Անրվա գանձը դուն ես,  
Իմ վանն ու լացը դուն ես,  
Այծյամս՝ որսս միակ,  
Իմ ավուր հացը դուն ես...

Իմ ավուր հացը համբույր դարձրու,  
Որ հավատամ, որ ... Գաղիկինը չես,-  
— Այդ հացի համար Հորս հարցրու ...  
Չպիտի դեռ ինձ աչքով էլ ... պաշես:  
Եվ կույսը մատի մատանին հանեց՝  
Պատանու մի մատ հույսը կործանեց,  
Տղան ակն հանված մատանի դառավ,  
Բայց նրա սիրտը՝ կույսն, այսպես առավ:-  
— Ամեն թարթիչս մի նետ արա քեզ,

Դիր քո աղեղին, ինձ խոցիր, ահա,  
Միայն թե դու ինձ սրտանց հավատա,  
Հավատա, որ ես  
Միշտ քոնն եմ, քեզ պես:

Թե չես հավատում՝ սիրտս կտրատիր՝  
Ամեն կտորը մի նետ արա քեզ,  
Ամեն կտորով ում կուզես խոցիր,  
Խոցիր՝ ում վրա սերս կասկածես...  
Ինձ էլ ու քեզ էլ նետահար արա՝  
Թե մի բիծ ընկնի մեր սիրո վրա:  
Ես վերից վար քո քուրը,  
Չորն իջնող քո աղբյուրը,  
Որսկանս, որս չդառնաս՝  
Ես լինեմ ձեռիդ թուրը:  
— Քո տված ջուրն ուրիշ է,  
Քեզ նման քույրն ուրիշ է,  
Ինչ որսկան, թե որս դառնա,  
Իմ ձեռի թուրն ուրիշ է,-  
Հոնքերդ են թուրս...  
... Դե՛, նետիր տեսնեմ,

Լավ նշան բռնե, մտքումս բան կա,  
Թե բռնեց՝ պիտի ուղածիս հասնեմ,  
Պիտի ես բներեմ կաքավը ուկյա ...  
— Այս, չէ՛ (ու գողաց հայացքն աղջկա,  
Քաշվող լարի պես ձեռի աղեղի...)  
Այս, չէ՛, Վարազիկ, թող լավ սովորեմ:  
— Չէ՛, վախտիդ մատադ, էլ շատ մի՛ վախտ,  
Էլ բան չպիտի մտքումս դնեմ,  
Մինչեւ առյուծ էլ որսալ սովորես,  
Դե զարկ, այ այդպես,  
Որսկան ես, ապրես,  
Այսպես որ միշտ գանք  
Շուտ կսովորես,  
Աղեղն էլ ինձ պես  
Շատ է սագում քեզ...»:

Ու պագել ուզեց ծոծրակը կույսի.  
— Չէ՛ որ չափվում է որսկանն իր որսով.

— Աշխա, չէ՛, Վարազիկ, շատ մի՛ վռազի,  
Մի օր կը որսանք քո որսն երկուսով...  
Մայրս ասում է՝ աղաթ կա, բան կա՝  
Գեղեցկությունը, բախտը աղջկա  
Աչքերի մեջ չէ՛,—  
Մրրության մեջ է»:  
Ով կույս չի գալիս՝  
Նա լույս չի տալիս,  
Չպիտի պագես ինձ աչքով անգամ՝  
Մաքուր պիտի գամ,  
Որ մաքուր մնամ,—  
Ինչպես մաքուր է մեզ ծնել աստված»:  
Եշնջաց կույսը ինչպես չբացված  
Կոկոնի միջից դեռ կույս վարդը Հեղ,  
Տղան դեռ ինքն էլ վարդ մի չբացված՝  
Ուկեղեն վանդակն ընկավ հավքի պես:  
— Այն ի՞նչ թոշուն է, Վարազիկ, նայի՛ր,  
Կույսը վեր թռավ,  
Նետ-աղեղն առավ,—  
Նայիր՝ ինչ մեծն է, բայց ինձ խնայիր՝  
Ու դեռ ոչ մի բան մտքումդ մի՛ դիր, —  
Եշնջաց աշով, բայց տղան դրեց...  
Այծյամն անտեղյակ՝ աղեղը լարեց՝  
Նշնց ու նետը բաց թողեց ուժպին, —  
— Դու իմն ևս՝ կանչեց տղան ցնծագին,  
Երբ թոշունն ընկավ, տղան վազ տվեց  
Իր որսակ որսած որսը բերելու, —

---

... Առաջին որսը անգըղ էր մի մեծ,  
Տեսնենք վերջինը ի՞նչ է լինելու»:  
Սիրած տղայի Վա՞նը, թե՞ տղան,  
Թե՞ անգղաթե մի դե յաթաղան:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Զորագիին՝ որպես հղոր մի զահի,  
Մայր-տաճարի պես տրդատակառուց,  
Ամրոցն է բազմել որպես ամեչի  
Ետի թաթերին նստած մի առյուծ,-  
Ականջներն, ասես, ամրոցին թառած,  
Գլխին բույն դրած արծիվ ևն երկու,  
Աչքերն արծվորն Հեռուներն հառած՝  
Կոչնակ-պահնակն ևն նրա ահարկու  
Երախն ամրոցի դուռն է ժանիքված,  
Ատամաշարով այսպես քանդակված.  
Վայ ներս մտնողին,  
Երնեկ ելնողին,-  
Ու ձորի զլիսին դարերով լարված,  
Հսկում էր ամրոցն անց ու դարձողին...  
Ներսում առյուծի հսկա սրտի պես  
Մերթ մեղրաթրթիո, մերթ տագնապահար՝  
Հոսում էր՝ կյանքը ձորի փրփրադեզ  
Ախուրյանի պես թվում անդադար:  
Ու մինչեւ հունաց զորքն հայոց սահմանին  
Նախիրը քչել՝  
Շամփուրի քաշել՝  
Կսակասեր հայոց հեզ պատասխանին,  
Ամրոց ներս մտավ  
Խոժոռուն ու թափ  
Խոստովանահայրն հայոց արքայի,  
Պետրոս Գետաղարձն ամենայն հայոց.  
— Բարի՞ է, արքա:  
— Վազրի պես բարի՝  
Իր որջն է դարձրել սահմանն իմ Տայոց,  
Եվ նախիրներ է լրբենին շամփում՝  
Տենչալով դարձնել հայոցը ... վայոց,  
Եվ ձիերն՝ իմ գոռ դարպասն ևն դափրում.

## ԿԱԹՈՂԻԿՈՍ

Գայլ չէ Հովյն առյուծն ընդդեմ Հայ գառան ...  
Աստված քեզ հետ է, աստված կհասնի,-

## ԱՐՔԱ

Իսկ դո՞ւ ...

## ԿԱԹՈՂԻԿՈՍ

Քեզ հետ եմ, քո աստծո ծառան,  
Վաղեսն աղվեսի մահ պիտի տեսնի:

## ԱՐՔԱ

Աղվես է իրավ, բայց ընդդեմ գառան,  
Իմ խոյ գորքերը գառներ են դառել,-  
Իմ Հայոց խոյերն Հունաց վազրաց զեմ,  
Մինչ աղվեսն աշխարհն իր բուռն է առել,  
Եվ ահա, պարսկից, թուրքից էլ դժխեմ,  
Զինավառ զորք է Հանում ինձ վրա,-  
Խարջ կուզե ... այն էլ քառասուն տարվա,  
Իրը թե Հայրս է խոստացել գաղտնի:  
Իր միտքն ուրիշ է, բդեշխն Համբավեց,  
Հայոցն է ուզում տեղահան անի,-  
Բայց ինչպե՞ս աստծո մեր դաշնը դավեց ...  
Ռվ իմ Գետաղարձ, զետ ես դարձրել՝  
Բայց այս սև հեղեղն ո՞վ է դարձնելու:

## ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐ

Զուր ես, տեր արքա, Հովյսդ կորցրել,  
Նա էլ ծառան է ամենքիս Աստծու,-  
Բյուզանդն Իրան չէ անօրեն ու չար,  
Նա՝ խաչիս մի թևն է, իսկ մի թևը՝ դու...  
Թեև աղվես է Վաղեսն անարդար,  
Թեև անօրեն Հարկ է պահանջում,-  
Թեև իր ասածն ինքը չգիտե,-  
Կասկածամիտ է, բայց մեզ չի ջնջում,-  
Չհավատալուց կասկածամիտ է՝

Վախում է՝ աղեղ դառնաս Իրանին...  
Մեկտեղ կայծակեք կայսեր վրանին.  
Գիտե, տեր արքա, զիտե, որ շահի՝  
Իրանի շահի դստերն ես բերել  
Այսօր գաղտնի Հարճ, վաղը ... թագուհի,  
Թեև գաղտնի ես դաշինքն Համբուրել,  
Բայց իմացել է ականջը կայսեր,  
Լավ չէ՝ ետ ճամփես անհավատ կույսին,  
Քանզի գրկում ես անկամ ու անսեր,  
ԱՀից ես դաշնել, զիտեմ այդ մասին,  
Վտարիր ... Հուսանք Բյուզանդի Հույսին,  
Նա փոքրագույնն է մեր բախտի չարյաց,  
Խո չի՞ ջնջելու Բյուզանդն ինձ ու քեզ,  
Ատրուշանը չէ անհավատ արյաց,-  
Նա խաչեղբայր է, նա մեղ չի ջնջի ...

### ԱՐՔԱ

Ինչպե՞ս չի ջնջում, երբ այդ Համբավով  
Տայոց իմ բղեշխն Հասակ միաձի,-  
Դեն Հարկ է գոռում մեզ ձուկման դավով,  
Ոգու կոփի է և ոչ թե Հացի,-  
Այսպես Համբավեց բղեշխն իմ ցավով,  
Այսպես նա գումեց, աչքս մշուշվեց  
Ու էլ չիմացա, թե էլ ինչ գումեց ...

### ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐ

Եռկ ահ է տալիս, որ Հարկը տանի,  
Հավատա, արքա, ուրիշ բան չկա,  
Վախում է դառնաս աղեղն Իրանի,  
Հունաց գեմ ելնես ժանտ Իրանի հետ,  
Քեզ ահ է տալիս, որ դաշնես Հավետ,  
Աղվեսի խելքով առյուծ է և օձ,  
Բայց նա է միակ խաչեղբայրն Հայոց,  
Իմաստություն է իր ահն է Հաճախ,  
Ամենազորն էլ կունենա մի ... վախ,  
Ինձ ու քեզ Հո չի դարձնելու վայոց,  
Եվ ի՞նչ ենք նրան արել ես ու դու՝

Հայոց կրոնը, զորությունն հայոց,-  
 Նա էլ ստրուկն է մեր պաշտած աստծու,  
 Մի բան գցեցիր բերանն ազահի:  
 Քո հայրը խարջը իրավ չի տվել,  
 Բայց ևս ու զու ենք, առանց վկայի,  
 Ի՞նչն է իմ ու քո զորացն առավել՝  
 Զորեղ ի վերա  
 Զորքերի նորա,  
 Որ... թրով կտրես պարտքդ հնօրյա,  
 Բայց ինչպե՞ս կտրես քո ցրվալ աղպով,  
 Ո՞ւր է Տարոնդ յոթնարյուր բազկով,  
 Ո՞ւր է բազուկդ Մամիկոնյանի,  
 Ո՞ւր է բազուկդ Վասպուրականի,  
 Ո՞ւր է բազուկդ Վանա, Սասունա,  
 Ո՞ւր է այրումիդ ու տեզդ Դմիա,  
 Ո՞ւր ևն զորքերդ՝ բյուր պահապանդ,  
 Ո՞ւր ևն ... Անին է հույսի վահանդ,  
 Այս մի բուռ Անին թեկուզ պարսպյալ,  
 Դու գրի մարդ ևս ու ոչ թե թրի,  
 Ուրիշ էր Հայրդ, ողորմի իրեն,  
 Սպարապետն էլ թառամել կարի՝  
 Էլ չի պարիսպներ թոշի արծվորեն ...  
 Ալևորել է Մասիսի նման,  
 Թեև զեռ սիրտը վազրի է կարծես,  
 Սև ծով ազգից էլ մնաց մի Սևան,  
 Ազգն էլ ճերմակեց զորավարիդ պես:

### ԱՐՔԱ.

Ես էլ այդ ձյունն եմ իմ զլիսին լալիս,  
 Բայց ահա, եկավ քաջ Պահլավունիս  
 Հայացքով է գոհ  
 Եվ թե մտախոհ ...

### ՍՊԱՐԱՊԵՏ

Ողջույն արքայիս և շուրբին աստծո:

Ողջ լիցի ազնիվ աղեղն հայրենյաց,-  
Գե՞տ ևս, թե՞ ծով ևս ծովի դեմ հունաց:

ՍՊԱՐԱՊԵՏ

Արքա', հայրենյաց քո ցավը տանեմ,  
Թե ամենայնը քեզ զեկուցանեմ,  
Կարի կերակրի, թող կյանքն երկարի,  
Երկարի կյանքով աշխարհն հայրենյաց,

Ամեն ինչ անի,  
Հոգնեցա կարի,

Թե ոգուն հարցնես՝ ընդդեմ է հունաց,  
Թե ոգուն հարցնես՝ ծով ևնք ծովաց դեմ,  
Բայց թե մեր թիվն է մեր բախտը դժիւմ,-  
Երկք բյուր ևն զորքերն հայոց,  
Հույսն օրոցքն է մեր տղայոց,

Մեկ էլ ծոցվոր  
Հարսները նոր:

Այս, թե Վանն էլ կտրեր շղթան,  
Վասպուրականն ինքն էլ կտրեր,  
Մուշն էլ կտրեր, հասներ Գողթան,  
Էլ չէր ողբա իմ հույսն անտեր,  
Կառյուծանար իմ էլ արքան:  
- Լավ, ինձ ասա՞ ո՞րն է որքան:  
- Երեք բյուր է զորքն ընդհանուր,  
Հայոց զորքդ՝ Անին մի բուռ,  
Առանց Տարոն, առանց Վանի,  
Առանց Սյունի ու Բգնունի,  
Առանց Ղարս ու Վասպուրական,  
Երեք բյուր է զորքն իմ հայկան,  
Մեկ բյուր՝ հեծյալն իմ թևավոր՝  
Այրուձին է քո թրավոր,  
Մեկ բյուր զորքն է պարսպապահ  
Պարսպաց հետ հավերժական,  
Երրորդ բյուրն է աղատանին ...  
- Քիչ ևնք, վայ ծով Հայաստանին,

էլ ծովն ինչպե՞ս ետ վերցընեմ,  
Որ իմ ազգի ցավը տանեմ,-  
Բայց դու Անին ամրացրի՞ր...  
- Ամրացրի՝ Հույսիդ նման,  
Քո առյուծն է Անին կարմիր,  
Գայլ թշնամիք թող իմանան:  
 Իւամիկը ու ուաղմիկը  
 Դեռ կպահեն Հայրենիքը...  
Հառաջեց Հավատն սպարապետի,  
- իմ Հույսը, սակայն, նման է բերդի,  
Բարանի քանդն էլ՝ Աստրծո նման  
Կարկասնց Տրդատ ճարտարապետը,  
Թեկուզ զորք դառնան ծովերն անսահման,  
Մակել չեն կարող քո փառաց բերդը.-  
Ջրհեղեղն ինքը ետ գա այս անգամ  
Մասիսն էլ ծածկի, Անին չի ծածկի,-  
Հայ ոգին է Հայ զորքն հերոսական,  
Հայոց թիվն Հայոց ոգու մեջ փնտրե,  
Ոգին է Հայոց զորքը մշտավեհ,  
Անմահությունը Հայ արյան մեջ է ...  
Շարել տվեցի ամենակարող  
Անիի տակով միջնարերդ բերող  
Գաղտնի ճամփայիդ դարպասն էլ գաղտնի,  
Ալլահի աչքն էլ ճամփին չի գտնի...  
Թեև դադրեցա, բայց կասեմ անվերջ՝  
Զահելանում է մարդս զործի մեջ,  
Անգործը՝ քարի տակը թողնըված  
Անձաղիկ ծիլ է, քարի տակ դեղնած:

### ԱՐՔԱ

Բարի՛, շամ բարի, Հայր իմ զորավար,  
Միշտ մնաս ջահել ի սեր Հայրենյաց,  
Տա Աստված Հորս մեկ օրը ետ գար,  
Ինչպես իմ Հոր Պահապունին,  
Մնաս իմ էլ թուր-Հավլունին...  
Արքան աղանդեր ու գինի դրեց  
Որսի միա, կաքավ ու եղնըկենի,

Ու բյուզանդական մեծ ջահը մարեց,  
Կանթեղը վառեց յուղով խնկենի:  
— Թող լույսն էլ, — ասաց, — սրտիս Հետ գնա ...  
Մեր զորավարն էլ նայելով ջահին,  
— Իր բերած լույսն էլ արյուն կունենա,  
Ծոտար լույսն հույս չէ Հայրենյաց զահին, —  
Շշնջաց, ապա անապակ գինով  
Առաջին բաժակն Աստծու անունով  
Ըմպեց ամեն մեկն Համբ ու երկյուղած:  
Ապա արքայի կենացն ըմպեցին,  
Բայց Հանկարծ դռան զանգակը դողաց,  
Դրսում վրնջաց ինչ—որ մեկի ձին,  
Թիկնապահ Համհարզն Հայտնվեց իսկույն.  
— Հրովարտարեր, արքա, Բյուզանդից,  
Արքան դժգուննեց, շշնջաց դժգույն.  
— Աստված ազատի անամպ շանթից...  
Ներս մի բեր, դեռ կաց, Հերիք է բերեն.  
Լավ ... գարի տվեք ձիուն ու իրեն, —  
Լուրը չի լինի ցորյանի արժան:  
Քրթմնջաց արքան ու մի թաս քամեց.  
— Զէ, ժամը ժամի՝ դառնում է դաժան,  
ԱՀա թե ինչու այնպես կարկամեց  
Տայոց բգեշխար, իմ սահմանապահն ...  
Ու անմեղ որսի սիրտը ծամելով՝  
Այսպես քրթմնջաց, գինին քամելով.  
— Զուր ևս բերում որսի միս,  
Ես չեմ սիրում որսի միս,  
Անմեղ սրտերն են դառնում  
Որս աշխարհում որսի միս...  
Եվ ինքը լցրեց իր դատարկ թասն էլ,  
Թասն էլ իր կանթեղ կաթողիկոսի.  
— Քամենք այս, բայց ոչ կենացը կայսեր,  
Կենացն Հայրենյաց, որ Հավերժ խոսի:

### ՍՊԱՐԱՊԵՏ

Հավերժ կլսոսի, թե զենքով խոսի,  
Թե չէ՝ իր խոփն էլ սիրտը կակոսի ...  
Իր խոփն էլ իրեն Հաց չի տա մեկ փոր,

Խոսի, խաչ և աղեղ՝ այս երեք եղբոր  
Մեկն ու մեկն ազգից թե որ պակասի՝  
Շունն էլ առյուծիս վրա կիսուի ...  
Քանի դեռ այս կա աշխարհի վրա՝  
(Սուրբ ցույց տվեց  
Հոյսով Համբուրեց...),-

Անզեն առյուծն էլ ստրուկն է նրա,  
Անիծվի՛ ով ժանտ սուրեն աշխարհ ըերեց.  
Վայ նրան, ով այս սուրբ վար դրեց:-  
Այնքան ժամանակ կիսուն լեզուս՝  
Որդրան կանգուն է զորքն ատամներիս,  
Կկրծեմ կոկորդն ահեղ թշնամուս,  
Թե ձեռք բարձրացնի ի վերա լեզվիս,  
Իմ Հայոց լեզվիս, որ հիմքն է Հոգվոյս ...  
Ազգը լեզու է, ատամները՝ զորք,-  
Ահա թե ինչո՞ւ այսրան անողոք  
Մեր սովուները ողջ միարանել՝  
Ռւղում են առաջ ատամներս Հանել,  
Այսինքն՝ ջնջել վերջին զորքն Հայոց,  
Ինչպես որ տանջեց, տարավ ու ջնջեց  
Հայ արեւմտյանց իմ բանակը մեծ,  
Այս խաչակիրը՝ թուրքի Հետ դաշնած ...  
Վայ մեղ. տե՛ր արքա, թե գերվի Անին  
Աղվեսի բերած խունկ ու մյուռոնին...»:

### ԱՐՔԱ

Հիմա կիմանակը, թե ինչ է բերում,  
Խո՞ւնկ է, թե՞ վառող, որ չի Համբերում.  
Վրաևվրա սուրհանդակելով ...  
Իմ սահմանին էլ խոլ բանակելով ...

### ԿԱԹՈՂԻԿՈՍ

Տե՛ր իմ, գեռ չոյենք բաշերն առյուծի,  
Մեզ Արծրունդաց օրը կցցի.-  
Օրոցք գնել է Հարկամոր վազրին,  
Քանի դեռ ձագ են իր զայրույթն ու քեն,  
Ոչ թե սուր ցույց տալ կես-ննջող աշքին,

Օրորես պիտի, քանի դեռ ձագ են...  
Օրորես պիտի օրոցքն անդադար,  
Թևկուզ և դարեր պիտի օրորես,-  
Բյուզանդն Իրան չէ անօրեն ու չար,  
Թուրք-յաթաղան չէ, խաչեղբայր է քեզ.  
Իրան-Թուրան չէ եղի ու բարբարոս:

### ՍՊԱՐԱՊԵՏ

Իրան-Թուրան է, տեր կաթողիկոս,  
Մեկ ևն Բյուզանդիոն, Իրան, թե Թուրան,  
Մեկն ավետարան, մյուսը՝ դուրան,-  
Բայց երբ սուր ունեն՝ խաչեղբայր չունեն,  
Ուզում են զրել վանքի էլ վրա,  
Թե՛ ողջ Հայ աղգի զրոխը կերա,  
Այսչափ տիկ Հանել, այսչափը վանել,  
Գերեզմանից էլ իմ Հազարամյա  
Կարող եմ սուրս ձեզ վրա Հանել ...  
Նոր փառատենչը Բյուզանդն է Հիմա,  
Իրան-Թուրանը մեզ ձուլել կուզեն,  
Ինչպես եղնիկ են շամփուրի քաշում,-  
Մինչ մեզ խաչակից Բյուզանդիոնն՝ անզեն՝  
Մեզ իրեն քաշում՝ շոյելով մաշում,  
Քաշում-մաշում է դանդաղ, դարեցդար,  
Մեզ ձուլել կուզել իր տաք սրտի մեջ,  
Ինչպես բաժակում մի կտոր շաքար,-  
Իր աղգ-քաժակում, որ աղնվանա,  
Թե չէ իր ըմպակն ինչո՞վ քաղցրանա,  
Իր վայրի անտառն ինչո՞վ պատվաստվեր,  
Եթե ոչ Հայոց մի բուռ անստվեր,  
Բայց անտեր աղգի Հանճարով անտեր,  
Ոզու Հանճարով մեր տաճարակերտ,  
Մի Մանվել՝ Հայոց մի ճարտարապետ,  
Մի սուրբ պատվաստ է Հաղար վայրենյաց,  
Այս իմ Տրդատն էլ պատվաստն է Հունաց,  
Քանզի երբ փլվեց իր ամենալավ  
Այա-Սոֆիայի գմբեթը վսեմ՝  
Կայսրը մեր ճարտար Տրդատին տարավ,  
Որ վերակերտի, բայց ո՞ր մեկն ասեմ.

Բղջ Բյուզանդիոնը<sup>1</sup> չունի մի Նարեկ,  
Մի ճարտար Տրդատ, մի Խորենացի,  
Կուննա, թե մեր մի բուռ ազգը Հեք  
Չուլ ազգի մեջ իր վայրենացի ...  
Բարբարոսների Հույսն է Հայ ազգը...  
Բայց ոչ, պատրուս չէ մեր ազգը, Հայե՛ր,  
Որ իր Ես-ով է գուպարում դարեր  
Մեծ ձուլողաց դեմ այս աղետավոր,  
Որ տևում, ինչպես Մասիսն այնոր...  
Ես-ով, իր լեզվով, խորքով մայրենի,  
Թրով, տարադով, ձեռքով իր ուկյա,  
Մարմինս վամթառն կռվի Հետք ունի,  
Ամեն մեկն՝ ահեղ մի կռվի վկա:-  
Ամեն մի սպին դառաւ մի բերան,  
Թե որ Հարկ լինի՝ կգոռա «Հասպ, օ օն»  
Հայն այլոց կաթին չի դառնա մերան,-  
Երեկ պարսիկ էր, այսօր Բյուզանդիոն,  
Բայց այս ... պարսիկն էլ թե արծիվ լինի՝  
Մի Հավի ձու էլ Հարկ պիտի չտանք ...  
(Ու զինին քամեց Հական ծերունի).  
— Հավեր չեն փոքրիկ մեր ազգերն, ով տյարք:  
Դռան մեջ էլի Համձարդն Հայտնիեց՝  
— Հրովարտարերն անհամբեր է շատ  
— Թող գա ...»  
Բայց էլի արքան ... գունատվեց,  
Ու բյուզանդացին Հայտնիեց Հպարտ  
Զեռին ոյործուն մագաղաթը ... սե,  
Ինչպես մի կռվի գալարաշնիոր,  
Որ Հրովարտեց,-  
— ռԱշխարհն իմ առջև,  
Իմ թագի առջև ծունկի է գալիս,-  
Բայց Հայոց Հողը ինձ Հարկ չի տալիս,  
Քո չտվածը, քո զլուխն ուստե,  
Իմացիր, ազգիոր բանը խախուտ է,

<sup>1</sup> Ըսթերցողը կկուտահի, որ Հեղինակը այստեղ Բյուզանդիան նկատի չունի ...

Քո աղջը սուստ է, մուժն ու անանցյալ,  
Եվ անզալիք է, նախսիր մի անդեմ,  
Ռւղեղը մնջաց տիղմուի ծանրացյալ,  
Բայց ևս այդ մնջաց բնրդը կրանդեմ.  
Այս է իմ՝ կայսեր վճիռը վերջին:  
Հայերդ եղծ եք ու ապերասան,  
Աղվես՝ աղջերի այս ճամփամիջին,  
Որ դեռ կոչվում է Հայկան, Հայաստան,  
Հավատեղծյալ եք և ապերասան,  
Գոռող, կռվածույթ, բայց կռվախռուսան,  
Կշեռքի ծանր թաթն եք միշտ նստում,  
Մեկ մեր թաթին եք, մեկ ժանոտ իրանի,  
Մեկ մանկամիտ եք ու մեկ իմաստուն,  
Ստրուկն՝ անհավատ իրան-թուրանի...  
Մեկ դավաճան եք, մեկ ավանդապահ,  
Ցեղով մի ցեղ եք, Հոգով յոթնագույն,  
Մի վայրկյան զառ եք, և գայլ եք մի պահ,  
Եվ դարեր այսպես՝ մեկ Հայ եք, մեկ Հույն,  
Ու մեկ էլ տեսար պարսիկ եք դառել.  
Խաչը ձեռներիդ ատրուշան վառել՝  
Երկրագագում եք բարուն ու չարին,  
ԱՀա ինչու է ժանիք - աչք Հառել  
Հունաց առյուծը Հայոց ոչխարին.  
Ողջ Հայաստանը գերված է, անհայ,  
Կեսն իմ գերին է, կեսն Հազարամիայ  
Ողբում է ձեռին անհավատ դեի,  
Մի բռւռ Անին է ձեզ Հույս մնացել,  
Այն էլ աղբյուրն է իմ ծով ծարավի ...  
Չեր ուսկեղարը մոխիր է դարձել,  
Չեզ բաժանեցի, որ տիրեմ Անին,  
Վերջ Հայաստանին ...»

Կարդում է վեհը վարանքով, աներ,  
Սպարապետը Հեաց ցավագին,  
- էլ ի՞նչ է Հաջում երախը կայսեր,  
Մոռթը Հառած դեպի լուսնակին ...  
Ու ձեռքը զրեց սրի դաստակին...  
Կաթողիկոսի դոդահար ձեռին  
Մազաղաթն օձի խորիս եք, և արքան

Նայում - ճկվում էր իր թագի տակին՝  
Ինչպես թրի տակ մի բյուզանդական:  
Բայց էլի կարդաց վեհը դառնավիշտ.  
- Իմացած եղեք միանգամ ընդմիշտ,  
Ով Հայոց էծեր (մեծեր չեր գրում),  
Մեկ է՝ կծուլվեք մի օր ազգերում,-  
Չեր ոգու ծունկը մի օր կծալե՝  
Անհավատն ինքը իր մեջ կծուլե  
Չեր եղած-չեղածն անխորհրդավոր:  
Ո՞րն է լավ... դե չո՛ւտ, խելքով ընտրեցեք՝  
Անհավատի՞ մեջ, թև՝ մի խաչնորոր,-  
Լոկ մի Հայ լեզու պիտի ... կորցնեք,  
Ջարդեցե՛ք, վառե՛ք ձեր տեզերը խոլ,  
Վառեք եղեցնյա նիզակն էլ վերջին,-  
Ցրե՛ք ձեր առյուծ այրումին խոլոր,  
Որ մեզ Հետ մնաք այս ճամփամիջին,  
Ցրեք ձեր Հայոց զորքերը բոլոր,  
Հույնը Հովանի, էլ ի՞նչ Հունաստան,  
Դուք էլ կունենաք մի ողջ Հայաստան,  
էլ ի՞նչ դուք, ի՞նչ Հայ, Հույներ կդառնաք,  
Եվ Բյուզանդիոնի մայր Հովանու տակ  
Կապրեք բախտավոր Հունաց էլ Հողում,  
Ու խելքի կգաք, էլ ի՞նչ եք սողում,  
Մեկ Արևելքի, մեկ էլ իմ առջեն,  
Իմացե՛ք, Հույն եք դուք այսու Հետեւ,  
Կպահե Անին Հույն մի կայազոր,  
Չեզ վրա չեն գա էլ ազգերն Հզոր,  
Ու էլ չեք տեսնի լաց ու կոտորած,  
Թե չէ՝ կմնաք նույն Հայր կորած,  
Նույն վայուկը խեղճ ...»:  
- Բավ է, ով աստված,-  
Մոնչաց արքան, ու վեհը լոեց,  
Սպարապետը մոյեգնեց Հուզված  
Ու վեհի ձեռքից խլեց ու պատոեց  
Այն շեփորահաջ մագաղաթն իսկույն,  
Խփեց դեսպանի երեսին դժգույն,-  
Դեսպանն ահագնեց, ուզեց դուրս ելնել,  
Առանց արքային խոր գլուխ տալու,

Սապարապետը, որ աշեղ դեղնել՝

Պատրաստ էր իր խեկ սիրուն էլ պոկելու,

Դուրս քաջեց սուրբ իր բյուզանդական

Ու բյուզանդացու գլուխը թռցրեց.՝

Արյունը տեսավ, կուչ եկավ արքան.

— Ի՞նչ արիր...

— Ինչո՞ւ ... զլուխ չտվեց ...

Կերևի այսպիս զլուխ տալ կուզեր.

Որ այսպիսի թուղթ բերել կերազեր ...

— Ի՞նչ արիր, — աշից կրկնում էր արքան,

Ի՞նչ պատասխան տամ զայրույթին կայսեր,

Ի՞նչ պատասխան տամ վազրերին, թե զան ...

Արքան նմանվեց թրջված արձրպիլ:

— Ես կտամ, տեր իմ, ինչպիս որ տվի,

Կզան՝ ես կտամ, աս ուրին էր Հունաց,

Իմ վերջին խոսքը զլիսին էլ կտամ,

Գլուխն էլ կառնեմ ևս ընդ քո ոտաց ...»:

Բայց արքան կրկնեց՝ ի՞նչ պատասխան տամ.՝

Դե է այս մարդը, զլիսին այսքան ճյուն,

Բայց սրտում այսքան կատաղի զարուն...

Գլխով ծերունի, սրտով պատանի.՝

Սա վայ թե մի օր իմ աշքն էլ հանի...»

Կհանի ... սուրբ է, շատ է ինձ ... ներհակ»:

Բայց աղոթում էր վեհը զլիսահակ.՝

— Փրկյա՛ ինձ, տեր իմ ...

— Դու ընդ քեզ փրկիր.

Հայոց փրկիչը Հայ սուրբն է միակ.

Տե՛ս, թե պատառներն Հրովարտակի

մոց կարմրեցին իր տիրոջ արյամբ,

Կարծես շիկնեցին ամոթից ... մեր դեմ,

Արդար տվեցի, թեն խառությամբ,

Պատասխան զարկը թղթին այս դժիսնմ:

Միշտ պիտի ներկվեն եղկ ու ապատամբ

Այսպիսի թղթերն այսպիսի արյամբ...

Օրինաց զլիսից չպոկվեց մեկ մաղ՝

Գլուխ ունեցող կայսր թե դեսպան՝

Զեր զրի ... բերի այսպիսի մի բան, -

Այսպիսի Հաչոց մի խոլ զայլաշան,

Ու թող զլուխ տա, զլուխ տա այսպես  
Արքայիս ոտքին զլուխն ապստամբ,  
Թե չէ՝ կրոտքեն էգուց ինձ ու քեզ.-  
Կյսեղեն Հայոցն Հենց Հայոց արյամբ,  
Մե՛ր արյամբ, տե՛ր իմ, ոչ թե այս այլոց,  
Կղարձնեն Հայոց գալոցը՝ գայլոց...  
Բյուզանդի թագը սև օձի Հով է.  
Կուզե իր խաշին մեր խաչն էլ ձուլե,  
«Ձէ՞՞ որ», - ասում է՝ «մենք Հավատակից».  
Եկ ինձ՝ ձուլվելով՝ գառնանք զինակից.-  
Ինչպես ոգով ենք մեկ ու միաբան՝  
Ազգով էլ զառնանք մեկ ու Հավիտյան»:  
Այսպիս չի ասում, խորհում է այսպես,  
Այնքան, որ մի օր ճանելը ձգի մեզ ...  
ԱնՀավատ պարսիկն՝ Հրով ու սրով,  
Հույնը կժույք աստծո պատկերով՝  
Հային Հույն կօծե խունկով նույն աստծո  
Ու մեկ էլ տեսար՝ վաղուց Հույն ես դու,  
Մորդ օրորն է լեզուն Բյուզանդի,  
Ու թող Հայ լեզուն այժմուց զարդանդի,  
Էլ ի՞նչ Հայ լեզու, ի՞նչ Հայ դպրություն,  
Էլ ի՞նչ ազգ ու ցեղ, Էլ ի՞նչ Հայություն:  
Ձիիր Հավատում, տեր կաթողիկոս,  
Դու ասում էիր՝ խաչեղբայր է միշտ՝  
Բյուզանդն Իրան չէ նենք ու բարբարոս,  
Իրան-Թուրքան չէ, թուր չէ ամբարիշտ,  
Դե, խոստովանի՛ր, խոստովանաՀայր,  
Ինքդ քո մանուկ բարբառածը կույր»:

#### ԿԱԹՈՂԻԿՈՍ

Տե՛ր սպարապետ, կսուկա աշխարհ,  
Ոչ թե մարդ էիր այն պահին, այլ թուր ...  
Քո այս ... պատասխանն՝ ընդդեմ օրինաց,  
Մեր դեմ կհանի ողջ բանակն Հունաց,  
Ոչ է այս Հարվածն Աստրծո սրտով,  
Ոչ է օրինաց՝ դեսպան սպանել...»:  
Բայց Պահավունին ասաց անվրդով.  
- Ազգի մահն ուզող օձի աչքն Հանել՝

Է Հայոց Աստծու և Հայոց սրբով:

Ու կիսաստ թողած բաժակն էլ քամեց,

Բայց կամողիկոսն ահից կարկամեց,

Ու էլի փնչաց՝ ո՛վ սպարապետ,

Չէ աստծո սրբով դեսպան սպանել:

— Է, աստծո սրբով է միշտ այսուհետ,

Է՝ քանի դեսպանն այսպես դեսպանել ...

Է Հայոց և իմ արքայի սրբով:

— Չէ, իմ էլ սրբով, — մռնչաց վրդով

Ու թուավ խւկույն աշարեկ արքան,

Հանեց մատանին Հակայի մատից,

Ետ խլեց նվերն իր արքայական,

Հոր Հավլունի թուր սպարապետից ...

Սասանեց ցասումն Հեղ գորավարին,

Ինքն իր ցասումից վախից թե՝ տաներ՝

Ինչպես կատաղած ձին ձիավորին՝

Տաներ ... իրա էլ գերեզմանն Հաներ:

Բայց էլի սանձեց նժույզն իր ցասման,

Ինչպես առյուծին ՄՀերը Սասմա, —

— Իմ սուրն էլ, տեր իմ, իմ սուրն էլ վերցրու,

Բայց դու ինձանից պատանի ես դեռ, —

Դու քո Հավլունուց երես մի դարձրու,

Հիշիր խմաստուն Հորդ խոսքն անմեռ,

«Ամեն մի արքա իր արքան ունի».

Քո խիզճը պահիր արքայիդ արքան,

Քո սուրն ուրիշի պատյան մի դնի,

Նեղ պահին Հիշիր իմ խոսքն էլ սակայն,

Այս նեղ վայրելյանիդ աշքս մի՛ Հանի... .

Շաքար մի՛ լինի, տե՛ր իմ, կուլ կտան,

Բյուզանդն Հայերիս Հանճարն է ուզում

Զուլել իր ազգին, ինչպես վայրենուն՝

Պատվաստել իր ազգն Հայոց Հանճարով՝

Մայր տաճարի պես Հրաշք է ուզում

Կառուցել Հունաց վաղվա ձեռքերով, —

Այս տենչն է դարեր իր սիրտը կիզում ...

Մեղ խեղղել կուզե իր վայրի բազկով՝

Բող Բյուզանդիոնն էլ պատվաստվել կուզե

Մանվել ու Տրդատ ծնող Հայ ազգով.

Որ անզուգանա, որ աշխարհն Հուզե ...  
Բարբարոսների Հույսն է Հայ ազգը.  
Խավարաց լույսն է մեր ոգու վաղքը:  
Այս էլ բնության օրենքն է մի չար,  
Գեղեցկանալ են տենչում անդադար,  
Բայց Հո Հայ ազգը սերմ չէ՞ ... ազգերաց,  
Մեր Տիգրան Մեծն էլ այդպես չէ՞ր անում,-  
Քի՞չ գերեց Հրեա արհեստավորաց,  
Որոնցով Հայոց Հողն էր քաղցրանում,  
Եվ այսպես քանի՛ ազգեր կան կորած:  
Չէ՛, մեր մի բուռն էլ ոչ է միշտ մի բուռ,  
Եվ Հարկ չի դառնա Անին կաղնեղուո՞  
Թե մեզնից ես էլ ներկվեն՝ ապստամբ  
Այսպիսի պահանջքն այսպիսի արյամբ ...  
Բոի մեջ թե մազ էլ բանի՝  
Մեր թշնամին Հարկ չի տեսնի,  
Այնպես չէ՞, արքա... - Բայց լուռ էր արքան,  
Ճկված թագի տակ իր Հսկայական,  
Իրավ որ մարդուն լեզու են տվել  
Մարդուց մտքերը ծածկելու Համար,  
Բայց վեհն առավել խոլ էր խռովել,-  
Կախ էին ընկել Հոնքերը կամար  
Անդի վիրավոր թևերի նման:  
- Թող քո դատն անի բարձրյալն անսահման:  
- Թող անի, տեր իմ, սրտով Հայրենյաց,  
Բայց ոչ թե կանի քո խարփած սրտով,  
Իմ սրտով կանի, ոչ սրտով Հունաց,  
Թեև խիստ էի, գինով ու վրդով,  
Բայց չեմ զղջա, չէ, մինչեւ գերեզման:  
- Կղղջաս,- ահից վեր թուավ արքան,-  
Կզա Բյուզանդիոնն իր ողջ բանակով...  
Քանդել,- մոնչաց ահի խոյանքով,  
Իմ դեսպանին դու սպանե՞ս,  
Ասել է թե՝ աչքս Հանես,  
Ասել է թե մեր Հացը՝ թույն,  
Էլ ոչ ազգ ենք, ոչ տերություն:  
Բանտել անսպի սպարապետին,  
Սա կուզե զարկել իմ թագն էլ գետին».

Ու երկրի համար այս նեղ վայրկյանին  
Արծվին, որպես ցին,  
Տնարանտեցին ...

#### ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ապերաստան է, տեր իմ, ծերունին,-  
Թեև իրավ է, բայց ոչ այս ... թրով:

#### ԱՐՔԱ

Բայց սա էր, տեր իմ, Հորս հավլունին,  
Իր Հայրենապանծ վախտուն վերքերով ...

#### ԿԱԹՈՂԻԿՈՍ

Շատ Հույս մի Հուսա վերքերով իր սին,  
Պատասխանն Հոգա,  
Նոր զորքով կզա,

Հենց որ իմանա այս ... զլիսի մասին,  
Դիսպանին կուգե, ո՛չ գանձդ ուկյա,  
Հարկը կդարձնե մաշն Հայոց գահի,  
Մի բան զցեիր բերանն ազահի,-  
Մի քարվան ընծա, որ գահդ պահի ...

#### ԱՐՔԱ

Ճակատագի՞՞րն ես գրում իմ գահի,  
Լուր եմ առաքել, տեսնեմ՝ ինչ կզա,  
Սահման կհասնի բդեշխը շուտով...  
Հարամ է լինել փոքր ազգի արքա,  
Մեծ գայլերի մեջ, այն էլ իմ սրտով:  
Զէ՛, Տիգրան Մեծն էլ զլուխ չհանեց  
Ազգերի բախմանց այս ճամփամիջին,  
Հայկն ինչո՞ւ այստեղ Հայաստան հիմնեց,  
Էլ տեղ չգտա՞վ իր լայնալիճին,  
Որ մի բուռ զնոր ի ծնե Հեղեց,  
Բերեց ծովերի երախը կոխեց,  
Այս ծով ազգերի երախը այս մեծ:

Հայկն ի՞նչ մեղք ունի, իմաստուն արքա,  
 Հայոց մայր արմատն այս հողն է, որ կա,  
 Ոչ էլ մի երկրի հողն է մեղավոր,  
 Եվ միակ անմեղն հողն է աշխարհում,-  
 Մեղավոր է միշտ մարդն աղեղնավոր,  
 Որ ագահությանց աղեղն է լարում  
 Անգամ խաչակից յուր նմանաց զևմ,  
 Քաջիդ վերքերը մարմնի վրա են,-  
 Իմը սրտում են, թե սիրտս բացեմ,-  
 Նրանն սպի են, իմս վերք են խոր ...  
 Խաղաղ էր այս հողն այս ճամփամիջին  
 Աչքերի նման մեր աստվածամոր,  
 Երր մարդն առաջին՝ ձեռքը միշտ մաճին՝  
 Մեր աստվածամոր գրկածի նման՝  
 Անմեղ մանուկ էր երկրում անաաման,  
 Արյուն չտեսած այս հողն էր Հերկում,  
 Չգիտեր՝ ինչ են նետ-աղեղն անգամ,-  
 Մասիս-Արագած այս լերանց գրկում,  
 Մինչև Վրկանա ու մինչև Վանա  
 Մովակն էր բախտի իր նավը ձգում,  
 Անիից մինչև սիրտը Միփանա,  
 Մինչև Բինգյոլը Հայոց բյուրակնյա,  
 Հայաստան՝ Հայոց արմատն էր առնյա,  
 Մինչև Տիգրիս էր արմատը նրա,  
 Մինչև Տարոնի դաշտերը կանաչ՝  
 Յոթն Հազար դարեր Հայկից էլ առաջ ...

ԱՐՔԱ

Քո վաղեսն հենց այս արմատն է ջնջում՝  
 Տենչալով Հայոց հողը հունացնել:

Զի հունացընի, զուր ևս քեզ տանջում,  
 Հայ թե հույն՝ մեզ նույն Աստվածն է ծնել ...

## ԱՐՔԱՆ

Չի հոնացնի, կհունացնի՝  
Մեր ազգի համար, որպես ավաղան,  
Որպիս ավաղան ժանտ մկրտության  
Նա Ախերոն է, ոչ թե Ախուրյան,  
Նա ազգն է ուզում, ոչ թե մի Անի.  
Իմ զորավարը իրավ է Հուզվում,  
Կձուլի իր մեջ ու չի հարցընի,-  
Չէ՞ որ գետերն են ծովի մեջ սուզվում,  
Իմ Պահլավունին իրավ է Հուզվում ...  
Բայց թող իմանա ականջը կայսեր,  
Որ շղթայեցի Հսկային անսեր,  
Համ էլ ... թող Հսկան լավ հանգստանա,  
Որ թևավորվի. Երբ կովի գնա ...

## ԿԱԹՈՂԻԿՈՍ

Շատ ես կուլ գնում ապերասանին,  
Իրավ. նա չատ է պարսպել Անին,  
Շատ է ետ մղել գրոհը թշնամյաց,  
Բայց գենքի մարդ է, և ոչ թե մտաց,  
Եվ քանի նա կա՝  
Քո ամրոցն, արքա,  
Այսպես ներս մտնողն այսպես դուրս կդա.  
Վայ ներս մտնողին,  
Երնել ելնողին ...

## ԱՐՔԱՆ

Բայց կտրել կուզեն մեր ազգն ու լեզուն,  
Վերջ բերել կուզեն ազգերն Հայ ցեղին:

## ԿԱԹՈՂԻԿՈՍ

Չէ՞ ... աստված Հաղար լեզվով է խոսում,  
Առաքիր՝ կայսեր ականջը մտնեմ,-  
Չորքը ետ քաշող իր լեզուն գտնեմ,  
Շատ մի երկնչիր, թեև կոահում՝  
Իմ սիրտն էլ մի սև աշ է ներս մտնում,

Մի պատառ թղթի վրա դիր Անին,  
Մի սին խոստումով ետ պահենք նրան,  
Ու չեն պակասի մեր Հացն ու զինին՝  
Թե չփայլի մինչև գերեզման՝  
Մարդն ի՞նչ է, տեր իմ, եթե ոչ գաղան:  
Մի պատառ թղթի վրա դիր Անին,  
Էլ չի էլ հիշի կայսրը դեսպանին,  
Մի պատառ թղթով պատանիր նրան,  
Մի մագաղաթով այս դեսպանի դին ...  
Եվ չի պակասի Հայոց ոչ մի բան,  
Ոչ էլ ինքն Անին, այս է Հուսկ ճամփան,  
Քո վշտի առաջ սիրտս չի լոել,-  
Այս քանի գիշեր մի գյուտ կշռել,  
Այս ելքն եմ գտել այս լարիրինթից,  
Այս միակ ելքը, այս ելքը միակ,  
Եվ քեզ ի՞նչ վնաս մի ունայն թղթից.  
Մի ունայնախոս թղթից անկտակ,

Արյուն չի թափիի,  
Թող Հույսով խարսի,  
Թող Հույսով խարսի,  
Քանզի իր մահվան

Հավքն իջել, ասես ուսին է թառել,  
Ականջի ետեն, մեր Հույսի նման,  
Ու դեպի սիրտն է կտուցը ծոել,  
Որ սիրտը խրի կտուցը ... մահվան:

### Ա.Բ.Ք.Ա.

Ուր էր թե խրեր՝  
Նրան գերեզման, մեզ օրոցք բերեր ...  
Մեկ կա, որ մահն է Հաղարի բախտի,-  
Մինչ նրա մահը կյանքն է Հաղարաց,  
Գնա ... տեր ընդ քեզ, բայց առանց թղթի.  
Իմ նվեր ոսկով ականջը մտած՝  
Տե՛ս՝ իրեն Հաղթես իր ու մեր Աստծով,  
Մեկ էլ յոթնարեն իմ խոսք ու գանձով՝  
Դու այս Հեղեղն էլ թե ետ դարձնես,  
Իմ թագի կորած աստղը կդանես,-  
Թագիս աղամանդն ինքդ կդառնաս:

Թե իմ աստղի հետ ես վերադառնաս;  
Եվ կասես կայսրին, որ Հայոց արքան  
Տնարանտեղ է սպարապետին,  
Դեսպանի Համար քո արքայական ...  
Խոնարհել վշտով զլուխն Համբայան  
Քո գահին, որպես իր Արարատին,-  
Կայսեր աչքերը վազրեր են անսեր,  
Աղավնի դարձրու վազրերը կայսեր,  
Ժամանակ շահենք, տեր իմ, ժամանակ,  
Մեր ազգը թե այս օրերն էլ շահի,  
Էլ մահ չի գտնի ոչ մի ժամանակ,  
Թեկուղ և ինքը իր մահը փնտրի,  
Ժամանակ շահիր, ինձ ժամանակ քեր  
Օրերի սով է Հայ ազգը դարեր ...  
Ու ճամփեց արքան կաժմողիկոսին  
Դեսպի ոտքն անզութ Բյուզանդի կայսեր,  
Եվ սպասումի ամսղը երևաին  
Հույս ու անհուսով դարձին կսպասեր:

— Տեսնես ինձ ի՞նչ լուր կրերի,  
Գինի՞, թե՞ լոկ ջուր կրերի.  
Հիմա խառն են ջուրն ու գինին,  
Գինի՞, թե՞ սև թուր կրերի:

Ազգս քիչ է՝ այս է ցավս,  
Կեսն էլ զերի՝ պարզ է ցավս,  
Իմ ախաղերն էլ ախաղերս չէ,  
Վանից մինչև Ղարս է ցավս:

Ես իմ ազգի շարը տանեմ,  
Ինչպե՞ս ես այս դարը տանեմ,  
Ազգս մեկ է, ցավերն Հազար,  
Ինչպե՞ս Հազար սարը տանեմ:

Ազգս քիչ է, ոսոխը շատ,  
Ազգից խլված մեր Հողը շատ,  
Այս, զեթ Անին մնար Հայոց,-  
Հայոց արյուն խմողը շատ ...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

1

Երբ մենակ մնաց Օհան Սմբատը,  
Հիշեց իր բանտած սպարապետին,  
Աչքին բանտ թվաց իր խոկ պալատը,  
— Ասել է՝ զորքս է բանտի մեջ մթին  
Այն էլ ազգի այս նեղ պահին ...  
Ու ներս կանչեց թիկնապահին,  
Ասաց՝ Հայկը, Զոհրակն ու դու<sup>1</sup>  
Ինձ Հետևեք Հեռվից-Հեռու,  
Չեր Հոնքերի ամեն մի մազ  
Մի աչք արեք, պահեք վրաս,  
Ամեն մազից մի աչք բացեք՝  
Հեռվից Հեռու՝ լավ Հսկեցեք,  
Տեսեք՝ ով է ինձ Հետևում,  
Ամեն ստվեր դավ է թվում ...  
Մեկ էլ տեսար՝ լուռ վեր կացավ  
Մեկը գաղտնի թոնդրակացավ,  
Իմ ախազերն էլ ախազերս չէ,  
Լուսնին Հազար շուն կհաջե ...  
Ինչ ինձանաս՝ խառը դարում՝  
Ով է ում շունն այս աշխարհում,  
Իմ Հետքերով մի աչք դարձեք՝  
Հազար աչքով ինձ Հսկեցեք,-  
Հսկեք՝ մինչեւ՝ դե, ձեզ տեսնեմ,  
Պահապտունու պալատն Հասնեմ:

2

Ելավ արքան, Հեծավ իր ձին,  
Պահապտունու պալատն Հասավ,  
— Հայր իմ, - ասավ, - վայ իմ Հացին,  
Կույր զայրույթս ների՛ր, - ասավ, -

Երկու քարի արանքն ընկնել՝  
էլ չգիտում ինչ եմ անում ...  
— Այս հեջ, արքա, բանտիր մեկ էլ ...  
Մարդ որ մարդ է ծնվել մորից՝  
Դժոխում էլ մարդ է նորից,  
Իմ արքան ես, լավ ես անում, ...  
— Չէ՛, ես իմ էլ աչքն եմ Հանում  
Ու ետ տվեց այն մատանին,  
Որ խլել էր կույր զայրույթով,-  
— Թող շիմանա մեղքս Անին,  
Դու ինձ ների՞ր քո մեծ սրտով:  
Ու Համբուրեց զորավարին՝  
Անապաշավն ապաշավեց՝  
Դնելով մատն այն մատանին՝  
Այս իր մանուկ մեղքը քավեց:  
Սպարապետն անուշ բերեց  
Հայոց դառը թագավորին,  
Անուշ բերեց, գինի դրեց.  
Ասաց՝ «արքա, վայ իմ էրին,  
Տանն էլ բանտի մեջ եմ անվերջ,  
Քանզի ազգն է զեռ բանտի մեջ,  
Աշխարհը բանտ է, բախտը բանտապետ,  
Ես չէ, բանտարկյան Հայ ազգն է ինձ հետ,  
Ամեն մի ազգ բանտի մի պետ,  
Կտուրը՝ զոռ ազգն է բյուզանդ,-  
Մեր Հոգն են բանտել ազգերն անկշտում՝  
Թև պառկեմ Անի քաղաքի դաշտում՝  
Ոտքերս բանտված Ղարսին կղիալեն,  
Կղիալեն զեմս բանտված Մասիսին,-  
Չզարկե՞մ բանտիս պատերը փլչեն ...  
... Ու թվաց, թև ժամբ Հասավ՝  
— Նոր սուրհանդակ, Համգոն ասավ,  
Ներս մտնելով,  
Գլուխ տալով,  
Գլուխ տալով թագավորին,  
Թագավորին ու բոլորին:  
Արքան էլի գաղտնի դողաց,  
Բայց Հայացքը մեկից չողաց.

Երբ որ բացեց մագաղաթը,-  
Էլ խառը չէր եղբոր մատր ...  
- «Ողջույն Հայոց թագավորին,  
Իր Տրդատին ճարտարապետ,  
Կամողիկոս իմ քավորին,  
Եվ քեզ. Վահրամ սպարապետ»:  
- Այս ինչ ողջույն է,- գարմացավ արքան,  
Թև նեղն է ընկել այս ցուլը գարեկան,-  
Պարսիկն է Հանկարծ Բյուզանդ արշավել ...  
Թև ինքն է պարսից որկորը խրվել.  
Առանց Հայ բազկի դուրս չի կարող դալ ...  
Թուրքի ղեմ կուզե Հայ բազկով նողկալ ...»  
Ու կարդաց, ցնծաց Օհան Սմբատը,  
- Թող կտրե շղթան քո Արարատը՝  
Թուր ու տարագով Հայոց Հանճարի.  
Բայց զլիսիկոր եմ առյուծիս բաշով՝  
Այս-Սոփիա իմ մայր տաճարի  
Թագն ընկավ գետին գոռ երկրաշարժով...  
Ծ, իմ խաչեղբայր, իմ ծունկը ծալվեց  
Սևպիր, թե ընկավ իմ թագը գետին.-  
Իմ սուրբ տաճարի գմբեթը փլվեց,  
Առաքիր Տրդատ ճարտարապետին,  
Որ վերաշինե, վարպետ է չեղած:»:  
- Առաքիր՝ քանդի Բյուզանդի մնացաց  
Մանրությունից է գմբեթը փլվել ...  
Առաքիր,- ասաց սպարապետը,  
Աստծո ձեռ ունի Տրդատ վարպետը  
Աստծո փլածն էլ կվերաշինե...  
Նա, որ կերտողն է վեհ Գագկաշենի,  
Նա, որ Զգարթնոցն Հրաշակերտեց,  
Ասովածակերտեց մայր տաճարն Անի,  
Կկերտի, անշուշտ, գմբեթն էլ այդ մեծ,  
Առաքիր՝ Հունաց աշքն էլ թող Հանի ...  
- Իսկույն կառաքեմ, տեր սպարապետ,  
Թող գնա մրցե գոռ Բյուզանդի Հետ...  
Ու կանչեց արքան ճարտար Տրդատին,  
Կարգաց Տրդատն էլ ու դառը մստաց,  
- Լավ էր թագն ընկներ զլիսի Հետ գետին ...

Ոչ թե գմբեթը պլուս վարպետաց:  
Մանրությունից է կամարաբարի ...  
Փուխ քարով գմբեթը կապել...  
Կամ փորել ամեն քարը կամարի...  
Մանր քարից է, կամ լավ չեն չափել...  
Մի մազ դուրս դրած քարն էլ կբաշի ...  
— Զէ՛, աստվածաշա անեծք է, անշուշտ,  
Որ մեզ խոնարհեց զեն արյունուշտ,  
Հայակեր վազրը դարձավ Հայասեր,  
Նա, որ զեռ երեկ մեր մահը կուղեր  
Հրովարտակով իր զորաբազկի,-  
«Հայերն» Հայում էր — «չեն Հասնի աղջի»  
Անհանճար, անճար, խառնամրոխ են դեռ՝  
Դեռ ճանկեր ունեն Հայոց ոտն ու ձեռ,  
Դարեր ինքնաղավ, ինքնակեր մեռան՝  
Ամրոխից Հաղիս ժողովուրդ դառան,  
Բայց ինչ էլ անեն՝ աղջի չեն Հասնի,  
Հայոց ցողունից ծաղիկ չի բռւնի:  
Ամրոխն արմատն էր վայրի մարդկության,  
Ժողովուրդը դեռ ծաղիկ է անբան;  
Աղջն՝ իմաստացած պատուղն է ծաղկի,  
Հայն անսպոտ է՝ ինչքան էլ ծաղկի,-  
Զի պաղել ուղեղն Հողով փորձության՝  
Երբեք չի Հասնի աղջի բարձրության:  
Թեևուղ ինքն իրա ծոծրակը տեսնի՝  
Հայ ժողովուրդը աղջի չի Հասնի.  
Աղջերը՝ ծաղկունք ու վարդ են պայծառ,  
Հայր խառնամրոխ փուչ է ու մացառ,  
Այսպես էր Հայում զեր զեռ երեկ,  
Թրի բերանով իմաստաբանում  
Այսօր՝ նեղն ընկնել՝ Տրդատ է տանում ...  
Քեզ տեսնեմ, Տրդատ, Աստծո պես գնա ...  
— Կգնամ, արքա, այնպես կշինեմ,  
Որ Հայ անունը մինչ աստղերն Հանեմ,  
Բայց սիրոս կախ է, մինչն ե՞րբ մնա Հայ  
ձեռքի թուրը՝  
Մայր Արարս այլոց ջաղացի թուրը...  
Հայ կինը լավ է, մի Հովիով ծնի՝

Հայոց մի հովիս Հայոց ոչխարաց,  
Քան թե քառասուն Հայ կայսր դնի  
Օտարաց գահին՝ ի փառս օտարաց:  
— Իրավ ես ասում, տեր սպարապետ,  
Դառը ծիծաղեց անծիծաղ արքան,  
Յոթ կայսր չարժեն մի Տրդատ վարպետ,  
Հայ-Հույնը չարժեն մի Հայ շինական՝  
Երբ այլոց Համար թեևկուզ քարից էլ  
գինի է քամում,

Բայց իր Հայ ազգի արյունն է խմում,  
Մորիկը վկա՝ յոթը Հայ կայսր է Հույն  
գահին բազմել՝

Սակայն իր ազգի դեմ է միշտ ուազմել...  
— Աստծով ես խոսում, իմաստուն արքա,  
Հայը երբ Հայ չէ՝ ինձ Հայից փրկյա ...  
— Ավաղ, Հառաջեց ճարտարապետը  
Այդ Հայն է քանդել մեր Հայոց թերդը,-  
Միշտ ուրիշինն ենք Հայերս շինել ...  
Ինձ ի՞նչ Բյուզանդի վանքը կառուցել,  
Երբ Ախթամարիս գմբեթն են գցել,-  
Երբ Նարեկա վանքն են փլել,  
Երբ փլել են ամրոցն Հայկա,  
Երբ Սասունի ձեռից խլել՝  
Վանքն են քանդել մեր Վարագա,  
Անին այնքան տաճար չունի  
Որքան ավերն Հայաստանի,-  
Այս, թե Հանկարծ մեզ փրկեիր՝  
Այսպես ինձ Վան առաքեիր ...  
Վանում յոթը սուրբ Սոֆիա կցինեմ՝  
Թե Վանա քարիս տարադը լինեմ...»:  
Ողբաց վարպետաց վարպետն իսկական,  
Ու ճամփու դրեց Տրդատին արքան  
Դեսի Բյուզանդիա, Հույսով մի բարի,-  
Մեծ շքախմբով Հայ վարպետների,-  
Հետը Հայ գանձեր՝ Բյուզանդին ընծա.

---

— Այնպես կառուցիր, որ ազգը ցնծա,  
Քո ձեռքի ծնունդ Զվարթնոցն Հիշիր,

Կամարներն Աստծո Հոնքի պես քաշիր.  
Որ Հավերժ նայե իր Աստծուն ու քեզ  
Հայ աղքի գլուխն այդ գմբեթի պես:  
Սպարապետն անուշ բերեց  
Հայոց դառը թագավորին,  
Անուշ բերեց, զինին դրեց,-  
Կանչել տվեց գուսաններին:  
— Գովիժն արեք, — ասաց, — Հայոց արքայի:  
— Ձև, Հույսի գովիժը, տե՛ր սպարապետ.  
Քո Հավլունին է Հույսն Հայոց գահի,  
Աշխարհը բանստ է, բախտը բանտապետ,  
Իրավ ևս ասում, ազգն է քանդրված ...  
Բանտիր գոց՝ Հույսին տունն է քանդրված ...  
Հույս Երգեցեք, Հույսն է Անին»:  
Բայց դեռ Հույսը չէին Երգել,  
Երբ դուրս նայեց Պահապունին,  
Դրսում կտրին Հրդեհ ընկնել  
Ու վառվում էր դեղը խոտի,  
Ինչպես արևն առավոտի,-  
— Ո՞վ է վառել, ի՞նչ է վառվում ...  
Ու դուրս նայեց արքան աշով,  
— Ցածր մարդիկ են խոնվում...  
— Վերը, կտրին իր Հրդեհով  
Մեկը ինչ-որ շոր է վառում ...  
Ու մարդ զրկեց Պահապունին,  
Որ շուտ գնա՞ բանն իմանա,  
Ու ... բանն իմկույն պաղատ բերին.  
— Թող թագավորն ապրած կենա.  
Ցոթը զիշեր Հարսանիք էր,  
Ամեն բաժակ Հույսով լիքն էր.  
Որ Հարսն, ինչ խռաք, կույս է ու կույս,-  
Բայց անկողնուց եկնում անհույս,  
Ելնում կտուր ու զայրույթի  
Բոցով վառում դեղը խոտի,  
Փեսան՝ արդար Հայելի տղան,  
Մեկ-մեկ վառում է արմաղան  
Իր նվիրած սիրո, Հույսի  
Բոլոր շորերն անկույս ... Հարսի,

Քառասուն ձեռ նվիրն խաս ...»:

Արքան ասաց՝

— Ապրես, տղաս...

Կապրի, — ասաց, — Պահապենին,

Եռև են, Հայի պատիի չունին,

Որ խմում են կոյցը փափագով

Այլոց խմած պիղծ բաժակով:

Հարսն Հարսանիք թե կույս չգա՝

Մեղրամին էլ պիտի սգա,

Կինը մեկին պիտի Հասնի,

Միայն մեկին պիտի տեսնի

Իր ողջ կյանքում, որ ողջ կյանքով

Մաքուր մնա ընտանիքով,

Միայն մեկին պիտի Հասնի,

Որ մարդն Հասնի երջանկոթյան,

Մինչ գերեզման մեկին տեսնի,

Որ սուրբ մնա կյանքն Հայոթյան:

Պահե պատիվն իր ողջ ազգով

Որ ծաղկի ազգն ու ծովանա,

Ապրես, տղաս, այդ կրակով

Իմ էլ սիրոս կհռվանա.

Ու դուրս նայեց Պահապենին,

— Հարսն ի՞նչ ազգ էր, Հայ՝ էր թե՞ թուրք,

— Բյուզանդունի ...

— Վայ, խեղճ մանուկ:

— Բայց սիրել է, սիրով թերել ...

— էլ ո՞ւր է մեր, ո՞վ արքա,

Հայ պատանին Հարս է թերում բյուզանդունի մի ... կնկա,

Բյուզանդունի, Հելենունի, կամ պարսկունի են թերում:—

— Լավ չեն անում, — ասաց արքան, գաղտնի ամոթն աշքերում,

Իրավն ասիք՝ ով թերում է՝ Հայոց ցավս թող տանի,

Ու Հայ սիրով Հառաչեցին գուսանները Գողթանի:—

— Սիրո սերմը օտար զրկում աղանձի պես ծիլ չի տա,

Ծիլ էլ որ տա՝ Հասկ չի բռնե, ազգն ուրիշ է, Համբատա:

Եռչանից է շուշան ծնվում, վարդից շուշան չի ծնվի,

Վարդից՝ շուշան, շուշանից՝ վարդ, քարից մեռոն չի քամվի:

Բախտավոր է այն մեխակը, որ մեխակ է Հարս թերում,

Երջանիկ է այն սոխակը, որ սոխակ է Համբուրում:

Կչքանա ծարդկանց միջից անզույզ ազգը մեխակի՝  
թէ մեխակին թողած մեխակն Հարսը զառնա սոխակի ...  
թէ սոխակը անզդ սիրե՝ կուլ կզնա անզդին,  
Կչքանա սոխակ ցեղը. - մատաղ ամենն իր ցեղին,-  
Ով թերում է բյուզանդու հուն՝ իր Հայու հուն կզաղե -  
Դաղն ի՞նչ ... թաղվի՛ թող թերողը, որ իր ազգը կթաղե;  
թէ ուզում ես քո գետ ազգը քանի գնա ծովանա՝  
Դու քո ցեղից քո ազգը րեր, զու օտարին մի գնա ...  
Ով ուրիշի վարդն է թերում՝ փուշն է դառնում իր ազգի.  
Քանդի ազգի անմահությունն՝ աճող թիվն է իր բազկի:  
Ով օտարից է Հարս թերում՝ ազգի տունը կքանդե,  
Ծնացող է՝ ով այս բանը սիրու մեջ էլ չդիտե...  
Միրու սերմը օտար Հողի դրախտում էլ ծիլ չի տա,  
թէ ծաղկի էլ՝ Հասկ չի բռնե, ազգն ուրիշ է, Հավատա՝,  
Խմաստոթյունն առանց ազգի՝ չարժե թեկուզ մի քորոց,  
Օտար սերը գերեզման է, Հայրենին է օրորոց»:  
- Ապրե՛ք, - զոչեց Պահապունին:  
- Ապրե՛ք, - արքան շշնչաց,  
Բայց կարուտնց գաղտնազողի վարդ-պարսկու հուն իր սիրած...

## 4

Աշխարհ գիշերն իր գլխին քաշեց  
Վեղարի նման կաթողիկոսի,  
Շիրակն, իր Անին այսպիս մշուշվեց,  
Որ երազներով մինչև լույս խոսի:  
Ու մայր տաճարի լուռ աղոթքի տակ  
Քուն մտավ դշխոն - Անին բովանդակ.-  
Դրսում, գիշերվա խավարի ծովում,  
Մղկիթն՝ աղոթող նիզակն ալլահի՝  
Ալլահի դմինի լնգուն էր թվում,  
Բայց նրա ընդդեմ կանգնած ամենի  
Անի քաղաքի մայր տաճարը վեհ,  
Հայկ նահապետի տեղի պես Հակա,  
Թվում էր՝ ցավ չի տեսնի երբեմ...  
Չեռին գմբեթի նիզակը ուսկա  
Եվ խաչը ձեռքին՝ կաղոթեր լոին  
Մայր տաճարն Հակա Մեսրոպի նման՝  
Հայոց այրութենն ու սուրբ ձեռին

Աստծուն էր վինարում միջնում անսահման  
Մութ մզկիթի դեմ -  
Թնչալես Մասիս վեմ,  
Կանգնած կաղոթեր Մաշտոցի նման:  
Քնած էր Անին, բայց աշեղալու  
Գամփոների պես իր դարպասն ու դռն՝  
Գոց երախներով, միշտ բաց աչքերով,  
Կուռ պարիսապների անդուռ բուրգերով,  
Աշտարակներով, պահնակով նորեկ  
Լուս հսկում էին քունն ամենուրեք:  
Քնած էր որսկանն Անի քաղաքում.  
Բայց երազի մեջ Սասնա սարերում  
Մի վիթ է բոնում որպես մի Դավիթ:  
Իր սիրած որդու սիրածի համար՝  
Այծյամի Համար կենդանի մի վիթ  
Բանում, իջնում է Սիրիան սարն ի վար,  
Որ Վանա ծովի տառեխն էլ Հանի ...  
Վանա ծով գինով Հարսանիք անի,-  
Երազ Հարսանիքն իր միակ որդու,  
Մուրազ Հարսանիքն ամեն հայ մարդու:  
Քնած էր որդին Հոր Հետ քարայրում,  
Բայց երազի մեջ կարոտից այրվում,  
Սպարապետից ձի խնդրում նորից,  
Հոր աղեղն առնում, ելնում է ձորից,  
Փնտրում-գտնում է զինվորյալ կույսին.  
- Ես նետ-աղեղ եմ Հայրիկիդ Հույսին -  
Ասում է կույսը և ձին է Հեծնում  
Ու զեպի Վան են մեկտեղ սլանում ...  
Այնինչ քնած է Այծյամը մենակ,  
Քնած էր Այծյամն իր փետրաբարձին,  
Բայց երազի մեջ երդվում շարունակ՝  
Եվ Հույս է տալիս անՀույս սիրածին.  
- Քիչ էլ Համբերե մինչեւ Հայրս գա,  
Հունաց տաճարի գմբեթն է փլվել.  
Գնաց, որ զնեւ թազի պես ոսկյա,  
Կըինե, կզա-ի՞նչ ես խռովել...  
Հայրս գա՝ Հորդ քարայրն էլ կզամ,-  
Մեր պալատում էլ առանց քեզ չկամ ...»:

Քնած է Հսկա դորավարն ... անքուն,  
Բայց երազի մեջ ձին աշտանակում,  
Արշավում է, ինչպես Հովը,  
Ետ վերցնում Վանա ծովը,  
Ետ վերցնում Արածանին,  
Ետ վերցնում ողջ Բզնունին,  
Ետ վերցնում Կապուտանը,  
Ետ վերցնում Մուշն ու Վանը,  
Ետ վերցնում Ղարսա բերդով  
Ողջ Տարոնը Մշո դաշտով,  
Ետ վերցնում Օշականը,  
Ետ վերցնում Կազզվանը,  
Ետ է վերցնում Հայոց Սյունին,  
Վասպուրական Ռշտունին,  
Դուրս է վանում գորքն էլ Հունաց,  
Ետ է բերում ազգն Արծրունյաց ...  
Դվինն առնում, ինչպես Վանում՝  
Քշում Մըսր, մտնում Գողթան,  
Կտրում Մասիս սարի շղթան,  
Զին ծառս Հանում Մասիսն ի վեր,  
Ազատն ի վեր, աղիղն ի վեր,  
Մառս է Հանում երազի ձին  
Մասին, ավաղ, ճերմակ բարձրին ...  
Ու խեղճ դեսպանի գլուխն է կտրած  
Լեզու է առնում, աղերսում Հանկարծ.  
«— Ինձ թաղեք իմ սուրբ Բյուզանդի Հողում,  
Զեր Հողում մնուած սիրտս էլ է դողում,  
Ուրիշի Հողը կրակ է, Հող չէ՝»  
Արդար էր զարկդ, խիղճդ մի տանջե...»:  
Քնած է Հարճը, բայց այս կույր ժամին  
Ուզում է գտնել խեղեկ Այծյամին,  
Երազի մեջ էլ խանդում է նրան.  
— Ալլա՛, իր աչքերն իմ սիրտը կերան,-  
Ախ, մի՞թե, մի օր, ի սեր ալլա՛ի,  
Զայխոփի դառնամ Հայոց թագուհի ...»:  
Քնած է արքան, բայց երազի մեջ  
Տեսնում դեսպանի գլուխը կտրած՝  
Կարծում է կտրած իր գլուխն է խեղճ.

Եվ Հարցընում է Հարմին իր գրկած.  
— Ինչպե՞ս եմ ապրում ևս առանց զլիսի...  
— Գլուխադ ես եմ, կապրես, մի՛ վախի.  
Իմ Հոգին ծառա աղահիս ու քեզ:  
— Լավ, մարմինդ ինձ, Հոգիդ ում կուզես...  
Իսկ դու չե՞ս փախչի իմ գրկից, ասա՛,  
թե մի սև փորձանք զրկե ինձ թագից ...  
— Կփախչեմ, տեր իմ, չարը մի՛ խոսա.  
Թող ամպը չքվե քո արեգակից:  
Քանի գահին ես՝ ևս քոնն եմ, գահին...  
Հարկը տուր, ոսկով սանձե աղահին:  
— Բյուզանդի ուզա՞ծը տամ,  
Ինչպե՞ս տամ, ո՞ւմ Հացը տամ,  
Սով կընկնի ծով Անիում,  
Մարդակեր սով Անիում:  
Քանդի փակել է անՀավատն անրան  
Քարավանների յոթնամյուղ ճամփան,  
Խլված դաշտերիս բույրն էլ չեն բերում,  
Մամուռ է բռնել այն ճամփաներում,  
Քանի տարի է՝ քարվան չի գալիս,  
Մի բուռ Շիրակով ի՞նչ անի Անիս,  
Քարիք չի բերում ոչ մի քարավան  
Վանից, Տարոնից, Վասպուրականից,  
էլ ո՞ր աղյուրից ծովեր տամ նրան՝  
Եղնիկ է ուզում անգեն որսկանից,  
Գետից ծով կուզե Հույն քրիստոնյան  
Հայ քրիստոնյան եղբորից, սակայն,  
Ուզածի կեսն էլ՝ թե ետ գա՝ տանի՝  
էլ ի՞նչ կմնա՞ մի ավեր Անի ...»:

## 5

Բայց վիշտը վշտի վրա է գալիս,  
ԱնՀավատ արարն ինքն է ահ տալիս,  
Ու գալիս է յաթաղանից  
Հրովարտակ՝ Դվնո խանից,  
Բյուզանդից խոլ սիրտը կիզում՝  
Արար խալիֆն Հարկ է ուզում:-  
Ամեն զլիսից՝ քո զլիսի Հետ  
Հարկ պիտի տաս ինձ այսուհետ,

Ամեն զլիսից, զլիսից առաջ,  
Ամեն զլիսից մի ուկն խաչ,  
Որ խաչն Հայեմ՝  
Քեզ թագ ձուլեմ:  
Մանուկ լինի, թև տղամարդ՝  
Ամեն զլիսից վաթսուն արծաթ,  
Ամեն զլիսից մի Հին սինի,  
Ամեն զլիսից մի տիկ գինի:  
Ամեն զլիսից մի տիկ մոթալ,  
Ամեն զլիսից մի նոր գդալ:  
Ամեն զլիսից մի ճրագ ձեթ,  
Մի թաս մեղր իր Հացի Հետ:  
Ամեն զլիսից՝ ծովից Հանիր,  
Տարին յոթը զլուխ պանիր:  
Ամեն զլիսից մի բնո ցորեն  
Ցոթ բուռ գարի, ով անօրեն:  
Ամեն զլիսից ասեղ, մի թոփ,  
Ամեն զլիսից մի թոր, մի խոփ:  
Ամեն զլիսից մի կաղնի ծառ,  
Որ իմ զորքը դառնա անտառ...  
Ամեն զլիսից մի էշ, մի ձի,  
Մի երասան, բայց պղնձի:  
Ամեն զլիսից մի կով, մի եղ,  
Աղջիկդ բեր՝ թև կով չունես:  
Ամեն զլիսից մի ղեղ բամբակ,  
Չունես՝ Անին տուր ինձ, Համբակ:  
Ամեն զլիսից մի զույգ տրեխ,  
Վանա ծովից մի զույգ տառեխ,  
(Էլ ո՞րտեղից մեզ Վանա ծով,  
Որ Հարկը տանք, թեկուզ լացով)  
Ամեն զլիսից, քո զլիսի Հետ,  
Այս պիտի տաս ինձ այսուհետ,  
Զեռ տի քաշես խաչեղբորից,  
Հարկ պիտի տաս զու ինձ նորից,-  
Չտաս կամբով՝  
Կգամ զորքով,  
Զորքով կգամ՝ մահդ կտամ,  
Ես արաբաց իմ ալլահով  
Քեզ կթաղեմ քո Հայ գահով»:

## ԳԼՈՒԽ ՏԱՄՆՁՈՐՄԵՐՈՐԴ

1

Սփոնց գիշերը քաղցր տիսրությամբ  
Տագնապաթաքույց մի խաղաղություն,  
Արագած լեռն էլ դեռ պարզ ու անամազ  
Որպես Անիի Հայր պահակն արթուն.  
Մեղմահով ժամաց աստծուն ու մարդուն,  
Լուսց Շիրակի գաշտիկն անսահման  
Անձնությամբ լի օրոցքի նման ...  
Բայց գույժն առավել սաստիկ է գալիս,  
— «Այդ ո՞ւմ դեսպանին ... ո՞ւմ ևս սպանում,  
Այդպիս ևս դու ինձ պատասխան տալիս,  
Այդ ո՞ւմ վրա է սուրդ Հույս դնում,-  
Էլ քանի՞ զլուխ ունի քո Անին՝  
Առանց Վան, Տարոն ու Վասպուրական,  
Որ սպանում ևս դու իմ դեսպանին ...  
Սպարապետն է արքայիդ արքան,  
Այս ևս ուղարկում, ով դու անօրեն,  
Քառասուն տարվա Հարկիդ փոխարեն,  
Բայց, ահա, որպես կաթողիկոսին,  
Պատանդ ևմ պահում քո Տրդատեսին.  
Ճարտարապետիդ, որ աչքս մտել՝  
Աստրծո պես է գմբեթս կապել.  
Գմբեթն իմ Այա Սոֆիա տաճարի,  
Նա ունի խոյանքն Հունաց Հանճարի...  
Քո կաթողիկոսն՝ ահա զնդանում՝  
Բյուզանդի քանտում ինձ է խոստանում՝  
Իրեւ խաչեղբոր՝ կտակել Անին,-  
Սպանել ... այն էլ անմեղ դեսպանի՞ն ...  
Այս անգամ, սակայն, մենակ չեմ գալու,  
Կամ իմ դեսպանին կենդանի տուր ետ,  
Կամ Անին, կամ թե կովի եկ ինձ Հետ,

Որ ձմեռ բերեմ կյանքիդ վարդերին»:  
Եվ ինչպես աշեղ վիշտապը ձորում,  
Հռոմի շևորոն առած շուրթերին  
Իրանի շահն է Հոնաց Հետ գոռում.

— Մեր զորքերը երկրիդ շեմին,  
Վերջին խոսքիդ կսպասնն,  
Միացել եմ ես Հռոմին  
Եվ Հոներին ասպագնն:

Երտուն Հազար զորք է Հոնաց,  
Քառուուն՝ զորքն է Հուրանի,  
Վաթուուն Հազար զորքն է Հոնաց,  
Վաթուուն՝ զորքն է Թուրանի,

Հարյուր Հազար իմ զորքն է, Հա՛,  
Եռուն կմորթեն քո գահին,  
Դե շուտ, վե՛ր կաց, ո՞վ դու ազահ,  
Կամ կոխվ տուր, կամ Անին»:

Ու զորք է Թվում գույժն արշավասույր,  
Այս անգամ, իրավ, խոսքեր չեն, այլ թուր,  
Կարծես Բյուզանդի զորքեր են զալում,  
Կարծես իր վրա վազքեր են զալիս,  
Կարծես իր զիսից իր թագն են խլում,  
Կասկածներն իրար գրոհ են տալիս,  
Կասկածներն իրար կոկորդ են բռնում,-  
Իր աստվածայինն ասես կուչ զալիս,  
Իր դիվայինն է քայլ առ քայլ Հառնում,  
Իր Հոգու վրա բռնակալ զառնում,

Իր շարն է Հառնում,  
Կոկորդն է բռնում

Թովիշ թովչանքով իր կախարդ Հարճի,  
Ամուր բռնում է կոկորդն իր խղճի:  
— Ի՞նչ անեմ այժմ, ո՞նց զլուխ Հանեմ,  
Այս յոթնազլուխ վիշտայա վշտից,  
Կոի՞վ տամ, թե՞տամ, այժմ ո՞րն անեմ,-  
Խաչեղրայր կոշյալ այս զրադաշտից  
Ինչպե՞ս, Աստված իմ, ինչպե՞ս ազատվեմ,-  
Իրավ որ մարդն է միշտ Հույսը մարդու,  
Աստծուն էլ պետք է մի խորհրդատու...

Բայց ո՞ւմ կարող եմ սրտինս հայտնել՝  
Տեղն ու տեղն Անին ինձ կհռչութի...  
Չորս չի կարող իմ վերքն ամոքել,  
ԱՀն ինձ դարձնում է անարժան որդի,  
Ռորիշ եղբ չկա, Աստծու կամոք էլ. -  
Դժոխքը եկել բկիս է չոքել.-  
Աշխարհանցումն է Համբորեն Հասնումք:  
Ու պիշ գուրս նայեց ակնասպիշ արքան,  
... Լուսինը նոյզան ուկեն բաստի պես  
Գիշերվա ահեղ մութի հեղեղից փախչում էր.  
*Ելնում*  
Դեպի Մասիսի բարձունքները վես,  
Լոկ մի բուռ աստղեր փրկելով, կարծես,  
Շունչ քաշեց Լաստը՝ Հասած Մասիսին:  
Մինչ խուճապահար աստղերի դողուն  
Բազմությունները, անզոր մանկանց պես,  
Խեղվում էին ահեղ գիշերվա մութի հեղեղում՝  
Այն հեռում խեղդված ողջ մարդկության պես:  
Մեկ այսպես, մեկ էլ սև գորք էր թվում  
Այս չարագուշակ, սևասև գիշերն արքայի աչքին,  
Աստղերն անհամար՝ սև գորքի ծովում  
Բյուր նիդակների Հուր ծայրերն էին  
Եվ իր վրա էր գիշերվա ահեղ  
Այս գորարանսակն արշավով գալիս,-  
Ու սև գորքի սև-սև չեփորի պես բուն էլ  
*խելահեղ*  
Վայում ... արքային էր բուն վայ տալիս,  
Իր գինվաշչուկ Հարճի բերանով,  
Թե՛ ռվայ քեզ, վայ քեզ, հայ չես, վայ ես դու,  
Որ չես մակարդվում սիրուս մերանով,  
Քո վերջն է վայում մահագույժ գիշերն այս  
*Հազարարուն,*  
- վայ քեզ, անգինս, այդ ի՞նչ մեղք է, որ ...  
Անմեղ ես, թե միշտ մնասս թագավոր,  
Եվ չի պակասի բեղիցդ մի մազ,  
Թե Հանձնես Անին ... գահիդ կմնաս,  
Թե չէ ...- թե չէ ի՞նչ, - մոնչաց արքան:  
- Թե չէ՝ զահն ու գայխառնն Հայկան

Ում էլ որ տեսնեն՝ էլ քեզ չեն տեսնի,-  
Քո Հառաջանքն էլ նրանց չի հասնի,  
Կղնեն ոսկե շղթան ձեռքերիդ,  
Երկաթ շղթան էլ դրած ոտքերիդ,  
Կտանեն, կանցնես ողջ Բյուզանդիայով,  
Կայսեր առջևով, զլուխոդ կրծքիդ,  
Անին չես տեսնի էլ ոչ մի վայրով,  
Կփտես մթին Բյուզանդի բանտում  
Ու վերջ Հայկական թագավորության,  
Վերջ Հայաստանին,-

Բայց քո իմաստուն  
Կաթողիկոսն է բացել քո ճամփան,  
Աստծուդ ստվերը, էլ ի՞նչ ես դոդում,  
Երբ Աստծո ստվերն Աստծուց չի վախում:  
Կանայք կատու են, բայց ես յոթը չան,  
Ես քեզ յոթը չան սրտով ևմ սիրում:  
— Կին չես ... Իրիսի աչքն ես ատրուշան,  
Խտացված կին ես, ինձ ո՞ւր ես հրում ...  
Բայց թե ինձ հետ ես, թե ինձ չես մատնի,  
Թքիր կրակին ատրուշան աստծուդ,  
Այդ թող ահավոր երդումդ լինի»:  
Հարճը գունատվեց, — անհավատ անգութ,  
Ու չեր իմանում ո՞ւմ աչքերն Հանի,  
Ի՞նչ անի ... դողաց, քիչ մնաց ընկնի ...  
— Մի՛ անի, սերս դժոխք մի՛ տանի:  
— Թքիր, — մոնշաց, մողեգնեց արքան,  
Թե ինձ սիրում ես, թե ինձ չես մատնի,  
Թե կուզես լինել դու իմ թագուհին՝  
Թքիր կրակն քո աստծու գահին,  
Դե շուտ... »: Ու շմած պարսկուհին չոքեց.  
Չոքեց, որ թքեր հուր ատրուշանին՝  
Իր աստծո աչքին, բայց ահը մոգեց.  
Կին էր Հարճը՝ այն էլ դժմնի,  
Եվ արքային Հարճը խարեց, —  
Բերանն առավ մի կում զինի,  
Իր աստծո վրա թափեց...

Սուտ գունատվեց,  
Ուշաթափիվեց.

Իրր ընկավ,  
Իրր հանգավ,  
Արքան վեր թռավ,  
Իսկույն գիրկն առավ  
Կյանք ու չունչ տվեց ուշաթափ Հարմին  
Բանգ ու Համբույրով...  
Ու Հարճն սթափվեց,  
Աչքերը բացեց, զրկեց՝ իր քաջին,-  
Եվ Հայոց Աստծու անունը տվեց...  
— Դե տուր ... ես արի, դե դու էլ արա,  
Եղբորդ մատն էլ խառը կյինի,  
Որ կես աշխարհն է գալիս քեզ վրա ...  
Իմ Հայրն էլ քո տեղ նրան կղնի,  
Բայց լավ է՝ Անին Հորս կտակես,  
Ես Աստծուս արի, դու՝ ազգիդ արա...  
Մեր գորքով կայսեր ճամփեն կփակես,  
Եվ մեզ կմնան կյանք, վայելք ու գաւՀ.  
Մի պատառ թուղթը ինչ պիտի անի,  
Կանչի՛ր, էլ ի՞նչ ես ակնապիշ մնում:  
Կանչի՛ր դեսպանին՝ Անին տո՛ւր ... տանի:  
— Սուս ... կարծես թե մեզ ականջ են դնում,  
Եշնջաց Օհան-Սմբատն իր աշով,  
Հարճի բերանը փակեց ծանրահեն,-  
Իրավ, թվաց, թե պալատի մթնում  
Կանգնած սյուները մարդիկ էին սև,  
Որ ականջ էին իր սրտին դնում ...  
— Զէ՛, ես ու դու ենք, սյուներն են, ինչ մարդ,  
Ու վզովն ընկավ, չքնաղ օձի պես,  
Եղկ մի Համբույրով իր մեղսամակարդ,  
— Ես հեծ, հոգյակս, թագդ կկորցնես,  
— Բայց ինչպե՞ս ... Աստծուն ի՞նչ պատասխանի,  
Հանգիստ չի մնա աճյունս հողում,  
Բայց կարծես գորքերն իրան-թուրանի  
Արդեն ամբոցի դռներն են բախում,  
Ու Բյուզանդիոնից նոր գույժ է գալիս,  
Կաթողիկոսի գիրը՝ հողմի պես,  
— «Ելա ես բանտից ... իզուր չես տալիս,  
Ահա և նոցա գորաց թիվը քեզ.

Բայց դույզն ասեմ, իմ թագավոր,  
Դույզը, ոչ թե մոտավորը,-  
Յոթը բյուր է՝ թուր-տեգավոր,  
Ութը բյուր է ոտավոր,  
Յոթը բյուր է՝ կորտակավոր,  
Ութը բյուր է վաղրավոր,  
Յոթը բյուր է՝ կապարճավոր,  
Ութը բյուր է նետավոր,  
Յոթը բյուր է՝ աղեղնավոր,  
Ութը բյուր է ձիավոր,  
Յոթը բյուր է՝ վահանավոր,  
Ութը բյուր է գուրզավոր,  
Յոթը բյուր է նիզակավոր,  
Ութը բյուր է սակրավոր,  
Յոթը բյուր է՝ ասպարավոր,  
Ութը բյուր է վագրավոր,  
Յոթը բյուր է՝ կապանավոր,  
Ութը բյուր է քերդավոր,  
Յոթը բյուր է՝ բարանավոր,  
Ութը բյուր է վերտավոր,  
Յոթը բյուր է ազատանին,  
Ութը բյուր է ճորտավոր.

(Հազար բյուր են՝ կուտեն Անին)

Ու կաղոթեն  
Զորքերն ամեն,  
Որ գինու տեղ արյուն քամեն,  
Ախ, զեղ չկա հայոց ցավին,  
Մարավել է աշխարհն, ավաղ,  
Մի բուռ հայոց արյան ծովին,  
Հայոց բախտից արնաշաղախ...  
Ու քամվեց, կարծես, ուղեղը գանգից  
Պատերազմարեր այս ահազանգից,  
— Ախ, սևազլուխ,— Հառաչեց արքան,  
Ու սիրտն է դողում ահից խոլական,  
Վախում է շքեղ կյանքը կորցնել,  
— Ել ո՞ւմ Համար է մայրս ինձ ծնել,  
Ու եսանվեր սարսափն առաջին  
Դարձավ վերջին հույսն իր պերճ Հարճի պես,

Դառնախինդ գումեց՝ քո Հույսն ևմ վերջին,  
Զգոյշ ... ամենից թանկը չկորցնես,  
Էլ ի՞նչ ես չարն ու բարին Հարցընում,  
Քո վախն խմաստուն խորհուրդ է կնկա,  
Ի՞նչ ես թազընտիր զլուխդ կորցնում՝  
Առյուծ չես ... աղվեսն հոգումդ Հո կա՞  
Երր վայելում է՝ արքա է գողն Էլ,-  
Հո մեկ էլ աշխարհ արքա չե՞ս գալու,  
Բանը տանելն է ու ոչ թե թողնել.  
Թե չվայելսն՝ ի՞նչ ես տանելու՝  
Հայրենին ի՞նչ է - ստվերն է Աստծու,  
Այնինչ վայելքն է Աստվածը՝ մարդու»:  
Ու բաց էր անում կուրծքը նոնագեղ.  
Արքայի զլուխն առնում ... նոներին,  
Սեղմում ... ցոյց տալիս դրախտը չքեղ՝  
Ետ հրում ... կարոտ թողնում գոներին ...  
Ու շշնջում էր դժնի ու թովիչ.  
- Հայոց Աստծուն էլ թե մնա՝ քե՞զ ինչ,  
Թեկուզ և Անին անառիկ մնա, -  
Չէ՛ ... կովի բան չես, դու կրնկնես կովում,  
Ինձ էլ մորթուտիր, թե մեկն խմանա,  
Ինձ, որ քո սիրո Համար եմ վառվում,  
Ինձ, որ փոխեցի քեզ իմ Աստծու հետ,  
Ես իմ խմաստուն քո խելքն այսուհետ,  
Մի թղթով կայսեր բերանը փակիր,  
Կամ կուզես՝ Անին Հորս կտակիր,  
Որ փակե կայսեր բերանն իր զորքով,  
Իրանի զորքի մի երկու զարկով ...  
Եվ Անին մնզ ի՞նչ, քո լյանքն է բանը,  
Բանը վայելքն է մեր արքայական ...»:  
- Գտար ... տուր չեմ տա ողջ Հայաստանը,  
Եվ ո՞վ կիմանա ինչ դաշնեց արքան;  
- Ոչ ոք ... ես ու դու ... այն էլ մի մարմին,  
Մատաղ քո ահին՝ քո զորք ու զարմին ...  
- Հա՛, վախն է մարդուն  
Դարձնում խմաստուն,  
Վախն կա, որ կարժե Հազար քաջություն,  
Շահ չէ, թեկուզ գա ոհմակն Հովազի.

Այնպես ետ ճամփեմ, որ կենացդ ասի»:  
Տրդատս իզուր գմբեթը կապեց ...  
Կայսրն իր պաշտած Աստծուն էլ խարեց.

Կանաչ խոսեց՝ սև գործեց.  
Կապույտ խոսեց՝ սև գործեց,  
Կարմիր խոսեց՝ սև գործեց,  
Ճերմակ խոսեց՝ սև գործեց,  
Դեղին խոսեց՝ սև գործեց,  
Եղնիկ խոսեց՝ դև գործեց.

ՕՀան-Սմբատն իմաստասեր,  
Իր Հարկի տեղ ... Անին կտա  
Բայց լոկ թղթով մի մարդարտյա ...»:

## 2

Ու թագավորը դառնում է մի լամբ,  
Եցնում է կանթեղն ու գինին Գողթնի  
Ու վախից գաղտնի կանչում է պալատ  
Հայոց թշնամուն ու պատվում գաղտնի -  
Թշնամի կայսեր դեսպանին Հապարտ,  
- Է, կենացդ, վայ մեր Հացին;  
Ի՞նչ ես Հեծել սատանի ձին,  
Երբ ուզենաս՝ մաշ կգտնես,  
Բայց կյանքն, ասա, ո՞վ կտա քեզ,  
Եվ կա՞ կյանքից քաղցր մի բան՝  
Այն էլ կյանքից արքայական,

Կամ հինավորց

Այս Հին գինուց,

Զահել կինն ու աշել գինին  
Թողնեմ, Հեծնեմ ձեր կույի ձի՞ն ...  
Դուք իմ Անին այժմ եք ուզում,  
Բայց տե՛ս, թե ես ի՞նչ եմ ասում,  
Ինձից Հետո Հայրեն-մայրեն  
Իմ ինչի՞ն են, թող չներեն,  
Ինձ կներեն գան ու գինին»:

Ու աշից գառած նա ընկած մի կին՝  
Սուրբ գրքի վրա մեր Հայրենական  
Երդվել է, գաղտնի երդումը գրել,  
Կնքել կնիքով իր արքայական,

Մի դժնախորհուրդ պայման է դրել,  
Թե՛ զգովաճամբ իմ գահն ու Անին  
Իմ մահից հետո կթողնեմ ես ձեզ,  
Որ չպղտորեք իմ կյանքն ու գինին,  
Որ իմ սահմանից զորքերդ քաշեք ...  
Միայն թե թողնեք հանգիստ ապրելու  
Մինչև իմ մահը իմ գահի վրա,  
Իմ գահի վրա՝ ինքս ինձ հյու,  
Պատից կախելով իմ զենքն ու զրահ...  
Բայց զորքդ այս գիշեր ետ ես քաշելու...  
— Կքաշեմ, արքա, բայց ի՞նչ էլ լինի,  
Կոփմն Հարսանիք, արյուն է, գինի...  
Զէ՛, ձեզ Համար էլ գինի չէ, այլ մահ.  
Ոչ էլ ինձ Համար, ոչ էլ մեծ կայսեր,  
Մի գիշեր Հարսմն աշխարհ կարժենա,-  
Ի՞նչ արյուն, երբ կան գինի, կյանք ու սեր...  
Բայց զինու մեջ էլ մեր բախտն է դժնյա,  
Զեք թողնում, ավաղ, Հայը Հայ մնա,  
Իմ առաջ աղ ու Հացով կգայիք՝  
Թե ծով լինեի նավեր խորտակող,  
Իմ ոտքին զյսով ողջույն կտայիք՝  
Թե Հայ շունենար ամեն ծով ու Հող՝  
Բացի Հայարմատ Հայ Հող ու ծովից:  
Հայը դավաճա՞ն ... Դո՞ւք եք դավաճան ...  
Սիրտ չի հովանա մեծ ազգաց Հովից ...  
Փոքրիկ ազգերիս վիշտն է անվախճան ...  
Փոքրերիս աստվածն անաստված է միշտ ...  
Հառաջեց արքան ծանր ու դառնավիշտ,  
— Չթողիք մնա Հայն Հայրենասեր ...  
Այս էլ թուղթն ահա՝ ձեզ վաղվա Անին»:  
Ու խեց թուղթը զեսպանը կայսեր ...  
Խեց կտակը զեսպանը դժնի,  
Իր ծոցը դրեց թուղթը մեծահույս,  
Կարծես ծոցն առավ մեկից յոթն Անի,  
Կարծես ծոցն առավ Հայաստանը կույս,  
Եվ իրեն զգաց Հայոց Հարեմում՝  
Իր սրտի ուղած՝  
Հազար երազած

Հայուհու պորտից զինի էր խմում,-  
Ըմպում պորտեպորտ ու չեր կշտանում  
Քառասուն Հարեմ Համբուրած թերնով՝  
Մտրում Անին էր Հարեմ դարձնում ...  
Այնինչ ողբում էր արքան Էլ զինով,  
— Կարծես շիրմից են պապերս խոսում,  
Պոռնկվեց Հայ բախտն՝ այս ելքն ընտրելով,  
Կորա Հայ վշտի լաբիրինթոսում՝  
Արիադնայի թերը փնտրելով ...  
Էլ ի՞նչ Վանա ծով, վերջ իմ Հույսերին,  
Սակայն, ով դեսպան, կասես քո կայսրին,  
Որ ցմահ պիտի իմ պատվին վայել՝  
Գերեզմանի պես գաղտնիքը պահել ...  
— Է, կապահենք, դարդ մի անի,  
Մահն Էլ ծոցես թուղթ չի Հանի,  
Անուշ լինի, ինչքան ապրես,  
Անուշ լինի քո Հարճը քեզ,  
Վարդերի վարդն իմ Իրանի,  
Այ, դու դրան պահիր գաղտնի,  
Կանանց ինձնից դու լավ գիտես...  
Անուշ՝ քո գահն ու Հարճը քեզ:  
Իսկ ինձ Համար դարդ մի անի,  
Գաղտնիքն ինչ է՝ մի բուռ Անի»:  
— Ի՞նչն է մի բուռ, այն էլ Անի՞ն,  
Մի բերդ է կուռ Հայաստանին,  
Անին ծով է, մտիր շուկա,  
Օրը Հազար քարվան կուգա,  
Հազար ցեղի երկնի տակից  
Մովից կուգա ու ցամաքից  
Ավաղ, Անիս՝ Արևելքի  
Թագուհին է ողջ աշխարհքի:  
Ինչ որ կուգես անել սրով՝  
Անզեն որ գաս, կանեմ սիրով,-  
Ազգս քիչ է ու ես տկար,  
Էլ ինձ ուրիշ մի ճար չկար»:  
Ու էլի խմեց, զուրս նայեց ահով,  
Եվ դառը ժապտաց, որ զրսում լոին  
Գիշերն Հակում էր իր սև զրահով,

Լուսնի արյունոտ աղեղը ձեռին ...  
Քնած էր Անին, այնինչ անդնդում  
Ժեռ ամրոցի տակ եղնում-որոտում,  
Ասես կուհում կատարվածն աշեղ,  
Անքուն Ախուրյանն իրեն էր ուտում,  
Վեր թռչում ձորից, փրփրում խելաշեղ,  
Թռչում, թքում էր լուռ պալատն ի վեր,  
Ժայռն պատերը կրծում էր, լալիս,

Մոր պես կարևովեր,

Հոր պես անվեշեր՝

Կարծես գոռում էր՝ ո՞ւմն ևս ո՞ւմ տալիս ...  
Ու ծառս էր լինում, մոնջում, գոչում,  
Կեսպիշերային Հանդարտիկ քնով  
Քնած տնեցոց Հավար էր կանչում,  
— Ելեք ... վաճառեց ձեզ արքան զինով,

Ելեք, ծախեց

Անին մեր մեծ

Մի սև զրով

Մի Հետկարով<sup>1</sup>,

Մի Հետկարով

Մի սև զրով ...

### 3

Արեք ելավ, երբ զիշերվա Հետ  
Քաշվեց թշնամու զորքը չարաղես,  
Օհան-Սմբատի սև թուղթը ձեռին՝  
Հանց գաղտնի դրոշ գաղտնի Հաղթության՝  
Քաշվեց ինչպես սև զիշերը լոխն,  
Քաշվեց սև զորքը, բայց ոչ Հավիտյան,  
Քանզի ոչ մի զլոխս կերավ,  
Անին թողեց, Անին տարավ,  
Անին տարավ՝ թողեց Անին՝  
Աչքը վաղվա Հայաստանին:

<sup>1</sup> Հետկար - երդման թուղթ, նամակ:

Ու մինչ վախսկուտ թուրն ՅՇան-Մմբատի

Այստեղ իր սրտի պատյանում տիսրեց,

Այնտեղ, Բյուզանդում թուրը Տրդատի՝

Տրդատի տարադն արծովի պես ճախրեց,

Թրի պես խրվեց սիրտը սև կայսրի.

Որ Հայ մուրմի դեմ էլ սուր չարի.

Քանզի երբ Տրդատն Հունաց տաճարի

Գմբեթը կապեց,

Փրկած գմբեթը Այս Սովիա

Հունաց տաճարի.

Ողջ Բյուզանդիոնը իր կայսեր բներնով

Այսպես կափկափեց.

— ԱՀա թե ինչ է Հանճարը Հայի ...

Ու խոնվում էր խառնամբոխն Հունաց,

Եվ խաշակնքում և ահ էր տալիս,

Եվ չար, և բարի նախանձով անանց, —

Եվ Հայտնի ժպտում, և գաղտնի լալիս,

— Հայ տարադն Հաղթեց ...

— Մատաղ Հույն թրին ...

— Հայ Հանճարն Հաղթեց ...

— Մատաղ նոյն թրին ...

Ու երբ Հանճարեղ Տրդատի ձեռով

Հունաց տաճարի մեծ խաչն էլ դրին,

Եկավ թագավորն ու Հոգեխոռով

(Գաղտնի նախանձը Հայտնի աչքերին)

Ճարտարապետի ճակատն Համբուրեց,

Տրդատի ճակատն՝ Հայոց արեգակ,

Հոգնած ճակատը և խոնարհ, և մեծ՝

Աստծո կառուցած գմբեթը միակ ...

Իրրև Աստծո գմբեթն Համբուրեց:

Բայց այդ էլ, ափա՛ղ, Հայոց արքային էլ չէր ամոքում...

Ու որսի կելներ, բայց իր զրահին

Հայոց վշտի պես սև ժանզն էր չոքում,

Եվ թշնամին էր սպասում մահին:

## ԳԼՈՒԽ ՏԱՄԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ

1

Կոկոնեց ձյունից

Իր հույս ու աշխի՝

Եղափ կոկոնից

Գարունն արքայի,

Ու զինին բապում նոր սիրո բույրով՝  
Բներանն էր սրբում Հարճի Համբույրով,  
Հարճի Համբույրի վարդով նորարաց,  
Գիներույր վարդով, բայց կամաց-կամաց  
Թոշնում էր, իբր, այս վարդն էլ անբույր,  
Մարմնապերճ Հարճի ողջ մարմնից քամվող  
Համբույրներն էին դառնում անհամբույր,  
Աչքից ընկնում էր Հարճը մարմնաճոխ,  
Մարմնաղող Հարճը այն, որ ցոփ ու հեզ  
Մարմնով նղնիկ էր, բայց զիսով՝ աղվես:  
Փշոտ էր թվում դրախտն էլ կրծքի,  
Եվ Հարճի գրկում աչքերը փակում,  
Արքան գրկում էր ուրիշ մի ծաղկի,  
Մի նոր դրախտի դռնակն էր թակում ...

— Աչքերը նաղիկ,

Ինքը երազիկ,

Կուրծքը նորանուռ,

Գիրկը մուրազիկ:

Տրդատի աչքն էլ կարող եմ Հանել  
Իր դստեր գեթ մի գիշերվա Համար,  
Մի՞թե կարող է Հայրը վարանել՝  
Չտալ աղջկան, չէ, կտա, սիրո իմ,  
Կասեմ՝ կդառնաս միակ մտերիմ  
Ու ամենամոռն – աներն արքայի,-  
Կդառնա դուստրդ Հայոց թագու Հի,  
Ինձ ժառանգ կերկնե քո վարդը կոկոն,  
Որ առավոտվի կյանքիս երեկոն ...

Չտա... զլուխը թոցնել կտամ,  
Էլ ինչո՞ւ ընկա այն մեծ մնդրի մեջ,  
Որ շվայելեմ ում էլ ցանկանամ,  
Ի՞նչ պիտի տանեմ աշխարհից այս պերճ,  
Այս չնաշխարհիկ աշխարհից էլ ի՞նչ՝  
Թե շվայելեմ կույսին էլ մատաղ,  
Ուրիշ հրաշք են Հայուհիք թովիչ,  
Ամենաթովիշ պարսկուհին էլ, վայս,  
Զլցրեց բռոր բաժակներն Հոգվույս ...  
Ժաման է, որ ելնեմ Այծյամի որսի,  
Ինչ Այծյամ ... մարմնով հրեշտակ մի կույս,  
Եվ արքան Հիշեց մարմինն էլ կույսի.  
— Երբ լողանում էր այս Ախուրյանում՝  
Աչքերս կույսը դրախտ էր տանում ...  
Զէ՛, Հարճա փուշն է այն ճոխ կոկոնի,  
Թող չպարծենա պարսկուհին իմ վարդ,  
Կոկոնի մարմինն իմ վարդն էլ չունի.  
Ահա թե ո՞րն է Հայուհին, ո՞վ մարդ,  
Ինչպե՞ս շթոշնեմ կոկոնի դարդից՝  
Ֆոթն Հեղ սիրուն է կոկոնը վարդից,  
Հազար ավելի, ավելի սիրուն,  
Ավելի սիրուն, ավելի գարուն,  
Հազար՝ մարմնագեղ, ինքն էլ Հայուհի, .  
Ինքն էլ, մերկ տեսա՝ մի աստվածուհի,-  
Երանի, ասի, ջրերին այն պաղ,  
Որ գրկում էին մարմինն իր շարմաղ.  
Արքան էլ վայրկյան ունի, որ լալիս՝  
Անրան ջրին էլ երնեկ է տալիս ...  
Ու նայում գաղտնի՝ չեի կշտանում.  
Ինչ մարմին ... Հրաշք՝ նազելի ու Հեղ,-  
Վայ թե հրեշտակն այսպես է լինում,-  
Իրավ, կնոջը մերկ պիտի տեսնես՝  
Որ զգաս՝ կնոջ ո՞րն է գեղեցիկ ...  
Հարճա ցոփ է նուրբ, մինչ կույսն՝ ամոթխած՝  
Ասես եղնիկ էր, այս, չե, ի՞նչ եղնիկ,  
Այծյամն հրաշք է՝ Հայուհու փոխված,  
Հայուհու փոխված մի աստվածուհի,  
Այնքան մարմնագեղ, այնպես ամոթխած,

Որ, կարծես, աչքերս, ընդում ալլահի՝  
Առաջին անգամ տեսան Հայուհի ...  
Իրավ, թե Հայրը իմ սերն իմանա՞  
Իր երջանկությանն էլ չի դիմանա,  
Ինձ կտա զատերն, ինչպես դրախտից  
Որսկան Վարագն է ինձ եղնիկ բերում,  
Կաթողիկոսն էլ կցա իր բախտից՝  
Մեզ կպսակե իր Մայր տաճարում:  
Ո՞ւր ես Հավիկս,  
Ո՞ւր ես լավիկս,  
Որտե՞ղ ես Հիմա,  
Կույս կաքավիկս: -  
Խորհեց արքան, կանչել տվեց  
Ճարտարապետ Տրդատին,  
Որ ներս մտավ ու խոնարհվեց  
Գահի առջև՝ մինչ գետին:  
- Վեր կաց, Հայ՝ իմ ճարտարապետ,  
Խոսենք Հայր ու որդու նման,  
Սրտի խորհուրդ ունիմ քեզ Հետ,  
Վկա՝ կարուտն իմ անսահման.  
Տուր քո գանձը Հայոց գահին.  
Տուր քո գահը քո արքային:  
Եփենց Տրդատն, ապշեց ասես,  
Ապշեց խոսքից ... արքայական,  
- Ի՞նչ գանձ ունեմ, որ ի՞նչ տամ քեզ,  
Կյանքս ուզե, կյանքս քեզ տամ:  
Միակ գանձս՝ ի սեր Հայոց՝  
Այս ձեռքերն են իմ քարագործ,  
Որ քարի Հետ կոփե տալիս  
Օդում զարկված Հավքի նման  
Ճարդված ու խեղճ տուն են գալիս,-  
Այս իմ գանձն է ուզում արքան,  
Անարժան գանձն անարժանիս.  
- Ի՞նչ անարժան,-  
Ասաց արքան,-  
Այդ գանձերն են ծնել Անիս,  
Արքան մատաղ այդ ձեռքերիդ,  
Որ իմ Անին են պարսպել.

Արքան մատաղ պարիսապներիդ,  
Որ թշնամուս շատ են զսպել ...  
Արքան մատաղ այդ ձեռքերիդ,  
Որ Մայր տաճարն են կառուցել.  
Մատաղ լինեմ այդ գանձերիդ,  
Քո մատաղն եմ, Հայր իմ, դարձել:  
Ես գանձերիդ գանձն եմ ուզում,  
Որ գահ դառնա իմ աչքերին,  
Գանձդ միակ, գանձդ խոսուն,  
Որ արքայիս դարձրեց գերին ...  
— Տե՛ր իմ արքա, այս ի՞նչ կասես,  
Ապշեց, զմեց Տրդատն Հսկա,  
Չեմ Հասկանում միտքդ կարծես,  
Թե կա՞ դու ես գանձս ոսկյա,  
Ազգիս գանձը, լոկ իմը չես,  
Թե՞ նոր մի վանք չինել կուղես:  
— Վանք էլ կուղեմ, - ասաց արքան:  
— Վա՞նք ես ուզում, ես քո ծառան ...  
Բայց մտքի մեջ՝ աչքը աշխին՝  
Էլի զլուխս տվեց գահին, -  
Սրտի սրտի սրտում զգաց  
Ինչ-որ մի վախս, մի կույր կասկած,  
Թե՞ «չլինի» մի բան հիշում՝  
Իմ բերանից խոսք է քաշում  
Ինչ-որ գաղտնի գանձի մասին ...  
Բայց ի՞նչ գանձ է, ո՞վ իմանա,  
Այն էլ խոսուն, թե՞ իմ ... կույսին»:  
Ու Հառաջեց. «Տե՛ր, ինձ օգնեա»:  
— Գանձ չէ, Հայր իմ ճարտարապետ,  
Սրտի խորհուրդ ունեմ քեզ Հետ,  
Սրտի կոխվ՝ թե ինձ չտաս,  
Բայց, չէ, կտաս, թե իմանաս, -  
Տուր գանձերիդ գանձն իմ գահին,  
Տուր քո գանձը քո արքային,  
Տուր ինձ միակ քայլող գանձդ,  
Որ ինձ մոտիկ բերե անձդ,  
Մի՛ մոտեցուր ինձ իմ ... մահին,  
Տուր այծյամդ Հայոց գահին,

Ժպատաց Տրդատն ու չունչ քաշեց,  
Բայց մշուշվեց Հայացքն Հանկարծ.  
Իր արքայի ողջ կյանքն հիշեց,  
Ահաշշուկ վշտով ասաց.  
— Գլխիս վրա, տեր թագավոր,  
Մի գառն ի՞նչ է, որ չզունամ,  
Բախտը ինքը կընի քավոր.  
Բայց օ՛ր տուր ինձ, որ լավ խորհնամ, ....  
Արքայի միտքը թե մայրն իմանա,  
Իր երջանկությանն էլ չի դիմանա,  
Քեզ կտա դստերն, ինչպես դրախտից  
Որսկան վարդն է քեզ ևղնիկ բերում,  
Կաթողիկոսն էլ կզա մեր բախտից՝  
Զեղ կպսակն մեր Մայր տաճարում:  
Բայց թե՝ մեղքս ինչ թաքցնեմ,  
Մեծ ես, մեղք է, ցավդ տանեմ,-

Կոկոն է արքա,  
Փոքր է տակավին ...  
— Ռւրիշ դեղ չկա  
Իմ սիրո ցավին.

Ինչ կոկոն ... վարդ է արքայավայել,  
Միայն քո վարդն է վայել իմ զահին;  
— Վարդի կոկոնն է, դեռ շատ է ջահել,  
Համ էլ, տեր արքա, քա քո թագուհին,  
Հայոց թագի ոսկու ոսկին,  
Ոսկե վահան քո հաղթ բազկին,  
Քո թագուհու ի՞նչն է պակաս.  
Աչքերը ծով, ծով ու ծավի ...  
— Որդի կուզեմ, ասեմ քեզ պարզ,  
Ամուլ է զիրկին իմ կաքավի:  
Ժառանգ չունեմ, զահաժառանգ,  
Իմ թագուհին գանձն է իմ թանկ,  
Իմ պալատի պալատը վես,  
Նա ոսկի է, իրավն ասիր,  
Բայց ամուլ է նա ոսկու պես,  
Թե ինձ թուր ես՝ վիշտու կիսիր,-  
Չընը կին է, բայց անզին է,  
Բայց իր զրկում վիշտու հին է,

ԱՀա ինչու քո հեք արքան  
Կին է ուզում քո աղջկան,  
Ամուլ կինը ազգի համար  
Արտի հող չէ, աղ է անծին,  
Հող է միայն ինքն իր համար,  
Վայ իմ անմեղ անիժածին:  
Գահիս ահ է իմ անծինը,  
Ստվեր չարժե չըեր կինը:  
— Չէ՛, տե՛ր արքա,  
Աչքդ վկա,  
Թագուհուդ պես մի թագ չկա,  
Զինմաշինի գահն էլ չունի  
Թագուհու պես Հայաստանի:  
Այս, ինչ կին է, կյանքը նրա՝  
Վանքեվանք է ծնկի վրա.  
Իսկ բերանը մեղմ ու բարի  
Բուրվառ է սուրբ աղոթքների,  
Մայր տաճարի ջահն է բյուրեղ՝  
Բերված հրաշք Հնդստանից,  
— Մարված ջահն է ամենազեղ,  
Վառվող կուզեմ ես քեզանից ...  
Մորե մարված ծնված ջահ է,  
Թեկուզ աստված յուղը լցնի՝  
Չի վառվելու՝ ամուլն ահ է  
Գահի համար Հայաստանի ...  
Իմ գիշերներն են անպտուդ անցնում՝  
Ցանում եմ, ցանում, ցանում եմ, ցանում,  
Էլի չի ծնում իմ հույսն ահալի,  
Ավաղ, մեռ քարի վրա եմ ցանում,  
Ցանում եմ, ցանում՝ չի ծնում էլի,  
Էլի է անհույս իմ հույսը մնոնում,  
Անժառանգ մնում՝ փլվում եմ էլի ...  
Իմ բախտի ցավը այս է տակավին,-  
Բայց քո կարավը դեղ է իմ ցավին:  
— Կոկոն է, տե՛ր իմ,  
Չեմ ուզում խոցվես,  
Նա պիտի բացվի,  
Դու պիտի գոցվես:-

Միշթեքիչ ևն կուսանք Հայոց՝  
Բացված վարդեր՝ վարդիդ վայել.  
Տես՝ ինչ կասե գուսանն Հայոց, —  
— Զահել չառնես սիրտ իմ ահել.  
Լավ է, իրավ, վարդը կոկոն,  
Բայց երբ կիջնի քո երեկոն՝  
Փուշ կղառնա՝ կոկոն չառնես,  
Սրտիդ ձեռով փուշ կրոննես ...  
Նա կրացվի, դու կգոցվես,  
Նա կխնդա՝ դու կխոցվես,  
Նա գաղտնի էլ կվայելի, —  
Դու Հայտնի էլ պիտի Հալվես,  
Մարմինն օդ է Հուր ջահելի,  
Բերդ էլ լինես՝ պիտի փլվես,  
Քեզ կխայթե առանց փշի,  
Վարդ կղարձնե դարդն ուրիշի,  
Հազար տեղով դու կխոցվես,  
Նա կրացվի, դու կգոցվես,  
Այս, չգրկես վարդը կոկոն,  
Երբ եկել է քո երեկոն...  
Թեկուզ Աստծո արքան լինես՝  
Մազերիդ մեջ երբ ձյուն ունես՝  
Կոկոն չառնես՝ վարդ չի բանսա,  
Թոշնած կրծքիդ փուշ կղառնա,  
Դարդ կղառնա, ո՞վ իմաստուն,  
Զահել չտաս ահել մարդուն,  
Թեկուզ գահին քո փիրուզե՝  
Կոկոնն ինքը կոկոն կուզե,  
Պաղ գրկի մեջ դաղ ահելի,  
Զահելը չէ վաղն ահելի, —  
Նա կրացվի, դու կգոցվես՝  
Ահ ու մահով պիտի խոցվես:  
Կոկոնը թող, գտի՛ր, ո՞վ մարդ,  
Բացված վարդիդ բացված մի վարդ,  
Կյանքում ամենն իր ժամն ունի ...  
— Չէ՛, կոկոնն էլ իր Համն ունի ...  
Իմ պատշաճից ինձ մի Հանե,  
Քո Այծյամին մի սպանե,

Բայց մի գցել բախտի վրա,  
Հայոց գահն է բախտը նրա ...  
— Ասոր, տե՛ր արքա, դեռ շատ է ջահել,  
Խարվել է աչքդ, քեզ չի վայելի,  
Այծյամիս ի՞նչն է արքայավայել:  
— Իմ աչքով նայիր, ոչ թե ահելի ...  
Իմ աչքով, Հայր իմ, ոչ թե Հոր աչքով,  
Կարծես ծնել ես նրան Հրաշքով,-  
Տրդատ, քեզանից ինչ որ կծնվի՝  
Հրաշք կծնվի Մայր տաճարիդ պես,  
Բայց զլուխսգործոց՝ թոփչքդ արծվի՝  
Այծյամն է, մեկ էլ Մայր տաճարը վես,  
Նա ինձ չի թողնի անզահաժառանգ,-  
Կոկոնն ևմ ուզում, ինձ կոկոնն է կյանք:  
— Իմ կոկոնն ի՞նչ է, թե որ ուզնաս  
Քեզ վարդ կուղարկեն շահն էլ Շիրազից,  
Շիրազի Հազար վարդեր կունենաս՝  
Թեկուզ Իրանի շահի պարտեզից:  
— Համբա'կ, այս ի՞նչ ես ուզում ինձ ասել,  
Իմ Հարճի բույրը քե՞զ էլ է Հասել ...  
Ի՞նչ ... պարսկուհո՞ւց աշխարհ բերեմ  
Հայոց գահին գահաժառանգ,  
Ողջ ազգերին պիտի սիրեմ,  
Բայց իմ Հույսը Հայն է միակ ...

Դուրս պալատից,  
Իմ Հայրը չես:  
— Արքա՞ ...  
— Զէ՞՝ զուրս, ինձ կիսաշես ...  
Բայց ես կուզեի քո արտով լինեմ՝  
Քո զուստրը Հայոց արքաներ ծներ,  
Բայց թե բան է, չտաս սիրով,  
Սիրով կառնեմ, կառնեմ սրով,  
Սրով կառնեմ, կառնեմ զոռով՝  
Թե ինձ չտաս զու քո ձեռքով:  
Խենթը արքային չի տա աղջկան ...  
Հա՞-Հա՞ ... կոկոն է, - ծիծաղեց արքան:  
— Կոկոն է, - կրկնեց Տրդատը տրտում,  
Բայց սիրո մեջ էլ եղիր իմաստուն,

Ինչպես Հայրենի

Գահին արքենի:-

Նա տասնյոթ է, իսկ դու քառասուն:  
Ինձ մեծ պատիվ է, իրավ ևմ ասում,  
Կես թագ կլինի քարագործ մարդուս,  
Խենթը աղջկան չի տա արքային,  
Բայց ոտքերիդ տակ կմորթեմ որդուս,  
Արրահամի պես մատաղ քո գահին,  
Սակայն կին չեմ տա, իրավ ևմ ասում,  
Նա տասնյոթ գարուն, իսկ դու՝ քառասուն ...  
Իմ կոկոնիկը թե բացված լիներ՝  
Իմ թագավորի ցավը թող տաներ ...  
Բայց Այծյամի բան չէ, արքա,  
— իրավ, միտքս ուրիշ բան կա,  
Երազիս մեջ վիշտս կիսեց,  
Ինձ հետ ինքը՝ Աստված խոսեց.  
Ասաց՝ ով իմ Ծան-Սմբատ,  
Թե ուզում ես քո անհավատ  
Ցրված ազգդ տուն դարձնել՝  
Խլված Հողդ ետ վերցընել՝  
Ախուրյանդ ծովացընել՝  
Շինիր մի նոր եկեղեցի,  
Մի Հոյաշնն,  
Որ քեզ Հիշեն,  
Թե ոստանիկ, թե զյուղացի,  
Թե անեցի, թե շինական,-  
Շինիր շատ շուտ, ոչ անագան,  
Բայց թե ինչո՞ւ Համար շինեմ,  
Ինչո՞ւ Համար՝ էլ շիմացա,  
Աստծու բան է, ի՞նչ թաքցնեմ,  
Արքա էի՝ մի բուռ դարձա...  
Մի՞թե քիչ է, վայ իմ Հացին,  
Հազար ու մի եկեղեցին:  
Շինեն մի նոր զյուխզործոց՝  
Մի նոր տաճար՝ մի բերդ Հայոց,  
Քանզի այժմ, վայ մեր Հացին,  
Մեր ամրոցն է եկեղեցին,  
Խաչն է ճարը թրիս անճար.

Դե, կառուցեմ մի նոր տաճար»:  
Տրդատն խկույն գլուխ տվեց.  
— Գլխիս վրա, տեր թագավոր,  
Կամարները այնպես կապեմ,  
Ինչպես Հոնքերն աստվածամոր ...  
— Զէ՛, Հայր Տրդատ, էլ ի՞նչ խարեմ,  
Կուղեմ կապես ուկեծամի  
Հոնքերի պես քո Այծյամի,-  
Ճարտարապետս, գիտեմ, կա-չկա՝  
Կապում է կամարն ամեն մի վանքի  
Հոնքերի նման իր պերճ աղջկա ...  
— Արքա՛, խոսում ես ընդդևմ Երկնքի՝  
Մի թոնզրակեցի թոնզրոսի նման,  
Քրիստոսուրաց մի Սմբատի պես ...  
Կոկոն զբկելը մեղք է անսահման ...  
Երկրի Հայր՝ Երկրի դատերը կուղես ...

Ո՛վ Սմբատ արքա,

Ների՛ր ... մեղա իմ աստրծուն,  
Արքա ես, բայց մեղք ես գործում,  
Մայրը կընկնի քո ոտն ու ձեռ՝  
Մեղք է՝ կասի՝ մանուկ է զեռ,  
Մանուկ է զեռ, քո թայր չի.  
Գառ է, արծի՛վ, քո թայր չի:  
Արքա՛, զու էլ որ մեղք գործես՝  
Մեղքերի զուռն ինչպե՞ս զոցես,  
Կասեն՝ արքան թոնզրակացավ՝  
Գառ տեսնելով՝ առյուծ դարձավ ...  
Բայց կոկոնս թե վարդ լիներ՝  
Թող արքայիս ցավը տաներ ...»:  
Արքան մինեց, ինչպես մութ ամապ,  
Ասաց՝ Երթայս խաղաղությամբ,  
Երկնքից արծիսն Հայի մոտ իջապ՝  
Փքվեցավ Հավիկն, ինչպես Հնդկահավ,  
Չուղեց արծիսն Հետ սլանալ Երկինք,  
Հավն Հավի Հետ է լինում Երջանիկ ...  
Ու զուրս ելավ զլուխ տալով  
Մեծ տիսրությամբ Տրդատը մեծ,  
Սրտում իրավ մղկտալով,

Որ շատ փոքր է աղջիկը խեղճ.  
«— Բախտիա խոփը առավ քարին,  
Այս, թե վարդս բացված լիներ՝  
Կմայրանար Հայոց գահին,  
Հայ արքաներ պիտի ծներ,  
Ինձ էլ զրախտ պիտի տաներ ...»:  
Տիրեց Տրդատն ու աչերի  
Ամպր՝ գաղտնի արտասվում էր ...  
Երբ զուրս ելավ Տրդատը մեծ,  
Արքան վշտից մի թաս խմեց,-  
— Ես ևմ Այծյամի որսկան-վանդակը,  
Իրավ է ասում իմ խեղկատակը.  
«Ահել մարմինը մի ջահել մարմնով  
Զուր էլ որ խմեն՝ կդառնա զինով,  
Կջահելանա, ո՞ւր ես, Հայուհիս,  
Հասի՛ր, ժառանգ թեր անժառանգ գահիս:  
Ուր ես, Հայուհիս,  
Զուր ես, Հայուհիս,  
Հահերս վառող  
Հուր ես Հայուհիս»:  
Ասաց ու գոցեց սև աչքերն արքան՝  
Կոպերով գրկեց այն լույս աղջկան,  
Բայց ինչպես վարդի բույր թերող քամի,  
Թվաց թե՝ լսվեց շշուկն Այծյամի,-  
Այծյամն էր, թե ով երգում էր ձորում,  
Ու ձայնը մեղրի նման էր ծորում:-  
— Հազար ու մի վանք ունես,  
Հազար տարվա վառք ունես,  
Անի՛, կյանքով վերջ չունի,  
Երկնքում էլ վանք ունես:  
Արագածը թիկունքիդ,  
Անի, մեռնեմ երկունքիդ՝  
Ես էլ կգամ զինվորյալ,  
Որ ծով թերեմ շրթունքիդ:  
Վանա ծովդ քեզ թերեմ,  
Քո Սևանի պես թերեմ,  
Հարսանիքիս Տարոնում՝  
Հայաստանը քեզ թերեմ:

Որ ծովանաս ծիծաղով՝  
Քեզ կփրկեմ աղեղով,  
Անի՛, թե մի քար կորցնես՝  
Լացս կուլամ հեղեղով»:

Լսեց, հառաջեց, ամաչեց արքան՝  
— Եվ ես եմ ուզում այս սուրբ աղջկա՞ն ...  
Ես, որ իմ ձեռքով Անին ծախսեցի.  
Վայելքիս համար, ինձ վայելեցի.

Բայց ինչ անուշ է ձայնիկն աղջկա,  
Կարծես սոխակի բերանից կուգա,  
Կարծես երդումն է զինված սոխակի.  
Ինչ ձայն, բուրմունքն է վարդ ու մեխակի:  
  
Ես լինեմ արքան և նա՝ ուրիշի՞ն ...  
Լավ է՝ օձ դառնա զայիսոնն իմ վեհ՝  
Քան թե չլինես իմը երրեւ՝ ...  
— Ինչքան լավ կա աշխարհում,  
Ինչ կարավ կա աշխարհում  
Արքայինն է լավի հետ  
Ինչքան ցավ կա աշխարհում,  
Զէ՛, այս լավիկն էլ թող ցավս տանի,  
Եվ էլի հիշեց դրախտը մարմնի,  
— Մենության մեջ էլ հեղ ու ամոթխած՝  
Այնպես էր լողում, որ կիրքս դողաց,  
Իմ արյան ամեն մի կաթիկն, ասես,  
Մի ցուլի փոխվեց ու ցուլի փոխված՝  
Քիչ մնաց զետը նետվեր ձկան պես ...  
Այն օրից Հարճս մզկիթ է թվում,  
Տաճար է դառնում Այծյամն իմ աշքին,  
Այն օրից մարմար մզկիթը փլվում,  
Տաճար է տենչում իմ աղոթք Հոգին.  
Ինչ էլ որ լինի՝ կտիրեմ կույսին,  
Բայց մեղքը սրտիս կոկորդն է բռնում...»:  
Եվ սպասելով կաթողիկոսին,  
(Որ Բյուղանդիայից չէր վերադառնում),  
Ուզում էր քավել գաղտնի մեղքը չար,  
Կառուցել տալով քավող մի տաճար  
Ու դեռ կսպասեր, զեռ դրսից անամակ՝  
Տաղնապաթաքույց մի Հանգստությամբ:

Ու ծափ տվեց արքան իսկույն,  
 Կանչեց Համհարդ Համազասպին.  
 - Ամրո՛ց կանչիր Պահապունուն,  
 Ամրոցապահ իմ պարսպին:  
 Բայց կաց ... կարծես ինքն է գալիս,  
 Քայլող պարիսապ Պահապունիս,  
 Սակայն ... ի՞նչ մուժն աչքերում,-  
 Սա, որ յիքն է միշտ խոյանքով,  
 Միշտ աղքապահ ավետիքով»:  
 Իրավ, եկավ գուժեկանի պես  
 Չորավարը խրոխտ և Հեղ.  
 Մոռացավ զյսի խոնարհումն անգամ,  
 Մի ձեռը դրեց սրի դաստակին.  
 - Տե՛ր արքա, - ասաց, - ի՞նչ անուն տամ  
 Այն սևագլուխ քո իմաստակին:  
 Քո զյսի վրով, մեր զյսի վրով  
 Մախել է Անին մի գաղտնապրով»:  
 Արքան իսկույն գույնը զցեց.  
 - Քեզ ո՞վ ասաց ...  
 - Այս գիրն արդար:  
 Թագավորը թուղթը բացեց,  
 Գիտեր գաղտնիքն, էլ ի՞նչ կարդար ...  
 Բայց թե ահից մեկ էլ կարդաց,  
 Իրը աչքին չՀավատաց.-  
 - «Ողջ՛ւյն Բյուզանդից, տեր սպարապետ,  
 Կայսեր ողջույն քեզ մեր խաչեղբորից,  
 Մեծ խորհուրդ ունի իմ գիրը քեզ Հետ,-  
 Ինչ է՝ ձեր քաշենք մեր սար ու ձորից,  
 Էսօր-էգուց է՝ արարը կգա,  
 Արարը չգա՝ սեղուկը Հո կա,  
 Պարսիկը կգա իր խլած Վանից,  
 Մեզ դուրս կվանե մեր մի բուռ տանից,  
 Քանզի Անից դուրս է մեր երդը,  
 Իմ Արշարունին, քո բերդ-Ամրերդը,  
 Մեր կալվածքները դուրս են Անից,  
 Դողում է գաղտնի սիրտս այս բանից.

Անին էլ շտանք՝ մեր Հողը կառնեն,  
Մեր ամրոցների թկից կրանեն,  
Վայ կդա զբսի մեր սար ու ձորին,  
Թե Բյուզանդիոնը չկանգնի մեզ տեր...»:  
Թե իրավ լինի՞ աչքը կհանեմ,  
Աչքիդ կայծակող ցավն էլ կտանեմ,  
Բայց իրավն ասեմ,  
Որ սա մի նսեմ  
Ճերյուրագիր է իմ աչքին թվում -  
Վաղվաղակի է քո սիրտը ցավում,  
Տե՛ր սպարապետ, դեռ վաղվաղակի  
Մի՛ շամփորե սիրտս, մի՛ տա կրակի ...  
- Հապա այս ո՞ւր է՛ չի վերադառնում  
Մեր Հոգու կանթեղ ամենագետը,-  
Թե գաղտնյաց ահը ոտքերն է բռնում,  
Խելքի բեր մանուկ մեր թագավորին,-  
Աւել, բայց խելքով մի մանուկ է դեռ,-  
Իմաստությունդ թող որ խստանա,  
Խելքի բեր նրան թեկուզ քո ... թրով.  
Թող Բյուզանդիոնին Անին խոստանա,  
Ունայնակրակ մի գաղտնագրով,  
Որ խաչեղբայրը տեր կանգնի խաչիս  
Թուրք ու թաթարից մեր ազգը պահե,  
Օրհնությունս քեզ, դու թույն ես տալիս,  
Քո կուրծքը թող ինքն աստված դրահե,  
Խելքի բեր թե ոչ՝ թուրքերը կգան».  
- Այս ի՞նչ է Հաջում, - մոնչաց արքան,  
Եվ սա չի վախում,  
Անին է ծախում,  
Արքան է մանուկ՝ աստծուց չի վախում,  
Կասկածեց Հակա սպարապետը  
Ու կասկածների ծով ծանրությունից  
Կարծես Հոնքերի կամարներն իջան,  
Ու ձեռքը վառվեց մորուքի ձյունից՝  
Մի պահ կասկածի լույսերը չիջան,  
Ու խիղճը շխոսեց իր Աստծո ահից,  
- Մի՞թե մարդ կընկնի իր Աստծո գահից ...  
Ու խաչակնքեց, արքային նայեց՝

Արքայի աշեղ մեղքից անստեղյակ,-  
Արքայի Հայացքն, ինչպես բու, վայեց.  
- Բայց տե՛ր զորավար, թե՞րդ ես, թե՞ Հյուղակ,  
Թշնամուս ինչո՞վ պիտի դուրս վանես...  
Հեզնեց թագավորն իր թուր-Հավլունուն:  
- Տե՛ր իմ, թե զորաց ոգուց Հարցնես՝  
Մեր ոգին թերդ է, վայ մեր թշնամուն:  
Իմ զորքի ոգին թերդ է բյուրասպի.  
Բայց թիվն Հյուղակ է, այս է չարաղեստ,  
Հայոց թիվն Հայոց վերքն է անսպի ...  
- Իրավ, անսպի, տեր սպարապետ,  
Ինչ լավ ասացիր,- Հառաջեց արքան,  
Հայոց թիվն Հայոց վերքն է, որ այսքան  
Դարեր գտուել է վերքն Հայաստանի,  
Այս մի բուռ թվով արքան ի՞նչ աներ...  
Ի՞նչ կտակ, արքան քո ցավը տանի,  
Ինչպէս մի գետով մի ծով դուրս վաներ ...  
Ուրիշ ի՞նչ աներ, ուրիշ ելք չկար ...  
Թե չէ թշնամին ծովի պես կուգար՝  
Թե քո մի բուռն էլ քո արքան վատներ ...  
Ուրիշ ելք չկար, բայց ի՞նչ եմ ասում,-  
(Քիչ մնաց արքան ինքն իրեն մատներ...).  
Իրավ, ազգերի այս խոլ քառոսում  
Ի՞նչ աներ մի բուռ Հայոց ազգն, ասա,  
Իր թվից դարեր արյուն է Հոսում ...  
Հարսներից պիտի բալասանն Հուսա,  
Թե ծներ ... ծով են ազգերը բազում,  
Մնեք՝ ծովանա գետն Հայոց բազկի,  
Որ կու չգնա ոչ մի ծով ազգի,-  
Ուրիշ ելք չկար մեր ազգին անօդ»:-  
Զորավարն ապչեց՝ «Այս ի՞նչ է ասում,  
Ի՞նչ ելք, այս ի՞նչ է արել սա արդյոք,  
Կաթողիկոսից ինչո՞ւ չի խոսում ...  
Բայց արքան ճմլեց աչքերը նամետ,  
- Թվով են Հաղթել մեզ մեր թշնամիք,  
Զորքն է զորավարն, ով սպարապետ,  
Միայն մեծաթիվ ազգն է անառիկ,  
Մեծաթիվ ազգերն իշխում են Հավետ ...

Երբ աշեղասաստ մի գույժ է գալիս՝  
Երբ Հսկա մի ազգ ինձ աշ է տալիս՝  
Հայոց թվով է խելքս Հաշմանում, -  
Ու չեմ իմանում, թե ինչ եմ անում ...  
Այս վերքով է Հայն ընկնում մեղքի մեջ,  
Այս վերքն է դարեր վասակներ ծնում ...  
Վերք, որ անբույժ է ու չունի մի վերջ, -  
Ինչքան էլ Հայոց կուսանք Հարսնանան,  
Հայոց քարերն էլ թեկուղ մայրանան,  
Թեկուղ մայրանան սարերն էլ Հայոց՝  
Թեկուղ մեկի տեղ միշտ յոթը ծնեն՝  
Հայոց թիվն էլի կմնա ... վայոց,  
Էլ Հայոց մեծերն այժմ ի՞նչ անեն ...  
Բայց կանչել կտամ կաթողիկոսին,  
Թե իրավ լինես՝ թող դատե շղթան, »  
Բայց Հավատում եմ իմ Հոգու լույսին,  
Նա սուրբ էր, ինչպես իր Հողը Գողթան.  
- Զդատես ... Ես իմ թրով կդատեմ ...  
- Տե՛ր սպարապետ, թրերդ շա՞տ են,  
Բյուզանդիին պահիր, -գունատվեց արքան, -  
Ի՞նչ միայն Բյուզանդ, թուրքն է խոյական,  
Սեղուկն էլ աշա ինձ աշ էր տալիս,  
Թե Բյուզանդի Հետ Անի ևմ գալիս ...  
Բյուր ոսոխ ունի Հայաստանն իմ խեղճ,  
Մենակ, բայց դարեր զլուխ Հանելով,  
Մանուկ Հայաստանն այս դեերի մեջ՝  
Բյուր-Հագար թրեր Հեռու վանելով՝  
Ապրել է, Հայր իմ, ու կապրի անվերջ, -  
Երբ մերը մանուկն ուրացել վախսից,  
Իրեն է փրկել թրի երախսից,  
Մանուկ Հայաստանն ապրել է, կապրի,  
Միայն թե մարդը միշտ մնար բարի ... »:  
Ու խուլ Հեկեկաց արքան մանկան պես,  
Մտքի մեջ դժնի իր մեղքը լալով:  
- Ի՞նչ կա, տե՛ր արքա, այս ի՞նչ եղավ քեզ:  
- Ոչինչ, մի բեկվիր զու ինձ մեղքալով,  
Այս երկու գիշեր այնպես ևմ զգում,  
Թե մի կոխի կա այժմ իմ Հոգում:

— Կանչել տուր, տե՛ր իմ, թագուհուն սարից ...  
— Զէ՛, կնկա բան չէ, որ նրան կանչեմ,-  
Վիշտս հրարուխ կհանեք քարից ...  
Է՛, իրավն ասեմ, ես էլ պտուղ չեմ ...  
Հայր իմ, բեկյալ եմ, եկ զնանք որսի:  
— Գնանք, տե՛ր արքա, թե սիրտդ կուզի,  
Դեռ որսանք կյանքը՝ մենք էլ քանի դեռ  
Այն մեծ որսկանի որսը չենք դառել,  
Այն կույր որսկանի, որ ոչ խիղճ ունի,  
Ոչ ժամ-ժամանակ, ոչ շունչ-կենդանի,  
Ոչ աղերսանքի խոսք է հասկանում,  
Ոչ էլ զեթ մի օր հանգիստ է մնում,  
Ոչ կշտանում է իր անթիվ որսից,  
Ոչ ջահելին է խնայում հերսից,  
Ոչ ահելների աղոթքն է լսում,-  
Ահել թե ջահել՝ հավասար որսում,  
Որսում է, որսում ուշ թե անագան,  
Ոչ արքա գիտե, ոչ էլ շինական,  
Ոչ գութի կտոր ունի սև սրտում,  
Ոչ միշտ ուրախ է, ոչ էլ միշտ արտում,  
Ոչ թույն, ոչ դավն են զորքերը նրա,  
Ոչ էլ զենք-զրահ  
Ունի իր վրա,-  
Երթանք՝ իր որսը չենք դառել քանի,  
Քանի չենք ընկել երախը նրա,  
Անտակ երախը անմեռ որսկանի,-  
Որ զիտեմ, մեկ օր մեղ էլ որս կանի...  
Բայց սեազլուխ անզլուխը կույր՝  
Թե ծախած լինի՝ իր զլուխն ինձ տուր ...  
— Իմ զլուխն էլ քեզ՝  
Թե իրավ լինես ...  
— Այս, աստված չանի,  
Թե իրավ լինի:

## ԳԼՈՒԽ ՏԱՐԱՆՎԵՑԵՐՈՐԴ

1

Դանդաղ ցամաքող աղբյուրների պես,  
Աղբյուրների պես աշնան ցամաքող  
Էլ չէին գալիս այն գոռող ու հեղ  
Քարավանները Անին ամոքող,  
Աշխարհն ամոքող այն բյուրաբարիք  
Քարավանները մեր Հայաշխարհի:  
Քանզի ցամաքող երակների պես,  
Կամուրջների պես՝ Հեղեղից քանդվող՝  
Խլված Հողերով Հայոց աղեկեղ  
Հառաչում էին ճամփեքը փակող,-  
Սակայն այս ի՞նչ է իր խուլ զողանքով  
գաղտնի ծափ տալիս...  
Այս ո՞ւմ երկրից է քարավան գալիս ...

2

Ելած Բյուզանդից, ոստանից Հունաց, դեպի ոստանը մայր  
Հայաստանի,  
Ուղտ ու ձիերի մի ճոխ քարավան արևից առաջ Հասավ  
մայր Անի:  
Հայոց նեղն ընկած արքայից կայսրն արքայակնիք կտակն  
առնելով՝  
Այս ողջ քարվանը նվեր էր ճամփել՝ արքայի կոկորդն ամուր  
բռնելով ...  
Ամեն մի ուղտի կուրծքն էր զարդարում ոսկե զանգերի մի  
ողջ զբասանդ,  
Ճերմակ թևերը բացող կարապի նման ծփում էր զբոցը  
ճերմակ:  
Ամեն մի ազգից մի կույս էր բերում, մի Հրեշտակ էր բերում...  
արքային,  
Նրան, որ կուգեր, որ ծաղկունքը ողջ մի կույս զառնային՝  
իր գիրկը գային:

Առաջին ուղարք՝ նառն արքայաբայլ, որպես գանձերի գանձն  
առած կրծքին՝

Ամենաշքնաղ կույսին էր թերում ու ոսկե մի թագ այն կույսի  
զրկին:

Նառի ետևից գալիս էր վեհը՝ կաթողիկոսը, ճերմակ ջորիով:  
Աչից քուրք հազել՝ ծագել էր աշխից երևար ծածկել վշտի  
վեղաբով:

Քանդի իր մեղքի քարամանն էր այս, մեղք, որ մայրացակ  
մեղքին արքայի.

Մախել երևուն արծաթով Անին՝ վերադառնում էր ոգով  
ամայի ...

Նրա ետևից սև փիղն էր գալիս, մի արքայաշուք ծիրանի  
հազին,-

Մեջքին թերում էր մի այլ գեղուշու, ինչպես սև ամայն էր  
թերում յուսնյակին:

Կույսն այնքան լավն էր, որ թվում էր, թե լույս հրեշտակ էր սև  
փղի վրա՝

Փիղն անգամ կուզեր զլուխն ետ ծոել և անվերջ խմել հայացքը  
նրա:

Կույսն ուներ բռնած մի ոսկե սինի՝ վրան աղ ու Հաց ու սեղմած  
կրծքին՝

Երբ Անի հասան՝ ծագուց ապշահար՝ Հրաշք թվացին  
պարիսպներն աչքին:-  
— Ի՞նչ են, - չչնջաց, - պարիսպներն իմ Հոր, զո՞ր թյուզանդիոնի  
պարիսպները զո՞ր,

Հայոց պարիսպներն առյուծ են չքնաղ, այնինչ գայլեր են  
պարիսպներն իմ Հոր...  
Եվ Համբավն հասավ Հայոց արքային, թե մի քարվան է  
ճերմակաղրոշ,

Եվ թագ է թերում արքայիդ ընծա, և աղ ու Հաց է թերում  
անորոշ ...

Քառասուն կույս է թերում քեզ, արքա

Մեկը մարգարիտ, մյուսը՝ ոսկյա, -

Բոլորն էլ ընծա Հայոց արքայիդ, ողջ քարավանը ընծա է  
գահիդ,-

Եվ մագաղամյա մի Հույժ գաղտնապիր՝ կայսրն հղում է միայն  
արքայիդ...

Ու գաղտնի կարգաց գաղտնապիրն արքան և իսկույն դեղնեց

մագաղաթի պես,

– Ողջույնին իմ որդյանկ Հայոց Սմբատին, ողջ Բյուզանդիոնը  
ողջունում է քեզ.

Ընկալու կոտակու արքայակնիր, քանի կենդան ես՝ կմնաս գահիո.  
Քեզ թագաղրեմ արքայից արքա, վայելիր, Էլ չեմ ապասի մահիդ:

Քանի կաս՝ քոնն է Անին մեծամայր,

Դու մեծ Բյուզանդիս փոքրիկ խաչեղբայր,

Որ դեռ վայելես աշխարհն աշխարհում՝

Ահա նորից եմ քեզ թագաղրում,

Այս կույսերն էլ քեզ.

Քեզ քո Հարմի պես:-

Պարսիկ աղվեար քո աշքը Հանել՝

Լոկ մի զմբուխտ է քեզ արմադանել,

Ես՝ մի ողջ Հարեմ, քոնն են այս՝ իմ լույս

Քառասուն աղօփի աղջիկներն այս կույս»:

– Ի՞նչ, Հարեմ պահե՞մ, – ծիծաղեց արքան, –

Ինձ պարսիկ շահ՝ է կայսրը դարձնում,

Կթաղե՞մ մեղքս ծաղիկներն այսքան ...»:

Եվ ահա կանչեց կաթողիկոսին,

Մինչև ուշ զիշեր խոսեցին վեճով.

– Չերեաս, տե՛ր իմ, քո ... բարբարոսին՝

Չերեաս նրբեք՝ քո ծախսած խղճով՝

Իմ Պահապունուն, քանդի բացել է գաղտնիքու նրան

Քո ծախոյած ծառան, թաքնվիր, կամ թև չբավիր քավարան ...

– Բացե՞ղ՝ է, ասիր, իմ երկնաթաքույց գաղտնիքը միթին:

– Հրամայում եմ՝ չերեաս իմ սուրբ սպարապետին;

Ահա քո քերած քո կայսեր ոսկի քարավանն էլ քեզ,

Թաքնվիր առայժմ, կատաղած է նա ելման ծովի պես,

Թաքնվիր մահից, մինչև ծնրադիր քո մեղքը քավես ...

– Էլ ե՞րբ, տեր արքա, կոտա՞կ ես կոտա, որ էլ չդավես:

– Տա թե շտա, ինձ Հայատաւ,

Իմ Համբունին քեզ մահ կոտա,

Նա, որ սպանեց կայսեր դեսպանին,

Քեզ չի խնայի, ծախսել ես Անին.

– Դու ես ծախսել ...

– Լոփ'ր, չնահայց ...

Զքվիր զայրույթից իմ առյուծաղայր,

Իմ մեղքը ծնվեց քո դժնյա մեղքից.

Ներս խուժեց մեղքդ իմ սրտի ճեղքից,  
Ճեղք, որ բացվել էր Հայոց մեծ ազգին  
Թվի փոքրությամբ, վերքով Հեք բազկիս  
Որ ձեռ չի քաշում դավով իմ գահից ...  
— Քո իմաստությամբ, արքա իմաստուն:  
— Հոփ'ր, շնահայր, էլ Հայր չես ինձ դուն ...  
Ով արծաթարենը, ընչափաղց աղվես,  
Աղվեսաղրոշմ պիտի խարանվես,  
Զուր վերադարձար, ինչո՞վ ես պակաս  
Այն Սևնեքերիմ քո Արծրունին,  
— Տե՛ր արքա, աշխարհն ըմպիդ քանի կաս:  
Աշա քեզ ընծառ քառասուն Այծյամ՝  
Թխածամ, աշեղ, մարմնեղ, ուկեծամ,  
Մեկն Հեղենուհի, մյուսն Հնդկուհի,  
Մեկն արարուհի, մեկը վիրուհի,-  
Մեկը Հրեշտակ, մեկն աստվածուհի,  
Մեկը կապուտակ, մեկը սեորակ,  
Մեկը մանանա, մյուսն օշարակ,  
Մի մեղքիդ Համար քառասուն ծաղիկ,  
Ի՞նչ պիտի տանես կյանքով անցողիկ,  
Մեղք-դառնությունդ դեղահատի պես  
Քաղցր կուլ կերթա կույսերով այս Հեզ ...  
Կուլ տուր, մի վախիր, Հոնքդ մի կախիր ...»:  
Բայց արքան միմնեց նոր շիկնող մեղքով,  
— Ինչպէ՞ս ետ խլեմ իմ թուղթն ... ո՞ւմ ձեռքով:  
— Վայելքի ձեռքով, վայելիր, արքա,  
Զուր ես փոշմանում, մի ապաշավիր,  
Աշխարհակործան զորքերով կգա,  
Իր զորքը ծով է, վայելքով քավիր,  
Իմ աչքը վկա՝ ծով է իր զորքը ...  
Կոխիր ու անցիր իմ ... մեղքի զորգը ...  
Ի՞նչ մեղք, չեմ ծախել, խարել եմ կայսրին  
մի պատառ թղթով.  
Ինչպես մահմեղը իր ումակ ազգին խարեց դրախտով,  
Բայց քեզ չեմ կարող, չեմ կարող խարել,  
Չեռ քաշե, արքա, քո թուխս-վայրենուց,  
Չի կարող նա իմ բաժակը թափել՝  
Կյանքիս բաժակը՝ իմ արյան գինուց,

Իմաստուն եղիր, ողորմած արքա  
Քեզ էլ ողորմա, ոչ թե ամենքին,  
Թե զա Բյուզանդը՝ ևս ուզես՝ կգա,  
Ի՞նչ թուղթ, աչքակապ ամազ է իր աչքին,  
Թե զա ... էլ ինչո՞վ քո ցավը տանեմ,  
Երեք բյուր զորք գետ է ծովի գեմ,  
Ծովի գեմ ջուր է Հույսը քո բազկի  
Մեր խաչնորայրն է Հույսը մեր ազգի,  
Քրիստոնյա է նա էլ մեզ նման,  
Մենք սահմանավոր, նա միշտ անսահման  
Անին էլ չառնի - մեր Հողը կառնի,  
Իմ կարգածքները դրաւմ են, արքա,  
Արշարունիքիս թկից կրոնի.  
Քո Հայ գետի գեմ Հույն ծովով կգա:  
Չորրորդ կգա բյուրաբազում,

Յոթը բյուր է թուր տեսզավոր,  
Ութը բյուր է վերտափորը,  
Յոթը բյուր է նիզակավոր,  
Ութը բյուր է բերդափորը,  
Յոթը բյուր է ազատանին,  
Ութը բյուր է վաղրենորը,  
Հազար բյուր են՝ կուտե Անին,  
Հետն էլ կգա փղավորը,  
Մաշ կրերեն Հայաստանին  
Կասի՝ դու ես մեղավորը:  
- Իմացա, Հայր իմ, էլ բավ է, լոիր,  
Մեջքիս Մասիսը էլի մի ծոփր...  
- Բայց խաչնորայրս անհապատը չէ,  
Թուրք-պարսիկը չէ, որ ազգը ֆնջն ...  
Կիշնին, թե քո թուղթը ևս ուզես ...  
- Զքվի՛ր, ասի, էլ իմը չես ...  
Թեկուզ Հազար առաշապիկ՝  
Այս ծով մեղքը ինչպե՞ս քավել,  
Օձ դարձրիր դու իմ լորտուն ...  
Բայց գալիս է իմ Հավլունին,  
Գլուխող առ, չքվիր խակույն,  
Զքվիր, ինչպես Վասակ Սյունին  
Մեծ Վարդանից անագորույն»:

— Իրավ, անխելք է քո բարբարոսը,-  
Ասաց ահարեկ կաթողիկոսը,  
Նրա ահից էր, որ չէի գալիս՝  
Դև-կայսեր մոտ էլ կարուտդ լալիս,  
Որ չէի գալիս՝ ահից էր նրա  
Բայց քեզ չեն փրկի իր զենքն ու զրաշ ...  
Եվ Անին թողած ահից մշուշվեց,  
Իր կալվածքների խորքերը քաշվեց,  
Թողած արքային, որ ապաշավում՝  
Զղջման աղոթքով իմ մեղքն էր քավում.  
Մի աչքը դուռը, մի աչքը սրտին՝  
ԱՀով կսպասեր սպարապետին,  
Երբ ձեռն առած թուր-Հավլունին,  
Պալատ մտավ Պահապունին  
Եվ Հոր նման, առանց ահի,  
Ուղիղ մտավ խուցն արքայի,  
— Բարի լինի գիշերն, ասավ:  
— Հայր իմ, իրավ, բարին Հասավ.  
Որսի էինք երբ գնացել,  
Մեր որսկանը, Բյուզանդը չար,  
Մեր սահմանին չի մնացել:  
— Ի՞նչ, խուժե՞լ է դեն ապիկար:  
— Չէ, ևս է քաշվել, չքվել սահմանից:  
— Իրա՞վ, - զարմացավ զորավարն Հոկա, -  
Ասել է քաշվեց աման Հայաստանից ...  
— Քաշվեց ու դաշնեց, որ էլ ևս չգա.  
Քաշվեց Բյուզանդի զորքը տարորեն,  
Զրվեց խաչեղրայր կոշյալն անօրեն:  
— Ցնծում եմ, տե՛ր իմ, օրհնյալ լինես դու,  
Բայց թե՝ իրավ է՝ թող աղքն էլ ցնծա:-  
— Կցնծա... Հասավ դարը Հայ մարդու,  
Բայց նա, որ մահ էր բերում ինձ ընծա,  
Նա, որ ցնորյալ՝ ուզում էր պոկել  
Ողջ Հայոց լեզուն Հայոց բերանից,  
Նա Հիմի կուզե իմ վերքն ամոքել՝  
Քաշելով շան թաթն առյուծի բնից,  
Այնպես ևս քաշվեց, որ մեկ էլ չգա ...»  
— Բայց ի՞նչ Հրաշքով ևս քաշվեց, արքա:

— Հրաշքն Հարցըրու Հայոց բղեջխից,  
Մեկ էլ, ասում է, եկավ ու գնաց ...  
Բյուզանդն Հոգմի պես եկավ իր Հողից,  
Եկավ, փրփրեց, բայց մնաց-մնաց՝  
Հոգմի պես եկածն Հովի պես գնաց:  
Եկավ ծովի պես, Հովի պես չվեց՝  
Ասես իր լացող մորից կանչըվեց.  
Ասես Հրդեհ էր ընկել իր երկրում:  
— Բայց ո՞ւր է՝ քամին մոխիր չի թերում,  
Էլի ապշանքով Հսկան Հարցըրեց,  
Արքային վանդակ զցեց վերրստին.  
Արքան Հսկայից աչքերը փախցրեց ...  
— Քաշվեց, բայց վերքը թողեց իմ սրտին:  
— Ի՞նչ վերք, տեր արքա, — Հարցըրեց Հսկան:  
— Ուրիշ բան չկա,  
Վիշտ մի ... աղջկա,  
— Ի՞նչ աղջիկ, սակայն:  
— Որ ժառանգ ծնի ...

Անժառանգ դշխոս ինձ կերծանի ...  
Հարճս պարսկուհի, թագուհիս՝ չըեր ...  
Աչքս վրան է Տրդատիս դստեր:  
— Մեղք է, տե՛ր արքա...  
— Դև լավ, եկ խմենք, —  
Որ դեր քաշվեց, եկ գավեր քամենք,  
Մով պիտի լայինք՝ թե ետ չքաշվեր.  
Քառասուն տարվա Հարկը թե Հաշվեր ...  
Քաշվեց, օթհնություն  
Հայոց Աստղծուն»:

Եվ արքան ինքը լցրեց իր զինին,  
Մի աչքում մեղքը, մի աչքում Անին,  
Խմեց, որ խեղդե մեղքը խորական,  
Իր գաղտնի մեղքը, թենկուղ մի վայրկան,  
Թենկուղ մի պահիկ, զեթ մի ակնթարթ, —  
(Չէ՞ որ արքան էլ մարդ է, մարդ է մարդ ...),  
— Խմիր, թող ապրի իմ Թուր-Հավլոնին;  
— Թող արքան ապրի, որ ապրի Անին՝  
Վերջին ամրոցը իմ ու քո Հույսի,  
Տենչը խաչնդրայր այն բարբարոսի ...

Ասաց Հավլունին և ուզեց քամել  
Ողջ գինին, որպես արյունը չարյաց.  
— Մերը շա՞տ քաղցր է, որ կողեն խմել  
Թրաբերանով անհամատ արյաց,  
Ու թրաբերախ Բյուզանդի խաչով...  
Ասաց ու խմեց գինին Հառաչով,  
Բերանը սրբեց, աստված իմ, ասավ,  
Այս անգամ, լավ է, արյուն չտեսավ՝  
Միայն այս անգամ՝ սուրբ Հայաստանի ...  
Ու խաչակնքեց Հոկան ծերունի:  
— Բայց ի՞նչ հրաշքով բարության փոխավեց  
Չար անգթությունն իր բյուրաժանիք,  
Նա, որ սահմանիդ այնպես ամրոխավեց,  
Ինչպես դժոխքի մի ժանտ Հարսանիք ...  
— Այժմ Էլ սուզի մեջ ընկապ հրաշքով,  
Հայր սպարապետ, - չքմեղեց արքան,  
Հրաշքին նայիր մեր Աստծու աչքով՝  
Հրաշքն Հոների զորքն է խոլական,  
Հրաշքն Հոներն են, վրա են տալու ...  
Իր ու մեր Աստծուց վախեցավ այնքան,  
Որ սիրու չի անի նորից ետ գալու,  
Գուցե խումել են սև Հոներն արդեն,  
Հոնաց արյամբ է նա Հագնեալու,  
Իմ Աստվածն արավ, որ իրար մորթեն,  
Բաց թողնեն կոկորդն իմ Հայաստանի,  
Իմ ու քո կոկորդն ու թող Հորդանաւ՝  
Հոնաց արնագետն՝ Հոնաց զորք տանի ...  
Որ Հայոց արյունն Հայոց մեջ մնա,  
— Ամեն, տեր արքա:  
— Ամենքս Հայրենուն ...  
Այս անգամ օրհնենք Հոնաց վայրենուն,  
Քաշվեց դարավոր քաշելիքն Հայոց,  
Ազատ չունչ քաշեց սահմանն իմ Տայոց:  
— Բայց ո՞ւր է, ներիք, ո՞ւր է, տե՛ր արքա,  
Հոն չեփորից էլ մի շշուկ չկա ...  
Իրավ, տե՛ր արքա,  
Այստեղ բան մի կա,  
Զլինի՞շ շարը մեղ քուն է դնում

Եվ մեր Համբուրած իր խաչն է զինում,  
Հոռմի բուրգառն Հեղում վասողով.  
Որ Հանկարծակի Հարձակվի շուտով:-  
Մեր ուժն Հոտոտեց մեր սահմաններից՝  
Քաշվեց, որ զինվի ավել-առավել.  
Որ ես գա, տեր իմ, ես կդա նորից,-  
Կոահող միտք դեռ չի պառափել՝  
Թև Գետաղարձը չի բացել ճամփան,  
Անին կռակած գրով իր անրան՝  
Արդեն մեզ Հայտնի իր գաղտնազրով,  
Որով ... նահանջեց Բյուզանդը սիրով,-  
Այս ետ քաշվելլ դավ է սպառնում ...  
- Էլ ի՞նչ ես, Հայր իմ, կոկորդս բռնում,  
Նա թողեց, Հիմի դո՞ւ կուզես բռնել,  
Աշխնչ էլ չկա, մեր բախտը վկա,  
Բյուզանդի Հաշիխն Հոներն են խառնել.  
Եղման ծովի պես խուժել են նորա,  
Համբավն այսպես է ինձ սուրհանդակվել,-  
Հոների արքան Բյուզանդ է ուզում,  
Ինչպես Բյուզանդն էր Անին երազում,-  
Ի՞նչ երազ, երբ որ գալիս էր զորքով.  
Եվ Հիմա Հոներն իրենն են ուզում ...  
Էլ ի՞նչ ես վենտրում Հրաշքն ապշանքով.  
Թե՞ կոխվ կուզես, Հայր իմ զորապանձ,  
Էլ ի՞նչ ես Հարցնում, օրհնիր, որ գնաց ...  
Կենացդ ... բերդ ես դու իմ ամրոցին,  
Հայոց ես ... վաթսուն վերքերդ վկա,  
Արդար էր զարկդ անարդար օճին,  
Եվ տես՝ Բյուզանդի տրտունջն էլ չկա,  
Որ սպաննեցիր կայսեր ... դեսպանին:  
- Ի՞նչ կայսր, տեր իմ, Հայտապան առա,  
Երասաննեցի ապերտասանին,  
Որ գեթ իր թուղթը իմ սրին անսաա:  
- Կանսա ... էլ նոր գոյշ չի սուրհանդակվի.  
Հայտաստան բերդ ճամփեն կփակվի  
Մեռյալ դեսպանիդ բերանի նման,-  
Դալարի մեռքդ, - ծիծաղեց արքան,  
Թող ճագեր բերե քո այս ճամփանին ...

Աչքերը քաջից փախցրեց, սակայն:  
... ինչպես գողություն արած պատանին  
Զի կարող նայել Հոր աչքերի մեջ,-  
Այնպես էլ արքան իր աչքերը մութ՝  
Սպարապետից փախցնում էր անվերջ.  
Քանոյի աչքերը ճիշտ են, լեզուն՝ սուտ ...  
Բայց հսկան մի չար բան էր կռահում  
Այս Հանկարծակի ետ ընկրկումից:  
- Չլինի՞, իրավ, մի բան է պահում,  
Նփոթվում լեզուն՝ ինչ-որ հսկումից՝  
Լեզուն գոց սրտի դուռը չի բացում.  
Ինչ-որ գաղտնիքի դռներն է գոցում.-  
Որ մեջ է զցում Այծյամ աղջկան ...  
Զի՞, ժանտ Բյուզանդիոնն անմիտ չէր այնքան,  
Որ ինչ-որ խաղի Համար գորք Հաներ,  
Որ թեկող մուկ ու կատվի խաղ չաներ ...  
Դեռ չհազեցած՝ նա ետ չէր քաշվի.  
Դեռ ետ չէր չվի իր ահեղ գորքով.  
Մովի պես եկածն արյան ծարավի,  
Մարտավ չէր քաշվի, չբվի ... Հրաշքով:  
- Ի՞նչ հրաշք, դավ կա,  
Այն բանը վկա,  
Որ Հայրենիքի բախտը գուշակում՝  
Կաթողիկոսին չի նշավակում  
Այս աստվածավախն ամենակարող,  
Ի՞նչ կարող ... ոսկե գահին բուռ մի Հոգ:;  
Այսպես մտածեց ու նոր կասկածեց,  
Ու խոր կասկածեց հսկան իմաստուն.  
- Չլինի՞ վախն է խելքը գողացել՝  
Հանել է շավդից սարսափն այս մարդուն,  
Չլինի՞ սա է ճամփերը բացել՝  
Չքումի ճամփեն, ի՞նչ դավ է արդյոք,  
Թե՞ ցավը դավն է կաթողիկոսի,  
Հապա ինչո՞ւ է Հանկարծ ծանրահոգ  
Հառաջում է ... իբր կարուտով կույսի:  
Ի՞նչ կույս ... թե ուզե աներ անունով  
Մեծ Տրդատին էլ կդարձնզի զինով,  
Թագուհուն խոսքով խելքից կհանի,

Թագավորական մի հրամանով  
Հաղպար կույս Այծյամ զիրկը կտանի ...  
Բայց աչքերն ինձնից Հանկարծ փախցրնում  
Հոնքերն ինչո՞ւ է, ոև ամպ դարձրնում.  
Իմ զեմ այսպես չի՛ եղել երբեկ,  
Միշտ իմ արքան էր, միշտ գոռող ու վեհա՛:  
Ու բեկվեց, մեղքի Հոռն առած Հովան,  
Մթագնեց Հովան, բայց կրկնեց արքան,  
- Աստղծո մատը խառն է, կերեի,  
Որ Հոնքերն իրավ Բյուզանդն են ուղում.  
Քաշվեց, որ Հոնք Հանկարծ չդավի ...  
Բայց դու ինչո՞ւ չես զորքիս թիվն ասում,  
Էլ ինչո՞ւ էի կանչել զիշերով,  
Քո մատանին էլ երեկ քեզ տվի,  
Որ վարդով գայիր, ոչ թե վշերով:  
Ինձ տուր մշտարաց վերքն Հայոց թիվի,-  
Թեկուզ պարզած իր երկնքով  
Բյուզանդն ամպ է սև կայծակի,  
Հանկարծահաս զոռ ու զորքով  
Կարող է գա Հանկարծակի:  
Իրավ ևս զու ...  
Բայց թիվս տուր,-  
Քանի՞ բյուր է Հայ-տեղավոր՝  
Նիղակամվոր, սակրավորը,  
Քանի՞ բյուր է կորտակավոր՝  
Աղեղնամվոր-վաղրավորը,  
Քանի՞ բյուր է Վերի Անին,  
Քանի՞ բյուր է Զորի Անին,  
Է՞ր չես ասում թիվն իմ զորաց,  
Այս, թե՞ քո էլ Հույսն է կորած ...  
- Էլ ի՞նչ ասեմ, ով տեր արքա,  
Երբ զորքիս դեմ էլ զորք չկա,  
Կամ ի՞նչ Այծյամ, էլ ի՞նչ աղջիկ,  
Քանի ճամփիս Բյուզանդը չիք՝  
Հրամայիր՝ իմ ձին Հեծնեմ,  
Երեք բյուրով Արագն անցնեմ,  
Կտրեմ շղթան Հայաստանի,  
Հայոց երազ Արագն առնեմ

Ախուրյանիոդ ջրին խառնեմ,  
Սով դարձրնեմ,  
Ետ վերցընեմ  
Գեթ Մասիսը, Դվինը գեթ,  
Վանա ծովի ու Վանի Հետ,  
Վասպուրականն ու Ռստանը,  
Անի բերնեմ Հայաստանը:  
Հրամայիր, աշխարհասաստ,  
Իմ զորքերն են կազմ ու պատրաստ,  
Որ զինու տեղ արյուն քամենք:  
— Քիչ են, թե կուզ երկաթ ծամեն ...  
Քիչ են, ազգ չեն, - զոռաց արքան,  
Ոսոխն ունի Հաղպար այդքան,  
Էլ ևս ինչպես ... Բայց թե՝ լավ, լավ,  
Սրտիս գետը էլի ելավ...  
Քիչ ենք ... կամ թե ... լավ չեն Հաշվել,  
Էլ ի՞նչ կոխվ, շատ ենք մաշվել...  
Մեկ էլ Հաշվիր քո իսկ աչքով,-  
Ետ չեն գնա միշտ Հրաշքով,-  
Հայր իմ, էսօր, էզուց չգան.  
Ինձ ու քնզնից Հետո կգան,  
Ինձնից Հետո կգան, զիտեմ,  
Էլ առավել դառն ու դժիւմ,  
Էլ առավել ահեղագոր,  
Կգան ... այս է իմ վիշտն այսօր:  
Ամրապարիսապ Անին կառնեն,  
Կառնեն, Հայր իմ, պար կրոնեն  
Իմ անիծյալ շիրմի վրա ...  
— Ինչո՞ւ, որդիս, ախր ի՞նչ կա ...  
— Ինչուն վաղը, էզուց-էլօր ...  
Ամրացրու բերդն ամեն օր՝  
Է՛լ ավելի ամրացրու,  
Ամրացրու Անին իմ Հոր,  
Է՛լ ահալի ամրացրու ...  
Զինե զորքերն իմ Հոր աչքով,  
Անվերջ զինե', զինե', զինե',  
Մով դարձրու գետն Հրաշքով,  
Որ գեն Անի ոտք չդնե:

Թե ծով լիներ գետն իմ աղքի՝  
Մեղքը չէր զրե դոդն իմ բարկի ...  
— Ի՞նչ մեղք, ախր;  
— Մեղք չեմ ասում.

Մարդ չպիտե ինչ է խոսում,  
Երբ զիտե, որ չարը չքվեց.  
Երբ խնդության մեջ է այս մեծ,  
Այն էլ այսրան Համազգային  
Մի խնդություն, այն էլ Հային ...  
Որ միշտ դարեր վիշտ է տեսել,  
Հաւ, ի՞նչ էի ուզում ասել՝  
Լսվ ես ասել, իմ Հավլունի,  
Խաչը Հեջ է, թե թուր չունի,  
Թեկուզ մեռած սուրբի վրա  
Պիտի լինի զենք ու զրահ՝  
Թե չէ սուրբն էլ կմոռացվի,-  
Շիրմաքարն էլ կգողացվի...  
Բայց տես թուր էր խաչն այս անգամ,  
Որ ես քաշվել տվեց չարին,-  
Այն էլ այսպես, առանց արյան,  
Մեռնեմ խաչիս մոր աշքերին»:  
Ասաց արքան  
Ու մի վայրկյան  
Գոցեց աշքերն իր մեղավոր,  
Մեղմ աշքերին Աստվածամոր:  
Ու խոսեց զղիման,  
Աղոթքի նման,  
— Թող իմ Աստրծուց չարն էլ դարձանդի,  
Չքվեցավ զարում զորքը Բյուզանդի,  
Էանց, չարն էանց, էանց անարյուն,  
Ու ես երդում եմ, որ Հենց այս դարուն  
Հիմքերը զցեմ՝  
Մի վանք կառուցեմ,  
Ինձնից Հիշատակ  
Իմ Հայրենիքին,  
Զարիսափան մի վանք  
Հայոց ամենքին,-  
Վանք մի Հայրենի՝

Ի սեր այն բանի,

Որ գեթ Անիփոց դևն Հեռու վանվեց,  
Խաչեղբոր սուրբ խաչով խափանվեց ...

Ու ծունկի իջավ արքան ծանրահե

Իր Աստվածամոր պատկերի առջե,

(Սրտի սրտի մեջ շշուկով զղջման...)

Կուսանոց մտնող մի կույսի նման

Զեռքերն ափ ափի՝

Նման սարսափի՝

— Երդվում եմ, — ասաց, — իմ Հոգու լույսով.

Կառուցել տաճար մի յոթնակամար,

Կառուցել ամենն իմ ծախս ու միսով, —

— Ինչո՞ւ, տեր արքա, Էլ ի՞նչ նոր տաճար.

— Իմ ... Հորս ոգու փրկության համար ...

### 3

Ու վեր ելավ նա կրկին

Կանչեց Համհարդ իր Հայկին,

Եկավ Հայկը ծանր ու մեծ,

Զեռքը կրծքին՝ խոնարհվեց,

Ինքը մանուկ նորարեղ,

Ուսին Հսկա մի աղեղ,

Հայկ նահապետ Հայկի պես,

Թուխ աչքերով, Հաղթ ու Հեղ,

Հաստարազուկ, լայնալանջ,

Մի թիկնապահ աննահանջ,

Ներսում Հաղիս Հավ մի Հեղ,

Դրսում արծիվ սրատես,

Համզոյի պես, մշտաքաջ,

Արծրվարիթ, արծվականչ:

— Ասրած կենաս միշտ գահին, —

Խուլ շնչաց արքային, —

Կուզե՞ս, արծվի կաթ թերեմ ...

— Չէ՛, թող Հոգիոդ Համբուրեմ,

Կանչիր Տրդատ վարպետին,

Ճարտարապետ Տրդատին,

Ասա՝ արքան կկանչե,

Չէ՛, այն բանի Համար չէ՛, —

(Բները գիտեն ինչ բանի,-  
Ասա մաքից թող Հանի ...);  
Ասա թող գա՝ այս անգամ  
Մի վանք պիտի շինել տամ,  
Մայր տաճարից մեր շքեղ  
էլ ավելի փառաշեղ»:  
Ու էլի լցրեց արքան իր գինին,  
Էլի խմեցին Հայր ու որդու պես,  
Բայց էլ չէր Հարրում Հեզ Պահապունին,  
Հաղթում էր գինուն կասկածը կարծես ...  
— Թող ի նշան այս իմ ուխտի՝  
Շողա Հանճարն իր գմրուխտի  
Մի թագարժան գոհարի պես,  
Մի վանք շինե Հոյեղ ու Հեզ:  
Յոթնակամար  
Մի նոր տաճար,  
Որ աղոթքով անհիշաշար,  
Պատարագով իր խնկավետ  
Իմ լավ գործն էլ Հիշվի Հավետ:  
Լավն օրհնանքով...  
Վատն անեծքով,-  
(Մտքում ասաց՝ «ի սեր վանքիս՝  
Տե՛ր, փրկեիր գոնե Հոգիս ...»);  
Ասա՝ ինչքան շնորհը ունես՝  
Ողջ Հանճարիդ Հանքը ուկյա  
Վանքի վրա պիտի թափես,  
Գմբեթն, ասա, քո աղջկա  
Գլխից սիրուն պիտի կապես ...  
Կամարները - Հոնքերն Հիշես՝  
Հոնքերից նուրբ պիտի քաշես:  
Մեղա, ով տեր, այս ի՞նչ ասի,-  
Ու ծիծաղեց արքան գինով,-  
— Ասա՝ ավերն Հռոմոսի  
Վերաշինիր իմ անունով:  
Կամարները կապես պիտի  
Հոնքերի պես աստվածամոր,  
Սյուները - միշտ կանգնած ոտի՝  
Զորքի նման իմ գորավոր:

Եվ խոյակներ կրանդակնես,  
Եվ այծյամներ ճակատ-քարին,  
Այնպես, որ քո Հոգին փրկես,  
Որ ... մորթեցիր այծյամներին ...  
Թե չէ - կյանքում Հույս մի Հուսա,  
Այն էլ ասա այս ամենով.-  
Լավ, ես կասեմ, դու մի ասա»:  
Ու մեղմ շիկնեց արքան զինով:  
— Միայն ասա թող գա՝ վինտրենք  
Վանքիս տեղը մեկտեղ ընտրենք,-  
Ախուրյանիս ձորում կուղեմ  
Հիմնել ուխտիս վանքը վսեմ,  
Քանզի ձորը մի վիթխարի  
Մատանի է, առանց քարի,  
Վանքս լինի մատանոն քար,-  
Ի՞նչ ես ասում, տե՛ր դորավար:  
— Տե՛ր իմ, ուր էլ որ կառուցես՝  
(Մտքում ասաց՝ չի փրկի քեզ՝  
Թե լորու չէ, այլ՝ թե օձի  
Զադ է շշուկն իմ կասկածի...),  
Տրդատն ուր էլ որ կառուցի՝  
Քո վանքն՝ ինքը Աստված կօծի...»:

## 4

Երբ դուրս ելան Հայկն ու Հսկան,  
Գինու տիղմից ելավ արքան,  
Ելավ քիչ-քիչ, բայց քայլ առ քայլ  
Միտքն ավելի մթնեց մուայլ  
Ու մոմբ վառեց,  
Ինքը մուայլվեց.-  
— Զինի՞ Հսկան մի բան կուահեց.  
Շանթի պես անցավ արքայի մտքով,-  
Չէ՛, լեզուս մեղքս ամուր զրահեց,  
Կրակն էլ անցա իմ բորիկ ոտքով»:  
Բայց ահա զարթնեց որտեղից-որտեղ,  
Լացող մանկան պես իր խիզճը քնած,  
— Երանի՛, ով դեռ մանուկ է անմեղ...  
Հառաջեց խիզճը ի սեր Հայրենյաց.

Եվ ինքնադատի գութով վերստին  
Զգաց իր մեղքի մեծությունն աշեղ,  
Ամպեց, կայծակեց զղումն իր սրտին,  
Ամաչեց իր թուր իշխանից անմենդ՝  
Հայրենավահան իր Պահավունուց,  
Վաթմուն վերքանի իր թուր-Հավլունուց,  
— Ես երկրին մի օձ, նա՝ երկրին ամրոց ...  
Հառաչեց արքան ու խաչակնքեց.—  
Իր գործած սև մեղքն, ինչպես մի սև օձ,  
Փաթաթվեց սրտին ու սիրտը չոքեց  
Ընդդեմ իր մեղքի՝  
Չոքեց աղոթքի,  
Բայց այս աղոթքն էլ սիրտը չամոքեց,  
Ուզեց վեր թռչել՝  
Հարճին ներս կանչել՝  
Կնոջ դափի ծով սրտիկը պոկել  
Շուն ու գայլերի երախը ձգել.-  
— Որ սիրտս այսպիս դժոխափոխեց,  
Խլեց անուշ երգն իմ խղճի տավղից.  
Գրել տվեց թուղթն, իմ Հույսը թաղեց.  
Հանելով սիրտս Հայրենաշավղից ...  
Ու բողբոջում էր զղջումը վսեմ,  
— Այստեղ թաքցրի, այնտեղ ի՞նչ ասեմ,  
Այստեղ, երկնքում, երբ ես էլ գնամ,-  
Ու ծունկի իջավ Հույսով արնաքամ  
Հեզ Աստվածամոր պատկերի առջե,  
— Մեղքերի մեղքն է իմ գործածը սև,  
Ոչ եղրոր գեմ եմ գաղտնասուր ելել,  
Ոչ սուր լվացել եղրոր արյունով.-  
Ոչ Հորս թագն եմ իր արնով խլել,  
Ոչ Հայր սպանել գահատենչ քենով.  
Ոչ թաթախամծ է կնոջ արյան մեջ,  
Եղեռնասն թուրն իմ այս սև մեղքի,  
Ոչ խանդ ու սիրո տանջանքն է ցվերջ  
Իմ ձեռքով խլել կյանքը մի ծաղկի ...  
Ոչ թունավորել բաժակն իմ եղրոր,  
Ոչ զինի գարճրել արյունը ճորտի,  
Ոչ խելագար եմ այրել խենթ մի օր.

Ոչ Հայր եմ մորթել ու ոչ էլ որդի,  
Ոչ Հորեղբորից իմ գահն եմ շորթել.  
Ոչ զյուղ թալանել գիշերվա զորքով,  
Ոչ վանք եմ այրել, ոչ մայր եմ մորթել,  
Ոչ Աստծուս գեմ եմ ելել թոնդրակով ...  
Այս ամենն ի մի՛ ծով մեղքիս առաջ,  
Մեղքերի մեղքն է իմ գործածը սև,  
Հայրենադաս եմ Հայրենահառաչ,-  
Ինձ քիչ է խարանն աղվեսադրոշմ,  
Անին եմ ծախսել, աղքն եմ վաճառել»:  
Ու Տիրամորը իր Հայացքն Հառել՝  
Խուլ շնչում էր՝ «ԱՌ Աստվածամայր,  
Մի՞թե գթություն չունես ինձ Համար:  
Մի՞թե փրկություն  
Զկա իմ Հոգուն ...»:

— Զկա .. թվաց, թե մոմի շշուկով  
Բացվեցին շուրթերն Հեգ Աստվածամոր,-  
Զկա, չես թաղվի Հայրենաշուքով.  
Շնաշուք շիրիմ կունենաս, անշուշտ:  
Քեզ ո՞վ կների, ո՞վ արյունուշտ,  
Քո ի՞նչն է այժմ արքայավայել ...  
Եվ Հանգավ մոմք գոցվող աչքի պես,  
Իր վրա, թվաց, չի ուզում նայել  
Իր Աստվածամայրն Համբ ու խռովյալ:  
— Մեղա՛ ... խարվեցա՛ կնոջով թովյալ ...  
Եվ մոմք վառեց նա լալահառաչ՝  
Հեգ Աստվածամոր պատկերի առաջ,  
Բայց մոմն այս անգամ լեզու էր Հանում,  
Թվաց, լեզու էր Հանում իր վրա,-  
Թւ՞ Տիրամայրն էր Համբ զայրանում,  
Մոմի բոցն հրե լեզուն էր նրա,  
Խայթել է ուզում իր բոցե լեզվով՝  
Իր բոցեղ լեզվով օձեղ արքային,  
Որ Անին ծախսեց Հայրենադասով,  
Եվ գեռ ... փրկվել է ուզում իր գահին,  
Վայելել Հարեմն արքայակյանքով,  
Գաղտնի Հարեմը կայսեր կույսերի,  
Քառասուն կույսի մարմնատոփանքով,-

Հարել դեռ աղեղն իր եղկ Հույսերի  
Հետ Այծյամների բախտի ճամփնքին ...  
Եվ մեղանցյալը կաղոթեր կրկին,  
Մոմն Աստվածամոր աչքերի տեղակ  
Թափում էր Հալվող արցունքը շողակ.  
Հալիս էր մոր պես, կոծում չարատանջ,  
Ողբում, որ Հայոց արքաները քաջ.  
Հայոց առյուծներն իրենց թագը վես  
Թողեցին այս եղկ առյուծի զյսին,  
Հայ Բագրատունիք խորական ու Հեղ:  
— Ի՞նչ պատասխանեմ անմիտ ամրոխին,  
Ամրոխն ի՞նչ... Աստծուս ի՞նչ պատասխանեմ,  
Բանտված Հայաստան, մայր իմ խաչեցյալ,  
Էլ ինչպե՞ս այժմ քո ցավը տանեմ ...  
Դժոխքն էլ նետես ինձ՝ քիչ է դարձյալ ...  
Եվ մոմի արցունք կայլակներն էին  
Ընկնում աչքերից Հետ Աստվածամոր,  
Այդպես էր թվում մոայլ արքային  
Եվ աղերսում էր զեռ մեղսացնոր:-  
— Ու աստվածուհիս, զիտեմ, որ Հայոց  
Վաղվա մայրերի արցունքն ես լալիս,  
Չթողնես դառնա Հայոցս վայոց ...  
Ինձ թվում է, թե ոսոխն է գալիս,  
Երբ խոյ ձիերն են միթնով վրնչում,  
Իմ թուղթն են բերում սև սրի ծայրին,  
Իր սուր ու թղթով Անին պահանջում,  
Ու սիրտն էր բացում սրբապատկերին,  
Իր անքավելի մեղքն էր մրմնջում,  
Իր աշեղ մեղքը, որ ժայռ կփլեր,  
Թև բռունցք դառնար իր մեղքը մթար՝  
Մասիս կփլեր, երկնքի աչքից բիրը կլալեր,  
Եվ Աստվածամոր ներող աչքերին,  
Զէր տեսնում արքան  
Արցունքը ներման,-  
Այլ միայն շանթող նզովքը վերին,  
Մոր աշեղալու զայրույթին անսահման ...  
Եվ Հարվող մոմի կաթիկները տաք,  
Որ լուս կիշնեին կայլակ առ կայլակ

Մաստող աչքերից Հեզ աստվածամոր՝  
Արքայի սիրտը այրում էին խոր,  
Բերանը դառնում դառնահամ լսղի,  
Իր անգղ մեղքի մազիղների մեջ  
Կորպում էին լարերն ուղեղի.  
Մարից կորչում էր Այծյամն էլ իր պերձ:  
Ու քնի մեջ էլ քունը չեր տանում,  
Իր քնի մեջ էլ ողբում էր արքան,  
Իր գործած մեղքի թափից խևնթանում՝  
Խելագարփում էր քնի մեջ, սակայն,  
Վեր թռչում ... Հաղիվ խելքի էր գալիս,  
Խաշակնքում էր, աշով աղոթում,  
Աղոթքի նման շշուկով լալիս,  
Աչքերը խղճի խայթով շաղոտում՝  
Գլուխը ... մեղքի ժայռին էր խփում ...  
-Տեր, մոռացում տուր մտքերիս,  
Քուն թեր անքուն ցնորբներիս,  
Դող մի թերն զող ձեռքերիս,  
Թուղթս պատուե, մեղք ևմ գերիս,  
Խաղաղություն թեր կրքերիս,  
Ունկ դիր արթուն աղոթքներիս,  
Մեղա, մաշ թեր տանջանքներիս,  
Այս աղեխարչ, գարչ մեղքերիս,  
Մաշ-մոռացում թեր վերքերիս,  
Վերքերիս վերք ծով մեղքերիս,-  
Տեր՝ ունկն դիր աղոթքներիս,  
Մաշ թեր, մաշ տուր ծով մեղքերիս»:

## 5

Քնած էր Անին, երբ զոռ ամրոցից  
Դուրս ելավ Հակա զորավարն Հայոց,  
Ելավ - խայթը ված կասկածի օձից,  
Ուղեց ձին քշել սահմանը Տայոց՝  
Ականջով լսածն իր աչքով տեսնել,  
Բայց սուրհանդակներ ճամփից գիշերով.  
- Նախթի պես Հունաց սահմանը Հասնել ...  
Եվ ինքը դառը մի ախ քաշելով

Ասնձը քաշեց,  
Իր ձին քշեց  
Առյուծ Վահրամ Պահապունին.  
— Այս վախեռոտի ի՞նչն է արքա,  
Չէ՛, աչքերը գաղտնիք ունին,  
Վայ թե զաղտնի դաշինք մի կա ...  
Վաղն էլ վանք է կառուցելու  
Ի սեր ինչի՞ն, այս էլ շասավ.-  
Բայց ոչ մի վանք չի փրկելու  
Թե բան մի կա հայրենադավ ...  
Չկա՞ ... թե՞ կա, չըլներ, ո՞վ տեր,  
Ի չիք չքվեր կասկածն իմ չար,  
Մաքուր մնար աշխարհը մներ,  
Հայոց գահը մաքուր մնար,  
Ավանդ, շատ է դավեր տեսել,  
Վայ թե մի նոր դավ է այս էլ ...  
Այս, չիք իիներ կասկածն իմ չար»:  
Ու տուն հասավ նա վշտահար  
Լուռ, մտախոհ՝ իջավ ձիուց,  
Մտավ ամրոցն իր հինավորց,  
Արուղամբենց մատուոի մոտ  
Ու ներս մտավ, քուն չզտավ  
Կասկածներով դառն ու ցավուտ ...  
Ու գիշերն ի բուն քուն չիջավ աչքին,  
Կարծես իր բարձր փշով էր լցված,  
Կարծես բարձր մեջ օձ կար մթագին,  
Կարծես օձի մեջ արքան թաքնվում  
Ու խայթն էր սրում, որ բարձր խրեր,  
Թե՞ կասկածները խայթ էին թվում ...  
— Բայց, գուցե, Հոներն իրաւով են խուժել,-  
Սուրհանդակներս ոչ թե անագան՝  
Կիմանան ... Հեշտ է այս վերքը բուժել ...  
Դժարն արքան է, այս մթին արքան,-  
Գաղտնիքն արքան է, որ չի հարցնում  
Թե ո՞ւր են Հայոց բախտը փախցնում  
Մեկմեկու ձեռքից ազգերն այս անքան,  
Չի ասում, որ ազգն Հոդ ունի խլված,  
Ի՞նչ Հոդ, ծով Հոդեր, ով Հայոց գութան,

Միայն մի խոփիդ ծունկը չի ծալված  
Խոփին իմ Անիի թագավորության,  
Քո չոթանասունյոթը խոփին այնտեղ  
Վանում, Տարոնում, Վասպուրականում  
Խոպան Հողիս պես բանտված են անմեղ,  
Խրված թրերս են՝ ժանգի պատշաճում:  
Խրված է Վանը, ոսկի է, ինչ Վան,  
Մասիսն է խրված իր Հող ու ջրով,  
Խրված է Հայոց դրախտն Հոտեան  
Հունաց, Հոներաց, Թաթարաց թրով.  
Արարաց ճորտն է աշխարհն Այրարատ,  
Տեղահանված է աղգն Արծրունի  
Հայոց ապատից Հունաց անապատ,  
Իրր թե ահց Իրան-Թուրանի,  
Որ շորթին առել ծովակն իմ Վանա՝  
Ռւզում է խմել ծովն էլ Սևանա,  
Ինչպես արյունը Վասպուրականի»:  
Այսպես խուլ խոկում, տնքում էր Հսկան,  
Ու մոմբ վառեց Հսկան ծերունի  
Վաղուց քնած էր թիկնապահն Հսկա,  
— Ինձ Հայր է ասում,  
Բայց ինձ չի լսում,  
Թեև ևս տվի իր թագը ոսկյա,-  
Թե չէ եղբայրը՝ Աշոտը կտրին  
Այս կտրինի գեմ կդառնար կարին,  
Կիսլեր գաւը, Երանի խլեր,  
Նա ողջ իշխանաց իր մեջ կձուլեր,  
Թե խելացի է և թե քաջասիրտ,  
Սա թուլասիրտ է, վախկոտ է ու բիրտ,  
Սա գահի բան չէ, որ աշով անանց  
Գաղտնի գերին է իր կույս ու կանանց,  
Թագուհուն լրել, պարսկուհուց Հոգնել,  
Այժմ փնտրում է զիրկ մի կուսական՝  
Գահաժառանգն է իրր միտն ընկել,  
Իրր ամուլ է թագուհին, սակայն,  
Լոկ Աստված զիտե, թե ով է ամուլ ...  
Հարմի այլահն էլ ամուլ է ու խուլ ...  
Ի՞նչ է՝ պարսկուհու զրկի՞ց ժառանգեր՝

Իրանից պիտի Հայ թագը ծագեր՝  
Պարսկուհին պիտի Հայ ծաղիկ ծնի,-  
Զէ՛, իմաստուն է արքան խելազար,  
Քանդի թագուհուն ինչքան էլ ցանի,-  
Էլ ի՞նչը ցանի, երբ Հող չէ, այլ քար,-  
- Ասես մի ժայռի վրա ևմ ցանում -  
Մարմարի վրա, ոչ թե մայր Հողի,-  
Ցանում ... ոչ մի ծիլ զլուս չի Հանում,  
Գլուխ չեմ Հանում ինքս էլ կատաղի  
Քանի՛ տարի է ցանում ևմ, ցանում,  
Ցանում ևմ, ցանում, ցանում ևմ, ցանում,  
Ցանում ևմ - էլի ժառանգ չի մնում»:  
Եվ իրը, ի սեր գահաժառանգի՝  
Ուզում է զայլը Այծյաներ ճանկի,-  
Կճանկի ... վայ քեզ, իմ ազնիվ Տրդատ,  
Արքան Հայրական աշք ունի ... վրադ.  
Որ կամարներ ես կապում անստվեր՝  
Հոնքերի նման քո հրաշք դստեր,  
Այդ կամարների տակով,- չի Հարցնի.  
Արքան էլ, վերջը, խոնարհված կանցնի,  
Ի սեր քո դստեր ոչ թե զմբեթաց,  
Որ, իրավ, Աստծո ձեռով է կերտված ...  
Ի՞նչ արքա, ցըլ է Հազարաչքանի,  
Հազար աչքով էլ միշտ էզ է փնտրում,  
Որ գաղտնյաց մարմինն ինձ լավ է Հայտնի,  
Օրը, ասում են, մի կույս է ընտրում,  
Որ տանի պազշոտ ձորն Ախուրյանի ...  
ԱՀա թե ինչն է վիշտը ձեր տիրոջ,  
Ո՞վ խրված Հողեր, ո՞վ ցավեր Հայոց,  
Ի՞նչ արքա, երբ որ ազգին չի խոճում,  
Աստված չի կանչում, վշտից չի Հալչում,  
Երբ չի մոնչում, որ Հողն է խրված,  
Որ գեռ բանտում են Հողերն Հայրենյաց,  
Կեսն Հայաստանի, Աստված իմ, ի՞նչ կես,  
Հայոց դրախտը բանտում է Հունաց,  
Ու սուրս մենակ, մենակ՝ Հույսիս պես,  
Արցունքս գերի ծովն է Բղնունյաց,  
Այս, մայր Հայաստան, ի՞նչ անի որդիդ,

Անզորք զորավարող ինչպե՞ս փրկի քեզ,  
Երբ զորքդ մի բռու պարիսապ է շորադիդ:  
Գյուխը ձյուն Մասիսի,  
Սիրտը զարուն Մասիսի,  
Հագար սև ձյուն է տեսել  
Սիրտը արուն Մասիսի»:

Ու վանդակն ընկած առյուծի նման  
Հառաջնց Վահրամ մեծ Պահապունին,  
Հայ ճակատազրի վշտով անսահման,  
Մրմնջաց Հայոց անզոր Հավլունին.  
— Հայոց ազգը ախափեր չունի,  
Մեկունար է, մեկունար,  
Քանի՛ անզամ քանդվեց. Անի,  
Հայոց ազգը՝ սուրբ տաճար:  
Յոթը ազգի ճամփի վրա  
Այժմ վանք է կիսավեր,  
Նա, որ Հագած զենք ու զրաչ՝  
Բերդ ամրոց էր բյուր դարեր...  
Ավերակ է Հայաստանը՝  
Նման քանդված կաճառի,  
Անին՝ միակ իր ոստանը,  
Մոմն է ավեր տաճարի:  
Բայց այս մոմն էլ ճարել կուղեն,  
Հույսի մոմն էլ այս միակ,-  
Զէ՛, մոմ չէ ազգն, Հայե՛ր, ի զե՞ն,  
Բայց ո՞ւր է զորք. ո՞ւր գնանք ...  
Իմ Հույսն, ավաղ, բու է վայող,  
Ինչպե՞ս պիտի, ո՞վ Հուդա,  
Վերաշինենք տաճարն Հայոց,  
Ինչպես վանքը Մարութա»:

Ու արցոնքները աչքերից ընկան,  
Քուն չուներ անքուն ծերունի Հական,  
Վաթսուն վերքանի մեծ Պահապունին,  
Ինչպես պատշանում իր թուր-Հավլունին,  
Խուլ քրթմնջում էր կասկածով անքուն,  
Հայ ազգի Հայրը, սյունը Անիի,  
Հայ ազգի պատվո բերդի պես դժգույն,  
Ու չէր իմանում այժմ ի՞նչ անի ...

— Վայ թե մի դավ է դաշնել Հունաց Հետ,  
Կասկածն ինչո՞ւ չի խնձ Հանգիստ տալիս,  
Կամ այլ մի մեղք է դործել չարադես,  
Որ չեին մնում աչքերն աչքերիս,  
Չե ... չար մի գործ է կռահում Հոգիս,  
Բայց ի՞նչ, չլինի՞ս աչքիս է թվում,  
Աստված իմ, ներիր» —ու խաչակնքեց.  
Բայց փոթորկվում էր մտքերի ծովում.  
— Եվ քանի անգամ մեղք բառը կրկնեց,  
Իսկույն կոծկելով. շիկնելով խակույն,  
Թարցնելով դժնի մեղքն անագորույն,  
Ի՞նչ գաղտնիք է այս  
Այսքան մուժն ու ... պարզ,  
Որ ինձնից անգամ  
Թարցրեց արքան,-  
Վայ թե դարձել է սև նիղակն Հունաց՝  
Կաթողիկոսի Անի չգալով ...  
Կամ ... ծովն է զցել զանձերն Հայրենյաց՝  
Քառասուն տարվա ծով Հարկը տալով,  
Որ առանց կռվի ետ քաշվի. չբվի ...  
Է, Աստված մեղ Հետ, իր Հետ սատանան,  
Չկա մի գաղտնի դուռ, որ չբացվի ...  
Դարի դուռն օրերն իրենք կրանան,  
Դու ասա Հոներն իրավ գրոհեն,  
Թե չէ Բյուզանդը ետ կգա նորեն ...

— Այս, ես ջահել լինեի,  
Վաղվադ վայել լինեի,  
Ոչ թե այսքան վիրավոր,  
Այսքան ահել լինեի:

Ինձ Ախտրյանն Հով անի,  
Դու իմ կյանքի ծով, Անի,  
Սիրտս վահան կանեմ քեզ,  
Ես որ չանեմ, ո՞վ անի:  
Տեսնես ի՞նչ կա քո զլիսին,  
Վշտերի գահ քո զլիսին,  
Ավազ, ա'զ իմ, Աստված իմ,  
Ի՞նչ պիտի գա քո զլիսին ...»:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈՒԹԵՐՈՐԴ

### 1

Ուր Ախուրյանը արմունկ է տալիս  
Անի քաղաքի նոր պարսպի տակ.  
Այնտեղ է աշա Տրդատը գալիս,  
Այնտեղ, ուր վաղուց վանք մի ավերակ  
Դեռ աղոթում է համր ու մեկուսի.  
Հողին հավասար վանքն չոռոմուի,  
Այնտեղ են աշա զալիս, ամրոխվում  
Քարագործ մարդիկ  
Ճարտար անեցիք.  
Ում ձեռքով քարն է հրաշքի փոխվում,-  
Ում ձեռքով ծնվեց Անին գեղեցիկ.-  
Ու զալիս էին որմաղիրները.  
Աշխարհահոչակ իմ շիրակացիք,  
Որոնց կառուցած թերդ-անիները  
Հրաշքի գործ են հավերժակեցիկ:  
Ու զալիս էին իմ հին զյումբեցիք,  
Իջնում Անիի ձորը ծաղկավետ,  
Վերաշինելու վանքը գեղեցիկ.  
Վերախնկելու վանքը, որ հավետ  
Նոր գմբեթներով իր յոթնակամար  
Թողություն հայցն ամենակալից  
Ամենայն գաղտնյաց, ոև մեղաց համար,  
Խունկ ու աղոթքով իր արտասվալից  
Թողություն հայցն խունկ ու աղոթքով.  
Որ երկինք ելնեն գեթ մաքուր ... ոտքով  
Կյանքում մեղսալից ողիներն այնքան.  
Աղքատն ու ճորտը, աղատն ու արքան,  
Քանզի ողջ մեկ են, մեր յոթնակամար  
Վանքերում ննջող հայ Աստծո համար ...  
Ու փորում էին լինգ ու քլունգով.

Վանքի Հիմքերը՝ նորից-նոր բացում,  
Հեղ Ախուրյանի աղոթք ու երգով  
Անդրանիկ Հիմաց քարն էին զցում:-

«— Ուտեմ սոխ ու Հաց,

Տանջվեմ քարերով.

Անունս կորած՝

Կապրի դարերով:

Քար քաշե, ախսպեր,

Քար տաշե, ախսպեր,

Քաշե, լավ տաշե,

Միրտ մաշե, ախսպեր:

Քանդելը Հեշտ է.

Եինելը՝ դժար,

Դժար է Հեշտը՝

Թե մարդ ևս արդար ...

Քանդողին վայրս,

Երնեկ շինողին,

Եինող ևմ Հայրս,

Վայրս քանդողին:

Քանդելը Հեշտ է,

Եինելը՝ դժար,

Եինածս բերդ է.

Դարերը՝ նժար ...»:

Ու փորում էին Հիմքերը վանքի.

— Առավել խորունկ, տղերք, առավել,

Ողին էր դառնում Տրդատն ամենքի,

Զայնում էր քաղցր, ինչպես Հորովել,

Երբ մոտիկ մեկը ճշաց ցավայի.

— Օգնեցեք ... օձը, գոռաց ահայի ...

Տրդատն իսկույն վրա Հասավ,

Ճարտարապետ վարպետը մեծ.

— Ի՞նչ է, տղաս, այս ի՞նչ, ասավ,

Եվ ինքն իրեն Հիմքը գցեց

Չարագուշակ օձին տեսավ,

Եվ ապշանքով բեղը կծեց. —

— Բայց մի վախիր, որդիս, ասավ.

Երբ օձը ոտքին փաթաթված տեսավ,  
Ինչպես պարսկու հին արքայի կրծքին ...  
Ու դուրս քաշեցին ապշանքով ցալուտ  
Վրա Հասածներն Հարայ-Հրոցով.  
— Հայ չէ, որ Աստծո աղ ու Հացի տեղ  
Բախտը մեր վանքը ընդունեց ... օձով:  
— Լոե՛ք ... չիմանա մեր թագավորը,  
Չար նախանշան այս բանը դաժան,  
Չմեռնի... սրան Հասցրեք Հորը:  
— Կուզեր կոկոնիս բախտի Հետ խաղալ,  
ԱՀա քո խաղը, Աստված մեղ պահի,  
Քանզի այս վանքը՝ այս ուխտն արքայի,  
Չէ ընդունելի, որ օճն Հայտնվեց,  
Քաշվիր կոկոնից, Աստված ձայն տվեց,  
Հետ քաշե, թե չէ կուլ կերթաս օձին»:  
Հառաջեց Տրդան ու իր երկյուղած  
Աղոթող շուրթերն ախ շշնջացին,  
Եվ օձահարին, գործերը թողած  
Ուսերին առան ու լուռ ապշանքով  
Մայր տաճար տարան դիակն աղոթքով,  
Ու լուռ ետ դառան մեծ Տրդատի Հետ  
Վաթուուն որմնաղիր ու յոթը վարպետ:-  
Ու փորում էին Հիմքերը վանքի  
Երգով, որ դառավ Հիմն Հայոց աղղի:-  
— Ինչպես ասեմ քեզ Հայաստան,  
Երբ քարաշար Վանը չունես,  
Երբ գերի են Մուշ ու Ռատան,  
— Ռւնես, բայց քո տանը չունես.  
Երբ Հայ Աստված Հայ չի ճարում  
Ախթամարա մայր տաճարում:  
Ինչպես ասեմ քեզ Հայաստան,  
Անի, երբ մի բուռ ես, Անի,  
Երբ թուրը չես քո Սասնա տան,  
Պատյանի մեջ լուռ ես, Անի.  
Երբ էլ ձեռքս վանք չի շինում  
Մղկիթի ճորտ Հայաստանում»:  
Կախված քառասուն Հոնքերի ամպով,  
Երբ որ փորեցին Հիմքերը վերջին.

Հանկարծ, թագավորն իր շքախմբով  
Հայտնից մոտիկ մի բլրապանջին:

2

Ու ալ-վառով,

Ու բորբառով,

Իջավ խաչով ու խաչվառով

ՅՀան-Մերատն ու կես խռով

Կաթողիկոսն արքայի հետ,

Եռողողալով, վառով-զռոռով,

Ինչպես արքան իր գահի հետ,

Զեար միայն Պահապտնին,

Իր Համբունին սպարապետ:

Ու ձիերից իջան խելույն,

Խոնարհ իջան խելույն ևեթ,

Միայն արքան մնաց ձիուն,

Նա էլ հուզված՝

Զիոն բազմած,

Երախմբի զլուխն անցած,

Առաջ քչեց. մի ախ քաշեց,

Երբ ամբոխը առաջ խուժեց.

— Ապրի՛ արքան, ձայն տվեցին,

Վարպետ, բանվոր միաբներան,

Կանգնեցրեց արքան իր ձին,

Երբ խոնարհվեց ողջը նրան:

Եվ նա իջավ ճերմակ ձիուց,

Գլխի թագը խոնարհ չտկեց.

Երբ մաղթանքով երկնամատուց

Կաթողիկոսն այսպես երգեց.

— Ընդունելի արա, ով տեր,

Չայս իմ մատաղն ընդունելի,

Ընդունելի աղքն իմ անտեր,

Իր ողբ ու տաղն ընդունելի:

Ընդունելի արա տերանց

Անշամանդաղն ընդունելի,

Ընդդեմ չարյաց ամեն արյաց.

Քարե մատաղն ընդունելի:

Չոն ընդունե Հայոց գահից՝  
Օհան-Մմբատ մեր արքայից.  
Ընդդեմ մեղաց ամեն տեղաց  
Ընդունե վանքն իմ անմեղաց  
Քո սուրբ աջով, որ մեզ փրկեց»:  
Եվ Հիմքերը խաչակնքեց  
Կաթողիկոսն, ապա դառավ  
Ճերմակ ձեռով մյուսոնն առավ.  
(Չեռքը ճերմակ, բայց սիրտը սև ...).  
Հիմքերն ամեն մյուսոնջրեց՝  
Օրհնեց Հիմնումն Հոռոմոսի,-  
Աղոթքն այնպես վեր բուրվառեց.  
Որ կարծես չիք մեղքն երկուսի ...  
— Այս վանքն, ով տեր, ընդդեմ մեղաց՝  
Յոթնակամար քո աչքն է բաց.  
Թող մեզ փրկեն ամեն չարից,  
Թող դուրս վանե չարն աշխարհից,  
Թող չատ ապրի արքան Հայոց»:  
— Կապրի՛ ... գոչեց ամրոխը Հոծ:  
Յոթը բուրվառ Հիմքը խնկեց.  
Կաթողիկոսն «ամեն» կրկնեց:  
— «Ամեն» - Հնչեց ձայնն իշխանաց.  
Ամենն ի սեր մեր Հայրենյաց:  
— «Ամեն» - ասաց արքան Հույսով.  
Բայց Հառաջեց սրտի կիսով ...  
— «Ամեն» - գոռաց մի մարդ դառած  
Մով ամրոխը «ամեն» զոռաց ...  
Ու երբ վանքի Հիմնումն օծեց  
Վեհափառը գիրքը գոցեց.  
Սուրբ աղաթով Հայոց աղզի՝  
Հիմքը ցցեց խաչը ուսկի.  
Որ օրհնվի վանքը վաղվա՝  
Հիմքից ասի՝ «Տեր, ողորմյա»  
Բայց անողորմ վշտի ամպով  
Սպարապետ Պահլավունին  
Իր զորական շքախմբով  
Նողաց, ինչպես Թուր-Հավլունին՝  
Հայտնվելով Հանկարծահաս,

Արքան ինքը գնաց մոտիկ,  
Բայց քաջն ասավ՝ ապրած կենաս,  
Ճակ չտեսնեն թող այս մարդիկ,  
Ու խոնարհեց զլուխը ծեր,  
Ու ցած թռուավ կարմիր ձիուց,-  
Ու շիմացավ ո՞ւմ անիծներ՝  
Կորեց պահ մի ահն Աստրծուց,-  
Ուզեց շանթել սևազիսին ...  
Բայց նայելով ծով ամբոխին՝  
Իր զայրույթը սանձեց խկույն,  
Ինչպես ինքն է սանձում ձիուն,  
— Լավ ... Լվացքը տանը կանենք ...  
Այժմ ... վանքի ցավը տանենք»:  
Ու խոնվեց  
Ամբոխը մեծ,-  
Ամեն մեկը մի բան գցեց,  
Ամեն մեկը իր մաքի մեջ  
Մի բան դրած մուրազատենչ,  
Աղքատ մի կին, առանց խոսքի  
Հանեց կրծքից խաչը ուկի,  
Վար կուցավ, աչքը գոցեց,  
Ուկե խաչիկն Հիմքը գցեց,  
Ապչեց արքան և ամբոխին  
Խղճաց, մի շիթ ընկառ բեղին,  
Ու Համբուրեց շուրթով ցավի  
Դալուկ ճակատն այն պառապի:  
Մի արեղա մեծ Նարեկի  
Գիրքը գցեց Հիմքը վանքի:  
Մեկը՝ թագրեն իր մարգարտյա,  
— Որ գեռ երկար օրեր ինձ տա ...  
Մյուսն անխոս խաչակնքեց՝  
Իր գրխարկը Հիմքը գցեց:  
Մեկն էլ Հույսով Հանդ ու Հողի՝  
Որ իր փուշը վարդի փոխի՝  
Իր արտերից բերած մի բուռ  
Հողը գցեց, խոնարհ ու լուռ,  
Մեկին յոթը երազելով:  
Վարազիկն էլ, գեռ Հուսալով՝

Իր Այցամին երբ չգտաւի.  
Ճեղքեց ամրոխն ու մեջ մտավ,  
Ամենքի պես Հույսով իր մեծ՝  
Իր զիսարկը Հիմքը զցեց.  
Որ պսակվեն գեթ այս վանքում:  
Հայրն էլ, ահա, միակ որդուն  
Երկարամին երազելով՝  
Իր աղեղը զցեց սիրով,  
Նես ու աղեղն իր աշարկու,-  
Ճակատազիրն իր Հեզ որդու:  
Այն մեծ Հույսով, որ Հայրենի  
Հարսանիքն էլ Վանում կանի,  
Վանում կանի, կամ Տարոնում,  
Քանդի նեղն է Ախուրյանում,  
- Արծաթ է ձուկն Ախուրյանի,  
Մինչ ոսկի է ձուկը Վանի,-  
Ու Հառաջնց որսկանն Հոգում:  
- Վանա ծովում է զրախատի  
Ոսկե ձկնիկն Հայոց բախտի:  
Եվ իշխաններն աղոթեցին՝  
Մեկ-մեկ Հիմանց մոտենալով,  
Գլխարկները Հիմքը զցին  
Հազար մեղքի անուն տալով:  
- Բայց մեղքներիս մեղքն է, ասին,  
Որ կարու ննիք զեռ Մասիսին ...  
Եվ աշքերը շաղոտելով  
Սպարապետն աղոթելով  
Մի Համբույրով իր թուրն օծեց՝  
Իր սուրբ թուրը Հիմքը զցեց.  
Ոսկե թուրը Հիմքը վանքի,  
Որ բերդ մաս Հիմքն աշխարհը,  
Մեծախորհուրդ իր խորհրդով  
Հիմքը զցեց սուրն անվրդով.  
Որ միշտ ի սեր ժողովրդի,  
Վանքն էլ, նման Հայոց բերդի,  
Ամեն դժիսեմ  
Թշնամու զեմ  
Կտրուկ անի  
Թուրն Հավլունի,-

Որ ազատե, ինչ էլ լինի,  
Գերված Հողերն Հայաստանի,  
Գերված աշխարհն Հայ ծովեծով,  
Լցված Հայոց կոտորածով ...  
ձարտարապետ Տրդատն էլ մեծ  
Իր զիսարլը Հիմքը զցեց  
Իր մի ընկեր տարադի Հետ,  
— Որ օր Հնիքի արհեստն Հավետ,  
Հանճարն Հայոց շինարվեստի,  
Աշխարհաշենն իր վաղեմի:-  
Գցեց տարադն իր, աղոթեց  
Բախտի Համար իր Այժմամի ...  
— Մեկ էլ՝ Վանիս ցավը տանեմ,  
Ախթամարը վերաշինեմ,  
Ախթամարա վանքը փրկած՝  
Մանվել Հորս վիառքը խլված:  
— Որ ես ըերեւ ինչ էլ լինի՝  
Գերված Հողերն Հայաստանի,  
Վանա ծովի ու Վանա Հետ:  
ձարտարապետ Տրդատն էլ մեծ  
Գլխարկի Հետ Հիմքը զցեց  
Իր մի ընկեր տարադը սուր,  
Այս ամենը երբ որ տեսավ՝  
Արքան ինքն էլ խևույն ենթ  
— Փրկեա՛, ո՞վ Տեր, - մտքում ասավ,  
Ու մոլորված Հույսը դեմքին՝  
Լուս մոտեցավ փորված Հիմքին,  
Հանեց ոսկե թագը զիսից.  
Վար խոնարհեց զրոխը խեղճ,  
Մի փունջ պոկեց իր մազերից  
Պոկեց-զցեց խոր Հիմքի մեջ,-  
Բայց աչքերում ցավն արցունքվեց.  
Գլխի ցավից արքան ձկվեց,  
Արքայական բնոր դողաց՝  
Քունքին արյան մի շիթ շողաց,  
Իջավ կարմիր մի թեղի պես,  
Այտին մնաց, բայց աղեկեղ  
Այս ցավին էլ սիրուր տուկաց.

(- Դժարն Հոգու ցավն է, ովք Տեր ...):  
Ամրոխի մեջ մեկն Հեկեկաց,  
- Կապրն արքան ու վանքը մեր ...  
Գոռաց մեկը ու միասին՝  
- Ասպած կենա արքան, - ասին,  
Ամրոխն ապշեց ու երկյուղած  
Տևսավ արյան թելն ու դողաց,  
Իր սրտի մեջ իրավ ցավեց  
Թագավորին իր հաղթ ու մեծ:  
Ապա արքան առանց խոսքի  
Հիմքը զցեց թագն էլ ուկի.  
Որ չէր զցել ոչ մի վանքի  
Ոչ մի Հիմքը ոչ մի արքա,-  
Բայց սա զցեց, ասաց՝ «Փրկեա՛ ...»:  
Մեկն արքայի ոտքը զրկեց  
Եվ Համբուրեց ոտքն արքայի,  
Մեկն էլ զլխից մի փունջ պոկեց,  
Արքայի պես, առանց վայի՝  
Հիմքը զցեց, ասաց՝ մեղա՛ ...  
Մունկի իջավ մի արեղա  
Ու աղոթքով, շրթնադողով  
Մունկի իջավ ամրոխը ողջ,  
Արքան Հուզվեց և աղոթքի  
Շշնջունով իջավ ծունկի,  
Ամենքի Հետ խաչակնքեց,  
Ու վեր կացավ. գնաց զրկեց  
Սպարապետ Պահապտունուն  
Գաղտնի ասաց.  
- Լոիր առժամ,  
Ես կպատճեմ այս ծերունուն,  
Մեսազիմին իմ անարժան,  
Այս, իրավ է ծախել Անին ...  
- Թող թրատեմ այդ գաղանին ...  
- Չէ՛, մի՛ անի, սպարապետ,  
Թող տապակվի իր ցավի Հետ,  
էլ իմը չես,  
Թե սպանես ...  
Խուլ աղերսեց իր Հավլունուն,

Հանեց իր թուրն արքայական  
Տվեց իր քաջ Պահապահունուն,-  
— Որ ազատես Հողն Հայկական,  
Երդվում ևմ ևս,  
Որ կազատես ...  
Ու մտքի մեջ ողբաց ու խեղճ  
Ելավ, ինչպես լուսինն ամպից,  
Հեծավ իր ձին ճերմակ ու պերճ,  
Քշեց, զատվեց չքախմբից՝  
Ետ թողնելով Համհարդներին,  
Սրտի ամպի ցողն աչքերին  
Ու մտատանջ, լուռ Հեռանում,  
Բայց ամբոխին չէր մոռանում.-  
Մեկ ամբոխին, Հազար ու մեկ  
Մեղքն էր Հիշում սրտակեղեք ...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Ու երբ հեռացավ արքան վիրավոր՝  
 Ամրոխի սիրուց խիղճը խայթը ված,  
 – Աշա քեզ իրավ մարդ ու թագավոր ...  
 Եղջաց մանուկ ամրոխն երկյուղած:  
 – Արքային տեսա,  
 Մուրազիս Հասա ...

Ասաց վանեցի մի խևդ արեղա.  
 – Բայց ինչո՞ւ այնքան շատ ասաց «մեղա»,  
 – Որ թոնզրակեցոց աշքերն է Հանել ...  
 – Աչքերն է Հանել՝ Հո չի սպանել...  
 – Տեսա՞ր՝ աղքատին ինչպես Համբուրեց,  
 Երբ նա իր խաչը նվիրեց վանքին:-  
 – Բայց դուք լսեցի՞ք, թե ինչ երդրվեց.  
 – Հա՛ ... որ Հողերը ետ կառնի կրկին,  
 – Այս, թերան չէր, այլ սուրբ տաճար,  
 Շատ էր նեղվում Անին անճար,  
 Վանից, Մուշից փախչում, լսիս,  
 Հազար կողմից գաղթում, գալիս  
 Լցնում Անին՝ ողբում են «վայ»,  
 Հայը Հային տեղ չի տալիս,  
 Հայը Հային Հայ չէ, այլ վայ...»:  
 – Նախանձի մեջ ենք Հայերս թաղվում ...  
 – Իրավ, Անիում այնպես ենք նեղվում,  
 Ինչպես վաթուն  
 Փեթակ մեղուն  
 Լցնես մի խեղճ  
 Փեթակի մեջ ...  
 – Անին՝ մի գդալ, ազգն՝ Հազար թերան,  
 Եվ Հայերն իրար նախանձից կերան ...  
 – Տեղներս նեղ է, էնդի ենք նախանձ ...  
 – Գեթ մի աշքդ բաց, ով Հայոց Աստված,  
 Ետ առ Հողերը ողջ Հայաստանի,-

Թող թուրբ-սելֆուկը Հայ ցավը տանի,  
— Տե՛ր, ոչ մի ազգի մահը չենք ուզում,  
Մեր կյանքն ենք ուզում, մեր Հողը վկա.  
— Քանի դեռ թուրբն է թուրանի լեզուն՝  
Հայ ու թուրբի մեջ Հաշտություն չկա»:

Ու ծով ամրոխը լուռ ծնրադրըց Հենված Հավատին՝  
Խաչակիւրելով խաչքարի նման կնճռուտ ճակատին,  
Նարեկացու պես վերջնծայելով աղոթքն Հայրենին.՝

Աղատիր, Աստված, Հողն Հայաստանի.

Մեր թագավորը խաչ է, ոչ թե թուր,

Մեր թագավորին քո մեծ թուրը տուր...»

— Հասիր, ո՞վ Տեր ամենահաւաս,

Հասիր, որ գեթ մերը մեղ տաս,

Մեր Հողերն են ողջը խել,

Դու էլ ևս մեղ ուզում ձուցել,

Որ չես Հայանում մեր նեղ օրին.

Որ էլ տեր չես մեր Հողերին,

Դու որ չտաս՝ էլ ո՞վ կտա,

Ո՞վ Տեր՝ էլ ո՞վ քեզ Հավատա...»:

Ու անթեղ-ամրոխն իր մոխրի տակից

Բոցի պես ելակ մարգաւծ թռնղրակից.՝

— Մեզ մի Անխում մի՛ խեղդիր այսովես՝

Կթռնղրականանիք, թե ճառփին կապես,

Թե Հայաստանի ճամփին չբանաս...

— Մեղամ, անմեղ ենք, ո՞վ ամենահաւաս,

Ու թռնղրակաղունչ մոռնչն ամրոխի

Դուերն էր բախում իր քանդված Հողի.

— Ինչպես ասեմ քեզ Հայաստան,

Երբ քո Մասիս սարը չտնես,

Դժրախտ Անի, Ղարս, Արդահան,

Երբ Վանա ծով ճարը չտնես,

Երբ ուսք ելուող մանկանց չուրթին

Քո Հայերն բառը չտնես ...»

Ու ողբն ամրոխի՝ թե բոցի փոխվեր՝

Պիտի Աստղօտ մորուքից կախմեր.՝

— Արարատն՝ Հավերժ օրորանն Հայոց՝

Ինչո՞ւ ևս զարձնում գերեզմանն Հայոց»:

Եվ ամրոց մտավ ՅՀան Սմբատը  
 Ամրոխի սիրուց սիրուր խայթը ված,  
 – Տաճար է,- ասաց,- ազգիս Հավատոր.  
 Բայց ... ինչոր այուն է գաղտնի խախտը ված...  
 Ասես Հայտնի է իմ մնջքն ամրոխին.  
 – ԶԵ՞՛, թե Հայտնի՞ն փուլ կդա խսկույն  
 Ազգիս Հավատի տաճարն իմ զյսին,  
 էլ ինձ չի նայե, ինչպես Աստրծուն:  
 Բայց ես, Աստված իմ, ես մաքուր էի,  
 Ամրոխն անապատ՝ ես աղբյուր էի.  
 Սուրբ աղբյուր էի Հայրենյաց շուրթին,  
 Ինձ անընդույժ դարձրին այսքան  
 Ազգիս փոքրությունն ու Հարճս մթին,  
 Եվ սատանայի բաղուկն իսկական՝  
 Մոխրով էլ վառող ահը թռնղրակյան,  
 Թուրը խաչնդրոր, թուրը պարսկանեռ,  
 Մի թրիս ընդդեմ թուրն Հաղարաձեռ,  
 Թուրը իրանի, թուրը թուրանի,  
 Մի խաչիս ընդդեմ թուրը դուրանի,  
 Սեղուկը վայրագ, արարը կրակ,  
 Բախտը յոթը Հոգմ, Հայր մի ճրագ,  
 Տոթն ահի մեջ եմ, Անին ինչ անի,  
 Ներշակ նախարարք ու ցուլը դարկան՝  
 Չեղրայրս ներշակ ...»:

### Հառաջնց արքան

Ու լուս մուտեցավ իր պառկած Հարճին.  
 – Օծեցինք Հիմնումն իմ վանքի, ասաց:  
 – Դև երդվիր, արքա, քո Հոր անունով,-  
 Ատրուշանաշունչ Հարճը շշնջաց,  
 Երդվիր երեսիդ Հայոց մեռոնով,  
 Որ ինձ էլ պիտի մզկիթ կառուցես ...  
 – Չքվիր,- մռնչաց նոր ծնվող արքան,  
 Դու պիտի Հայոց իմ Աստծոն պաշտես,  
 Այս է Հրամանն իմ արքայական,  
 Առաջին մոմք դու պիտի վառես  
 Նոր եկեղեցում իմ քավարանի.

իմ Հայոց խունկը պիտի բուրգառես  
Ասորուշանի տեղ քո ժանաւ Իրանի,-  
Դու պիտի մարես ասորուշանը, չո՞ւնա:  
Եվ ասորուշանը մարեց ինքն արքան.  
— Մզկի՞թ կառուցեմ Հայոց Անիում,  
Մզկի՞թ կառուցեմ, մողե՞ր թերել տամ ...  
Բայց ես քո ճերմակ մարմինը պիտի  
Ճերմակ մոմի պես վառեմ իմ վանքում,  
Որ մարդի գժոխքն իմ խարված սրտի,-  
Ի՞նչ Հարձ ... սուլթան ես Հայ արքունիքում ...  
Անին ծախսեցիր, Հիմա էլ մզկի՞թ,  
Պիտի Հայանաս իմ Հայոց վանքում.  
— Չէ՛, իմ Աստվածը ուժը չէ բազկիդ՝  
Տեր արքա, զոռով կրոն չի լինի.  
— Կինի, դաշույնն ամեն ինչ կանի,  
Մոմ պիտի վառես, օրը յոթը մոմ,  
Մոմ պիտի պահես, յոթը տարի ծոմ,  
Որ քավես մեղքը՝ մերանն իմ մեղքի:  
— Ի՞նչ մեղք, եկ ծոցը քո ծոցվոր ծաղկի...  
Բայց արքան Հարձին չլսեց, կարծես.  
— Մզկի՞թ կառուցեն Հայ Բազրւառունիք,  
Էլ ի՞նչ Հայ Աստված, էլ ի՞նչ Հայրենիք.  
Ով դու անզգամ, էլ ի՞նչ Հայոց ազգ,  
Եվ խակույն քաշեց իր դաշույնն արքան,  
Բայց Հարձը ճշաց՝ «Հահի» աղջկան ...  
Հետն էլ քո որդո՞ւն, մի՞թեն չես տեսնում,  
Որ ժառանգորդ է քո գահին Հասնում...»:  
Արքայի ձեռքից դաշույնն ընկավ ցած,  
Ասես ցած ընկավ նա ինքն իր գահից,  
Վեր թռան Հոնքերն ու քաշեց՝ ապշած՝  
Գիշերաշղարչն Հարմի վրայից,  
Որ աչքով տեսնի ...  
— Արքա, չեմ խարե,  
Ետ քաշիր խարված դաշույնն աչքերիդ,  
Մեր թրով երկու արյուն մի թափեն ...  
Տես՝ կփոշմանես, կլորչի որդիդ,-  
Տես՝ կրծքիս տակ է, շարժվում է արդեն,  
Գահաժառանգդ աշխարհ է գալու,

Թող ծնվի,- Հետո ասա ինձ մորթեն՝  
Թէ որ իրավ ես դու ինձ մորթելու:  
— Դու ինձ խարում ես, դու դավել ես ինձ,  
Ամուլ է մեջքս, թագուհիս վկա:  
— Ամուլը նա է, սա քոնն է, քեզնից ...  
Ու խեց դաշույնն արքայի ձեռից,  
Ինչպես քնքշությամբ դայրույթը մոզես՝  
Եղնիմի ձեռքով  
Վագրի բերանից ժանիքը պոկես ...  
Իրավ, Աստծուն էլ խելքից կհանի  
Կինը ... Թէ կին է այսքան գեղանի,  
Այսքան նրբամիտ, այսքան մեղրաշուրթ -  
Այսքան մարմնակին, այսքան անհաղուրդ,  
Այսքան խորամանկ, այսքան չարամանկ,  
Այսքան մեղրասուտ և այսքան անգութ:  
— Թող ծնեմ ... ապա դու ինձ կործանի՝  
Առյուծի դուստրն առյուծ կծնի ...».  
Բայց վերածնեց զղջումն արքային  
Եվ իմաստնացած՝ այսպես մոնչաց.  
— Ի՞նչ ... պարսի՞կ բազմն իմ Հայոց գահին...  
Մզկի՞թ էլ կուզես, ումո՞վ ես, ով քած,  
Մեղքիս բռունցքը Մասիս կփղի,  
Ով դու պարսկարող, քո մեղքն է, էլի,  
Ումո՞վ ես պղծել մահին իմ Հայոց,  
Իմ մեջքն ամուլ է, ումո՞վ ես պղծել:  
— Խելքի՛ նկ, վայ ինձ, անմեղ եմ, այ օձ,  
Ինձ մորքով անզամ մարդ չի մոտեցել:  
Կարո՞ղ է մարդը մոտենալ աստղին,-  
Համրութել կուրծքը լուսնի ամոթիսած:  
— Թէ կինն ուզենա՝ կարող է, ով կին,-  
Մոնչաց արքան խանդից գունատված ...  
Ու Հարճի ձեռից դաշույնը խեց,  
Սարսափը Հարճի մեռ կամքը վկեց.  
— Հղի չեմ, - ճշաց,  
Եվ ընկավ բարձին,-  
Արքան շունչ քաշեց, դուրս ելավ արքան,  
Ներս մտավ ախոռ, դուրս քաշեց իր ձին,  
Առանց թիկնասպահ՝ առաջին անզամ՝

Առաջին անգամ առանց Համհարդի,  
Առանց թուր ու թագ և առանց զորդի,  
Եվ աշակորույս,  
Հեծավ, քչեց դուրս,-  
Ինքն էլ չիմացավ, թե ինչու Համար,-  
Քչեց՝ փախչելո՞ւ անարդ աշխարհից,  
Թե՞ւ վառվող զլուխն Հովերի՞ն տալու,  
Մի՞րաբ բանալու Հօր գերեզմանին,  
Մոր գերեզմանի՞ն իր վիշտը լալու,  
Թե՞ւ կուլ գնալու ծով Ախուրյանին ...

## 3

Դեռ ոչ մի չիրիմ ընդունած սերմը վեր չի ընձյուղել,  
Ոչ մի գերեզման չի դառել ոչ մի Հարության արգանդ,  
Բայց աշա մաշն էլ իր Համբերժ ամուլ օրենքը փոխել՝  
Վեր է ընձյուղում սերմն Հայրենավանդ՝  
Դարձնելով Հայոց գերեզմանները Հարության արգանդ ...

Ու մոլորված, բայց դեռ չուքով  
Կանցներ արքան իր նժույգով.  
Շիրմաց մոտով իր պապերի,  
Արքաների շիրմաց մոտով.  
Կաղնու մոտով այն վիթխարի,  
Որ գուրս եկել մի արմատով՝  
Կյանք էր փնտրել մայր Հողից դուրս,  
Բայց չէր գտել՝ ծովել անհույս՝  
Ասես խռով, որ չէր գտել.  
Արմունկ տալով՝ Հող էր մտել,-  
Թողած արմունկն Հեգ անցորդին,  
Ու քշում էր արքան իր ձին,  
Երբ որ մտավ իր ձիու խեղճ  
Ոտքն արմատի արմունկի մեջ,  
Հսկա կաղնու արմատի տակ  
Բանտվեց ոտքը սալասմբակ,  
Ու ձին կանգնեց, բայց արքային  
Թվաց շարժվեց շիրմը Հին,  
Թվաց շիրմից մի ձեռ Հառնեց,  
Զիու ոտքը ամուր բռնեց.-

Որ ձին կանգնեց, կանգնեց, իրավ.

Եվ արքայի խելքը ... թռավ.

Ո՞վ չէր ապշի, ու ապշեցին՝

Քար կտրեցին արքան ու ձին ...

— Զլինի՞ թե չարքի փոխում՝

Մեռելներն են ոտքից կախվում,-

Ասաց մտքում իր ցավալի,-

Ո՞վ չէր գմմի, երբ ավելի

Մի ահալի տեսիլ տեսավ՝

Շուռ եկավ Հողը Հոր գերեզմանի՝

Որդին սասանեց, այս ի՞նչ է, ասավ,-

Իմ վերջը Հասավ, ների՛ր ինձ, Անի՛ ...»:

— Ո՞վ կների, քո վերջն Հասավ,-

Իր թագավոր Հայրը շիրմից

Գլուխն Հանեց՝ չքփի՛ր, ասավ,-

Դու չես ծնվել իմ Հայ զարմից»:

Ու դուս եկավ կմախրն Հողից.

Գանգե զլիսին թագը շտկեց,

Մի կողուկը Հանեց կողից՝

Իրեն որդուն՝ մի կողմ նետեց.

Ուանի Հայր Գաղիկ արքան:

Ու եռ չանցած մի թարթ-վայրկյան՝

Շուռ եկավ Հողն Էլ ուրիշ մի շիրմի

Հոր գերեզմանի Հոր ու քարի պես,-

Դուրս եկավ կմախրն առյուծազարմի,

ԱՀեղատեսիկ, բայց թախծուտ ու Հեզ.

Վահանը բազկին ու դրահավոր

Աշուս Երկաթի կմախրն ահավոր,

Ոսկեղեն թագը կմախրե զլիսին,-

Չգեց կմախր ձեռն Ուանի բնդին.

Ու կրակ թափեց գատարկ աշքերով՝

Կմախր ծնոտներն իրար խփելով,

— Լավ էր Աստծո դեմ թոնդրականայիր

Քան թե մայր Անին թշնամուն տայիր ...

Եվ Հողը մտավ կմախրն Էլ նրա,

Շիրմաքարն Էլի եկավ իր վրա:

... Թրիվ ամպերն ամբոխվեցին,

Կայծակեցին մոայլ Հեռվում,

Արքան ուզեց քշել իր ձին,  
Բայց մեռելոց աչքն էր չովում  
Նիդիմներից այն խռովյալ՝  
Չովում աչքին իր նզովյալ,-  
Զիոն ոտքն էլ դեռ բռնըված՝  
Մեռելներով էր խռնըված  
Խաթարված միտքն իր մեղսավախ ...  
— Այս, աշխարհի վերջն է, ավաղ,  
Ու թագավորը ցնորվեց կրկին՝  
Ելավ, երևաց իր մայրն էլ աչքին,-  
Ելավ Հողից և մայրը Հեղ՝  
Կմախք մայրը, խաչը ձեռքին,  
Թուրը մյուս ձեռքին, Հոր պես,-  
Թուրը քաշեց, բայց չզարկեց՝  
(Կմախքում էլ մոր սերն է մեծ):  
Որդու ցնորքով ելավ մայրն Հողից՝  
Մի կողոսկը պոկեց կողից  
Որպես եղծված որդուն իր մեծ  
Զուրը գցեց ու անփեսց,  
— Էլ քեզ Համար չեմ աղոթի,  
Անտուն մնաս ու անոթի,-  
Կառուցվող վանքն էլ մեղքդ չի քավե,  
Քանդի փղված է վանքը քո խղճի,  
Իր մորն է պղծում՝ ով աղօֆին դավե,  
Դու ինձ պղծեցիր գրկում քո Հարմի.  
Դու պղծեցիր Անին մեր կույս,  
Քեզ չեն փրկի՝ շինես թեկուդ  
Երկու Հաղար եկեղեցի ...  
Գնա ետ առ, ով զինաղե,  
Անին ծախող քո թուղթը սե,  
Ետ առ սև քողն իմ կմախքից,  
Հարմիդ զլիսին սև քողս քից,-  
Նա քեզ մզկիթ էլ կառուցել կտա՝  
Մորդ կառուցված վանքի քարերով»:  
Ու կմախքե իր մատներով  
Ուզեց որդու աչքերն հանել ...  
... Եվ աշեղ ելավ, մայր թագը զլիսին,  
Բնիքը՝ Տիգրան Մեծ արքայից-արքան,

Ու թքեց ՕՀան արքայի բևդին,  
Մեռած աստրծո կմախսի նման:  
Ու խփեց կմախս ծնոտներն իրար,  
ԱՀեղատեսիլ Տիգրան Մեծը մեծ,  
Յոթը կողոսկր պոկեց իր կողքից՝  
Յոթ Վասակի տեղ անդունդը նետեց,-  
- Մեկն էլ դու,- ասաց,- չքվիր իմ Հողից ...  
ՕՀան Սմբատին զարդանդով բանտեց  
Մեռելամունչն աշեղ արքայի,  
- Դու ես ասպավննն իմ Հայոց գահի,  
Ո՞ւր է ծովիցծով Հայաստանն, - ասավ.  
Այսպե՞ս պահեցիր դուք իմ թագը մեծ,  
Որ ցամաքելով մի գետի Հասավ  
Իմ վահագնածով Հայոց աղջը մեծ,  
Ո՞վ Մասսի զիմից իմ թագը պոկեց ...  
Ո՞ւր է Վանա ծով մի աշքն իմ աղջի,-  
Ինչպե՞ս թողեցիր, որ ծով աշքն Հանվեց.  
Ուր է ծով ծածկող անտառն Հայ բազկի.  
Որ ցամաքելով աղջն էլ սեանսվեց,-  
Մի աղջ, որ, կարծես, և կա, և չկա...  
Այսպե՞ս թողեցի իմ գահը ես ձեզ,  
Ով Հարճաց ստրուկ, ստրկաց արքա,  
Ինչպե՞ս է զղջման արցունքը քո Հեզ,  
Ով թոնդրակացյալ, ով թաթարացյալ.  
Ով Բյուզանդի Հարճ, պարսկին իգացյալ,  
Քո մեղքն, իմացիր, քո մեղքը դարձյալ  
Քո մեղաց ծովը, որ քեզ շամոքեց,  
Անին վաճառող թուղթը չէ միայն,  
Միայն թուղթը չէ, որ բեղդ պոկեց ...  
Ու մոնշաց պատգամաձայն,  
- Պժկալի ես դու առավել,  
Երբ Հույսը չես Հայաստանի,  
Թե ուզում ես մեղքդ բավել,  
Ե՛տ առ Հողերն իմ ուստանի:  
Ե՛տ առ իմ Վանն ու Վանա ծով,  
Որ դեռ լիքն են մորդ լացով:  
Ե՛տ առ Հողերն իմ Հայկական,  
Աղջից խլված Մասիսը վես,

Ե՞տ առ վերջին բլուրն անգամ,  
Յոթանասուն իմ Հովտի պես,-  
Ե՞տ առ, քարեր-տարերն առ ետ,  
Ազգից խլված դարերն առ ետ:  
Ե՞տ առ Եփրատն, Արածանին,  
Ազգից խլված դարերն առ ետ,

Ե՞տ առ Տիգրիսն՝ Հայոց գինին,  
Սիրոս խրված նետերն առ ետ,-  
Ե՞տ առ, Վահնա Հովերն առ ետ,  
Ազգից խլված ծովերն առ ետ:

Ե՞տ առ սարերն իմ Սասունա,  
Ազգից խլված իմ բախտն առ ետ,  
Ե՞տ առ Բինովյոն իմ բյուրակնյա,  
Ազգից խլված դրախտն առ ետ,

Ե՞տ առ, պանդոխտ ձևոներն առ ետ,  
Ազգից խլված լեռներն առ ետ:  
Ե՞տ առ Վահն ու Վասպուրական,  
Ազգից խլված Տղմուտն առ ետ,

Ե՞տ առ Թրով իմ խողական,  
Տարոնն՝ Հայոց զմրուխտն առ ետ,  
Ե՞տ առ, Հույսիս շողերն առ ետ,  
Ազգից խլված Հողերն առ ետ:

Ե՞տ առ խլված ծովն էլ Վահնա՝  
Հանված ծով աշքն Հայաստանի,  
Խառնե ծովին իմ Սևանա,-  
Որ աղքն Հարյավ վերածնի ...

Ե՞տ առ պատիմին Հայոց բաղկի.  
Որ ծովանա գետն իմ աղքի,-  
Ե՞տ առ առմենն, ով եղկելի.  
Թե չէ՝ ծովիցծով կխոսեն

Մեղաց մասին քո նողկալի.  
Ե՞տ առ, որ քո վիշտը կիսեն ...  
Ե՞տ առ, Մասիս սարերն առ ետ,  
Ազգից խլված դարերն առ ետ:

Ասաց ու ցաւմամբ Հող մտավ անմեռ  
Հայոց պատգամով արքայից-արքան,-  
Եվ Հոդի տակից լսվում էին դեռ  
Ողբն ու մոռնչը նրա խոյական,  
Ողբն ու նզովքը, մոռնչը նրա.  
Եվ քարանում էր տեսիլների մեջ  
ՕՀան-Մըբատը գեռ ձիու վրա -  
Ու կուչ էր գալիս նվաստուն ու խեղճ,  
Մի բուռ էր գառնում աշ ու գարդանդով,  
Կմախարների մեջ աշեղավրդով,  
Կմախարկոփ տեսիլների մեջ<sup>1</sup>;  
Դեղին տուղտ էին շուրթերը դառել,  
Փրփուր էր պատել զեղնած բերանին,  
Կարծես թե արդեն թշնամին առել  
Իր թղթով, արդեն վառում էր Անին:  
Եվ դեռ նզովող լեզուների պես  
Գերեզմաններից բոց էր զուրս գալիս,  
Աշեղատեսիլ դժոխքն էր, ասես,  
Իր շուրջն ու ավեր իր սրտում լալիս:  
Ու գեռ ելնում կմախարցյալ  
Թքում էին ու թառակում,  
Եվ Հող էին մտնում դարձայ,  
Հողի տակ էլ խայտառակում,  
Ճշում էին խոռ մոռնչով  
Արքաները մեր Հաղթական.  
- Բավ է պղծես քո պիղծ շնչով  
Գերեզմանոցն արքայական ...  
Ու գեռ մայր Հողից պոռթկում էր բարի  
Ողբն ու մոռնչը ողջ մեռյալների.  
- Զմոռանաս, թե ինչ զարմեց  
Տիգրան Մեծի պատգամը մեծ ...

<sup>1</sup> Պոհմի այս Հատվածում ավելացված է եղել սարսափով բառը, որը Հեղինակը չի հերթին և իր ձեռագրով ավելացրել է.

Իսկ զերեզմանից մոր ձեռքը,  
Կմախարք ձեռքը դուրս ցցվել,  
Գրաց էր շափում իր որդու վրա:  
Անկարսիի երասի որոշել այս Հավելման ճիշտ տեսքը, մանավանդ որ ունի անհարթություններ և հանգավորված չէ: Այն առկա է առյօն զյուի վերջում՝ մշակված տարրերակով - բայց:

Այս ամեննն աշեղ՝ աչքին երևում՝  
Քամին մեռելի մռունչ էր թվում.  
Կմախըների մեջ աշեղատեսիլ,  
Խաչակնքում էր՝ Աստվածածնի հմ, Հասիր ...  
Բայց այս ինչո՞ւ ձին քրտնեց.  
Ամպերն ինչո՞ւ կայծակեցին,-  
Չին ծառս եղավ, ձին խրտընեց,  
Չին խրտընեց, ծառս եղավ ձին,  
Ոտն աղատեց կաղնու մեռից.  
Կաղնու մեռից, մեռելներից,  
Ոտքն աղատեց, չունչ քաշեցին,  
Շունչ՝ կիսամեռ Ծանն ու ձին;  
Չին մարդու պես ոտքը քաշեց  
Ու վրնջաց աղատությամբ,-  
Ու ոչ թե Ծան Սմբատը գժվեց.  
Այլ իմաստնացավ աղնիվ խենթությամբ:-  
Իր ազգի Համար խելագարվելը  
Իմաստությունն էր իր ամենամեծ,-  
- Չիս բաց թողին մեռյալները ...  
Եվ դեռ իմն են իմ մեռները,-  
Ասաց, սիրութ խայտաց ուժգին,  
Ասպանդակեց իր նժույգին,  
Բայց երբ մի պահ ձին վարանեց,  
Խելաշեղվածն էլ չսպասեց,  
Իջավ ձիուց, ոտքով վագեց՝  
Իրը ոտքով չուտ կհասնի ...  
Բայց ետևից ձայներ Հասան,  
Ու ետ նայեց, բայց ինչ տեսնի՝  
Մեռյալները լայիս էին,  
Ետևեն ընկած գալիս էին,  
Կանչում էին, ճշում էին.  
- Ո՞ւր ես վազում, - գոչում էին,-  
Քո տեղը չէ Հայոց գահը,  
Դու կրերես Հայոց մահը ...»:  
Կանչում էին, ճշում բարի  
Մեռյալները ողջ դարերի,  
Մեռյալները ետևեն ընկած,  
Վազում էին, գոչում անվերջ

Մեռյալները ... իր Հոգու մեջ,  
Մեռյալները անլուկի՝  
Սուրբ ցնորդներն իր աշուկի,  
Խոլ ստվերներն իրավ զղջման

կանչում էին՝

— Է՞ջ գերեզման ...

Բայց նա աշխց ևս չէր նայում,  
Ուր լոկ մի խեղճ քու էր վայում,  
Որ մնուելի ձայն կթվար  
Երկչոս սրտին իր մնդսաւար:  
Մեկ էլ կազնին՝ եյնող Հոգմից  
Իր խշոցով՝ շիրմաց կողմից՝  
Մեռյալների գոչն էր թվում  
Թագավորին միջնածովում:  
Մեկ էլ մին էր մեռ քարափին,  
Ախուրյանի քարձր ափին  
Մենակ կանգնած, մերթ վրնջում,-  
Ասես մին էլ ես է կանչում  
Խոլ մոնչով Տիգրան Մեծի՝  
— Ե՞տ զառ ... զահից մեզ մի զցի ...  
— Ե՞տ զառ, զահը քու տեղը չէ ...  
— Ե՞տ զառ, զղջա, Ասոված կանչն ...  
Բայց թոշում էր զեռ աշագնած  
Մեռյալներից առաջ քնկած  
Թագավորը զեպի Անի,  
Որ սրբազնն վրեմն Հանի ...  
Ու կաղնիկադ Անի մոտավ.  
Մթնում Հարճի դուռը գտավ,  
Վախսեց, թե ինչ՝ կանչեց զահանին,  
Բայց փոշմանեց՝ չքվի՛ր, ասաց,  
Ինքը մտավ, գտավ Հարճին,  
Հարճին՝ չքնաղ մահանին քնած:-  
Բայց էլի գերվեց մարմնով իր Հարճի ...  
— Իր ինքն է նման քնած կարիճի,  
Հասպա կուրծքն, ափա՛ղ, կարապ է կարծես,  
Եվ ո՞վ չէր խարվի, որ Հայոց արքան,  
Ո՞ր առնամարդը չէր խարվի, ինձ պես,

Դրախտամարմնով այս կախարդական,-  
Քնած է ... ինչ լավ կղիներ, սակայն,  
Որ այլոց ձեռով արյունը թափվեր՝  
Գաղտնի բներեցի, գաղտնի չշքվեր ...  
— Իր մազերի հյուսքով խեղդիր ...  
— Խեղդիր, ապա դու քեզ հաղթիր ...  
— Քեզ էլ խեղդիր, — զոռում էին  
Դրսից գետն ու մեռնլային  
ԱՀեղասաստ ձայնով ... Հոգում՝  
Թվաց, թե ներս մտան խկույն  
Խոլ կմախքներն արքայական,-  
Ռու վեր թռավ հարճը նկուն,  
Բայց փաթաթեց Ծան արքան  
Հարճի վիզը մազերն հարճի՝  
Ինչպես պարան արդար դաշնի:  
Հարճը շշմեց, ապշեց, ճշաց,  
Գոռաց անգոր ու շնչաց.  
— Այս ինչպես ես այսօր ... սիրում,  
Այս ինչեր են քո աչքերում ...  
Չէ՛, չես սիրում էլ խղճուկիս,  
Ճամփն ինձ գիրկն հայրենիքիս,-  
Թե չէ ...  
— Թե չէ ի՞նչ, - մռնչաց արքան:  
— Թե չէ՛ չես պրծնի դու իմ Հոր ձեռքից,  
Անին էլ տուրը կտաս, զլուխտ էլ ...  
Բայց արքան պոկվեց իր սիրո կուռքից՝  
— Մի՞թե չեմ կարող ես ինձ էլ հաղթել ...  
Ռու բռնեց Հարճի հյուսքը մազերի  
Օձ-պարանի պես ձեռքին փաթաթեց  
Եվ այնպես քաշեց, որ իր նազելի  
Հարճի աչքի մնջ սև արյուն կաթեց:  
Բայց խղճա՞ց, թե ինչ՝ բաց թողեց Հարճին,  
Գնաց, որ քնից հանի իր դաշնին ...  
Պարսկուհին ասաց՝ ալլահ իմ, ասա,  
Փլվեց երազիս գահը փիրուզյա,  
Էլ չեմ դառնալու հայոց թագուհի:  
— Չես դառնա, - ասաց շշուկն իր մահի  
Որ սուրն էր սրում դեռ դռան նուն,

Ու կարապի պես  
Երգեց պարսկուհին  
Իր Հայրենիքի  
Կարոտով անթե:-  
— Օտար երկրի մեջ,  
Արքայի գրկում  
Մի Հավք եմ ես խեղճ՝  
Ռոկի վանդակում:  
Ի՞նչ անեմ ռոկին,-  
Երբ որ սեր չկա,  
Երբ սիրո խոսրին  
Վերջը տեր չկա:  
Հազար երանի՝  
Ով Հայրենիքում  
Մի խրճիթ ունի  
Աղքատ մոր գրկում:

Բայց ձայն տվեց արքան դաշճին.  
— Վերջացըրո՞ւ, Հրամայեց,  
— Արքա՛, թքեմ, ես քո խաչին,  
Ալահա՛ Հազիվ Հարճը վայեց,  
Բայց ալլահն էլ շխնայեց,  
Երբ դաշճը խեղդեց Հարճին՝  
Բիրտ դաշճը՝ քնքուշ դաշճին:  
Խեղդեց դաշճին Հայոց բախտի  
Ու դուրս նետեց կես զիշերով  
Պատու Հանից գոռ պալատի,-  
Անին ծախող ժանտ Հուշերով ...  
Ու դիակը, ասես լալով,  
Լուսնի Համբ ծիծաղի տակ.  
Բարձր քերդից վար սուրալով  
Ընկավ, սուզվեց անզունդն անտակ,  
Սղում գարկված կարապի պես,  
Բայց փրփուրով ճերմակ մարմնի  
Ելավ երեսն Ախուրյանի.-  
Ինչպես խեղդված մի ջրահարս,  
Եվ Ախուրյանն ահեղավաղ  
Զարկեց ժայռին՝ այս Հեք՝ ասավ,  
Երբ որ միայն Հարճին տեսավ ...

## Գ Լ Ո Ւ Խ Ն Ա Խ Ա Վ Ե Ր Զ Ի Ն

Արևն իջել էր, բայց դեռ ակնողևս.  
Անիփ բարձր պարսպի վրա  
Այծյամը որսկան իր սիրածի հետ  
Թիվնած դիտում էր ձորերը նրա:-  
— Ի՞նչ գեղեցիկ է Ախուրյան գետը,  
— Ինչպես Հայրիկիդ արծաթե գոտին,  
— Տե՛ս՝ ձիով եղավ սպարապետը,  
— Ուկե ասպանդակ ունի իր ոտին,  
— Արքան է ուկին պարզենել նրան,  
— Արի՛, Այծեմի՛կ, իջնենք Ախուրյան ...  
— Ուշ է, Հայրիկս հիմի տուն կգա,  
Ու շինեց անուշ երևան աղջկա.  
— Նայի՛ր, Վարազիկ, կանգնած՝ մեկուսի՝  
Ի՞նչ գեղեցիկ է վանքն Հռոմոսի,  
Վեղարը զլիխն՝ կանգնած այն Հովտում,  
Կաթողիկոսն է կարծես աղոթում,  
Կարծես Մաշտոցն է, որ տեսիլքի պես,  
Երկնքում Հայոց գրերն է կարդում ...  
Այդ մեծ գմբեթն է, մայր վեղարը վես:  
Իսկ երկու փոքրիկ գմբեթները, տե՛ս,  
Մայր գմբեթն իրենց երկու կողմն առած՝  
Երկու կապուտներ Հավքեր են կարծես,  
Երկու աղավնի՝ ուսերին թառած;  
— Իրավ, սիրուն է, չվարեց տղան,  
Մատաղ Հայրիկիդ՝ ճարտար վարպետին,  
Հայրդ ասում է, թե ոչ մի իշխան  
Չի Հասնում փառքով վարպետ Տրդատին,  
Համ էլ, ասում է, թե ձեզ, ուխտել եմ,  
Այս եկեղեցում պիտի պասակեմ,  
Մի եղնիկ, պիտի մօրթեմ, յոթ գառը:  
— Մեղք չե՞ն, - ի՞նչն են մեղքը, քո ցավը տանեմ,  
Ու մինչ ցնծում էր զույգը սիրաՀար,

Արքան նայում էր վանքին,- ի՞նչ անեմ,  
Արքայիս կյանքն էլ մի շիշ խորոված,  
Մոտեցող մահիս թերանը տված,  
Բայց ևս իմ այս մի շատմփուրի Համար  
Մորթեցի եղբ իմ ազգի բախտի,  
Աստված իմ, ներիր իմ մեղքը մթար,  
Ու թող շտեսնեմ դուռը դրախտի,  
Չորքը ետ քաշեց կայսրը, բայց, ավաղ,  
Իմ մահից Հետո զորքն խկույն կզա,  
Կրացվի գաղտնիքն արյունաշաղախ»:  
Եվ աղոթում էր, որ մահը չգա ...  
Ու զիրկն էր իջնում Անիի տակի  
Գետնի տակ փորված իր գաղտնի ճամփով  
Գիրկն Անիից զուրս մենավոր վանքի,  
Իջնում էր գաղտնի ու խղճի խայթով  
Դժոխքի աշից ապշահարում էր,-  
Այն վանքում, որ Հենց ինքն էր կառուցել,  
Իրրե Հավիտյան մի ապաշավանք,  
Բայց նա այնպիսի մի մեղք էր զործել,  
Որ շէին քավի Հազար ու մի վանք ...  
- Ի՞նչ բարձի զնեմ զլուխս մեղսոս,  
Որ զեթ մի զիշեր մեղքն իմ մեջ քնի,  
Մոռանամ տված իմ թուղթն արյունոտ,  
Ավաղ, մոռանամ, գոնե, քեզ, Անի՛:  
Քեզ, որ նմանդ աշխարհը չունի,  
Բայց դու կավերվես Հենց որ Նահը զա,  
Եվ կզա զորքն էլ բող Բյուզանդիոնի»:  
Եվ աղոթում էր, որ մահը չգա ...  
Ու էլ ոչ մի Հարճ, էլ ոչ մի զինի  
Զէին կարող տալ վշտերդ քամուն,  
Բաժակում տեսնում իր դեմքն արքենի՝  
Կարծես տեսնում էր Հայոց թշնամուն;  
Դյուխ չէր Հանում չար ցնորքներից  
Կաթողիկոսին կանչում էր նորից  
- Ո՞ւր է, չընրիր մի երազահան,  
- Կրերես, արքա՛, իմ Հուսո վահան,  
- Քանի՛ զիշեր է՝ վրասե, վրա,  
Մայրս, երազում, միակ ցանկալիս,

Հագնում է, հորս զենքերն ու զրահ,  
Սաստող Հայացքով այցի է գալիս»;  
Թող զա, իմ մայրն է ինչով էլ որ զա,  
Բայց իմ զարմանքը Հայացքն է միթին,  
Ինչպես վրդովյալ արքայից արքա,  
Բայց ի՞նչ է կարդում նա իմ ճակատին;  
Թե՞ կուշել է մեղքս վասակյալ:  
Նա էն աշխարհում, իրա՞վ է, տեսնես,  
Կարո՞ղ են միթե մեռյալներն զգալ,  
Կուշել մարդոց մեղքերը, մեղ պես,  
Էն աշխարհի մեջ, Հանդերձյալ կյանքում,  
– Ինչպե՞ս չէ, տեր իմ, անմահ է ողին,  
Ռզով են զգում, ողին, ի՞մ որդյակ,  
– Բայց ի՞նչ է կարդում նա իմ ճակատին,  
Բայց զինիդ խմե, կանցնի տեր արքա,  
Աղօք սար, մարդոց ամազ է անցողիկ,  
– Բայց ինչո՞ւ քո էլ երազին չի զա,  
Չէ՞ որ անմեղ չես դու էլ, իմ ծաղիկ,  
Չէ՞ որ սև թուղթը իմ ձեռքը զրեց,  
Իմ ձեռքը զրեց, քո ձեռքը տարավ,  
Քո ձեռքը տարավ, որ ինձ սև բերեց,  
Որ ինձ սև բերեց, իմ սիրոց կերասվ ...  
– Ի՞նչ, փոշմանել է իմ կամքի արքան,  
– Եվ ինչպե՞ս, Հայր իմ, և այն էլ ինչպե՞ս,  
Անքամիլի է մեր մեղքը, սակայն,  
– Դու զինիդ քամիր, զինին Հայր է քեզ:  
Ծառ մի՛ բեկվիր, ո՛վ տեր արքա,  
Երազիդ մեջ բարի էլ կա,  
Մայրդ Հորդ պես է գալիս,  
Մի ձեռին թուր, մի ուսին խաչ,  
Որ մոմ վառես թե տաճարիս,  
Թե Հավլունի թրին քո քաջ,  
Զահը մնաս իմ տաճարի,  
Զահը մնաս թուր Հավլունու,  
Կանթեղ մնաս, մնաս բարի,  
Անմեղանաս ... Պահապտունու  
Կամքին մնաս սպարապետ ...  
Հոր ու մոր պես լինես մեղ Հետ,

Այս է մորդ տեսիլն ասում,  
Բայց չար է, քանզի գենքով է խոսում,  
Սաստում է, որ դու որդու պես իշխես,  
Այս է իմաստոն խորհուրդը նրա,  
Մեղմանաս ... ոչ թե բազուկը փոխես  
Քո արքայական կամքը մեզ վրա:  
— Չէ՛, բռնությունը, Հայր իմ, Հեշտ է միշտ,-  
Եշնջաց աշեղ բռնակալը խեղճ,-  
Դժվարը մեղմով իշխելն է անվիշտ,  
Այս է բարբառում իմ Հայրն էլ անվերջ:  
Խելք է Հարկավոր և բռնության մեջ,  
Խելք է Հարկավոր, որ մնդմով իշխենք,  
Միշտ նեղճակատն է բռնակալ դառնում,  
Խելք է Հարկավոր, Հայր իմ, խիղճ ու խելք,  
Բութ է, ով ազգի կոկորդն է բռնում ...  
Իմ ու քո խելքով իր գահը գոյեց,  
Միշտ նեղճակատն է բռնագայլ դառնում:  
Ասաց ու իր լայն ճակատը շոյեց  
Նեղճակատ արքան,-  
— Իրավ, մոգական  
Իմաստությունն չէ բռնությունն անմիտ  
Դժարը ազատ կյանք տաղն է մարդուն,  
Դժարը կյանքն է, մահը Հեշտ է միշտ,  
Ազգին ազգ պահողն է միշտ իմաստուն:  
Հաստատուն եղիր արևի նման,  
Ոչ թե լուսնի պես միշտ փոփոխական,  
Արևի նման Հաստատուն եղիր,  
Ոչ թե լուսնի պես միշտ փոփոխական,-  
Ի՞նչ մեղք ... այդ մտքից նժոյզով փախիր,  
— Բայց երազներս չառ են խորական,  
Մերթ օձի զյուղ, արծվի թեսով  
Արծրունիք են աչքիս երևում,  
Մերթ սուրբ Սարգիսը իր ձին-արծիվով  
Ինձ սաստող Հորս տեսիլքն է թվում:  
Մերթ վիշապներ են ինձ վրա տալիս,  
Եվ թուրս ահից պատյանից քաշում,  
Քաշում եմ, քաշում, բայց դուրս չի գալիս,  
Երբ որ մեր տված սև թուղթն եմ Հիշում:

Մերթ մայրս և լնում իր գերեզմանից  
Գրող է չափում կմախքե ձեռքով,  
Մերթ մեռելներ են Հանում մեր տանից  
Բայց ետ էր գալիս մեռյալը զոռով,  
Ինձ Հրում գահից, իմ գահը խլում,  
Եվ ինքն էր բազմում իմ գահի վրա,  
Մերթ Տիպրան Մեծի կմախքն է քայլում  
Անիում ... Հազած իմ զենքն ու զրահ:  
Մերթ շիրմից Վասակն իր զլուխն Հանում  
Իր գանդի զլխով աշքով է անում,  
Ինձ դժոխք տանում,-  
— Զէ՛, մի՛ վախնանա,  
Թե ամեն մի չար երազ կատարվեր՝  
Աշխարհը հիմա պիտի կործանվեր:

Գ Լ Ո Ւ Խ Ա Ե Բ Զ Ի Ն

1

Ախուրյան գետի ջրահարսի պես  
Անդունդից ելավ գիշերը կարծես,  
Շիրակի գիշերն ինչպես մի դժբո  
Քանդեց Հյուսքերը, կանգնեց մտախուն  
Հայելու առաջ պարզ Ախուրյանի,  
Ու ուկե սանրով իր նորալուսնի  
Ուսերին սանրեց սև մաղերը սև՝  
Սևասև՝ ինչպես սև կարապի թև:  
Եվ պարանոցը լուռ զարդարելով  
Իր մարզարտաշար, ճոխ աստղահոյլով՝  
Արքայաշուքվեց աստղ ու լուսնյակով  
Ու մտավ Անի, արքային Հուսաց,-  
Իր սևաթավին չաղրացի տակով  
Գաղտնի ցոյց տվեց իր կուրծքը լուսնած ...  
Ու բախեց դուռը գիշերագշխոն,  
Բայց դուռ չբացվեց մեռած աչքի պես:  
Կախեց Հռնքերի թուխալը մրահոն,  
Սևացավ խանդից ու խանդից դողում՝  
Դղյակի դուռն էր մինչև լույս բախում  
Իր քամի ձևքով՝ թե ըմբոստ, թե Հեղ,  
Արքայի Հարճի ուրվականի պես  
Հարվում էր վշտից՝ քանդի այս գիշեր՝  
Այս էլ յոթ գիշեր, լուսնի պես անքուն,  
Քառասուն ազգի կույսերով կայսեր  
Մի ողջ Հարեմ կար արքայի զրկում ...  
Բայց զեղ չղառավ ոչ բյուզանդունին,  
Որ քար բյուզանդի չաքարն էր կրակ.  
Ոչ բյուզանդունին, ոչ արարունին,  
Որ թուխ չաքարաթ էր արքայախորակ,  
Ոչ արարունին, ոչ եթովպունին,

Որ պորտը գինու թաս էր թխորակ:  
Ոչ եթովայուհին, ոչ չերքեզուհին,  
Որ գաշույնի կոթ մեջք ուներ բարակ:  
Ոչ չերքեզուհին, ոչ թաթարուհին,  
Որ Հուր Համբույցով ձյուն էր մնայրորակ:  
Ոչ թաթարուհին, ոչ վրացուհին,  
Որ թե սուրբ ձյուն էր, թե ցոփ օշարակ:  
Ոչ վրացուհին, ոչ էլ Հնդկուհին,  
Որ շահնշահի մնողը էր կոչարա ...  
Մեղքը չմեղմեց ողջ Հարևմուհին՝  
Համբույցի մեջ էլ շատակեր նարա ...  
Ու ողջ Հարևմը՝ ի սեր Հայ գահի՝  
Էլ չարժեր թեկուզ մի հետ Հայուհի:-  
Արցունքն էր ըմպում արքան գինու հետ

Կայսեր առաքած քառասուն կույսի պորտերի թասով ...  
Ու երր օծեցին գաղտնի քավարան վանքը նորակերտ՝  
Խուզ Հրամայեց՝ անմոռաց մնողի մոռացման Հույսով՝  
— Զուգել ողջ վանքը ուկով խնկենի,  
Օծել կնորուկով, խունկով Հնդկենի,  
Մոմ վառել ձեթի ճրագի տեղակ,  
Պճել ողջ բնմը զառ-վառով շողակ,  
Իսկ թոնդրակեցոց Հանված աշքերի  
Բիրերը վառել մոմերի նման,  
Հիսուսի առջե՝ սրբապատկերի,  
Որ առավածների մնոց են անսահման;  
Եվ մի բյուրեղյա ջահ բերել տվեց  
Արքան Հեռավոր, Հուր-Հնդկաստանից,  
Իրր թե՝ մնողից մի մազ էլ քավեց՝  
Նոր թոնդրակեցոց վանեց ոստանից,  
Մայրաքաղաքից, ոստանից Անի.  
— Թող ձեր սատանան ձեր աշքերն Հանի ...  
Ու յոթը Հարյուր մոմ վառել տվեց  
Մայր տաճարի մեջ,-  
Ու զղում անվերջ,  
Քաշվում միջնարերդ, գինի էր խմում,  
Քայլ քաժակի մեջ՝ իր աշքն արքնեի՝  
Կարծես տեսնում էր Հայոց թշնամուն ...  
Ու գաղտնի զղում, վայում էր գաղտնի.

— Արդայիս կյանքն էլ մի շիշ խորոված՝  
Մոտեցող մահիս բնբանը տվառժ՝  
Բայց ևս իմ այս մի շամփուրի համար  
Մորթեցի եզր իմ ազգի բախտի,  
Աստված իմ, ների՞ր իմ մեղքը մթար,  
Ու թող չտևանեմ դուռը դրախտի:  
Չորքը ևս քաշեց կայարը, բայց ավանդ,  
Իմ մահից Հետո գորին էլի կու,  
Կրացվի գաղտնիքն արյունաշաղախ,  
Եզ աղոթում էր, որ մահը չգա ...  
Ու զիրկն էր իշխում Անիի տակի  
Գևորի տակ փորբված ու գաղտնի ճամփով  
Գիրկն՝ Անիից դուրս մենավոր վանքի.  
Գնում էր գաղտնի ու խղճի խայթով  
Տարին մի գիշեր ապաշխարում էր  
Այն վանքում, որ Հենց ինքն էր կառուցել,  
Իրրեւ Համբայան մի ապաշավանք,  
Բայց ևս այնպիսի մի մեղք էր գործել,  
Որ չէին քայլի հաղար ու մի վանք:  
— Ի՞նչ բարձի դնեմ զլուխս մեղսուս,  
Որ գեթ մի գիշեր մեղքն իմ մեջ քնի.  
Մոռանամ տված իմ թուղթն արյունուս,  
Ավաղ, մոռանամ գոնե քեզ, Անի:-  
Քեզ, որ իմ Հայոց մեծ շինարվեստի  
Մատանու քարն ես, ակն ազամանոցե,  
Աչքի բիրն ես ճոխ, թագն ես ալմաստի,  
Թնես ծնողդ մի խնդ Տրդատ է ...

Քեզ, որ Հայ ոճով  
Քար ոգեկոյտ  
Հայոց Հանճարի մեկուճարն ես վեհ,  
Քեզ, որ նմանը աշխարհը չունի,  
Բայց դու կավերվես, Անի, երբեք,  
Քանդի խիոճ չունի  
Քո ոսոխն, Անի ...

Ու թվում էր, թե ինքը չէր արքան,  
Այլ վանահայրն էր՝ իր Հուսո վանքի,  
Ու վանք էր ելնում, ինչպես ուրվական,

Գաղտնի չոքում էր զդիման աղոթքի ...

— Տեր ամենակալ,  
Ինձ քարը<sup>1</sup> ճամփիե,  
Խավարը ճամփիե,  
Միայն թե Հայոց  
Աշխարհը չամփե,  
Տեր ամենակալ ...

2

Նման մեկուսի  
Աղոթող կույսի \*

Զորից վեր նայեց վանքն Հռոռմոսի՝  
Վեղարը զլիսին, կանգնած այն Հովտում,  
Հայ շինարվեստի հրաշքն էր, կարծես,  
Ողջ Հայոց ազգն էր, կարծես, աղոթում՝  
Դառած մի տաճար՝ Հոյազեղ ու Հեղ.  
(Ազգերն ամրոց են, Հայ ազգը՝ մատուռ...).  
Կարծես Մաշտոցն էր, որ տեսիլքի պես  
Երկնքում Հայոց զբերն էր կարգում,  
Որ լցներ ձույմանց մահանդունդն Հայոց,  
Որ երկիր բերե ընդդեմ դուրանի՝  
Հայոց զրերը՝ մատյան գունդն Հայոց,  
Հայ այրուրենը՝ զրբն Հայաստանի:  
Իսկ երկու փոքրիկ գմբեթները, տես՝  
Մայր գմբեթն իրենց երկու կողմն առած՝  
Երկու կապտամեռ Հավքեր են կարծես,  
Երկու աղախնի՝ ուսերին թառած:  
Ու դեռ դոզում է վանքի ճակատին  
Օհան Սմբատոր զղիանքը մթին՝  
Քանդակագրված ձեռքով Տրդատի.  
— Ի վերա Հիմանց ավերյալ վանուց.  
(Ի սեր դեռ գերյալ իմ Արարատի ...)  
Կառուցե վանքս և ահա վանքիս,  
Նվեր կտակեմ Կողբա ճոխ այգիս,  
Եվ աղ ձռնեցա տարին Հարյուր բեռ,

\* Քարը - ղծոխքը:

Եվ աղոթում եմ, որ ծաղկի անմեռ,  
Որ տարին մեկ օր՝ մի յոթնարուրվառ  
Պատարագ ասցե իմ Հոգու Համար,  
Որ աղոթեաց շրթամբ անմեղաց՝  
Թողություն ասցե ամենայն մեղաց.  
Ամեննեն առաջ ամեն աստվորիս՝  
Հուսկ Օհան Սմբատ ձեր թագավորիս,  
Աստծո ծառայիս,  
Մարդ մեղավորիս ...»:

## 3

Ելավ արեք՝ թագը Աստրծո,  
Միակ անկործանն ու միակն անրիծ,  
Ելավ թագավորն Համբ ու ծանրախոչ,  
Դուրս նայեց ահով իր միջնարերդից,  
Քանզի մի Հասնող դողանջուն լսվեց,  
Ու քանի գնաց դողանջունն Հուզվեց.-  
Թվաց, թե ինչ-որ ծիծաղով լալիս,  
Մի նոր քարավան՝ Անի էր գալիս...

## 4

Եվ Հասավ Հոգնած, ծունր իջավ ահով մայր դռան առջև  
քարավանն Հսկա,  
Չորս իջնող աղբրի նման լուսին դողանջունները գանգերի ոսկյա:  
Ու ծունկի իջան յոթը ճերմակ ուղտ, յոթը դեղին ուղտ, յոթը  
կարմիր ուղտ,  
Ու յոթը սև ուղտ՝ յոթն էլ արմաղան, յոթն էլ բնոնված  
գանձերով զմբուխա:

Յոթը ճերմակ ձի, յոթը գեղին ձի, յոթը կարմիր ձի ու յոթը  
սև ձի,-  
Յոթը կապոյտ ձի, յոթն էլ արմաղան ու ողջն էլ բնոռով ոսկու,  
պղնձի:  
Յոթը ճերմակ խոյ, յոթը կարմիր խոյ ու յոթն էլ զուգված ոսկե  
գանգերով,-  
Յոթը ճերմակ կով, յոթը դեղին կով, յոթը կարմիր կով ու յոթը  
սև կով:

Յոթը ճերմակ ցուլ, յոթը դեղին ցուլ, յոթը կարմիր ցուլ  
ու յոթը սև ցուլ,  
Յոթը կապույտ ցուլ, որ թոշում էին կովերի վրա բառաշուզ  
մի խուլ ...

Յոթը ճերմակ գառ, ու յոթը սև գառ, յոթը թուր շամփուր,  
յոթը տիկ զինի՝  
Յոթը տիկ՝ ճերմակ, յոթը տիկ՝ կարմիր, յոթը տիկ՝ լցված  
զինով ծիրանի:

Ու Համբավ Հասավ Հայոց արքային, թե Բյուզանդից է քեզ  
ընծա զալիս,  
Եվ թագ է բերում արքայիդ ընծա, և աղ ու Հաց է շուրջդ շաղ  
տալիս ...

Ու գաղտնի կարդաց գաղտնագիրն արքան և խոկույն դեղնեց  
մագաղաթի պես,  
— Ողջույն Սմբատին՝ արքայիցարքա, ողջ Բյուզանդիոնը  
ողջունում է քեզ.

Սելջուկ այրուձին Անի կարչավե, Անին որ առավ. էլ ի՞նչ  
Հայաստան,  
Ճամփին Անիի բոլոր բառաստն բանալիները, որ Անին ինձ տան,

Քո մահից Հետո, որ չկա Անին ...»:

— Ա՛ռ քեզ բանալի, — մռնչաց արքան,  
Գտավ իր խելքի կորած բանալին,  
Դուրս թուավ, Հեծավ իր ձին խոյական.

Ու ծառու Հանեց նժույզն իրա.

Քարավանի, նառի վրա.

Ու մորակեց Հույն դեսպանին՝

Մռնչալով՝ ա՛ռ քեզ Անին ...

Քաշեց սուրբ, Հրամայեց.

— Եկած ճամփով չքվեք, ասավ.

Քարավանի մեջ գառնուել մի մայեց.

Մի կով բառաշնց ու մի ցուլ Հասավ

Բուղագոռ թուավ այն կովի վրա,-

Բնչավես մի Հսկա, ցլարաշ գնչու:

Կայսեր գոչ թվաց բառաջը նրա ...  
Օհան Սմբատը շգիտես ինչո՞ւ՝  
Ցույի ծանրությունն զգաց իր վրա ...  
Բայց ծառս Հանեց ձին իր շողակ  
Զդիման ազնիվ շանթն աշքերին:  
— Ներս շինողնել Անի քաղաք ...  
Հրամայեց պահակներին.  
Ու ծառս Հանելով նժույզը ճերմակ  
Ներս քչեց Անի, շունչ քաշեց թեթև,  
Դուրս թողած դժինի քարավանը սև,  
Եվ քարավանը մնաց գլխահակ,  
Պարիսպների տակ, մայր դռան առջև,  
Անիի գինված պարիսպների տակ.  
Մնաց գլխահակ ...

## 5

Անիի քարձր պարսպի տակով  
Կանցներ Ախուրյանն Հայ առյուծի պես,  
Բախսելով բաշերն արծաթ Հորձանքով  
Նորակերտ վանքին այն գոռող ու Հեղ:  
Այս գիշեր աշեղ ելել-վարարել,  
Կարձես ուզում էր Օհան Սմբատի  
Վառած յոթ Հարյուր մոմերը մարել  
Թոնդրակեցոց պես իր Արարատի:  
Եվ ահատրտում  
Եվ ահը սրտում  
Դուրս ելավ վանքից, ներս մտավ ամրոց  
Անին վաճառած վիշապն ալեկոծ,  
Ու վերջին անգամ թագն առավ գլխին,  
Բազմեց իր գահին, բայց խիղճը տանջեց,  
Բերանում զգաց իր մեղքի լեզին,  
Թխսեց զղջումը, ափաղ, Հառաջեց.  
— Մարդը և՛ Աստծո լույս ձեռակերտն է,  
Ե՛վ սատանայի սև ձեռքի կեղտն է ...  
Ինչպես իմ վեհը, ինչպես իմ ոգին,  
Ինչպես ոսմիկը Հակված թոնդրակին»:  
Ու կանչելով Պահապունուն,  
Վերջին անգամ ասաց՝ ների՞ր,

Պատյան էի թուր-Հավլունուն,  
Բայց էլ սուրդ պատյան մի՛ դիր:  
Իմ գորքն, իրուե զենք ու զրահ՝  
Պարխապներիս պարխապն արա,  
Մի զինվորի. մեկի տեղակ  
Տոթը զինե, որ չդողաք,  
Ու չսողաք եղկելուս պես,  
Իմ վիշտն ահա թողնում եմ քեզ ...  
Ու կրծքին սեղմեց սպարապետին,  
— Դու ես Հույս մնում իմ Արարատին,  
Արարատ եմ ես քեզ ասում՝  
Դու Հասկացիր Հողերն Հայոց,  
Դու Հասկացիր Հայոց լեզուն,  
Դու Հասկացիր ծովերն Հայոց,  
Ջրերն Հայոց,  
Գրերն Հայոց,  
Դու Հասկացիր Հայ վերքերի  
Ողջ Հայաստանն՝ այլոց գերի ...  
Կուզեմ իմ թուրը Հողս ես բերե ...  
Թե ետ չբերես՝ քո սիրտը խրե ...»:  
Ասաց թագավորն իր Պահլավունուն,  
Իր թուրը տվեց իր Թուր-Հավլունուն,  
— Եվ քիչ է մնում երակս բանամ՝  
Գրեմ հրամանն իմ խև արյունով,  
Որ Գետաղարձը բանտվի՝ քանի կամ,-  
Ինք շղթայիր իմ հրամանով ...  
— Մեզմ ես, տե՛ր արքա,  
Անին է ծախսել ...  
— Անի՞ն ... Անին կա.  
Ես կուզեմ կախվել ...

## 6

Նման մեկուսի,  
Աղոթող կոյսի՝

Չորում կաղոթեր վանքն Հոռոմոսի,  
Երր միջնարերդից եղալ անվարան  
Ու գաղտնի իջալ ձորն Ախուրյանի

Ու գաղտնի մտավ վանքը - քավարան  
Օհան-Սմբատը, առանց ծիրանի,  
Առանց գայխոն, առանց թուր ու թագ,  
Լոկ խաչը կրծքին, Համբ ու զլխաշակ,  
Գեղջուկի նման,  
Ու մտավ խորան,

Ու ծնրադրեց Հեգ աստվածամոր պատկերի առջև.-  
- Այս վա՞նքն էլ. Աստված, չպիտի քավե իմ մեղքերը սև,  
Հիմա՞ էլ. մայր իմ, Հիմա՞ էլ. ավաղ, ինձ չես ներելու,  
Խելքս գողացած Հարճի արյո՞ւնն էլ ինձ չի մաքրելու ...  
- Չե՞մ ների ... կարծես Աստված շշնջաց, խիղճը խայթրվեց.  
Քո Հարճն՝ իր մեղքը, քո Հարճը մեղքիդ մի մազը քավեց,-  
Քո օձախոփի սև մեղքի զլխից Հազիվ օձ մի մազ ...  
Ամեն մի մազդ մի օձ է մեղքի, խիղճը ձայն տվեց.  
Չե՞մ ների երրեք, քանի թողնում ես իմ Հողն անմուրագ.-  
Գերի Հայաստանն ետ խլելով ես մեղքդ քավելու ...  
Քո քավարանը դժոխքն է դժնի, անդ ես չքվելու,  
Էլ աստ Հոդ չունես, չեմ ների ... գոռաց գոչն Ախուրյանի  
Աստվածաշուկ անհաշտ գոռոցով ողջ Հայաստանի ...  
Այդ խիղճն էր՝ խոսեց, իր խազի խիղճն էր ՀայրենաՀառաչ  
իր զևմ դաշույնվեց, ու դաշույնն Հանեց, որ սիրուր խրեր,  
Օհան-Սմբատը վանքում, իր Աստծո պատկերի առաջ,-  
Բայց ձեռքը դողաց, ինքնարսապանի ձեռքը մշտերեր,  
Կրծքից դաշույնը ետ քաշեց ահից,-  
Դժվար է, իրավ, ձեռ քաշել գահից.

Ու կամքը չորեց,

Ռուրի ելամի կյանքն ու խաչակնքեց.  
Դուրս ելավ վանքից, ամրոց շտապեց,  
Դինուն թույն խառնեց, բայց ձեռքը դողաց,  
Փշրեց քաժակը ու թույնը թափեց ...  
Զիմացավ՝ ինչպես իր սուրը չողաց  
Իր խոկ ձեռքի մեջ, բայց վախն Հորդորեց՝  
Եվ արքան թուրն էլ պատշանը դրեց  
Ու կյանք ու մահի մեջսեղը մնաց՝  
Պատից կախելով թուրը պատշանած,  
Վայրի ոչխարի եղջյուրից կախեց,-  
Ոչ թե առյուծի զլխից ... ծիծաղեց,  
Կախեց Հոնքերի թուրն էլ իր վրա,

Աշի քրքիջն էր ծիծաղը նրա,-  
Բայց աշա փորձեց դաշույնի ծայրով  
Երակը բանալ՝  
Արյան հետ գեպի մեղքի մռացման  
Անդունդը գնալ.

Բայց էլի դողաց ձեռքը սրտադող  
Հեզ թոնդրակեցց աչքերը Հանող  
Ամենակարող ձեռքն արքայական  
Մոլորվեց արքան, ելավ վերստին  
Թուրն առավ պատից, բայց նորից կախեց.  
Դուրս նայեց բերդի ներ յուսամուտից,  
Բայց Այսուրյանի անդունդից վախեց.  
Անդունդ չնետվեց մեղքի անդունդից,  
Ետ քաշվեց, մաշվեց, ծերացավ իսկույն.  
Ու նորից խառնեց նա թույնը գինուն.  
Ու նորից թափեց, այժմ ի՞նչ աներ,  
Որ իրեն Հաղթեր, կյանքը դուրս վաներ  
Իր մեղսուտ սրտից՝

Զորքն՝ ինչպես բերդից ...

Թև կոխվ լիներ՝ իսկույն կգնար  
Պատվագահ մահով կընկներ կովի մեջ.  
Մահն անհնար է, կյանքն էլ անհնար,  
Ու սիրտն էր կրծում իր տանջանքն անվերջ.  
— Այս, դաշտում լիներ և ինքը քնած  
Եվ մի օձ լիներ, խայթեր աշագնած  
Քնիս մեջ Հանկարծ...

Ի՞նչ կյանք, վազն ազգի կյանքն նն խլելու ...  
Հայոց ազգին են անհետ ձուլելու ...

Ու խելագարվեց այս մորից արքան,-  
Իմաստնանալով Հավերժ մի վայրկյան,-  
Այդ խիղճն էր, ոչ թե մեռյալներն ասին,

Ու վերջին անգամ ելավ պատշգամբ, նայեց Մասիսին,  
Որպես Հայ ազգի ամպած երեսին ...

Նայեց Մասիսին, որպես Հայ ազգին ու դողաց արքան,  
Մնրաղրելով որպես զեռ զերի մայր Հողի առջն,  
— Գիտեմ, չես ների ինձ այսու հետև,  
Բայց ինչպես խլեմ իմ մի բուռ ազգով՝  
Ազգերի քար խիղճն ինչպես խարխալեմ.

Ինչպե՞ս ետ խլեմ, իմ մի բուռ բազկով,  
Իմ ծով Հողերը, ինչպե՞ս ետ խլեմ ...  
Այս, ել ինչիս է, իմ կյանքը շփերթ ...»  
Եվ այրվող կուրծքը բացեց, վեր կացավ.  
Ու գաղտնի իջավ վանքը նորակերտ.  
Հայոց մեծ վշտին ել չղիմացավ,  
Խորանի առջև ծնրեց մեկուսի  
Դառը ժպիտի առջև Հիսուսի,  
Չղիմացավ մեղքին արքան,  
Չղիմացավ, չհամբերեց՝  
Քաշեց թուրը բյուզանդական՝  
Մնդի ձեռով սիրտը խրեց,-  
Փոքրիկ սիրտը զղճամբ իր մեծ ...  
Սիրտը, որ վշտեր թողեց զեռ այնքան,-  
Մեռած սիրտն՝ ասպրող մնդի գերեզման ...

# ՄԱՍՆ ՎԵՐՋԻՆ



... Սգասեն Հազարվ Անին գեղանի,-  
 Մի կողմից աշուվ արքային թաղում,  
 Մի կողմից՝ սյունից սև կախաղանի՝  
 Արքայարապան ... կույսին էր կախում.  
 Եվ Հազար ու մի սուրբ եկեղեցիք՝  
 Իրենց չորս Հազար զանգերի լացով,  
 Ինչպես զիխարաց մռայլ անեցիք,  
 Եղերերգեցին դեռ խարժած կոծով  
 Թաղումն՝ անտեղյակ թե ինչ արքայի.  
 Ղողանջում էին, բայց ղողանջի մեջ  
 Չէին պապանձգում շշուկները խեղճ,  
 Ու մինչև զիշեր բերանը մահի  
 Մամեց այս ու այն շշուկն ամենի:  
 — Արքայի վրա սուստ շառ են զցել.  
 Թե՝ «Անին գողոտու ծախել է արքան...».  
 — Այծյամի վրա աչք չի ունեցել՝  
 Իզուր են կախում անմեղ աղջկան ...»  
 Ի՞նչ ուներ Այծյամն այգում արքայի...  
 — Չէ՛, մեջը բան կա ...»  
 — Չար խոսք է, Հայի ...  
 Չիինի՛ սեր էր զցել արքային ...».  
 Գործ չկար զահին ...  
 — Թե՛ արքան ինքը ...  
 — Ինչ դարու Հասանք, ո՞վ տեր, ինչ դարու  
 — Չէ՛, երկրային չէ, բան է երկնային -  
 Եռուսով կփոխվի ցորենը զարու,  
 Գարին՝ կորեկի, կորեկը՝ սովի ...  
 Այծյամ, անունդ էլ զիխիդ խոսովի ...  
 — Տո՛, չի էլ զղջում ...  
 — Ազրահիղ է, նա ...  
 — Չէ՛, առաջ լավն էր ...

— Էստեղ բանրմ կա ...

Կախել ... բվվում էր մանուկ վայրենին՝  
Ամրոխն անտեղյակ բամբասաշշուկ:  
Մինչ աղոթում էր Այծյամն անշշուկ:  
Սև սյուների մեջ սև կախադանի,  
Անչար կանգնել էր, ինչպես աղաւնի,  
Եղնկյա վիզը պարանի օդում՝  
Վերջին աղոթքն էր շուրթերին զողում,  
Հարսնաշղթայի ու մարգարտի տևող  
Պարանի օձն էր մաշից շուտ սողում,-  
Գրկած պարանոցն իր ձյունաշքեղ.  
«— Աստված էլ նրան շգտավ անմեղ ...  
— Երես են դարձնում ծանոթ ու դրկից,  
— Մերը մանուկն է աշից ուրանում ...»;  
Զարդանդ է կաթում զանգերի զարկից,  
Խղճի աչքերն են աշից կուրանում:  
— Կախելն ի՞նչ ... ձևնենք՝ թող միջից ճղեն ...»  
Զինվորների հետ քահանան մթին  
Վերջին անսեծքն էր կարդում, որ կախեն,  
Բայց կարկամում է անսեծքը շուրթին,  
Կարծես բացվում է զաղտնիքն էլ գահի,  
Մի խուլ շշուկ է ամեն ինչ քանդում,  
Ամրոխը թողնում թաղումն արքայի՝  
Դեպ մայր տաճար է շփոթված հորդում,-  
Ուրիշ մի վիշտ է ամրոխսվում հանկարծ ...

2

... Հաղիվ սանձելով ձիերն Հունական  
Ահեղ զաղտնազիքն Անի են թերել.-  
Ու քար կորեցին մերոնք մի վայրկյան,-  
— Մի՞թե ... այս գորումն արքա՞ն է գրել ...  
Ու մայր տաճար են սև գիրն հասցնում,  
Վանահայր վեհը կարդում վարանքով,  
Եվ մատանին է իր մաստից ... կորցնում,-  
(Արքային դրդած իր զաղտնի մեղքով...)  
Ու շշուկներն են ահեղ ամրոխսվում,  
Թաղման պատարագն աշից կարկամեց,  
Ծղն անսեծքի է քայլ առ քայլ փոխավում,

Ու վանահայրը շուրջերը ծամեց.

— Իր կոտրած ձեռն է,

Իր ձեռն է, Հայեր,

Մախել Հայոց Հողն Հայոց թշնամոն ...

— ԱՀա՛ թե ինչու զադոնի կվայեր՝

Այս մեղքն էր տայիս աղոթքի ... քամոն,

Ու ոչ թե ինչ-որ եղնիկի ձագեր ...

— Եղնիկի ձագը Այծյամն էր անմեղ ...

— Ո՞ւր է Այծյամը ...

— Կախում են, ո՞ւր է ...

— Հասե՛ք, աղջիկը անմեղ-մարուր է ...

— Վա՛ թե կախեցին, կախեցին պրօան ...

Ու ծուց ճամփեն ամրոխն ահամայն՝

Դեպի Այծյամը Հորդեց ինչպես ծով.-

Վարազդատի մայրն Հայունվեց լացով.

Եշմած իշխանի դաշույնը խլեց

Կորեց պարանը մե կախաղանի.

Հանեց օդակը վզից գեղանի,-

Այծյամն Հեկեկաց, ընկալ մոր կրծքին,-

— Աղջի՛կս, մորից նոր ծնվեցիր ... նոր,

— Արքան ... Հետմահու արժան անեծքին ...

Խուլ Հեկեկում էր Այծյամը մոլոր.

Շիրմից Հրաշքով եղածի նման,

Կիսամեռ Հայացքն Հարցմունք էր զարձել,

— Ո՞ւր են իր սիրածն ու Հայրը ... շկան,

Դեռ որսից մի՞թե չեն վերադարձել ...

Ու խոլ խոռվեց ամրոխն ապշահար-

— Ինչպե՞ս չի կոտրել ձեռքը՝ գրելիս ...

Մեկը լալիս էր՝ աղջիկս մի լար.

— Ո՞ւմ է կտակել իմ Հողն ու Անիս ...

— Խող բյուզանդացոց ...

— Բող ասա, պրօեք ...

— Ի՞նչ ... քնած էին իշխանք մեր Հայոց ...

— Հույնը զալու է՝ և ինչպե՞ս քննենք ...

— Թող զալար մնան ձեռքերդ զալար ...

Ու վեր թոցքեց ամրոխն Այծյամին,-

— Այ դոչաղ աղջիկ, փրկվեցիր, մի՛ լար,

— Թող չները լան կիսաթաղ շիրմին ...

Ու ծովանում էր շուրջը վանքի վես  
Մայր տաճարի շուրջն, ամբոխն աշառուած  
Եվ Հաղպար ու մի վանքերը պես-պես  
Նզովում էին ծով դողանջ դառուած:  
Եվ աշա բանդը քանդող գևորի պես  
Քանդեց քարկապը Հուր լեզուների.  
— Շան տեղ չէր դնում շանսատակը մեզ  
— Ինքն էլ կծախս՝ ով սրան ների ...  
— Ինքն էր մեր որդոց վրա խեթ նայում  
Թե ... Հայրենիքին կյանք եք խնայում ...  
— Թե որ աշխարհում մահը չլիներ?  
Մեր թագավորի ահն էլ Հերիք էր ...  
— Իմացեք՝ ինչքան վախկոտ է արքան՝  
Այնքան բռնակալ, անգութ է այնքան,  
Երկիրն՝ այնքան բանս ... բանտերն ինչքան շատ  
Դժոխք են օրոցք ու շիրիմդ, ով մարդ»:  
Թե սատկածն Հանկարծ կկենդանանար.  
Մեզ նոր կիմանար ...»:  
Խոր անիծում էր դառնացած մի ծեր,  
Մարդկանց, արքային ու յիրոր թշնամուն:  
... Բայց Անի՛ կտար ժողովուրդը մեր,  
Ու ելաք քանդեց ու տվեց քանուն  
Հայոց վշտի պես շիրիմն արքայի,  
Գաղտնազիրն խեկույն ձեռքերից խեց  
Ու պատառունց երգումն իր ... գահի՝  
ՍուրՀանդակների մոռութին խփեց,  
Նոր Հայունի դարձած գաղտնաթուղթը սև,  
Ու գոռաց. «Կորե՛ք, թե տվեց արքան՝  
Չեզ Անի չի տա ոչ մի շինական»:  
Ու դուրս վոնդեց ...  
Ինքը ներս քաշվեց,  
Ներս քաշվեց, գոցեց գոները բոլոր,  
Գոցեց ողջ Անին պարսպապատնեշ,  
Գոցեց, բռոնցքըց դարպասները գոռ;  
— Աշա՛ քեզ Անին, ով Հունահրեշ...  
Բայց դուրս մնացին մի անհույս որսկան  
Ու ջահել որդին, որ Հունաստանում  
Վշտին անտեղյակ՝ որս էին անում,-

Որդու Հարսնացվի՞ Այծյամի Համար  
Մի այծյամ էին փնտրում սարևսար,-  
— Բայց տե՛ս, Հայրիկ, ինչ էլ լինի,  
Պիտի բռնենք կենդանի,-  
— Զազը Հեշտ է, դարդ մի անի,  
Զազը ցավդ թող տանի:

3

Հեշտ է մարդ այլոց ձագին մահ տալիս,  
Բայց երբ Հերթն իրա ձագին է գալիս ...

4

Եվ սպասելով սուրհանդակներին,  
Պոլիսն անհամբեր կերազեր Անին,  
Մեր մայրաքաղաքն իր Հող ու գանձով,  
Իր գանձերի գանձ կույս ու կանանցով,  
Մեր խաղաղ Անին,  
Մեր չքնաղ Անին,  
Մեր պատիվ Անին՝ գանձերը մի ծով:

5

Բայց արքայական դավը փշրելով՝  
Աշխարհագործեց Անին գիշերով՝  
Սուրբ անքնությամբ սպարապետը՝  
Զորագլխությամբ մեծ Պահապետու,  
Ի Հույս չղթայված Հող Արարատի,  
Ի Հույս չղթայված Հող Արածանու,  
Ի Հույս գույգ զորքով պաշարված Անու:

6

Ու ետ փախան մեր ոստանից  
Սուրհանդակներն Հունաց անկար,  
ԱՀով ասին՝ «Հայաստանից  
Չեն տա թելկուղ մի չիրմաքար:  
Պատուեցին զիրն Հնօրյա՝  
Հայերն իրենց թագավորի.  
Ծուն մորթեցին չիրմի վրա,  
Մեզ էլ զցին սև շան օրի...»:  
— Լավ ... ծիծաղեց կայսրն Հունաց,

Ես կղաշնեմ ոստիսիս Հետ.  
Այս թուղթն՝ իրենց պատառուած,-  
Կանեմ պատանքն Հայոց Հավետ,  
Ես կրերեմ Հայոց մահը,  
Իմն է Հայոց թափուր գահը ...  
Ես կկիսեմ մեծ շահի Հետ  
Հայոց Հույսի մայր ոստանը,  
Կորչի թող Հայ անունն անհետ  
Իմն է Հարուստ Հայաստանը:  
Էլ Տիգրանի ազգը խո չե՞ն,  
Որ վազրի պես վրաս թոշեն.  
Որ ժառանգ են վախկուր լորի՝  
ՕՀան-Սմբատ թագավորի ...  
Իրարամերժ՝ իրար դեմ թուր՝  
Մնացել են ծովից մի բուռ ...  
Ու թող Հունաց իմ ցեղի մեջ  
Այս մի բուռն էլ ձուլվի, ու վերջ»:  
Ու փող փչեց.  
Շահին կանչեց,  
(Հավատացյալն անհավատին,  
Քրիստոնյան՝ Հին կավատին,  
Ծ, աստված իմ, այն էլ վսեմ  
Քրիստոնյա Հայոց ընդդեմ):  
Զորք Հավաքեց.  
Հագավ զրահ,  
Կորիվ եկավ Հայոց վրա:

## 7

Եկավ, ծովացավ, պաշարեց Անին՝ նախ զորքն Իրանի,  
Ինչպես որ ծովն է կղզին պաշարում, առանց զարանի,  
Բայց ինչպես ծովն է զեմ առնում սարին,  
Ինչքան էլ զորք էր դեռ Հույնը դրկում՝  
Նորից էր Անին ինքն իրեն փրկում ...  
Դեմ էին առնում մեր գոց գոներին,-  
Դոներն առյուծի երախսի պես փակ,  
Որ թե բացվեին,  
Կուլ պիտի տային,  
Աղվեսին՝ առյուծ գոռ պատերի տակ:

... Եվ ապշել էին պահ մի քնքությամբ՝  
Վայրենի դորբերն Հոյն ու մողանի  
Անիի խորհուղարք կոռ գեղեցկությամբ,  
Բուրգ-պարիսապներով Հաղթ ու գեղանի,  
Ամեն մի քարը՝ մի քաջի վահան՝

Դարեր դարերված,

Դարեր ծածկրված՝

Ամեն մի քարը դարեր արնուտված՝  
Ժայռե մի էջն էր Հայոց պատմության.  
Հոյներն էլ ասին՝  
Ջաննաթ, ի՞նչ Անի ...  
Այս որ դրսից է, ներսն ի՞նչ կլինի ...

Բայց ամրոցից իր պաշարած  
Մի նետրնկեց մոտիկի ձորում  
Չույզ զորքերի զլուխն անցած  
Շահը սև բեղն էր ոլորում,  
Յաթաղանն էր ասեա սրում.  
Սրեց, հեծավ սպիտակ ձին,  
Ու ձայն տվեց զոռ ամրոցին.  
— Առանց կռվի կտա՞ք, թե՞ գամ...  
Լուռ է Անին առյուծակամ,  
Անին առյուծ, ձորի վրա,  
Ախուրյանը գոչն է նրա՝  
Ոչ - ն աշագոշ...  
— Կտա՞ք, թե՞ ոչ ...  
Լուռ է լեզուն նիզակների  
Պահակագոր պահակների,-  
Հաջող շան գեմ՝ ժայռե առյուծ,  
Ու շահն իջավ ճերմակ ձիոց.  
Մոտիկ բերին սևն աշարկու,  
Բազմեց որպես մի սև գահի  
Եվ հիշելով զիրն արքայի՝  
«Ազգս քիչ է ու կռվի ծույլ ...»  
Շողաց սև շահն, ինչպես սև թուր,

Իր Հույսի պես ծառս Հանեց ձին,  
Ռւզեց բախվել գոռ ամրոցին.  
— Էյ, խղացած պահն ու պահակ,  
Արքան մեզ տա ու դուք չտա՞ք ...  
Թե նրա պես չտաք զրով,  
Կառնենք Հունաց՝ և իմ սրով:  
Եվ լավ, տեսեք, թե իմ գալուց՝  
Ի՞նչ դուրս կգա ձեր չտակուց,-  
Հայ մորթելիս ես անզութ եմ,  
Չեր արյան մեջ ըրդեմ-կուտեմ  
Ինչպես դուք եք զեռ կաթ ըրդում,  
Ով կաթնակեր  
Գայլի ձագեր  
Այնպես մորթեմ մանուկ ու ձեր,  
Որ չիր ֆնջեմ ողջ ցեղը ձեր:  
Հազար տարվա տենչչն այլաշի  
Հայաստանն է՝ առանց Հային:  
Հոռոմ զորքն էլ ինձ Հետ է, Հա՞ ...  
Իմ սե ձին էլ Հայ կուլ կտա,-  
Դե՛, կամ կոխի, կամ թե Անին»:  
Ու ես դարձավ իր խուժանին.  
— Օձ նետերիս ծով կարկուտով  
Զարկեր՝ Անին կառնեմ շուտով.  
Զարկեր, քիչ են Հայերն ու թույլ ...»:  
Ու շողացին աղեղն ու թուր,  
Ու բախվեցին նետերն իրար-  
Վարից ի վեր, վերից ի վար,  
Ու բուրգերին մեր առնազեղ.  
Նետերն՝ անթիվ, ինչպես մորեին,  
Երբ նոսրանում ընկնում էին  
Պահակները պարիսպներին,-  
Չույզ զորքերը առնում թեսեր՝  
Սանդուխը զնում պարիսպն ի վեր,  
Վերն էին խոլ մազլցում,  
Բայց վար էին նրանց զցում  
Մոնչալով մերոնք վերից՝  
Չորր նետում պարիսպներից:  
Մերթ էլ ներսից Հայտնվելով՝





Չեռնամարտի գրոհ տալով,  
Այնպես էին խուժում, դարկում,  
Որ Հաղիվ էր կյանքը փրկում,-  
Ու երբ իջավ,  
Գիշերը այսպէ՝  
Դիեր տեսավ լեռնակուտակ  
Անին իր գոռ պատերի տակ:

10

... Լոեց թշնամին պարխապների տակ.  
Բազմեց գիշերը խոժոռուն ու հեղ,  
Լոեց և Անին մեր Հաղարապանգ  
Իր՝ դարեր խոցված պարխապների պես,-  
Լոեց ու հոգնած թիկնեց վահանին՝ Հակայի նման,  
Շիրակի դաշտում, իսկ Արագածը վահանն էր իր վես,  
Բրոնզե վահանն իր Հակայական,  
Իսկ աշտարակը՝ Անիի ձեռի նիզակն էր, ասես,  
Իսկ յեռ վահանին ընկած կակաչներն՝ հայոց դեռ բուրյան  
Արյան շիթերն են Հայոց գոհերի մեր անմահացած,  
Կակաչի միջի սևը շիթերն են թշնամու արյան,  
Սևը կարմիրով պինդ շրջապատված՝  
Մահից այն կողմ էլ Հակնտ շղթայված...

\* \* \*

Լուսինը ելավ, չէ՛, լուսինը չէր,  
Այն մի աղջիկ էր՝ ձեռքը ծնոտին,  
Պարխապներն Հակող Հայ մի աղջիկ էր:  
(Լուսնի պես զուգեց գիշերը խորին)  
Մայր Հայաստանի այն պատկերի պես՝  
Նայում վիրավոր մեր սար ու ձորին՝  
Չեռքը ծնոտին՝ երգում ու ասես  
Օրոր էր ասում վիրավորներին:  
Անգամ թշնամու պահակները չար.  
Լուս լսում էին՝ զլուխներն ի վար.  
— Գիշեր, դու տարի դարձիր,  
Դար դարձիր, իմ պաղ գիշեր,  
Թե չար ես՝ բարի դարձիր,  
Սար դարձիր խաղաղ գիշեր:

Թող զույգն էլ թողնեն գնան.  
Մազերս Հարսի, Հյուսեմ,-  
Իմոնք էլ որսից շուտ գան,  
Առավոտ լուսուն ասեմ:  
Բայց, երբ հիշում է իր մորթված գառը  
Ողբը դառնում էր ավելի դառը:

Ի՞նչ երեսով,  
Մնամ յարխա,  
Թող գա Հույսով՝  
Նիրմաքարիս:

Բայց մորթված գառան իր վիշտը թաղում  
Հին, Հայտնի ցան էր շուրթերին դողում:  
— Ի՞նչ սեր ... ասա՞ քուր ևս դու,  
Ինձ ախաղեր եկ, թուր ևս դու,  
Ո՞ւր ևս, Հասիր, քաջ որսկան,  
Որսն այստեղ է, ո՞ւր ևս դու:

Որսի ձեռքով պաշարված  
Անին զորքով պաշարված,  
Հասի՛ր, քեզ է սպասում,  
Հազար վերքով պաշարված:

Ու երազում էր սիրածին, ավաղ,  
Որ գոց ամրոցից դուրս էր մնացել,-  
Դեպի Արագած՝ դեռ երեկ խաղաղ,  
Հոր Հետ այծյամի որսի գնացել ...  
— Զէ՛, նա ինձ Համար  
Գլուխն էլ կտար՝  
Գետնի տակով էլ իմ զիրկը կգար,  
Զէ՞ որ նա գաղտնի ճամփեքն էլ զիտեր ...  
Հասի՛ր, երազն Հետդ բեր,  
Սիրուդ Արագն Հետդ բեր,  
Քո անմուրազ Այծյամի  
Մաշ կամ մուրազն Հետդ բեր:

.....

Բայց այսպես յոթն օր, յոթ զիշեր անցավ՝  
Իր Հույսը չեկավ, ու սիրտը մթնեց,-  
— Որսի գնացածն ի՞նքը որս դարձավ,  
(Ասաց, բայց խկույն մտքից խրտընեց)

— Բոնել կապել են, որ չի հայտնվում,  
Հասպա ինչո՞ւ է սիրտս այսպես ցավում ...  
Թե չէ՝ Անիի տակով էլ կզար ...  
Չի գա ... Վարազիկս, ախ, մի՞թե ընկար.  
Երանի ես էլ իշխան կովի դաշտ՝  
Մտնեմ զորքի մեջ այս կրակապաշտ.  
Առաջին որսիս պես անգդ որսամ,  
Հենց թեկուզ սիրտը սև շահնշահի ...»:  
Այսպես մտածում ու երգում էր զեռ  
Այծյամը մթին պարսպի վրա,-  
Ինչպես լուսնյակի ծագումը անմեռ  
Անմեռ էր թվում նուրբ նրգն էլ նրա.  
Վիրավոր ընկած քաջնորդ լսում,  
Հիանում էին, սփոփում մի պահ,  
— Մեր քաջ ննտաձիգ Այծյամն է խոսում ...

---

Եվ ահա շահը երազ վրանից,  
Եվ սիրտը ուզեց ու փնտրեց նրան՝  
— Այս ինչ հավիկ ես, ով մեղրաբերան,  
Որ այսքան դառն ու քաղցր ես գեղգեղում,  
Կարծես իմ պարսից մուղամն է դողում ...  
Եվ ուզեց ոնց էլ, ինչպես էլ լինի՝  
Նվաճել ... այս էլ, մի երկրորդ Անի ...  
Սակայն Այծյամը այլ բան էր խոկում,  
Բայց ինչպես լեզվակն իր պողպատ զանգում՝  
Թաքնըվում էր գայլն իր զորքի խորքում,  
Անտես աղմկում, որ եղննն կովի՝  
— Հենց որ զիշերվահորանջը ցրվի ...  
Բայց գեռ զիշերն էլ խոժոռուն և Հեզ  
Մութով պատանում զիշերը բոլոր.  
Մածկում անսահման դագաղի պես խոր  
— Ես ձեզ ինչ ոսիս ...  
— Ես ձեզ ինչ դուշման ...  
Ինդում էին խոր  
Բոլոր վիրավոր  
Երկու կողմի էլ զահերը՝ փոշման ...  
— Մորից չեն ծնվում ոսոխ ու դուշման;  
Բայց արնաքամ են լինում աստղերը ու մեռնում կարծես

Հայոց վիրավոր զինվորների սկս:   
Ու երբ որ տեսավ դեմքն էլ երգողի:   
Դող առան շահի սրտի ոտն ու ձեռ,-   
- Գտա թագն,- ասավ,- Հարևմիս զիսի ...   
Մոտեցավ գաղտնի ու նայում էր դեռ,   
- Երգն անուշ, դեմքը երգից էլ անուշ,   
Զեննաթին էլ չունի այսպիսի մի դուշ,   
Մի թարթիչն արժե մի կույս պարսկուհի,   
Ու յոթը սիրո սուլթան թրքուհի»:   
Ու վրան մտավ շահն այծյամնահար,   
- Սանդուղքը դրեք պարսպին անշեղ   
Վեր ելեք՝ կամ այն վարդը բերեք վար,   
Կամ ձեր զլուխը բերեք նրա տեղ ...   
Դու մի ուամիկի աղջիկ ևս, ասեք,   
Չե՞ս ուզում Հանկարծ գառնալ թագուհի,   
Իրան-Թուրանի թագն ու զահն, ասեք,   
Քո ուսքի տակ է՝ զիսի ևստ շահի ...»:

## 11

Ու գաղտնի սանդուղք դրին պարսպին,   
Մի սիրահ դողաց՝   
Ելամվ, վեր սողաց՝   
Սև ստվերի պես կպավ սև պատին,   
Տեսավ ... շահի պես սա էլ կրակվեց,   
Եվ աշաշուկ դեպի նա ձգվեց,-   
Դողացին պարանն ու ձեռքը նրա,   
Վեր թռավ Այծյամն ինչպես որսկանից...   
Աղեղը լարեց զինվածի վրա,-   
- Մի զարկ, ով կույս միանգամից,   
Բախտն է ժպտում քեզ այս ժամից.   
Քո սիրածը ...».  
- Ինչ, բռնե՞լ եք ...  
- Չէ՛, իմ ասածն իմ Շահն է, տե՛ս,  
Որ զարանից նայում է քեզ ...  
Նա Հունաց ևստ երգդ լսել՝  
Գիրկն է ընկել ջեննաթի,  
Գաղտագողի դեմքդ տեսել՝  
Բերդն է փլվել իմ սրտի:  
Դու աղեղվոր մի աղջիկ ևս,

Բայց տես՝ քեզ ինչ բախտ հասավ,  
«Իմ սիրութ քեզ, իմ թագը քեզ,  
Իմ գահը քեզ»՝ շահն ասավ:  
Սաղավարտը քեզ չի սագում,  
Լսի՞ր երդումն իմ Շահի,  
Շահը քո մի մազն է ուզում,  
Որ դարձնե թագուհի ...»:

— Վայ թե խարե ...

— Չե, քուն չունի ...

Այս էլ քանի՞ ... յոթ զիշեր ...

— Լավ, թող Շահի սրտով լինի,

Իջիր՝ քանի՞ մոթն է դեռ ...

Իջիր՝ կիշնեմ ...»:

Միպահն իջավ,

Բայց Այծյամը բարձունքից

Լարեց աղեղն, ա՛ռ քեզ, ասավ,

Նետահարեց ծոծրակից...

— Դու արժան չէիր կրծքից զարկվելու ...

Դե զնա Շահիդ իմ սերն Հայտնելու ...

Իմն, ուր է ուր չէ՝ կվերադառնա

Հայրն էլ մեր գաղտնի ճամփեն կիմանա»

Թող Վարադդատիս ականջը կանչե՝

Արքան աղեղիս վերջին որսը չէ,-

Առաջին որսս անդղն՝ աննշան,

Վերջինս սա է՝ իմ նետին արժան:

Եվ մի խորք նետեր Հանեց կապարձից՝

Յոթն էլ մեկ առ մեկ Համբուրեց մթնում ...

Եվ նորից նրա երգի մրմունջից

Նույնիակ մեռնդղներն էին Հիանում:

Երգն ասում էր՝ «աշխ, ի՞նչ անեմ,

Որ իմ ազգի ցավը տանեմ»:

Բայց ինչպես լեզվակն իր պողպատ զանգում՝

Թաքնվում էր Շահն իր զորքի խորքում,

Անտես գոչում էր, որ ելնեն կուիի՝

— Հենց որ զիշերվա Հորանջը ցրվի ...

Բայց դեռ զիշերն էլ խոժոռուն և Հեզ

Լուռ պատահում էր զիշերը բոլոր,

Մածկում անսահման մի զագաղի պես,

Կամ թե եռացեղ շիրմի պես մի խոր:

— Զէ՞ս որ ազգերը դավակ են մի մոր,  
Մորից չեն ծնվում ուսիս ու դուշման ...  
Դեռ այսպես էին խորհում վիրավոր  
Երկու կողմի էլ քաջերը՝ փոշման ...

Բայց արևաքամ են աստղերը լինում ու մեռնում, կարծես,

Հայոց վիրավոր զինվորների պես,  
Քանզի ով զոհվի Հայրենյաց Համար՝  
Այսօր ասուղ է, վաղն աստղ է անմար:

## 12

Արեք ելավ սուրբ Արագածից  
Խնչպես Այծյամը սիրածի ծոցից,  
Բայց դեռ որտե՞ղ ես, ո՞ւր է սիրածը  
Էլ կուլ չի գնում Այծյամի Հացը:  
— Մեր երեկով վրեժն Հանեք,  
Մենք Անխում պիտի անենք  
Այժմ, քաջեր նամազը մեր,—  
Կանչեց շահը. «Վայ ձեզ, Հայեր ...»:  
Ու զարկեցին իրար նորից,  
Նրանք վարից.

Մերոնք վերից:

Նորից Վահրամ Պահապունին  
Եռողում, ինչպես Թուր-Հավլունին,  
Պարիսպներին մերթ Հայունպում՝  
Կովով՝ քայլող բերդ էր թվում՝  
Հագին զրահ ու սաղավարտ,  
Իրավ, բերդ էր ու ոչ թե մարդ.  
Ահուլի էր կովի պահին,  
Հեռվից անգամ՝ ահ էր շահին,  
Թուր էր թվում կեռ քիթն անգամ  
Հապա բաշը առյուծազարմ,  
Իր կապարծում նետն Հատելիս՝  
Դաշույնով էր ... մահեր տալիս,  
Թե դաշույնն էր ձեռից ընկնում  
Նիզակով էր խող ահազնում  
Նիզակները կոտրվելիս  
Չեռնակովի գոչն էր դալիս

Զույգ զորքերի սիրտը ցնցում,  
Այս ու այն կողմ տագնապ զցում,  
Զարկում էր վեր մազլցողին՝  
Հող էր դարձնում դաշոյնվողին,  
— Դե կե՛ր ... Անի՞ն էիր ուզում,  
Զարկենք՝ կապրի հայոց լեզուն,  
Էնքան կապրի, ինչքան զարկենք,  
Դարե՛ր, դարե՛ր, դարե՛ր անդուլ ...  
Դարե՛ր զարկենք, որ ազգ փրկենք,  
Զարկենք զուք էլ, կուսանք իմ քոյր,-  
Մոնչում էր Պահապունին՝  
Հայոց ողի թուր-Հավլունին -  
Ու բուրգերից կոյս ու կանայք  
Թափում էին Հուր ու կրակ,  
Եռման ջրեր, հալած սև ձյութ,  
— Այս կուզեի՞ր, այ սև ու մութ,  
Այս բաղնի՞քն էր  
Ուզած ձեր ...»:  
Կանանց մեջ էր Այծյամն ինքը՝  
Բերդի զյախին, վշտով լիքը,  
Ուկե զյախին կուռ սաղավարտ,  
Էլ չէր խոսում Հույսն անաղարտ:  
Նետերով լի կապարձն ուսին,  
Բերդի զյախից, ինչպես լուսին,  
Հարում աղեղն իր լայնալիճ,  
Նետահարում, ճշում էր ջինջ՝  
— Կերա՞ր, չելթան,  
Անի՞ն քեզ տա՞ն ...  
Էլ ի՞նչ կուզեն  
Նունն ու բաղեն ...  
Ո՞ւմ ազգն է քիչ,-  
Քիչ ննք, բայց կինմ...  
Վկա կապարձն  
Վարազս քաջ ...  
Վար զլորում մի նոր սիապահ՝  
Շունչ էր քաշում քաղցր մի պահ:  
— Ապրես, Այծնմիկ, այստեղ է նա էլ,  
Ընկած էլ լինի, այստեղ է ոզով,-  
Քաջ նետածիզ ես մեր ազգին վայել ...

Վարապը կզա ծածուկ ճամփեքով».  
Սփոփել ուղեց մեկը Այծյամին՝  
Իր գաղտնի սիրած քաջ ուսկեծամին,  
Բայց խոսքի կեսը մնաց թերանը,  
Քաշեց նրան էլ օձն պարանը:  
Այդ՝ սանդուղք դնում,  
Գաղտնի վեր ելում՝  
Ինչպես ամենի ձիեր ևն բռնում՝  
Վայրենի Հոներն օղապարանով,-  
Այդպես Հույներն էլ ողջ կյանքի դնով՝  
Վիզը զցում թոկն այս ու այն Հայի՝  
Յած էին քաշում ոխով ու քինով,  
Քաշում, ցած էին պարսպից զցում.  
Բայց ճշում՝ Հայոց նետ մի բրոնզյա  
Պարմանավորին շանթի պես խոցում  
Փոռում էին վար՝ դիերի վրա;  
Բայց մի Հայ զինվոր, Գրեհ անունով,  
Երր ցած էր քաշվում օղապարանով,  
Թռավ շարակը իրեն քաշողի՝  
Հեծավ ու խեղեց ձիուն կատաղի ...  
Ու նետերն էին շաշում վերստին,  
Եվ ահա մի կոյս ընկավ պարսպին՝  
Սև նետը կրծքի նուան մեջ ցցված,  
Մի կին խուլ ճշաց և ընկավ բուրգին,  
Ռոտիսի նետը աշքի մեջ մնաց՝  
Դառավ գեղեցիկ թարթիչն ահազին,  
Զէ՞ որ կինն բմպեց  
Իր մահվան բաժակն՝ ի սեր Հայրենյաց:  
Եվ ընկավ ահա պատանյակ մի Հեզ,  
Աշքը բաց մնաց՝ սիրածի ճամփին,  
Թէ՞ կովից ապշած մտքից աղեկեղ ...  
Եվ ընկավ զինջիլ-դռան ծերունին,  
Ընկավ Ֆուլ-Ծանն իր իշխանու Հու՝  
Փառանձեմ տիկնոջ դիակի վրա,  
Ու քաղցր թվաց Համբույրը ... մահու՝  
(Վերջապես Հասավ մուրազին իրա):  
Ընկավ Արտավազդն Հոնենց Տիգրանի,  
Ընկան Գեղմարդենց Մանուկն ու Մուշեն,  
Ընկավ Կորկոտենց Հարսը գեղանի,

Ընկավ, որ կույսերն Հարս գնան ... Հիշեն:  
Ընկավ զորավար Վահրամի որդին՝  
(Որտեղից Հորը լուր տալու վայրկյան...)  
Մահ է, մահ, վերում, վարում ու չորս դին,  
— Զարկե՛ք, — զոռում է Հավունի Հսկան,-  
Մերոնց էլ զարհուր դիեր են դիզգում,  
Եվ այս ցամփից էլ Այծյամն էլ Հուզվում.  
Այնպես էր կովում Այծյամն ահագնած,  
Որ թվում էր, թե կույսի չոր Հագած:  
Չորավարն ինքն էր կովում պարսպին,-  
— Զարկե՛ք ... մեր վաղվա փառքն է վերք սպին ...  
... Այսպես յոթն օր կովեց, սակայն,  
Երր իր բոլոր նետերն Հատան,  
Երր որ մի նետ ցցվեց թեին՝  
Հրաշք թվաց, երր նա ցամփին  
Դիմանալով՝ իր արյան Հետ  
Դորս քաշեց նետն խևույն նեթ  
Քաշեց ... զրեց իր աղեղին՝  
Նետեց, խոցեց գոռ ոսոխին,  
Նրան թվաց Շահին խոցեց ...  
Այս որ տնասվ՝ ալլահ գոչեց,  
Շահի ապշած զորքն էլ ցածում,-  
Բայց բեղերն էր շահը կրծում,-  
Եվ խղճաց թե ինչ ...  
— Սաթայլ է, կո՞յս է, թե՞ կին,  
— Երեքից էլ, մարդ չէ, վայլահ,  
— Վերքն է կապում ...  
— Տե՛ս դու Հայա ...  
— Մարմնից Հանեց.  
— Թեից՝ ասի.

Ու նոր մի նետ կրծքին ցցվեց,  
Ցցվեց ճոճվեց կրծքին իր նուրբ,  
Բայց տանելով ցամփն էլ այս մեծ  
Այս էլ քաշեց Այծյամը սուրբ  
Ուղեց զնել իր աղեղին,  
Հրաշք թվաց թե ոսոխին,-  
Եվ թեակետ ընկավ պարսպի զլսին,  
Բայց ապշեցրեց կովող ամրուխին՝  
Պարսպին՝ մերոնց, ցածում՝ ոսոխին.

Հրաշք թվաց Շահին անգամ,  
Մինչև զեղնեց արյունաքամ,  
Ճոճվեց, բնկավ.  
Նորից ելավ.

Ինքն էր իրմով ապշեց, տոկաց,  
Չորեց, որ դեռ ... կոսի չոքած...  
Կանայք հասան՝ ընկներ պիտի,  
Հասավ մայրն էլ Վարագդատի,  
Մեջքը բռնեց ...  
Բայց ընկավ քաջն իմ ուկեծամ,  
Ինքն առյուծիկ, անունն՝ Այծյամ.  
Ընկավ ... մահից վեր մնալով,-  
Վեհ պարսպին  
Վեր՝ քան սպին,  
Ու գարեղար աշխարհ գալով ...

### 13

Այսպես յոթն օր  
Բյուր բյուրավոր  
Նետերի դեմ զոյգ զորքերի՝  
Ասես Մասիս սարն էր կանգնել,  
Հայոց զորքից ոչ մի գերի՝  
Թևակետ մահն էր խոլ ահագնել.

---

Ու չէր Անին Հույսը կտրում,  
Անին, դեռ պինդ պաշարված,  
Շահը լսում, իր միսն ուստում՝  
Ելք էր փնտրում, ու գոռաց.  
— Բարան բերեք,  
Բերդը ցրեք.

Մեզ է թողել արքան Անին,-  
Ո՞ւր է Հույսը ... նոր զորք բերեք,  
Չայնեց Հոնաց կառապանին ...»:  
Եվ անհոյս քաջերն Հոգնած ոսոխի  
Բարանն էլ բերին, բայց իգուր անցավ,  
— Ո՞վ շահ, առյուծ է Անին կատաղի,-  
Այծյամի նման որմն էլ դիմացավ ...  
Եվ Այծեմնիկի պատմությունն արին,  
— Հայոց կույսն էլ է Հայ որմի նման.

Չեինք Հավատա մեր ականջներին,  
Թե շտեսնեինք մեր աշբով նրան:  
Մեր խփած նետերն իր մարմնից Հանում՝  
Մեր աշքն էր Հանում մեր խփած նետով,  
Կատաղում էինք, բայց և Հիանում,  
Նա մի այցամ էր առյուծի սրտով:  
Եվ ամենաքաջ մեր Բաղրն անգամ  
Մեր նետով խոցված ընկավ արնաքամ.  
Աշա մի նետը, մերը մեզ դրկած,-  
Հարամ ու Հայոց արյունով ներկված ...  
Բայց Հարամգաղեն, ոնց ասեմ, ով Շահ,  
Ոգու էր նման, ոչ թե աղջկա ...»:  
Բայց Շահը փակեց բերանն ապշածի:  
— Հայոց գարունը մի ծաղկով չի գա ...  
Մեր վերջին Հույսն էլ իմ սրտից բացի.  
Գևտնի տակին է, ոչ երկրի վրա.  
Ես իմ շահնշահ Հորից եմ լսել,-  
Գևդան-զյալմազ է անունը նրա,  
Գերի Հայերն են իմ Հորը ասել,-  
Գաղտնի ճամփինք են գևտնի տակ փորված,  
Եվ երբ լինում է այսպես պաշարված՝  
Թե ներսում սով է՝  
Այն ճամփերով է  
Անին իր դրախ Հույսի Հետ կապվում ...  
Էլ զուր ենք Հայոց կամքի Հետ շափվում,  
Երբ Հայոց կույսն էլ այդպիս է կովում,-  
Իմ վերջին Հույսը դուռն է, կամ նահանջ.  
Էլ ինչ եք սողում իմ վշտի առաջ,-  
Գևտինը մտեք,  
Բայց դուռը գտեք ...»:

## 14

Ու ձորն իջան Ախուրյանի,  
Շատ փնտրեցին Հունաց Հետ,  
Բայց զգտան դուռը գաղտնի,-  
Ու զիսիկոր Եկան ետ:  
— Ո՞վ Շահ, ասին՝ դուռ չգտանք,  
Դուռ բացողը սուրն է միակ ...  
— Ի՞նչ սուր, չնե՛ր, - գոռաց Շահը,  
Գտե՛ր, դուռն է Հայոց ճահը,-

Ենդու գտեք՝ կզտնի,  
Ես ձեր լեզուն կպոկեմ,  
Չորում է դուռը գաղտնի,  
Չեր զլուխը կկտրեմ,  
Թե չմտնեմ ևս Անի,  
Արքայի նման մի վախկոտ բռնեք,-  
Գաղտնի է տվել՝ գաղտնի էլ կառնենք ...

15

Ու դուրս ելան զլխիկոր,  
Նորից ընկան սար ու ձոր  
Եվ ամենուրեք,  
Խմբով ու մեկ-մեկ  
Թափառում էին զիշեր ու ցերեկ.  
Մոտենում էին ամրոցին լոիկ,  
(Որ խրոխտում էր Հաղթ ու անառիկ,  
Մի աչքում արցունք, մի ձեռքում զինի...):  
Մոտենում էին մեղմ ու գողունի,  
Մեր պահակներին ուսկի խոստանում,  
Բայց լեզու էին պահակներն Հանում,-  
Նետահարում:  
— Առ քեզ ուսկի?  
Թե չես տեսել  
Հայոցն իսկի ...  
Ու նորից կարծես ողջ ազգն էր երգում,  
— Արծիվն արծիվ է, թենկուզ վանդակում ...  
— Չէ՛, Հայ շինականն Հայ ծախող մարդ է՛,  
Անին ծախողի ականջը կանչե ...  
Իր գերեզմանը ականջ էլ չունի  
— Հետկարը գրեք իր գերեզմանին  
Թե ինչպես ծախսեց ուն զրով Անին,  
— Գերեզման մնա՞ց ...  
— Քամուն կուլ գնաց,  
Բայց շահի ահից Հույսը շնն կտրում.  
Նորից կիշնեին ձորն Ախուրյանի  
Դեռ լեզու էին մինչ զիշեր փնտրում,-

---

Երբ սարերից, որսով, Հոգնած  
Տուն կուգային դեպի Անի

Հայր ու որդի ...  
Որդին գրկած  
Այժմամի ձագ մի կենդանի.  
Գալիս էին Հարսանիքի.  
Բայց դեմ առան ու ու սուզի ...  
Դեմ առան օտար դորբին ու սառան,  
Զույգ որտկանները մի խեղճ որս դառան;

## 16

Ու երբ որ տեսավ Անին պաշարված՝  
Վիշտը պաշարնց հակա ծերունուն,  
Թե շինեին արդեն ճերմակած,  
Կճերմակեին իր մազերն իսկոյն.  
Իսկ մատուց որդին  
Նայելով չորս դին՝  
Շահից վախեցած՝ կպավ հոր սրտին.  
— Մի՛ վախիթ, որդիա, սրանք էլ մարդ են ...  
Շահը քրքջաց՝ բայց մարդ կմորթեն,  
Անիի՞ց վախտաք, սովէ է Անիում,-  
— Զէ՛, ապրած կենաս, Անի կուգայինք,  
Արագած՝ վիթի որս էինք անում,-  
Յոթ զիշեր սարում, ի՞նչ խմանայինք,-  
Այս էլ յոթն օր է, ընկած սարեւար  
Վիթ էինք փիթում արքայի Համար ...»:  
— Բայց արքան մեր վիթն էլ ի՞նչ է անում,  
Նա չկա անզամ իր գերեզմանում,  
Եվ շուն են մորթել իր գերեզմանին,-  
Քանզի Հունաց էր կտակել Անին.  
Կայսրն ինձ Հնաւ է Անին կիսելու,  
Ի՞նչ ես Հոնքերդ վրաս կիսում,  
Շահիս խոսքին չե՞ս Հավատում,-  
Ու շահն Հանեց մազաղամյա  
Երդումն Հայոց թագավորի.  
— Մի պատառն է,- ասաց, ահա  
Հետկար կոչված գաղտնապրի.  
Չեր մեծերն են պատառութել ...  
— Մեր մեծերը միշտ մեծ են, Շահ,  
— Բայց արքան է մեղ կտակել ...  
— Թե իրավ է, էլ ի՞նչ արքա ...

— ԶԵ՞ս Հավատում, կարդա,-ասաց.  
Ու ծերունին ... դավը ... կարդաց.  
— Ի՞նչ ես Հեծել սատանի ձին,

Ուզածդ ի՞նչ է.  
Մի Անի չէ».

Մի քաղաք է, կյանքս խո չէ,  
Ինչ որ կողես անել սրով՝  
Անզեն որ գաս՝ կանեմ սիրով»:  
Ու ապշեց, շմբեց. քշվեց ծերունին,  
Ու ոտից զլուխ չափեց արքային՝  
Իր Հուշերի մեջ՝ անել մի վայրկյան,-  
— Այս, մի՞թե այս է եղել մեր արքան ...  
Այս դավաճանը, թե գիտենայի՝  
Մի օր մի արջի թերան կտայի ...»:  
Ու շահմար օձի շապիկը թվաց  
Այն մազաղաթը ծերունու ձեռքին,  
Եվ ատամներով ուզեց Հոշոտել  
Այն դեղին պատառն՝

Իրրե արքայի կոկորդը դեղին,-  
(Որդին ապշահար՝ Հոր քուջն էր մտել...)  
— Ով շահ, քիչ է շունն իր գերեզմանին ...  
— Դո՞ւ էլ ... բայց մեզ է նա թողել Անին.  
— Թողել է՝ վերցրու ...  
— Մաղրո՞ւմ ես, ծերուկ.  
— Ինչո՞ւ եմ ծաղրում ...

Գաղտնի է թողել՝ Հայտնի վերցրու ...  
— Ինչպե՞ս վերցնեմ, երբ չեն Հանձնվում,  
— Չեն էլ Հանձնվի ...  
— Լավ գիտե՞ս, Հայդուկ,  
— Թե Հայ եմ, գիտեմ ...  
— Լավ, ցնդած ծերուկ.

Կտանե՞ս, թե՞ ոչ, իմ զորքերն՝ Անի  
Գաղտնի ճամփեկով, որ Անին ունի.  
— Որ չունի, ով շահ, աչքովս տանեմ ...  
— Կունենա, Հենց որ աչքերդ Հանեմ,  
Ու դահճին կանչեց.

Գահճն Հայտնիվեց,-  
— Տա՞ր ու տես՝ ո՞րն է շուտ խելքի գալու ...  
-----  
— Մի՞թե Այծյամիս էլ չեմ տեսնելու ...

1

Ողջ զիշեր շահի մտրակը ձեռքին  
Շաշում էր Հոգմը Հայոց լեռներին,  
Գոռում, մտրակում, բայց լեռները լուս,  
Զրացին զորքի առջև ոչ մի դուռ...

.....  
— Զեր լությունն էր խիղճս մեոցնում,  
Զեր քարե կամքն է ինձ դահիճ դարձնում ...

2

Ու երբ որ անցավ զիշերն անհանգիստ՝  
Դահիճը նրանց ներս թերեց վհատ, —  
Ներս մտած Հայրը ծեծված, Համր ու խիստ  
Ու ծեծված, լրված ծաղիկը գունատ,  
Որդու աչքերը ուռել էին, արնել, —  
Որդուց ավելի տանջված էր Հայրն էլ,  
Զույգն էլ մինչև լույս ահեղ փայլփայլված,  
Այս, զույգն էլ անզոր, զույգն էլ շղթայված:  
Լուռ էր դահիճը, Շահը վեր կացավ,  
Լության դառը խորհուրդն Հասկացավ.

— Էլի՞ չես տանի  
Իմ բանակն Անի՝

Ինձ անհայտ ճամփով, որ գիտեմ, ունի ...  
— Զունի՞;  
— Զունի՞;  
— Զունի, ասի:

Ունենար էլ, կասեի՞ չէ,  
Ես գառ չեմ տա զիրկն Հովազի՝  
Թեկուղ Հազար դահիճ կանչե ...  
— Անի՞ն է գառ, վայ' անիրավ,  
Ի՞նչ գառ, զորքիս կեսը կերավ.

— Կեսն էլ կուտե, թե դեռ մնաս,  
Լավ է, քաշվես, Հողդ գնաս,  
Մեզնից վալադ դուրս չի գա քեզ,  
Ոչ սա զիտե ճամփեն, ոչ ևս:  
— Ո՞նց չգիտեք.  
Անեցի չե՞ք ...  
— Չէ, ձորից ենք, տունս ձորում:  
Քարայրում է, ոչ թե վերում,-  
— Ո՞ր ձորից ես,  
Իմ Հորից ես,-

Հայրս ասում էր Ախուրյանի  
Չորերում է դուռը զաղտանի,-  
Ինձ Հայր դարձիր գեթ այս գիշեր,  
Ինձ շահ դարձիր, առաջնորդիր իմ զորքին,  
Մինչև ծունկող կհասցնեմ իմ ուսկին:  
— Մինչև պլուխս էլ թե որ Հասցնես՝  
Գլխիս մի մազն էլ դուռ չի դառնա քեզ,  
Գլուխս կտամ ես Հազար մահի,  
Բայց Անին չեմ տա ես ոչ մի շահի:  
— Իսկ թե կիսեմ Անին քեզ Հետ՝  
Ինձ չե՞ս տանի  
Խսկոյն ենթ ...»:  
— Իմը ինձ Հետ, ով անաստված,  
— Լավ է քեզ Հետ, քան թե Հունաց ...

---

Բայց լուռ են որդին ու շուրթերը Հոր,  
Ինչպես Անիի պարիսպները գոռ,  
Դարպասները գոց, բուրգերը քարե,  
Լուռ է Հայրը, ինչպես ժայռե մարգարե:  
— Չե՞ս դառնա շահ,  
Չե՞ս տանի, Հա՞ ...

Ու մտրակեց ժայռ ծերունուն՝  
Խեթ նայելով ժայռի որդուն,  
Որ ես քաշեց զլուխը Հեզ  
Ժայռից բուսած մի ծաղկի պես,  
Ու կուշ եկավ Հոր տաք զրկում  
Ինչպես ճապը իր եղնիկի,  
Միրտը ահից թույլ էր զարկում

Թե կարուտից Այծեմիկի:  
Մինչ հայրը ժայռ  
Հիշելով որսի օրերը ջահել  
Երբ կոխ էր արջի ու գայլի հևտ բռնում,  
Բակ արքան ծառին ագռավ էր դառնում.  
Բայց թե մողեգնեց,  
Նահն էլլ զարկեց.-  
... Զարկեց, բայց կարծես զիապավ վերստին  
Ժայռն Անիի ժայռն պարսպին.  
Բայց հայրը որդուց զուխ չէր հանում,  
- Ախր ինչո՞ւ է շահից վախենում:  
Այս ո՞ւմ է քաշել, երբ իր մայրն անպամ  
Արջի փոր թափով պախրի է նման ... ։  
Ու զիմանում էր հայրը, որ բարի  
Անփորձ որդին էլ տոկալ սովորի,  
Ինչպես ողջ զիշեր զիմացավ իր հևտ,  
Ու հայրը դառնում վշտահար մի բերդ՝  
Շահի գեմ իրեն այնպես էր պահում,  
Ինչպես շահն ինքը զենք ու զրահով,  
Ու շահի հույսի վերջին թելն այսպես

Զգված՝ կտրվեց ...

- Լավ, ցույց կտամ քեզ,  
Եվ խուլ չշնչաց շահը Շամանին՝  
- Իմացիր, ի՞նչ են աստղերը խորհում,  
Այս ասլառա՞մն է հանձնելու Անին,  
Թե՞ իր ծաղիկն է իմ հույսը նորում,  
Ու դարձավ, մոտիկ կանչեց իր դահճին,  
- Որդին է, Հույս, - ասավ, ականջին,  
- Որդին է. - կրկնեց դահճար զաժան,  
Բայց ինչքան Հորից մնա անբաժան,  
Ով իմ շահնշահ, որդին էլ Հույս չէ,  
Ես չէ թեկուղ քո այլահը տանջն ...  
Հայ են ու վայ են, աչ չունեն մահից.  
Շահիս Հրամանն ու ես՝ մի դահճին՝  
Ինչքան միատեղ՝ զաս տիֆի սրանց...  
Ով շահ, երեսիս հայեն էլ դնաց:  
Մինչև լույս ձեռքերս անհույս Հոգնեցին,  
Կարծես զաս էի տալիս ... առյուծին,

Որ խոսի ... լեզվով իմ Շահի ուզած:  
(Խուզ շնչում էր դեռ գահին Հուզված ...).  
Հայ են ... մտրակի տակ էլ Հայ մնում,  
Անց պիտի ձուլես, զլուխ չեմ Հանում,-  
Հայրը՝ լուսթյամբ, որդին՝ զռապով՝  
Տարան ցավերը՝ ցավերն ինձ տալով.  
Հայրը գոռում էր՝ մեռ մի՛ տա որդուս,  
Որդին ճշում էր՝ խղճա՛ Հայրիկիս,  
Հայրը շղման էր կրծոտում անհոյս,  
Եվ ամեն անգամ որդուն զարկելիս  
Հայրն ատամներով մտրակս բռնում.  
Կամ որդուն զարկս ինքն էր ընդունում՝  
Մղելով զլուխն օձ մտրակի տակ՝  
Զրահ էր դառնում իր որդուն, կարծես,  
Ու կարծես անտես մի Հայ Հրեշտակ  
Ռզի էր տալիս նրանց՝ մի Հոր պես ...  
Ու Հայր ու որդի դիմանում էին,  
Ինչքան էլ ծառադ դառնար դիվային,-  
Եվ Հիշում էին Այծյամ աղջկան ...  
Բայց որդին Հորը նման չէր այնքան,  
Դեղնուս աշով է նայում մտրակին՝  
Ինչպես սև օձից քաղվում է Հոգին,  
Ազքերն էլ անվերջ ձգտում են Անի,  
Կարծես Հորից թանկ մի այլ բան ունի:  
— Մայրը կիմնի ...  
— Այդ մայրն է, թե ով՝  
Քաշում է սրան Հազար մի մեռվ,-  
Այս էլ մի Հոյս է, ով Շահս վսես,  
Աչքերն ասում են՝ մի՛ տանջիր, կասեմ;  
Բայց Հոր Հայացքից փոխվում է խսկոյն  
Ու դառնում է զառն՝ առյուծի կորյուն:  
— Հա՞ ... կղիմանա՛ զեռ ինչ էլ անես,  
Եշնջաց Շահը դահճի ականջին,-  
Լավ է բակուտին ջոկ վրան տանես,-  
... Մինչեւ որ շամանն Հարցնի արարչին,  
Բայց քանի որ սա ծաղիկ է ու խակ՝  
Ուժդ լեզվով տուր, զեռ մեռքի տեղակ,  
Առաջ խոստացիր դու նրան իմ ձին,

Իմ իսկ անունից՝ իմ ուսկի գոտին,  
(Գոտին էլ, ասա, պատիվն է մեր մեծ ...):  
Թե չհանձնվեց, խոստացիր նրան  
Քո շահնշահի շահմար աղջկան, —  
Աղջիկ խոսքն խեղույն խելքից կհանի  
Ու մեղ՝ գողունի  
Անի կոտանի ...

Սիրո Հասակն է, ևս զիտեմ սրանց,  
Լավն էլ գերի է զինու և կանանց ...  
Արքան գերի չէ՞ր, որ առ չդառնա  
(Նորածիլ բեղիկն իմ խոսքին վկա)  
Սիրու է, Անի չէ, որ չզրավես,  
— Բայց թե՝ Հորն հիշե ու լուս Հոր պես ...  
— Դարձիր ավելի դու մեղբարերան,  
Դու իր Հոր Անին խոստացիր իրեն,  
Վերջն էլ ... թագավոր ողջ Հայաստանի,  
Ու կզրավեն սիրտը պատանի ...  
Հայաստան խո չէ, որ Հույսդ կտրես:  
— Զէ՛, ի՞մ շահնշահ, իմ Հույսը դու ես,  
Ուշ թե չուտ քոնն է ողջ Հայաստանը ...  
— Ուր էր, թե աստված լսեր քո ձայնը,  
— Լսեց, որ սրանց քո ուսքը զրկեց.  
Թե չէ Հայերը գերի չեն ընկնում,  
— Հա՛ ... պատանու վախն իմ Հույսը փրկեց՝  
Աչքերն աչքերիս գերին են մնում:  
Իր փառքի Համար Հորն էլ կծախսի,  
Ո՞վ չի իր մահը գահի հետ փոխսի, —  
Այս ամենն, ասա, Շահն է խոստանում,  
Կթագավորես ողջ Հայաստանում  
Ու քեզ թագուհի՝  
Շահմարը շահի,  
Ինչ Շահմար, ասա՝ շուշանն ալլահի,  
Ասա յոթը շահ ուզում են՝ չի տա, —  
— Թե չհավատա  
— Վկա մատանիս՝  
Իսկույն մատը դիր, խակ է՝ կհավատա, —  
Կա-չկա խակն է Հույսն էլ շամանիս:  
Չես կարող գողնալ խելքը մի գառի ...

Բայց թե Համառի վերջն էլ Հոր նման,  
— էլ ի՞նչ դահիճ ես, որ դեռ Համառի  
Զեռիդ եմ թողնում օրենքն անսահման:  
Ինչքան որ լեզվով մեղք էիր տվել՝  
Թույն տուր ձեռքովդ՝ յոթն անգամ ավել.  
Իր մահը մինչև բերանն Հասցրու,  
Ականջի լսած դժոխքը տեսցրու,  
Հայրը կաղնի է, սա ճյուղըն է դալար,  
Ճյուղը կծռես, տանջիր միալար,  
Որ տաշվի, դառնա իմ կացնի պոչը,  
Հայոց անտառի այս մի բողբոջը,  
Որ կացնիս առնեմ ու մտնեմ՝ անտառ,  
Արմատից կորեմ՝ շթողնեմ մի ծառ:  
Չասես մատղաշ է, մնդրաս, խնայես,  
Մատղաշն է Հույս, էլ ես չխայես...»:  
Տանջիր, մինչև դա շամանս բարի  
Ականջու բերի խորհուրդն աստղերի»:  
Ու բարձր գոչեց դահիճը դահճին՝  
— Զիս էլ նվեր տուր այս իմ Հայ ճանճին:

## 3

— Հայրիկ, ինձ մի՛ թողնի՝ տանի,  
Ինձ տանում են մորթելու:  
— Չէ՛, ձագուկս, քեզ չեմ թողնի,  
Միասին ենք մեռնելու ...»:  
... Ու երր Հոր գրկից խլեցին որդուն՝  
Քանդելով շղթան որդու ձեռքերի,  
Առյուծն աղվեսի ոտքն ընկաւի խսկույն.  
— Ո՛վ շահ, փոշին եմ ես քո ոտքերի, —  
Խղճա, մի՛ մորթի դու բախտը սրա,  
Միակ որդիս է, իմ Հույսը միակ,  
Ջահել տղա է, մուրազի վրա,  
Իրեն կսպասե իր կույսը միակ ...  
Հետո եկել էր՝ շար բախտին Հլու՝  
Այծյամի Համար այծյամ որսալու»:  
— Այծյամի Համար, այդ ի՞նչ ես ասում,  
— Միրածի Համար այծյամ էր որսում,  
Այծյամ է անոնն իր Հարսնացուի.

— Իրա՞վ ես ասում, այլահը պահի,  
Այծյամ անունով ուրիշ մեկը կա ...»:  
Որդին չենջաց՝  
— Մի Հատ է ... չկա;  
— Լա՞վ, ձեր Հարսանիքն Անխում կանենք  
(Շահին թվաց, թե գոտավ բանալին).  
Բայց վիրապոր է այժմ, ի՞նչ անենք,-  
(Ու մեկից մի բուռ դառավ պատահին...).  
Խնչքան գեղեցիկ, այնքան էլ քաջ է,  
Մեր խփած նետերն իր մարմնից Հանում:  
Մեր աշքն էր Հանում, բայց քեզ մի տանջե,  
Նա կենդանի է, բայց թե՝ Անխում  
Ասում են սով է, իշխաններն անգամ  
Շուն ու կատու Են իրարից խլում,  
Թե ուշացընես՝ էլ ոչ մի Այծյամ,  
Սովից կմնոնի քո վիճն էլ զայռում.  
Երեք ցավ - սովը, վերքերը, և դու,  
Էլ չի դիմանաւ՝ թե ուշացընես ...  
— Խելքից մի՛ Հանե դու սիրան իմ որդու,-  
Մոնչաց Հայրը մայր առյուծի պես:  
Անխում սով չէ, սիրած էլ չունի,  
Քեզ խարում էինք, որ թողնես գնանք.  
— Հայրինկ ... - Հառաջեց որդին պատանի,  
Թե իրավ սով է ...  
— Սակի՛ր, շան զավակ՝  
Ու դարձավ Շահին.  
— Ի սեր այլահի՝  
Ո՞վ Շահ, թող գնանք, մեր խաչով խաչվենք  
— Ձեր խաչը ես եմ, օր Հանուք ձեր Հացին,  
Որդուդ Հասցնենք սրտի սիրածին,  
Սիրածն հրաշք է և ոչ թե այծյամ,  
Զէ՞ ես էլ մարդ եմ, ես էլ սիրած կամ.  
Մնողից վեր է աղջիկը սիրած,  
Հայրենիքից էլ՝ բայց թե ի՞նչ արած,  
Սովն է, սովն Հայոց թշնամին, ո՞չ ես...»:  
— Ցոթն օրում ի՞նչ սով, ո՞վ կՀավաստա,  
— Ձերոնք են ասել, թե՝ «կուտենք և ձեզ»

կմեռնենք սովից, բայց Անին չենք տա»:  
Իմ զրուներին դիմացավ Անին,  
Քիչ են, բայց Հայ են, իրավ են ասում,  
Բայց չի դիմանում նա սով գաղանին -  
Զրադացների քարերն են լիում,-  
Հաց են մերոնցից պահակներն ուղել,  
Ես իմ աշքով եմ զուրբանով տեսել,  
Իսկ շինականներն՝ իրար Հոշուսում՝  
Շուն ու կատու են իշխաններն ուստում ...  
Էլ Հույս կմնա՝  
Կույս կղիմանա»...  
Դու ոչ որդուդ ես խղճում, ոչ ազգիդ.  
Թող թագավորե որդիդ Անիում,  
Տես, որ քեզանից խելոք է որդիդ,-  
Կմեռնի Այծյամն ... ինչո՞ւ չես թողնում  
Թագավորի Հետ քո այս պատանի  
Իմ բանակի Հացն Հասցնեմ Անի,-  
(Հորը թվաց, թե որդին Հավաստաց,  
Որդին Հոր գրկում վիշապիկ թվաց,-  
Կուրծքը ծակծկող կրակե ողնի ...).  
- Կուզեք ես չպամ՝ կասկածը ցրեք  
Հացը տամ ... թե չէ կույար կմեռնի,  
Հացը տամ, գաղտնի գոնով Հասցըեք...  
- Հայրիկ ... - վերստին որդին մղկտաց,  
(Կու գնաց Շահի շողոմ խոսքերին ...).  
Մայրիկն էլ սովից կմեռնի, ասադ.  
Այծյամն էլ, Հայրիկ, փրկենք Այծյամին ...»:  
- Պապանձվի՛ր, անմիտ, անխելք, անզգամ,  
Ի՞նչ սով ... զլուխոդ է խելքի սով ընկել.  
(Այս, ինչպե՞ս խեղդեմ, որ ցավը չզգամ ...):  
- Հայրիկ, բա Անին էլ ինչպե՞ս փրկել ...  
Բայց Հայրը զարձած որդու էլ գերին՝  
Կասկածների մե կծիկում կորած՝  
Որդուն էր կշռում որդու աչքերին,-  
Որդին ջաւել էր, որդին պատանի,  
Որդին խարցող է ու սիրահարված,  
Վախից գաղանին Անի կտանի ...  
Եվ աշեղ մտքի աղեղը լարված

Որդու բախտի դեմ ուղղվեց անկամ.  
— Չէ՛, բանս բուրդ է, անիծվե՛ս, Այծյամ ...  
Սերն է գառնուկիս աչքերը կապել,  
Գլուխն էլ կտա Այծյամի համար,  
Տե՛ս ... աչքերն իմ դեմ ինչպես են ապրել,  
Սիրած Այծյամն էլ այնտեղ վիրավոր ...  
Ու սիրտն ընկճեցին վշտերն աննահանջ.-

Ու միտք էր անում՝

— Անին որ առավ՝

Զիուց չի իջնի, Դվիխն կարշակե,  
Զիու զլուխը կծուն Հարավ՝  
Դվին կույսերն էլ դեխն չեն բավե,  
Այս պիտօն Հունաց Հետ, որ մեզ կդավե,  
Հացեկաց թերզն էլ մի բրդում կանի,  
Կիսմե վանա ծովն իրրն զահվե,-  
Կլիանն Հողը ողջ Հայաստանի,  
Այս Հույսով է Հույն արքան ցնորվել,  
Որ միացել է այս անհավատին,  
Հին երկերեսը իրավ է նորվել՝  
Որ զորք զառել պարսիկ կավատին,  
Ախս, Օհան-Մմրատ, թե իմանայի՝  
Անտառում բուրդող քամուն կտայի,  
Կասեի՛ ելավ ծառին, բայց ընկավ՝  
Երր կատղած արջը ծառին մոտեցավ»:  
Կառնի զույգ զորքով, Անին չի բավե ...  
Թե որդիս սիրուց ցնորված՝ դավե.  
Մեզ կկործանես սերը խելազար:  
Ու կարծես զառս ինձնից խորթացավ,  
Երր շողոմ Շահը Հարսնիք խոստացավ,  
Իրավ խորթացավ. թե թվաց աչքիս,  
Թե վախն է Հանում աչքերը խելքիս,  
Անին կորցնելու վախն է, բայց չէ՞՝, որ  
Շատ է պատանի, թագ, սիրած աղջիկ,  
Եվ ո՞վ չի ուզե զառնալ թագավոր,-  
Բայց ո՞նց՝ ծախսելով ազգն ու Հայրենիք ...  
— Հայրիկ ... թող ծածուկ Հասնեմ Այծյամին -  
Թող ծածուկ փախչեմ ...  
— Շո՛ն ...,- ճշաց Հայրը, այս ի՞նչ ես խնդրում»:

Ու դժոխքն իջած մի ելք էր փնտրում,  
— Ռ'վ աստված, երկու դժոխք ևմ ընկել,  
Այս մեկումարի՞ս, թե՞ ազգս փրկեմ,  
Երկուսն էլ իմն են, մեկը մեկից թանկ.  
Մեկը մեկից վեր, երկուսն էլ անգին ...»:  
Ի՞նչ անի ... զոհի՞ իր որդուն միակ,  
Իր միակ որդուն, թե՞ Հայրենիքին,-  
— Ինչո՞ւ սիրու արակ մի Հայր Արրաշամ,

Ու ես չեմ կարող...

Բայց սերը դժկամ՝

Մառս եղակ Հանկարծ մութն ու զառնորեն,  
Թե ինչ է տվել Հայրենիքն իրեն,  
Որ զոհի որդուն՝ ի սեր Հայրենյաց.  
— Ի՞նչ է տվել ինձ, մի կտոր չոր Հաց,  
Այն էլ ինձ կերած ամեն պատառով  
Մարի մեջ փորած գայլի բնիս մեջ.-  
Քառասուն տարի անիծված ձեռով  
Սար ու ձորերի մեր անմեղներին  
Ես որսում էի, բայց ո՞վ էր ուտում,  
Ո՞ւմ Համար էի Հավիք ու եղնիկին  
Նշան բռնելով՝ խիզմա մրոտում,-  
Նրա՞, որ ինձ էլ այս օրը գցեց ...  
Վռնդվեց անգամ իր գերեզմանից  
Եվ Հայրական սերն իր սիրաթաքուց  
Ազգի բախտի Հետ կովի բռնվեց՝  
Ինչպես փղի Հետ անհաշտ մի առյուծ,-  
Ու մերթ առյուծն էր Հաղթվում, ու մերթ ...  
Եվ կասկածների ծովում շարադես

Հայրն ափ չէր գտնում

Ու չէր իմանում

Խելագարվո՞ւմ է, թե՞ խմաստնանում ...  
— Թե՞ ինձ սպանեմ ու որդիս մնա,  
Բայց այս վազրերին սա չի դիմանա ...  
Ինձ Հետ Հազիկ էր դահճին դիմանում,  
Թե՞ որդուս ասեմ, թող ինձ սպանի,  
Ու Հետո՝ իրեն, ա՞յս է Հույս մնում,  
Բայց այդ Հետոն էլ Շահը չի թողնի ...  
Այս էլ ելքը չի, բայց ի՞նչն է, աստված,

Փախչե՞նք, բայց ինչպե՞ս, ծանր ենք չդժմայված,  
Ծահով, չդժմայով, զորքով ու զահճով,-  
Անիծիլ Հույնն էլ մեզ խարած խաջով.  
Եղթան բարակ է, ասենք թև կտրես,  
Բայց ինչպե՞ս փախչենք ծով զորքի միջով.  
Հույսը երկուսիս մաշն է՝ միաժամ,  
Միասնդ մաշն է, բայց ո՞նց միասնեղ,  
Իմ ձեռքո՞վ խեղդեմ, չէ՛, շատ է դաժան ...»  
Ու տվայտում էր Համբ ու խելաշեղ,  
— Աստված, խղճայիր գեթ մեկունարիս՝  
Հավք դառնար՝ թռչեր, փրկեր նաևնարիս ...»:

---

## 4

Գիշերներ էին օղակ առ օղակ  
Եղթայիլում Շահի ու Հույսի տեղակ.  
Ու որս չէր դառնում որսկանը Շահն,  
Հայրն՝ առյուծ, որդին՝ կորյուն էր մնում,  
Արցունք էր թվում Շահի զրահին  
Կանթեղի ցուքը, ու նա գայրանում՝  
Ու գուրս էր նայում, ինչպես բորենին,-  
Քնած էր Անին խոռվյալ քնով,-  
— Զէ՛, ևս այս զիշեր կմտնեմ Անի.  
Կմտնեմ ... թեկուզ իմ արյան գնով,  
Հենց քնած տեղն էլ կրիացրենեմ՝  
Համբայան քնով, որ էլ չզարթնի.  
Չիու զլուխը չորս դին կծուեմ  
Որ մաքրեմ Հայից Հոգն Հայաստանի ...  
Ո՞ւր է շամանս՝ խորհուրդն ալլահի,  
— Ո՞վ իմ շահնշահ, ալլահի ստվեր,  
Շամանը դառել աշքերն իմ Շահի՝  
Աստղերի հետ է խորհուրդի նատել,-  
Երկնքի զրքից զլուխ չի Հանում  
Քանզի աստղերը չեն միարանում  
Թև ո՞րն է Հույսը՝ Հայիցը, թե՞ որդին...»:  
Շահի Հոնքերը զայլի փոխվեցին  
Ու կապել տվեց սյունից Հօրն անդեն,  
Անսովիկ Հօրը, ինչպես առյուծին,-  
— Քաղցի՛ր, մինչեւ որ աստղերը խոսեն ...

— Զէ՛, չի դիմանա իմ զառն առանց ինձ,  
Ինչպես ինքն Անին՝ առանց պարտապի ...  
Բայց սև դավթար է կյանքը որսկանիս,  
Ամեն մի էջը մի վերքի սպի.  
Ամեն մի էջը արևով է ներկված,  
Վայ թե վերջին էջն իմ միակ որդու  
Անմեղ արյամբ ես ներկելու, Աստված,  
— Այս, միթե գութդ ինձ չի փրկելու ...  
Հայրա ասում էր՝ որսը թող, որդի,  
Որսորդությունը անհծված է, Համ,  
Որսի աննծքը որդի կմորթի,  
Չէի Հավատում Հորս, բայց ահա  
Սիրու չեն ուզում պոկել իմ կրծքից.  
Որդուս են ուզում,-  
Որդուս որ խլեն՝  
Կխլեն և կյանքն իմ Հայրենիքիս,  
Ազգս կխլեն.  
Որ իրենց ձուլեն ...»:  
Ու դանդաղ ելավ նժարը որդու,  
Ազգի նժարը ծանրացավ, իջավ -  
Բայց Հայրը կրծեց շղթան ահարկու՝  
Հաստող մոմի պես որդու ուշքն անցավ,-  
Սիրած Այծյամն էլ այնտեղ վիրավոր ...  
Ու սիրտն ընկճնցին վշտերն աննահանջ,-  
Մորթվող գասի պես ընկավ զիրկը Հոր:  
— Բայիշկս, ձա՞զս, ի՞նչ եղավ, այս ի՞նչ ...  
Ու զրկեց որդուն Հսկան մազկոխնչ,  
Աչքերն Համբուրեց, Համբուրեց այնպես,  
Որ տղան բացեց աչքերը կրկին,  
Հսկա ծերունին Հեկեկաց մոր պես.

Որդու գլուխը սեղմեց իր կրծքին,-

Ու կրծքին սեղմում

Ու բաց չէր թողնում,-

Կարծես Անին էր իր կրծքին սեղմում,

Ու միտք էր անում\*

- «Անին որ առավ»

Հիուց չի իջնի, ագահ Հունաց Հետ

Հիու գլուխը կծուն Հարավ»

Ողջ Հայաստանն է

Հույսն էլ երկուսի.

Անին է բացող բանալին Հույսի.

Անին որ առավ, այս, ի՞նչ մեծ ցավ է,

Կառնի, թե որդիս սաղ-սաղ ձեռքն ընկնի...

Կկորչի ազգս, թե որդիս ... զավե,-

Եվ առանց Բինպյոլ ու Վասպուրական,

Առանց Ազարայր ու Արածանի,

Եվ առանց Տարոն, առանց Մուշ ու Վան,

Եվ առանց Սիփիան, առանց Բզնունի,

Եվ առանց Սասուն, առանց մայր Ռստան,

Առանց Ղարս ու Խորթ և առանց Անի,

Եվ առանց Մասիս՝ էլ ի՞նչ Հայաստան ...

Վանքի տեղ՝ մզկիթ, աստծո տեղ՝ ալլահ,

Հայ աղոթքի տեղ նամազ ու մոլլա,

Հայոց տեղ իսլամ ...

Ու շանթվեց մտքից,-

Որդու գլուխը բաց թողեց գրկից.-

Կարծես թե տեսավ պահ մի տեսլական,

Թե ո՞նց է Շահը ներխուժում Անի,

Նախ որձիս մորթում՝ ծերին ու մանկան,-

Արյունով լցնում ձորն Ախուրյանի.

Մտնում լողանում. ծափ տփող դորքով

Քանդում է Անին ... իր որդու ձեռքով.

Իր որդու ձեռքով, այնժամ ի՞նչ որդի,

Թեկուզ և իրավ անմնդ-մեղավոր ...»:

Ու կրծեց Հայրը շղթան երկաթի.

Ու չէր Հեռանում տեսիլն ահավոր.-

Մորթում որդուն էլ ...

Ու պիոծ վարարում\*

Հայ կույս ու կանանց ողջ բռնաբարում,-  
Դառնում մորթում են ողջ էգն էլ Հայոց,-  
Որ Հայ շծնի էլ ոչ մի ամրոց,  
Որ Հայ շծնի էլ ոչ մի խրճիթ,  
Որ ցնդի Հայոց մեր ազգը վճիտ,  
Որ՝ Հանց մի ծաղիկ՝  
Քորահան անի

Մի ողջ ժողովուրդ, ոչ թե մի Անի ...  
Հազար Անի է Հողն Հայաստանի ...  
— Չէ՛, ինչպես երեկ դիմացավ դահճին՝  
Միատեղ կը մաքենք բաժակն էլ վերջին,-  
Միատեղ ... կամ թե ...  
Ու քեզ չեմ թողնի դարձնեն դավաճան,  
Մենք չէ... բայց կապրի մեր ազգն անվախճան ...»:

2

— Չի՛ ապրի ...  
Գոչեց վրան մտնելով  
Շահնշահի հետ շամանը Շահի,-  
Ու ապշեց որսկանն՝ իրեն գտնելով՝  
— Մարե՞ր է կարդում շամանը մահի ...  
— Չի՛ ապրի, - կրկնեց շամանն ահաշուք  
Չի ապրի Հայոց ազգն առանց ցավի,  
Չոր ևն գուշակում աստղերն անշշուկ,  
Որ չէ, չի ապրի, Հայն առանց դավի ...  
Ամեն մի աստղից մի միտք էր ծնվում,-  
Բայց միարանվեց խորհուրդն աստղերաց  
Հայրն է մեծ Հույսը, բայց չի Հանձնվում,-  
Որ չի Հանձնվում՝ ուրիշ ճար չկա,  
Հոր մահը որդու աչքը բաց կանի,-  
Որդուն կրաշե կարուսն աղջկա,  
Մեզ էլ ետևից Անի կտանի ...»  
Եվ Շահը գոչեց՝ «Հորը վերջացրու,  
Քանի որ այս է խորհուրդն աստեղաց,  
Հայոց թագն խակը բաժինն է ... որդու,  
Իր թագուհին է Այծյամն իր սիրած ...  
Հորը ... քեզ տեսնեմ, մի զարկով, իմ քաջ.  
Հենց այժմ, որդու աչքերի առաջ. -

Բայց վշտից գժվեց որդին պատանի,  
Իսկույն փոշու պես ուսքն ընկալ չահի,  
— Ինձ մորթի, ով Շահ, ի սեր ալլահի ...  
Բայց Հայրն ահեղվեց,-  
Թվաց, թև փոխվեց,  
Թե՞ումն ամբոխվեց՝  
Շղթան ձիգ տվեց  
Ու շահնշահին Հասավ զարհուրած,  
Ու խելակորույս, թե՞ու խմաստնացած՝  
— Որդուս վերջացրու, ասավ ականջին,  
Հայոց զահն ինձ թող ... մեղած արարչին,-  
Մանկանցն իմ աղքին տիրել չի սազում ...»:  
Եվ մոտիկ կանդենց Շահն խկույն դահճին.  
— Որդուն վերջացրու,- Հայրն է ... թագն ուզում.

---

Լավ է փորձ-մարդու վրա հոյս դնել,  
Քան մանկանց ձեռքով կրակը բռնել ...  
Դե՛, չեղթանի շուն ...» և աչքով արավ,-  
Դահճը ծաղկին մորթելու տարավ ...

### 3

— Դե՛ ... չղթաս քանդե,  
— Թող ... դահճնը զա.  
Չէ՛ ... դու կրազմես Սմբատի զահին,  
Կրազմես ... ու թե վերջը չուզենաս՝  
Չեմ ձուլե Հայոց քո աղքն իմ աղքին,-  
Միայն թե զաղտնի դռները ... բանաս;  
Կրանաս ... այժմ Հավաստում եմ քեզ,  
Այս վիշտի միայն զահին կցրվի ...  
(Քիչ մնաց Հայրը՝ Հրաբուխի պես...  
Ցնցվում էր՝ նման մորթվող մի արծովի):  
Ու շարրաթ լցրեց Շահը որսկանին.  
— Չէ՛, չղթաս քանդե, - կրկնեց ծերունին.  
— Թող դահճնը զա ... կրկնեց Շահն ահով,  
Ըմպե, ո՞վ Հակա,-  
Ոսկի մատնիք է Հողն Հայաստանի,  
Անին մատանու ակն է գեղանի,  
Բրավ են ասել, լավ խելքի եկար ...

Անին քարն է ճոխ, բայց երկուսն էլ քեզ.  
Միայն թե զիշերս ինձ Անի տանես ...  
Մտնեմ - դուրս կգամ, այս էլ է ինձ բավ,  
Որ չասն Շահը Անի չմտավ.  
Այն էլ ահռելի գորքով էլ Հունաց...  
Թե դուրս գամ պատվով իմ զենք ու դորքի՝  
Զեննաթ գնալ է իմ Հոգու Համար,  
Դու, որ դիմացար այսրան տանջանքի՝  
Դու քաջ թագավոր կդառնաս, ինձ տար ...»:

\* \* \*

Բայց դահիմն ահա մենակ Հայտնվեց,-  
Մենակ ...

Եվ Հայրը ցավից գունատվեց՝  
Կապված էր սյանը, որ ջրնկավ իսկույն ...  
Զիդ տվեց շղթան Հայրն անագորույն,  
(Շղթան քանդեցին, Հայրն իրեն գտավ ...),  
Պրկեց, կուտակեց մկան-մկանի  
Ու գոռաց, «Վագրեր, Անի չեք տեսնի,  
Ես վախում էի գառնուկս մասոներ,  
Նա չէր դիմանա ձեզ նման դահճին,  
Կույր սիրուց ... նա ձեզ Անի կտաներ ...  
Գիտեմ, իր վախսն էր ձեր Հույսը վերջին.  
Ինձ Հետ տանջվելիս՝ իմ կորյունն էր նա՝  
Ինչքան էլ տանջեր դահճիք դժխտմ ...  
Թե ջոկ տանջեիք՝ նա չէր դիմանա,  
Ու վերջն էլ պիտի մորթեիք, գիտեմ,-  
Բայց այսպես որդիա մնաց, մնաց Հայ ...»:  
Անի չեք մտնի Հավիտյան, օձե՞ր,  
- Այս ո՞ւմ խարեցիր, - գոռաց Շահն, - ա'յ Հայ.

Ու թուրը շաշեց,

Բայց Հսկան կանչեց՝

- Ուշ է, չես տեսնի, թե տվեց արքան,  
Զեզ Անի չի տա ոչ մի շինական...  
Ցոթը որդի էլ թե ունենայի ...»:  
Ու թուավ, խլեց, խլեց դաշույնը Շահի,  
- Զա՞գս ...

Ու դաշույնն իր կուրծքը խրեց:

Ու Շահ, զորք ու մահ, ողջ ծունկը բերեց  
Անիի առջև մեր առյուծարաշ,  
Ողջ ծունկի բերեց, ընկապ աղեխսարչ...

Ամպերը՝ կովի դաշտում պարտըվող՝  
Դանդաղ նահանջող զորքերի նման  
Մեկ-մեկ կայծակում, Հեռանում էին  
Հայոց լեռներից Հազարավիրան ...  
Ու գիշերն անցավ, և անցան դարեր ...  
Բայց ինչպես Հարեմ ընկած Հայուհին՝  
Անին՝ փշրված մեր Հրաշքն անմեռ՝  
Մեր շքեղ Անին,  
Մեր անմեղ Անին

Այն աշեղ վշտով պաշարված է դեռ ...  
Դավաճանությամբ խաչագող Հունաց,  
ԱՀա ինչու են մազերս ձյունած ...

5

— Անի քաղաք նստե կուլա,  
Չկա ասող մայր իմ, մի՛ լու,  
Չկա Հեծող,  
Չկա լացող,  
Չկա Հույսի մի դուռ բացող:  
Մայր տաճարի ավերակում  
Սև բուերն են պատարագում,  
Մեջքը կոտրած,  
Վերքը դեռ բաց  
Ճերմակ աման է վերքը կապում:

Ու լուռ են անգամ պարիսպներն, Անի՛,  
Լուռ են քո խոցված պարիսպները վեհ,  
Լուռ են թրի տակ ու յաթաղանի՝  
Լուռ են, բայց պիտի խոսնն երբեք...

Ու թվում է, թե դամրանանման քո ավերակից  
Մեծ Պահապանու՝ քո մեծ վահանի լուռ շիրմի տակից,  
Այս երգը դառած իր Հոգով անմահ, իր մարմնով մահին,  
Դեռ անիծելով Հայ բախտի պատկեր դժբախտ արքային,

Հական կրթելում է Հայոց երգը Հին. -  
Ինչպե՞ս ասեմ քեզ Հայաստան,  
Երբ իմ թրի շողը չունես,-  
Դժբախտ Անի, Վան ու Ռատան,  
Անի, Երբ քո Հողը չունես:  
  
Ինչպե՞ս ասեմ քեզ Հայաստան,  
Երբ քո Մասիս սարը չունես,  
Երբ ոտք Ելնող մանկանց շուրթին  
Քո Հայերն բառը չունես...

---

Ողբի մեջ էլ լուռ ես, Անի'.  
Անի', Պոմպեյն Հայաստանի:  
- Անի քաղաք նստեր կուլա,  
Լացե՛ք, քարեր Հայաստանի,  
Չկա ասող՝ մայր իմ, մի՛ լա,  
Լացեք, սարե՛ք Հայաստանի.  
Լացեք քարե՛ք, լացեք սարե՛ք,  
Լացեք դարե՛ք Հայաստանի:

1950-1951 թթ.

## ՎԵՐՋԵՐԱԿԱՆՔ

### 1

Իմ Ախուրյանի այն ափին ընկած՝  
Անին վիրավոր նղնիկ է կրկին,  
Որսորդն ու մահը դեռ զլիսին կանգնած՝  
Չեն թողնում անգամ լեզու տա վերքին:  
Այս ափին ձագն է, այն ափին մայրս՝ Անին վիրավոր,  
Չի կարող լիզել կամող արյունը վերքի դարավոր.՝  
Այս ափին ձագն է բառաշում, լալիս՝ ինչո՞ւ չեն զալիս,  
Այն ափին մայրս է՝ ուզում է զնենլ զլուխն այս ափին,՝  
Բայց դարեր կանգնած որսորդը զլիսին՝ դեռ աշ է տալիս,  
Լուսնի մահիկը՝ որպես իր արնոտ աղնջը ձեռքին,  
Ոչ նետն է Հանում եղնիկիս կրծքից, ոչ խրում է խոր,  
Ոչ սպանում է, ոչ կյանք է տալիս մորս վիրավոր ...

### 2

Դեռ մի կարոտ ունեմ անհագ՝ Հասնեմ Անի ու նոր մեռնեմ,  
Բանամ ճամփիս դռները փակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ,  
Բալասանվեմ իր բաց վերքին, մանուկ ծնեմ մեռած մորից՝  
Ախուրյանի օրորի տակ փրկեմ Անին՝ կարոտա առնեմ,

Օրոցք դնեմ իդձերն Հայոց՝ Հայոց Հոյսերն օրորելով.  
Որպես որդուն իմ երկվորյակ՝ երկնեմ Անին՝ կյանքն օրորեմ:  
Ախուրյանի ջրերի պես մորս փեշերն Համբուրելով՝  
Լցված կյանքով Հազարազանգ՝ գրկեմ Անին, վերածնվեմ:

Կրծքիս սեղմեմ Անիս ափեր, բուերի տեղ սոխակ դառնամ,  
Դառած երգ ու վարդի բաղաք՝ երգեմ Անին ու նոր մեռնեմ:

Վանա ծովի ու վանի հետ ու Պարսի հետ ու Մասիսի՝  
իմ Սևանի լոյսերի տակ զուգեմ Անին՝ օջախ վառեմ:

Մաղկեցնեմ շիրին անգամ արքայաշուք իմ պապերի,  
Որպես անտառ կաղնեպատկ՝ տնկեմ Անին՝ վանին խառնեմ:

Ավեր թողնեմ միայն քյոշկը թուրք չարահուշ բռնակալի,  
Գլխին հայոց արևաթագ՝ ոսկեմ Անին, բերդն համրութեմ:

Հազարադանգ դարթնեցընեմ Հազարամյա իր խոր քնից,  
Արագածի պես անխորտակ բորգեմ Անին, վեր պարսպեմ:

Վեր փյունիկեմ հազար ու մի տաճարներով իր ավերակ,  
Մայր տաճարի գմբեթի տակ խնկեմ Անին, կյանք բորվառեմ:

Թագաղընեմ սրտիս թագով մանուկ Գագիկ թագավորին,-  
Հազարու մի դանգով՝ Հստակ դանգեմ Անին՝ վեր դողանջեմ:

Մայրաքաղաք Երևանին Անին դարձնեմ Հայրաքաղաք,  
Պալատներով իր նորաթագ վեմեմ Անին՝ կյանքի գոչեմ:

Վերաշինեմ շիրմի մատուռն սպարապետ Պահապունու,  
Վեմեմ բուրգերն ու աշտարակ, ճեմեմ Անին ու նոր ննջեմ:

Բանտից Հանեմ մեծ Հայաստանն՝ այս ազատված փոքրիս  
խառնեմ,  
Գրկելով Հողն իմ բովանդակ՝ Հայկեմ Անին ու նոր մեռնեմ:

Հայոց թագի շափաղն Հասնի վանա ծովի մութ վահանին,  
Առագաստեմ ծովերս անտակ, թագեմ Անին, թագավորեմ:

Հազար տարվա, կարոտ ունի իմ երազը Հազարաթեն՝  
Այս, թեկուզ յուռ, զեռ ավերակ տեսնեմ Անին՝ ու նոր մեռնեմ:

Որպես ոսկի վաղվա գուշակ, որպես Մասիսն իմ անուշակ  
Գլխին հայոց մի դրոշակ, տեսնեմ Անին ... ու չմեռնեմ:

Ախուրյանն է, քեզ մայրական օրոր,  
Շիրակն օրոցք՝ մանուկն ես դու, Անի',  
Մի՞թե իրավ չես զարթնելու մի օր,  
Անի, մի՞թե մեր քունն ես դու, Անի:

Այս, ե՞րբ պիտի Հագնես լույս ու զրահ,  
Հույսս՝ խավար, ավար ես դու, Անի),  
Չի մնացել քարող քարիդ վրա,  
Անի, բայց դու գոհար ես դու, Անի':

Հայ արվեստի դու փշրված Մասիս՝  
Անմահության աճյունն ես դու, Անի',  
Փետուրներդ ցրված Հարավ, Հյուսիս,  
Մեր փյունիկյան թոշունն ես դու, Անի':

Քո արծվագարդ մի խոյակից անգամ  
Աշխարհ գիտե, թե ումն ես դու, Անի,  
Աս, ե՞րբ պիտի քո մեջ մեկ էլ ման գամ,  
Ավեր, բայց հին մեր տունն ես դու, Անի:

Անի', Հայոց անսալին ես դու դեռ,  
Հայոց վշտի անունն ես դու, Անի',  
Հորս կորած գերեզմանն ես անմեռ,-  
Անի, մորս մրմուռն ես դու, Անի':

Ողջ աշխարհի կրծքին դու դեռ բաց վերք՝  
Հայոց Պոմպեյն ու սուզն ես դու, Անի',  
Այս, ե՞րբ պիտի Հայ դարպասներ, բացվեք,-  
Պապերս Հոդ-մասունքն ես դու, Անի':

Անի', ողք է օրորն Ախուրյանի,-  
Շիրակն օրոցք՝ մանուկն ես դու, Անի',  
Բավ է քնիս քնով սրտակեղեք՝  
Հազարամյա մեր քունն ես դու, Անի' ...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՆԻ» ՊՐԵՄ

ՕՎԱՆԵՍ ՇԻՐԱԶ

ՊՈԵՄԱ «ԱՆԻ»

Կազմի ձևավորումը՝

Տեխ. խմբագիր՝

Համակարգչային

շարժաձգը և ձևավորումը՝

Գ. Վ. Մարիկյանի

Վ. Զ. Բղոյան

Ա. Ա. Գասպարյանի

Ստորագրված՝ տպագրության 14.12.2011 թ.

Չափար՝ 60x84<sup>1</sup>/16; թուղթը՝ օֆսիթ:

Հրատ. 17,0 մամուլ, տպագր. 19,3 մամուլ = 17,9 պայմ.

մամուլի՝ Տպարանակ՝ 500; Պատվիր՝ 49;

ԵՊՀ հրատարակություն, Երևան, Ալ. Մանուկյան 1  
Издательство ЕГУ, Ереван, Ал. Манукяна 1

---

ԵՊՀ տպագրատուն, Արովյան 52

Дом типографии ЕГУ, Абовян 52

